

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԿՈՒՄՆԸ ՈՒՆԵԱՆԱԸ, ՀԱՅԱՍՏԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԱԿ
ԼՈՒՄՄԱՍՅԱՑՔԵՆԱԶԱՆԵԸ ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂՈՒՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԸ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅՔԻ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

www.freebooks.am

ԸՆԴՈՂՆԱԿԱԸ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐՔԻՔ ՄԵՁ՝ freebooks@rambler.ru

ԳՐԹՆ. ԳՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆ

ՈՒՐԱՐՏՈՒԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ




www.freebooks.do.am
www.freebooks.am

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Պրոֆ ԳՐ ԳԱՓԱՆՑՅԱՆ

ՈՒՐԱՐՏՈՒԻ Պ Ա Տ Մ ՈՒԹ Յ ՈՒՆԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1940

**Արտասովոր Յերեվանի Պետական տարւոնի
Պիտ աշխատւթյունների XIV հասարից**

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ուրարտուի պատմութեան վորոշ մտտերը, այն է՝ արձանագրութեան հասարակա—տնտեսական և կուլտուր—պատմական կողմերի նկարագրութեանը, կազմված է յեղել մեր կողմից դեռ 1934 թվից: Սակայն նյութի կարևորութեանը և մանավանդ Ուրարտուի արտաքին քաղաքական պատմութեան նոր նկարագրութեան պակասը ստիպեց վերանայել մեր կատարած ուսումնասիրութեանը և մոտեցումները և տալ մի ամփոփ հետազոտութեան այդ պատմութեան ամբողջ անցյալի վերտրամամբ: Սկզբում կատարում ենք «Նախապատմական» մի եքսկուրսուրարտացիների ծագման մասին, ինչպես և նրանց պետականութեան առաջացման նախնական ետապների մասին, վորոնց համար ոգտագործվում են ասուրական աղբյուրների վկայութեանները, ինչպես և ուրարական լեզվի և պանթեոնի գենեզիսը, վորպես ուրարտագիտութեան այդ նախնական շրջանի հիմնական ֆակտորներ: Յերրորդ հիմնական մասը ընդգրկում է ձևավորված Ուրարտուի ներքին կյանքը, ի մեջ առյալ նրա եկոնոմիկան ու տեխնիկան, հասարակական, պետական, վարչական և ներքին քաղաքական վիճակը, վորքան այդ հնարավոր է լինում արձանագրութեանների տվյալներով, կցելով նաև այդ արձանագրութեանների գաղափարախոսական և վոճային կողմի համառոտ նկարագիրը: Յերրորդ հիմնական մասը վելաբերում է Ուրարտուի արտաքին հարաբերութեաններին, տալիս է նրա քաղաքական պատմութեանը, վորը միակ գլխավոր որոշեկտն է յեղել ցայժմ կատարած ուսումնասիրութեանների մեջ: Վերջում կցվում է, վորպես չորրորդ մաս, Ուրարտուի նյութական կուլտուրայի այն մնացորդների ամփոփ նկարագրութեանը, վորոնք հայանտրերված են յեղել պեղումների շնորհիվ, կցելով մի քանի տիպիկ առարկաների լուսանկարները:

Այս աշխատութեան մեջ ոգտագործված են կարևոր ուսումնասիրութեանները և աղբյուրները (ուրարտական և ասուրա-

կան), ինչպես և ուրարտերենի վերջին նվաճումները: Մեր այս հետազոտութիւնը անշուշտ կարող է ծառայել և վորպես գաստգիրք մեր ուսանողների համար: Կասկածից գուրս է, վոր Ուրարտուի գիտական նկարագրութեամբ ու հետազոտութեամբ հասկացես շահագրգռված է նաև հին Հայաստանի պատմութիւնը վորը շատ մեծ ժառանգութիւն էր ստանձնում յուր նախորդից, թեկուզ և վերապրումնային ձևով, շարունակելով զարգացնել Ուրարտուի հասարակա-տնտեսական և կուլտուրական վորոշ նվաճումները նոր պայմաններում

18 / III 1940 թ

ՀԵՂԻՆԱԿ

ՈՒՐԱՐՏՈՒԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(ՀԷՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԲԵՎԵՌԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

(Նոխապատմական օրջան)

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուրարտուի պատմագիտության վերաբերյալ մի շարք հանգամանքներ են յերևան յեկել, վորոնք ստիպում են այդ խնդիրը վերանայել և ի նորո զնել նախ, ուրարաական լեզվի ուսումնասիրությունը հասել է մեծ հաջողության շնորհիվ մի շարք գիտնականների ջանքերի ինչպիսիք են՝ Լեհման-Հաուպտ, Ա. Գյոտցե, Մ. Ծերեթեյի և մանավանդ Յ. Ֆրիզրիխ: Կարելի չե ասել, վոր Սեյսի ութսունական թվականներում և հետո ձեռք բերած ուրարաերենի ճանաչողությունը այժմ թևակոխել է յերկրորդ ավելի բարձրավորակ աստիճանի: Յերկրորդ բարենպաստ հանգամանքը ուրարաագիտության համար — մի քանի հին լեզուների (խեթ, խուրրի) և կուլտուրաների հայտնաբերումն է, ինչպես և ասուրական նորանոր աղբյուրների (նամակներ և այլն): Հետո պետք է մատնանշել այն մեծ աշխատանքները վոր կատարվել են Առաջավոր Ասիայի հին պատմության ուսումնասիրության բնագավառում, մանավանդ Ասորեստանի, Սուրբի-Միտաննիի, Սաթթի պետության և այլն, կապված նորանոր վկայությունների հետ (պեղածոներ, գրավոր հիշատակարաններ...): Վերջապես հայտնաբերված են ուրարտական նորարձանագրություններ, մանավանդ Սարգուր II (III) մեծ տարեգրերը Վանա ժայռի արվեստական քարախորշում (նիշայում), իսկ Կ. Լեհման-Հաուպտի կողմից հրատարակվող ուրարտական արձանագրությունների ամբողջական ժողովածուն («Corpus inscriptionum chaldicarum») մեծ ծառայություններ է մատուցում ուրարտագիտական այս

գործին: Եւ չինք խոսում այն մասին թե վոր չափի վ ուրարտական պատմության և ընդհանրապես ուրարաագիտության նվաճումները նպաստում են նաև հայոց հնագույն պատմության ու կուլտուրայի ակունքներին ճիշտ մոտենալուն:

Ուրարտագիտության համար բացասական մեծ ազդեցություն են գործել և մասամբ շարունակում են գործել այն հանգամանքները, վոր բևեռագիր աղբյուրները, մանավանդ ուրարտերենով գրվածները, կրում են մեծ մասամբ պաշտոնական և անշուշտ տեղեկանցիող բնույթ վոր ուրարտական բնագրերի վորոշ մասերը գեռ բավարար չենք հասկանում (լեզվի անսակետից), վոր այդ արձանագրությունները քիչ են լուսարանում Ուրարտուի ներքին կյանքը, նրա սոցիալ-տնտեսական և կուլտուրական կարևոր խնդիրները — մի բայ, վորի մեղմացմանն և նպաստելու մեր այս աշխատանքի առաջին հիմնական մասը: Վերջապես, Ուրարտուի նյութական կուլտուրայի մնացորդների հայանաբերման (պեղման) գործը նույնպես առաջ չի գնում, թեպետ յերևան հանվածները արհամարհելի մեծություն չեն կազմում և ընդհակառակը՝ մեծ բան են ասում այդ ժողովրդի արաագրական-ախնիկական և գեղարվեստական զգալի նվաճումների մասին:

Ուրարտական բևեռագիր արձանագրությունների մասին առաջին տեղեկությունը ավել և դեռ Մովսես Սորենացին, վերագրելով Վանի այդ և նման կուլտուրական գործերը Շամիրամին: Նա ասում է «Իսկ դամենայն երեսս քտրին [այսինքն Վանա ժայռի] իբրև գրչաւ գմոմ հտրթեալ՝ բազում պիրս ի նմա գրեաց եւ ոչ միայն տյս, այլ և ի բազում անդիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստաաէր» (Գիրք I, § 11): Այս բևեռագիր արձանագրությունների առաջին հավաքողն յեղավ Ֆ Ե Շուլցը, վոր 1827 թվին գործուղվելով Ֆրանսիական «Ասիական ընկերության» կողմից Տաճկահայաստան, գտավ և ընդորինակեց 38 արձանագրություն և գիտականորեն նկարագրեց նաև տեղական հնությունները¹: Դրանք հրա-

¹ Այդ ընդորինակումները Շուլցը կաարեց գործուղման հետևյալ տարին, 1828 թվին: Այդ 38 արձանագրություններից 18 հաս գտնվեց Վանի մեջ և արվարձաններում, 1-ը՝ Լեզգ գյուղում, 2-ը՝ Շուշանց, 2-ը՝ Արտամետ, 1-ը՝ Սըղգա գյուղում, 9-ը՝ Վարպի լեռան գանազան կողմերում, 1-ը՝ Աղթամար կղզում, 1-ը՝ Մանազկերտում, 2-ը՝ Արճեշում, 1-ը՝ Կելիշին գյուղի մոտ, թյուրք-պարսկական սահմանի վրա: Այս ընդորինակումները Շուլցը ուղարկեց Պարիզ, բայց գժրախառքար նա սպանվեց մի քուրդ ցեղապետի ձեռքով:

աարակվեցին միայն 1840 թվին Պարիզի „Journal Asiatique տեղեկագրի մեջ: Այս նույն 1840 թվին գերմանացի մի գինվորական, կապիտան Մյուլլրախը, հայտնաբերեց Սարգուր II (III)-ի հայտնի արձանագրությունը Յեփրատի ափին, Իզդզու և Կուսուրխան գյուղերի միջև (Մալաթիայի մտերքը), Ֆրանսիացի գիտնական Ղը-Սուլդը մի սեպագիր գաավ Բասենում, Հասանղալեյի մոտ, անգլիացի Լեյարդը՝ 4 արձանագրություն Վանում և մեկ հատ ել Պալուի մոտ, Արածանիի վրա: 1860-ական թվականներից սեպագիր արձանագրություններ յերևան են բերվում և այժմյան Հայաստանի սահմաններում: Ամենից շատ ջանք ե թափել այստեղ Մեսրոպ վարդապետ Սմբատյանը վորը գաավ արձանագրություններ Ելաոում (1862 թ.), Սևանա լճի հարավում—Քյուրունդում (1862 թ.), Աղամխան գյուղում, Թափալիբում—Արմավիրում (1869 թ.), վորտեղ նա գտավ գանազան ժամանակ 12 արձանագրություն: 1864 թվին ակադեմիկոս Կեստները գտավ 2 արձանագրություն, մեկը Լենինականից յոթ վերստ հեռու Ղանլիջա (Մարմաշեն) գյուղում, իսկ մյուսը Մասիսի ստորոտում՝ Տաշրուրում գյուղի մոտ: 1878 թվին Ա Յերիցյանը գաավ Արգիշտի Կ-ի արձանալրությունը Սարիզամիշում, վորը ուղարկվեց Թիֆլիսի թանգարանը: 1883 թվին գտնվեցին Որդակլուի և Չաղալուի արձանագրությունները, իսկ 1886 թվին Տաշրուրումի մյուս յերկու արձանագրությունները: 1879/80 թվականներին անգլիացի ասսիրիոլոգ Հորմազդ Ռուսսամը Վանի անգլիական հյուպատոս՝ կապիտան Կլայտոնի հեա ձեռնարկեց Վանի մոա գտնվող Թոփրախ-կալեյի պեղումներին յերևան հանելով միաժամանակ Վանում և շրջակայքում նորանոր արձանագրություններ (14 հատ)— 1-ը՝ Վանի մեջ, 2-ը՝ Մըլսաան գյուղում, 3-ը՝ Շուշանց գյուղում, 2-ը՝ անհայա տեղերում և 1-ը՝ Արճեշի մոտերքը, իսկ 1881 թվին Կլեյտոնը գաավ Մշո դաշտում, Իրմեղ գյուղի յեկեղեցում, մի արձանագրություն և: Վալդեմար Բելքը 1881 թվին գտավ Տաճկահայաստանում նորանոր արձանագրություններ (7 հատ), վորոնցից 4 հաա Արաամետում, 1-ը՝ Իշխանալս գյուղում, 1-ը՝ Վան քաղաքում և 1-ը՝ Քեշիշ-գյուտեղում, Վանի մոտ (Վարագա լեռների սահմանում): Այսպես գտնվում են շատ արձանագրություններ, յերբեմն գյուղացիների կամ ուսանողների ձեռքով, ինչպես Յերեվանի Ղանլի թափայի արձանագրությունը (այս քարը գաավ 1891 թվին Նորքեցի նազար Մաթեվոսյանը):

Ուրարտական արձանագրությունների և պատմության համար զրական մեծ արժեք ստացավ Վ. Բելլի և Կ. Լեհման Հաուպտի գիտական եքսպեդիցիան 1898—1899 թվերին գեպի պատմական Ուրարտուի վայրերը: Վանում նրանք կատարեցին մեծ պեղումներ (Թոփրախ-կալեյում), ճշտեցին մինչև այդ հայանարերած 80 արձանագրություններից 70-ը բացի այդ նրանք գաան մոտ 60 նոր արձանագրություններ, վորոնցից սեկը (Կոչանլու գյուղի մոտ) ասուերական եւ նրանք նկարահանեցին նաև հայանի Կելիշինի արձանագրությունը: 1900 թվին գտնվում ե պեղումների ժամանակ Զվարթնոցի բեկուագիր քարակոթողը, 1910 թվին Մակուի արձանագրությունը (գտնողն է գերմանացի կոմս Կանից) և այն և տյն: Իսկ ամենամեծ գյուտն եր ուրարտագիտության համար Հ. Որբելու հայտնաբերած Մորդուր II (III)-ի ասրեգիրը Վանա հյուսիսային ժայռի մի նիշայում (1916 թվին), վորը հրատարակվեց 1922 թվին Ն Մաուի կողմից¹: Այս արձանագրությունները վերահրատարակվեցին արտասահմ. նում Մ Մերեթելու կողմից

Ամբողջական հրատարակությանը ձևնարկեց 1882 թվից անգլիացի գիտնական Ա. Սեյը «Բրիտանական Ասիական Ընկերություն» ժուռնալի պարբերական եջերում, ինչքան վոր արձանագրություն գտնվել եր կամ հետզհետե գտնվում եր: Իսկ 1910 թվին այդ նումյն գործը կատարեց և հա, Հ. Սանդալյանը (,Les inscriptions cunéiformes urartiques“, Venise, 1910), վորտեզ արժեքավոր են միայն բնագրերը: Ռուսաստանում Բ. Նիկոլսկին ևս ձևնարկեց այն արձանագրությունների ամփոփ մի հրատարակության վորոնք գտնվել եյին Անդրկովկասի սահմաններում (1896 թվին)

Ուրարտական լեզվի վերծանության և քերականական բարոնման ճիշտ մտեցում ցույց տվեց առաջին անգամ Փրանսիացի ասսիրիոլոգ Ստանիսլավ Գյուլյարը (1880 թվին) ոգտագործելով արձանագրությունների այսպես կոչված «անեծքի ֆորմուլան», վորտեզ վորոշ բառերի կրկնությունը կամ ձևերի ընդհանրությունը բայերի վերջում նրան հնարավորություն տվեց համեմատելով ասուերական նման բնագրի հետ մո-

¹) Տես „Археологическая Экспедиция 1916 года в Ван Петербург 1922 г հրատարակել ե „Русское Археологическое Общество“ ն: Այս եղ կարեվոր են միայն լուսանկարները

տավոր կերպով հասկանալ այդ անեծքի մասը Ոգտվելով այս առաջին քայլերից Ա Սեյսը կարողացավ ավելի լավ հասկանալ թե բառապաշարը և թե քերականական ձևերը, տալով մինչև իսկ ուրարտերենի քերականության սխեման: Մինչ այդ ուրարտագիտությանը շատ եր խանգարում այն կանխամիտ կարծիքը, թե արձանագրությունների լեզուն հին հայերեն և կամ վրացերեն, իսկ արևելագետ գոկտոր Մորգոմանը, վոր ծանոթ չեր և աստուրական լեզվին, վոչ միայն ուրարտերենը հայերենով եր թարգմանում, այլև Ուրարտուում գանված մի աստուրական արձանագրություն ևս նա ի շարս մյուս դուտ ուրարտական արձանագրությունների, թ սրգմանեց (?!) հայերենի ոգնությամբ Անգլիացի բեռագետ Ռաուլինսոնն եր, վոր սկսեց պնգել վոր ուրարտերենը հին հայերեն չե: Միտալ եր անշուշտ ուրարտերենին մոտենալ վրացական լեզվի միջոցով, ինչ վոր առաջարկում եր մի ժամանակ Փրանսուա Լենորմանը, իսկ հետագայում նույն կանխամիտ տենդենցին հարկ եր սալիս և Ն Մաուր: Ուրարտերենը, ինչքան վոր պարզվում և այժմյան ատույզ վերլուծման շնորհիվ, ուրույն լեզու յե, մասամբ միայն կապակցվելով խուրրի և ավելի թույլ՝ խեթերենի հետ: Գենետիկական նրա այդ բովանդակության մասին մենք կխոսենք առանձին: Ուրարտական լեզվի հասկացմանը թույլ կերպով մոտեցավ Գյուլյարը կիսով չափ ըմբռնեց Ա Սեյսը, իսկ այժմ շնորհիվ մի շարք դիտակատանների (Ֆրիդրիխ, Գյոտցե և այլն), այդ լեզուն մեծ մասամբ արդեն հասկացվում և վերլուծվում ե: Առանձնապես պետք և շեշտել հայտնի խեթագետ և ուրարտագետ Johannes Friedrich-ի հետևյալ աշխատանքները— „Einführung ins Urartäische“ (Leipzig, 1933), ուր արվում և քերականության և ընթերցման բնագրեր, „Zum urartäischen Lexikon“ (Archiv Orent. Vol IV Պրագա), „Die Inschrift des urartäischen Königs Rusa I. aus Nor Bajazet“ (ibid., Vol III, 1931), „Chalder oder Urartäer?“ (Zeitschrift d deutschen morg. Ges Band 90 Heft 1, Leipzig 1936), „Beiträge zu Grammatik und Lexikon des Chaldischen“ (Caucasica, Fasc. 7 8, Leipzig, 1931, էջեր 54—86 i 114—150) և այլն

Բացի ուրարտական և աստուրական բեռագիր արձանագրություններից Ուրարտուի պատմության համար հիմնական տղբյուր պետք և ծառայի նաև նյութական կուրաուրան յուր մնացորդներով Այս մասը կարծե: թե վորոշ չափով թերագնա-

հասված է յեղեղ և մինչև XIX դարի վերջերը ուրարտական նյութական կուլտուրան և արվեստը իրենց արժանի տեղը չէյին գրավում, իսկ շատ ուրարտական իրեր համարվում էյին կամ ասուերական և կամ գրանցից ազդված և անարժան մինչև իսկ հրատարակու թյանու Այգալես, որինակ, ուրարտական րրոնդե արձանիկները, վոր շատ հետաքրքրական են և այժմ բրիտանական թանգարանում են, մինչև վերջերս չէյին հրատարակվում, այն ինչ նրանց վրա յեղած բնեռագիր արձանագրությունները լույս են ընծայվել դեռ 1882 թվին: Ինչպես Բ Պիտարովսկին և ասում՝ «В некоторых последних работах, даже в руководствах по истории искусства Древнего Востока, урартские бронзовые статуэтки приводятся как образцы ассирийского искусства» (տես նրա «Урарту» էջ 8):

Ուրարտուի պատմական տերիտորիայի վրա շատ պեղումներ չեն կատարվել: Գլխավորապես գրանք կենտրոնացած են յեղեղ Վանում, և այն էլ նրա Թոփրախ-կալեյում: Այստեղ այգալեսի աշխատանք կատարել է անգլիացի Հ. Ռասսամը, վորը սակայն վորոշ անփութություն և սույց տվել գանված իրերի և անգի նկատմամբ, վորովհետև շատ բան փչացել և կամ շահախնդիր վաճառականների ձեռքով հափշտակվել և և թերևս շատ բան կորել է: Ավելի արդյունավետ և գիտականորեն են կատարվել պեղումները Լեհմանի և Բելքի կողմից, վորոնց ենք մենք պարտական ուրարտական շատ արձանագրությունների հայտնաբերմամբ և ճշտմամբ Ուրարտուի տերիտորիայի վրա և նյութական մնացորդների գրանցմամբ Թոփրախ կալեյում: Լեհմանի «Armenien einst und jetzt» («Հայաստանը առաջ և հիմա») գիրքը (յուր յերեք մասերով կմնա միշտ վորպես գորավոր կոթող ուրարտական անցյալի վերհանման խնդրում: Պետք է ընդգծել նաև Հ Որբելու և Ն Մառի կողմից կատարած պեղումները 1916 թվին Վանում՝ թե ժայռի մոտ, ուր հայտնաբերվել է յերկու նիշա և Սարգուրի քարակոթողը (Որբելու կողմից), ինչպես և պեղումներ Թոփրախ-կալեյում: Ն Մառը մտազիր եր նման պեղումներ կատարել և Մակուի մոտ, բայց այդ չիրականացավ իմպերիալիստական առաջին պատերազմի պատճառով: Հյուսիսային Ուրարտուի ամենախոշոր կենտրոնն էր այժմյան Արմավիրը Արարատյան գաշտում, վորտեղ նույնպես անսխտեմ կերպով վորոշ պեղումներ արված են (Ուվարովի կողմից): Բայց տյս վայրը, վորի համար ջրանցք էր բերված, կար ուրարտական կայազոր ու հավանորեն

փոխարքա և յերկար ժամանակ (շուրջ 180 տարի) ծառայում էր վորպես առևտրական, կուլտուրական, քաղաքական-վարչական և տնտեսական կենտրոն (հարուստ և բերրի), վորը յուր այդ նշանակութունը դեռ պահում էր հեաադայում՝ հայերի ժամանակ, այժմ ևս մեզ համար մնում է ծածկված հողով, յերբեմն միայն պատահական կերպով ընձեռելով մեզ այս կամ այն արձանագրութունը (ուրարտական, հունարին)։ Նա ուներ և կուլտական (կրոնական) խոշոր նշանակութուն թե ուրարտացիների ժամանակ (կան մի քանի ծիսական արձանագրութուններ, վորոնց նմանը այլուր, յեթե չհաշվենք Մհերի դռան և Կելիշինի արձանագրութունները, չենք դռել) և թե հայերի համար, յեթե հիշենք Խորենացու խոսքերը այդանդի պաշտամունքի մասին, գուշակութուններով հանդերձ, կապված Անուշավանի հետ։ Արմավիրի ապագա պեղումները մեծ նյութ պետք է տան Ուրարտուի և Հայոց պատմության համար, յեթե այդ դործը կադմակերպվի մեծ մասշտաբով և հմտորեն։

Ուրարտուի պատմության նախնական շրջանի համար, այսինքն՝ յերբ չունենք ուրարտական արձանագրութունների և կուլտուրական հիշատակարանների վկայութունը հնագույն աղբյուրները պետք է լինեն վորոշ չափով ուրարտացիների լեզուն և կրոնը, իսկ հետո նաև ասսուրական գրավոր աղբյուրները։ Սրանից հետո արդեն գտլիս է այն շրջանը, յերբ ուսումնասիրության աղբյուրները (Ծորդ դարից սկսած) թե շաաանում են և թե հավաստի յին դառնում, լինելով թե ուրարտական և թե ասսուրական, թե գրավոր և թե նյութական-կուլտուրական։ Այս վերջին շրջանը (VX—VII դարեր) կարելի յե կոչել իսկական պատմութուն, նախորդ «նախապատմության» հանդեպ։

Այդ մտեցումով «Ուրարտուի պատմութուն» այս աշխատութունը մենք բաժանում ենք նախնական մասի, ուր քննվելու յե Ուրարտուի և ուրարտացիների գոյացման խնդիրը, ապա ուրարտերենի գենեզիսը վորպես պատմության աղբյուր և յերրորդ՝ ուրարտական պանթեոնի քննութունը նույն նկաաառումով։ Յերկրորդ մասը ընգրկելու յե Ուրարտուի ներքին կյանքը ըստ ուրարտական արձանագրութունների տվյալների, Ուրարտուի կուլտուր-պատմական և սոցիալ-տնտեսական կողմերի ամբողջ կոմպլեքսը, վորքան այդ աղբյուրները մեզ հնարավորութուն են ընձեռում ուրարտադիտության այժմյան մակարդակի տեսակետից։ Մասնավորապես տնտղվելու յեն տնտեսական

1 շինարարական տերմինները (հողոգտագործում, վոռոգում, խաղողի և ցորենի մշակույթ, մետաղագործութուն, կառույցքներ) հասարակական կադամավորումների և հարտերութունների տերմինները (յերկիր, տոհմ—ցեղ, ժողովուրդ—մարդիկ, դասակարգեր—դասեր, թագաւոր, վասսալ թագաւոր, դաշնակից, հպատակ, սարուկ, տեր, քուրմ, փոխարքա կուսակալ, ազգակցական անուններ— այր, կին, վորդի, դերի...), հպատակութուն, հարկատվութուն, յերկրի միտցում, ցեղապեա, անասնապահութուն և այլ տերմիններ, ինչպես և կրոնական ու ռազմական տերմինոլոգիան:

Մեր աշխատութեան յերրորդ մասը տալու յե Ուրարաուի քաղաքական կյանքը, նրա արտաքին հարտերութունները, վորահեղ մեծ նշանակութուն են սաանում բացի ուրարաական աղբյուրներից նաև մասուրական տեղեկութունները, մանավանդ Ուրարաուի անկման շրջանում յերբ հաճախ պակտում են տեղական (ուրարաական) վկայութուններու: Վերջում, չորրորդ մասում, արվելու յե Ուրարաուի նյութական կուլտուրայի մնացորդների նկարագրութունը, վու չափով այդ յերևան և հանված և արդեն ուսումնասիրված, կցելով այս բոլորին վորոշ իլլուստրացիաներ:



1 ՈՒՐԱՐԱՈՒ ԶԵՎ ՈՒՐԱՐՏԱՅԻՆԵՐ

Ուրարաու տեղանունը Ուրուատրի (Մրաթրի) կամ Ուրստրի (Մրաթրի) հին ձևով առաջին անգամ դործ և ածվել XIII դարում Քր. տաղ Սաորեստանի Սալմանասոր I (1266—1243) թագավորի ժամանակ, վորը յերեք որում նվաճել և այդ յերկրամասը յուր 8 շրջաններով և 11 գյուղերով Այս Ուր(ու)տրի անունը մենք համարում ենք բնիկ տեղական վորպես սկզբում թերևս

¹ Ուրարաական բեռագիր բնագրերը աստղագրքում են սովորական յտաինական տառերով ինչպես վար այդ բնդունված և տասիրիտլոգիայի մեջ Սակայն վանկապի նշաններից բացի դործ են ածվում և դողափարագրեր, վորոնց ուրարաական (և այլ տեղական) հնչումը մեզ հայտնի չե: Յեթե նա խաղասութեան մեջ այդ դողափարագրերը փոխարինում և բառ, ապա նա պիտի կարգացվի (միտքը) և թարգմանվի. իսկ յեթե նա ծառայում և մի ուրիշ բացատրութեան համար, վորոշելով թե այդ բառը ինչ տարակաների շարքին և պատկանում (քաղաք, յերկիր, տյրանուն տասված և այլն), ապա այդ դեպ-

1 բուշ սոհմերի—ցեղերի ընդհանուր անունն վորը սլահվեց և հետագա ալարողների անվան մեջ (Բր հինգ դսր առաջ): Սարևասասար 1-ը այս Ուրուատրին կոչում է այն լեռնոտ յերկիրը վորը սոպսամբել եր նրա դեմ կազմուխի յերկրի հետ: Վերջինս դեռտեղում են այժմյան Երզրինի և Տիգրիսի միջև: Ե. Ֆորերը դեռտեղում է այդ Ուրուատրին արևելյան Պարուրի գետահովտում: Ավելի ճիշտ կլիներ Ուրուատրին գետեղել այդ Պարուր-սուրի վերին հոսանքի և վերին Չավի վերին հոսանքների միջև, այսինքրն այն շրջանում, վորի կենարոնն է այժմյան Չուլամերկը Այստեղ և գտնվել ուրարտացիների հնագույն սրբավայր Արդինի «քաղաքը» կամ տասուրական հորջորջումով՝ Մուսասիրը: Արդյոք հետագա սյուրիական սրբավայր «Քոչհաննեսը» (նույն անգերում) չի՞ շարունակել այդ հին հեթանոսական պաշտամունքի տեղի տրադիցիան: Այլ դեպքերում հաճախ ենք տեսնում նման փոխակերպում հեթանոսական սրբավայրից քրիստոնեականի, ինչպես հայոց

Կարապետի վանքը Տարոնում կամ Ուչքիլիսեն հին Բագավանում (Այաշկերտի մոտ): Ընդհանրապես վերցրած Ուրուատրին մտել է այն նաիրյան ցեղերի յերկրամասերի մեջ, վորոնք ցրված էն յեղել այժմյան Սղերդի և Պարզանի շրջանից դեպի արևելք՝ Բոխտան-սու (Արևելյան Տիգրիս) գետի հովտով: Այս յերկիրը տեղական լեզվով կոչվել է մեր կարծիքով «Պուրուշկիա»¹, վորը տասուրական թագավորները կոչում էին «նաիրյան յերկրներ», ինչպես և գրանցից հյուսիս բնկած Վանտ լիճը: Յերբ հետագայում տասուրական արձանագրությունները դադարում են ընդհանրապես «նաիրի» տերմինը գործածել, մենք տեսնում ենք, վոր նրանք (որինակ Սարգոնը) դեռ շարունակում են համառ կերպով «Պուրուշ-

յում նա կոչվում է զետեր ինտախի» Այլ դադարադրերը և զետերմինտ տրիսերը վերադարձվում են սուամեր-ակկադական բառերով (Մտաը գործ եր

Նոմ լաախնալան բառեր), ինչպես—URU «քաղաք», KUR «յերկիր», KUR «իշնամի» DINGIR «աստված», SAI «կին» LU «գաս մարդիկ», KASKAL «ճանապարհ», Ի GAL «բերդ», Ê «տուն, տաճար», ԻR «սարուկ», LUGAL «թագավոր» և այլն: Այդ դեպքում ընդունված է այդ սուամեր-ակկադական բառերը գրել բոլորն էլ գլխատառով: Այրանունների սկզբում գրվում էր մի վերտիկալ սեղանիչ (Y), վոր տալիս էնք ՚ հշանով (1 Argištiše, 1 Rusaše...), վորպես դետերմինատիվ: Լատիներեն միայն պահում ենք „pl.“=հոգնակի (pluralis),

¹ Ուրախ ենք, վոր մտափորտպես նման գիտակացիա յե տալիս Պուրուշկիային և Պիտարովսկին հակառակ գայժմ տիրած սխալ կարծիքների (զեռեցում էլին Ուրմիա լճի մոտ, ինչպես անում եր, որինակ, Մեշչանինովը):

կիան» կոչել նաիրյան յերկիր, ինչպես և Վանա լիճը՝ «Նաիրյան Ծով»։ Նաիրի անունը ասուերական բառ է («գեաային», nar(u) «գետ» բառից) և վոչ թե տեղական։

Ասորեստանի ճնշման հետևանքով այս գետաշրջաններում (Արևմտյան և Արևելյան Տիգրիսների հովիտներում) ապրող վորոշ ցեղեր բարձրացել են ավելի հյուսիս։ Սրանցից մի մասը այժմյան Սղերգի (= հին Zikartu?) շրջանից բարձրացել է Բիտլիսի գետահովտով դեպի այժմյան Մշո դաշաը (Տարոն) իսկ այլ ցեղեր հավանորեն այդ նույն ճնշումից ապաստանել են այժմյան Վան քաղաքի շրջանները։ Անշուշտ տեղում՝ Բոխտան-սու (Կենտրիտես) գետի հովտում շարունակում էլին մնալ այլ «Նաիրյան» ցեղեր ու տոհմեր։ Հետագայում ասուերական արձանագրությունները «Նաիրյան ժողովուրդներ» էլին կոչում նաև Արտանիի (= Մուրագ չայ) հովտում գտնվող ցեղերին, թեպես Տարոնի ցեղերին առանձնապես հորջորջում էլին (Ծ-րդ դարից սկսած) ուրարտացիք (Urartu) տերմինով։ Այս վերջին անունը, կապված այդ «Ուրարտու» առանձին ցեղերի քաղաքական հզորացման հետ, հեազհետե բռնում է հին «Նաիրյան ժողովուրդների» (23 կամ 60 ցեղ) դաշնակցության տեղը և դառնում է միակ գործածելին IX դարից մինչև VII դարի վերջը։ Ասորեստանը իրեն դրացի Uruatri, իսկ հետո և Urartu ցեղանվան միջոցով ճանաչում էր և Ուրարտուին յենթակա մյուս ժողովուրդներին։ Յերբ Ուրարտուն հզոր պետություն էր Արևմտյան Յսփրատից մինչև Ուրմիա լիճը և հայկական Տավրոսից մինչև Չրլղըր-Սեվան լճերի հյուսիսային սահմանադիծը, ապա Ասորեստանը շարունակում էր այդ հսկա յերկիրը (պետությունը) և իր ժողովուրդներին նույնպես կոչել նախկին Urartu տերմինով, վորը սկզբում այդքան նեղ իմաստ ուներ։ Համեմատել նման յերևույթը և այլ դեպքերում. որինակ, Փրանսիացիք գերմանացիներին «ալլեման» են կոչում իրենց հին հարևան մի գերմանական ցեղի անունով, կամ վրացիք հայերին «սոմեխի» յին անվանում, թեպետ այդ յեղել է անշուշտ մի տեղական սահմանամերձ շրջանի ցեղանուն։ Յեվ մինչև իսկ այն ժամանակ, յերբ մոտավորապես 65 սարի անցել էր Ուրարտուի կործանումից հետո (585—520 թ. Քր. առաջ) պարսից Դարեյոս թագավորը յուր Բիսուտունի արձանագրության մեջ (գրված 520 թվին), Հայաստանը պարսկական բնագրում կոչում է Armina, բայց ասուերական-բաբելական («ակկադական») թարգմանության մեջ կոչում է հին

տերմինով Urastu վորը Urartu-յի ձևափոխությունն է այդ ար-
վում եր կարծես թե հարկ տալով չքացած Ասորեստանի հին
սլանդուեթյանը:

Ի միջի այլոց Սալմանասար I ից մի քանի դար անց
տեղեփում է մի ավանդություն, վոր պահել էյին ասորիները և
արարները, վորոնք ջրհեղեղի լեզենդան կապում էյին հին Ու-
րուատրիի սահմանին մոտ գանվող «Ջերել-Ջուդ» սարի հետ, իսկ
սա Աստվածաշնչի «Արարան» է, վորը ձևափոխությունն է
Ուրարտ(ու) անվան: Հետագայում հայերը այդ անունը փոխա-
գրեցին ավելի հյուսիս, այդպես կոչելով Մասիսը և Այրարատը՝
Արարատյան դաշտով Գեռ Մ Խորենացու և Անանունի մոտ
կարգում ենք «տուն Արարադայ», վորին մոտ եր արեժուտքից
«տունն Կադմեայ (հմմտ. ասսուրական Kadmuxi): Անանուն
պատմիչն ասում է «Ձի չուեաց իադաց դնաց Հայկն ի Բարելո-
նէ կնաւն եւ որդւովքն և ամենայն աղիւիւն հանդերձ: Եւ չողաւ
րնակեցաւ յերկիրն Արարադայ ի տանն որ ի լեռնոտինն, որ
դառաջինն շինեալ էր Ջրուանայ հօրն եզրարբքն հանդերձ: Եւ
ապա ետ դնա Հայկն կալուած ժառանգութեան Կադմեայ թոռին
իւրում՝ որդւոյն Արամանեկայ: Եւ ինքն չուեաց դնաց անաի ևս
ի հիւսիսակողմն և չողաւ րնակեցաւ ի բարձրաւանդ դաշտավայ-
րի միոջ և կոչեցաւ անուն դաշտին այնորիկ Հարք յանուն
հարցն» Նույնը կրկնում է և Մ Խորենացին, ավերացնելով վոր
«Այս արգարացուցանէ գանգիր հին ասացեալ գրոյցս» (Գիրք Լ,
§ 10): Մենք հարց ենք տալիս արդյոք Ասորեստանի («Բարե-
լոնի») կողմերից չլող այս Հայկը յուր վորդինելով, ընդոժիննե-
րով, աղիտով և այլն (ըստ Խ րենացու), վորը առաջ գալիս է մի
լեռնաստան (Արարադ) և ապա Հարք, չի՞ արաացուում ըստ այդ
ժողովրդական «անգիր գրույցների» հին ուրուատրի ցեղերի մի
մասի տեղափոխությունը—Ասորեստանի սահմանամերձ շրջան-
ներից (Uruatri) դեպի Տարոն (Բիտլիսի գետով) և Հարք, վոր-
տեղ ուրարտացիք (Արամե թագավորը) յերեք անգամ դիմա-
դրություն են ցույց տալիս Սալմանասար III-ին (860 ին 578-ին
և 845-ին, Քր. առաջ):

Uruatri (resp. Uratri) և Urari(u) այս եթնիկական և պետա-
կան-քաղաքական անունը պահել են վոչ միայն հայերը («Արա-
լոյ», Այրարատ), Հերոդոտը Քր. 5 դար առաջ («alarodoi»),
սասնէրորդ դարում Քր. հետ: ասորացիք («alartan» ցեղը Սա-
սանում) այլև հին հրեաները յերբ նրանք բացլ «Արարատ»

ստրից զիտեյին նաև «Արարատյան թագավորությունը այսինքն՝ Ուրարտուն Յերեմիա մորգարենն Յահվեյի (աստծու) բերնով սպանուում է մեծ Բարեյոնին ասելով, «Պատուէր տուք յինէն Արարատեան թագաւորութեան և Ասքանաղեան գնդին» (= սկյութացիներին): Թեպետ այս մորգարենն ուշ եր ասլրում (625—586), այն է՝ Ուրարտուի անկման ժամանակամիջոցին, բայց Ուրարտու-Արարատը դեռ պահոււմ եր իր բարձր ուղղմական պետության համբավը, վորին պետք եր ապավինել Բարեյոնի դէմ կրուվելու համար:

Բայց նտիրյան այս uruatr- || urart ցեղ, կան և տեղական տերմինից բացի կան և այլ անուններ, վորոնք կապված են Ուրարտուի ժողովուրդների և պետականության հետ: Այդ անուններն են—Սալդ, Բիաինա, Շուրա:

Սալդ տերմինը կապ ունի անշուշտ ուրարտացիների գլխավոր աստված Xaldi-յի հետ, ինչպես Ասորեստանի („Aššur“) անունը ստացվել ենույնանուն աստծու տնունից: Յերբ վորևե ցեղ կամ դասակարգային շրջանում վորևե քաղաք հետպհետե բարձրանում է և իշխում է ուրիշ ցեղերի կամ քաղաքների վրա, ապա այդ իշխող ցեղի կամ քաղաքի աստվածն էլ դառնում է առաջինը մյուսների հանդեպ: Հավանորեն Xaldi անունը սկզբում յեղել է Մուսասիր (resp Արգինի) քաղաքի տեղական աստվածը, կապված այդ տեղի ժողովրդի հետ: Բայց յերբ ուրարտական ցեղերը կարողանում են միավորվել ստեղծել քաղաքական դաշնակցություն և հեաադայում մեծ պետություն ապա Սալդը դառնում է վոչ միայն գերագույն աստված այլև «խալդյան» լինելը այսինքն՝ Սալդուն պաշտելը համազոր եր ուրարտական լոյալ քաղաքացի լինելուն: Ուրարտական թագավորները Սալդու մեծությամբ (փառքով, վողորմածությամբ, հրամանով, .) եյին արշավանքի յեխում, շինարարություն կատարում և այլն: Ինչպես թյուրքերը, քրդերը և այլն մեզ մոտ մի ժամանակ կոչում եյին իրենց «մուսուլման» և վոչ թե ցեղական հատկանշով, այդպես էլ Ուրարտուի շատ հպատակ ցեղեր ու ժողովուրդներ իրենց ստիպված եյին յերևի կոչել «խալդեր»: Ուրարտական արձանագրություններում չի կարելի բացահայտ կերպով նշմարել այդ xald արմատի հետ կապված վորևե ցեղանուն: Այդ կարծիքին է իսաղազեստ J Friedrich-ը հակառակ Լեման-Հաուպտի Բայց այդպիսի ցեղանուն դեթ հեաադայում սահգծված պիտի լիներ, թեև բևա շրջապատ պրովինցիաներում: Որինակ Քսենոֆոնի ժամա-

սակ, յերբ նրա աստը հազարանոց զորաբանակը անցնում էր kentriles (= Բոխտան-սու) դետը, հույների վրա հարձակում կատարեցին արմենները, մարդերը և խաղերը: Դեռ մինչև հիմա էլ Պարզանի շրջանում (Սղերդի մոտ) այրում են քրդեր, վորոնք իրենց «խալզան» են կոչում (21 դյուզ են) այդտեղ կա և «Պալդի դադ» սարը: Վերջապես մենք գիտենք, վոր Պոնտոսի Նովափնյա շրջանն են յեկել (Ուրարտուից?) խալզերը, վորոնց հույները կոչում էին Χαλδαίοι կամ Χάλδοι (= հայոց Պաղտիք) համեմատել Տրապիզոնի հայերեն բարբառի «խալզ» (- կոպիտ) անունը, ինչպես և գրաբարի «խաղտալուր», «խաղտախուղտ», «խաղտալիզու» բառերը նման առումով, ինչպես, որինակ, պարթև և ցեղանունը հայերի մոտ նշանակում է «վայելչակազմ» (срощи ииѣ), կամ վրաց gmiri «հերոս», վոր մենք հանում ենք gimirra «կլմեր» ցեղանունից (հմա հայոց ska «մեծ, հսկա» saka, as kuza անունից, խոռ «ժլատ» < խոռ «խուրրիտ» ցեղանունից և այլն): Դարեյոսի արձանագրության մեջ Բիսուտունի ժայռի վրա հիշատակվում է մի հայ haldita անունով վորը անշուշտ xald անունից է:

Ուրարտական ցեղերը կարող էին թե սարբեր անուններ ունենալ և թե մինչև իսկ տարրեր լիզուներով կամ բարբառներով խոսեր նրանց սղրնական որրանք կապված և անշուշտ դեռ XIII դարում հիշատակվող Uruatri շրջանի հետ, վորի անունը թեպես հետադայում արվում էր քաղաքական մեծ Urartu-ին, բայց շարունակում էր յոր տեղային սահմանափակ շրջանի գործածությունն ևս 7-րդ դարում, որինակ, ասսուրական Սինասխերիթ (705—681, թագավորի ժամանակ յերբ այդ Ուրարտուի (= Uruatri) սահմանի մոտ գտնվող Տուս սարից ջուր է բերվում, ջրանցք է անց կացվում («Բավթանի ջրանցք») Նինուեյի համար, իսկ այժմ ժամանակ (և վոչ մի ժամանակ?) ուրարտական քաղաքական եքսպանսիան այստեղ չէր կարող հասած լինել յերբ Ուրարտուի ամենաթույլ ժամանակն էր (Արգիշաթ Ա-ի որով): Ուրարտու անվան թե այդ նախնական տեղական («լուկալ») ըմբռնումը և թե հետագա (9-րդ դարից) քաղաքական մեծ Ուրարտու պետության ընդարձակ ըմբռնումը նման վրաց Somxethi տերմինի գործածությանը, վորը թե տեղական (Շուլավորի և այլն շրջանները) և թե ընդհանուր առում («Հայաստան») է պահում: Սակայն յեթե ասորեստանցիք Վանի այդ մեծ պետությունը հորջորջում և շարունակում էին ճանաչել Ուրարտուի պատմությունը—2

(ըստ ալանդության!) հին մի փոքր յերկրամասի անունով ու միջոցով, վորը կարելի էր 3 որում նվաճել (յուր 8 գավառով ու 51 «քաղաքներով»), ապա ինչով բացատրել, վոր ուրարտական թագավորները այդ urart (uruatr- || uruart-) տերմինը չեն գործածում: Մենք կարծում ենք, վոր այստեղ մի շարք սոցիալական և քաղաքական մոմենտներ են գրսևորվել, թեպես կարծես թե ավյալ կա, վոր այդ անունն ևս գործ է ածվել, այսպես ասած «ներքին» (վոչ պետական-քաղաքական) առումով:

Որ րարտական արձանագրությունները իրենց բուն յերկիրը — պետությունը կոչում են Biaina կամ թերևս Blaini (ըստ Friedrich-ի): Այդ անունը գործ է ածվում որինակ տվարառության ժամանակ, յերբ ավարը կամ ավելի հաճախ «այր—կին» քշվում է Վան (Blainadi). կամ անունում ենք «ի փառս Բիայնայի (և) ի սարսափ Լուլուինայի» վոճի մեջ (Նոր-Բայազետի արձանագրության մեջ). կամ ևս Բիայնա յերկրները (KUR Biainili) ընդարձակեց (ibid.) և այլն: Բայց ամենից շատ այդ Biaina յերկրանունը, վորպես իհարկե պետության անուն, գործ է ածվում Վանի թագավորների տիտղոսի մեջ, ուր կարգում ենք «թագավոր հզոր, թագավոր մեծ..., թագավոր Շուրայի (Šura(u)e) (և) Բիայնայի (Biainaue): Այդ անունները հավանորեն հոգնակի թվով են, վորովհետև -ave վերջավորությունը հատուկ է գոյականների միայն հոգնակիին, այն էլ սեռական և տրական հոլովների ֆունկցիայով (նույնը կա և խուրրի լեզվում). համեմատել մանավանդ KUR Biainili կամ KUR Šurili ձևերը հոգնակի հայցականի ձևով (illi վերջավորությամբ)¹ Կելիշինի յերկկեզվյան արձանագրության մեջ, վոր գրվել է 9-րդ դարի վերջում Իշպուրինի և Մենուա թագավորների կողմից ուրարտական ընադրի «թագավոր Շուրայի (և) Բիայնայի» արտահայտության դիմաց ակկադական (ասսուրաբարելական) թարգմանության մեջ կարգում ենք «թագավոր Նաիրիի»: Բոլոր արձանագրությունների մեջ, յերբ հիշատակվում են այդ Շուրա և Բիայնա յերկրները, միշտ առաջին տեղը տրվում է Շուրային իսկ յերկրորդը

¹ Šurieli ձևը պատահում է, որինակ հետևյալ նախադասության մեջ «alu de KUR Šurieli zaguali» վորը մենք թարգմանում ենք ևս Շուր(ի) յերկրները բնակեցրեց» (կա և պարզ aš- բայարմաար ašubi ašulabi, բայաձևի մեջ, վորը մենք կապակցում ենք խեթական նույն aš- բնակեցնել, նև ակցնել» բայարմաարի հետ):

Քիւսիտային: Բայց հաճախ միայն մեկն է հիշատակվում և տյն ել միայն Քիւսիտային: Արդյո՞ք տյս չի արտացոլում Վանի տյս հին թագավորութեան կազմավորման պատմական ընթացքը, յերբ թերևս այդ պետականութիւնը, վորպէս արդէն ռազմա-քաղաքական մի փոքրիկ միավոր, յուր գասակարգային շերտավորմամբ, գոյացիլ և առաջին անգամ «Շուրա» (Շուրի) յերկրում, այսինքն՝ վորպէս «Շուրա (Շուրի) պետութիւն»: Բայց յերբ տիտղոսում հիշատակվում է այդ յերկուսի (Sura և Biaina) գիմաց հաճախ մեկը, այն է՝ Biaina-ն, ել չենք խոսում այլ արասահայաութիւնների մասին, ուր միայն այդ Biaina-ն է շեշտվում, այն ժամանակ անհրաժեշտորեն պիտի յեզրակացնել, վոր Biaina-ն, թեպէտ և հետագա քաղաքական նվաճումն է, բայց ամենազլխավորն է, ամենահիմնականն է: Իսկ ի՞նչ կտրող են նշանակել այդ յերկու քաղաքական տերմինները: Առաջին տնունը (Sur-) ստուգարանում են Suria «Սյուրիա» (= Ասորիք) բառի հետ, վորը անշուշտ պայմանական է: Թերևս այդ կապակցութեամբ Ուրարտուի կազմավորումը առաջին անգամ յերևան և գալիս Վանա լճից արևմուտք, Տարոնում—Հարքում, ուր ապրելիս են յիղել անշուշտ տրամեական ցեղեր, մանավանդ Անճիտում և Անգեղ ասնը (Enzite Ingilene): Տիգլատպալասար I-ը (1110—1080) յուր նվաճված 23 յերկրների մեջ, Տիգրիսի—Արածանիի միջագետքում, հիշատակում է նաև Sururia տնունով յերկրամաս. արդյոք սա մեր Suri (Sura) անվան հետ կապ չունի: Ինչ վերաբերում է Biaini կամ Biaina տերմինին, ապա այստեղ կարծես թէ ավելի հավանական յենթադրութիւններ կան: Ի նկատի ունենալով, վոր „lulu“ (= բարբարոս) ցեղանվան հետ կապվում է ուրարտական թէ KUR Lutue «Լուլու յերկիր» և թէ KUR Lutuina կամ KUR Lutuini «Լուլուինի յերկիր», կամ ինք (իւթ) ազգութեան հետ կապվում է ուրարտական նույն արձանագրութիւնների KUR Xate «Սաթի յերկիր» կամ KUR Xatina «Սաթինա յերկիր» և այլն, կարելի յէ յեզրակացնել, վոր Biaina կամ Biaini նշանակե՛ bia—ցեղի յերկիր («biatsches Land», ինչպէս Փրիգորիին է ասում),—մի զիտողութիւն, վոր մենք վաղուց եյինք արել: Համեմատել նաև ասսուրական Alzi տեղանունը և ուրարտական Alzini նույն տեղանունը (in! մասնիկով) = հայոց «Աղձնի(ք)», թերևս վորոշ ալարողյան-ասիանիկ բարբարոսով այդ վերջածանց in! անգամանիկը, վոր սկզբում

ցույց եր տալիս սոսկ հասկացում և պատկանելիութուն, դարձած լինելը -ina, և հին հունական առպոնիմիական հորջորջումները, ինչպես Matiene, Gogarene Otene, Gorduene և այլն, ստացված լինելին Matiena Cogarena և այլն, ուր -ena <-ina? Համեմատել նաև Armina «Հայաստան» վորպես արամ ցեղի յերկրանուն, ինչպես Palestina «փղշտացի» (= филистимляне) մարդկանց տեղանուն, կամ հին Naharina «դետերի (naru) շրջանի յերկիր» և այլն: Յեթե այսպիսի է, ապա Bia-ina կամ Bia-ini կարող է նշանակել բիա (bia) ցեղի կամ մարդկանց յերկիր: Թերևս այդ bia-ցեղանունը պահված լինի հայոց «Վայ-ոց» ձոր տեղանվան մեջ, նշանակելով bia-յերի (վայ-երի) ձոր, այնպիսի հնչյունական փոփոխմամբ, ինչպես Biani || Biain(i)-ն դառնում է «Վան» (տյսինքն՝ ia > a բառամիջուկ): Հմմտ նման եթնիկական տեղանուններ—Հայոց ձոր (Վանից հարավ-արևելք, Սոչապ դետի ընթացքում), Հիւննաց ձոր (Սյունիքի «Բաղք» գավառում), վորը պիտի նշանի «հոների ձոր»¹:

Biaina (Biaini) անունը, վորպես եթնիկական կաղմութուն, ցույց է տալիս ուրալ տական (տլարոդիական) bia-ցեղի ներկայութունը Վանա լճից արևելք, այժմյան Վան քաղաքի շրջանում: Ուրարտուի հզորութունը կտպված է այս շրջանի հետ և վոչ թե մինչև Սարգուր I-ը, վորը հիմնվում է այս Վան քաղաքում (=ուրարտ. Tušpa, ասսուր. Turušpa): Մինչև Սարգուր I-ը ուրարտական յերկրամասերը (Sugunia բերդաքաղաքով, Artsašku մայրաքաղաքով, Aramali քաղաքով ..) և ուրարտական թուրքավորները (Arame, Sidur=Sardur) հիշվում են Սալմանտսարի կողմից (860—825) միայն Վանա լճից դեպի արևմուտք և հյուսիս-արևմուտք ընկած շրջաններում: Ուրարտական թաղավորները Տուշպայի Սարգուր I-ից սկսած (վորը Իշպուենիի հայրն էր և Լուտիպրիի վորդին) իրենց ղինաստիայի և պետության բախտը կապեցին այս «bia-ոց» յերկրի՝ Biaini-ի հետ, վորը արտացոլվում է տիտղոսում իրրև հիմնական բուն որրանը ուրարտական

¹ Իսկ վոր հնում սովորական յերևույթ էր ցեղերի ցրվելը կամ դող թելը, այդ կարելի չէ ցույց տալ խալդերի տեղափոխությամբ (Սղերդի մոտ և Հաղխատանում), մոսքերի տեղափոխությամբ (վորը Ասիայում, հետո Վրաստանում) և այլն: Հենց նույն Սյունիքում բացի «Վայոց ձորից» ունենք Քաշանիք, Քաշաց թաղ և այլն, վոր մենք կապում ենք kaš- («կաստիտ») ցեղի հետ, կամ Սյունիքի «Բաղքը» (Բաղաց աշխարհ Բաղաբերդ)=խեթական pala (bala) և հայոց Բալտ-հովիտ ցեղանվան հետ:

դեպոսիտան, իբրև նրա քաղաքական հզորության յերկրորդ բարձր շրջանը

Ուրարտացիների տարբեր ցեղերին պատկանելը կարելի չե ապացուցել և Սալմանասար III-ի «Բալաստայան» զոնների բրոնզե շրջագոտիների (ОБШИВКА) նկարներից, ուր գերի խալիկների մի մասը բարձրահասակ և (իշխողներ յերեկ), իսկ մյուս մասը՝ փոքրահասակ: Համեմատել նմանը խեթերի վերաբերմամբ Յեզիպոսի քանդակների վրա («Կարնակի» աանարում), այդպես են հանված և խուրրի-միտաննիները:

Նաիրյան յերկիրը ինքը ցեղերի մի գտնակցությունն էր, ինչպես յերևում է Տիգլատպալասարի արձանագրությունից, վորը գրված է յուր աանարի հիմքում տեղավորված քարե գլանների վրա: Այստեղ հիմնականորեն մատնանշվում են 23 ցեղ, բայց հետո գրա փոխարեն կրկնվում է 60, վորոնք թերևս այդ 23 ի մեջ մանող մանր ցեղեր կամ տոհմեր են: Իրանց 250 «քաղաքները» անշուշտ գյուղեր են կամ գոյակներ ու մանր բերդեր, իսկ «թագավոր» անվան աակ պիտի հասկանալ դրանց ցեղապետներին (վորոնց գլխավորն էր diau ցեղի «թագավորը» Սինի անունով): Այս ցեղերը Արածանիի և Տիգրիսի միջև տարում էյին յերկրագործությամբ, անասնապահությամբ. կռվի ժամանակ դործ էյին ածում մարտակառքեր: Ասուրական թագավորները Նաիրի յերկրի ցորենը և հարդը հավաքում էյին հատուկ կենարոններում՝ Տուշխա և Դամգամուշա քաղաքներում, վորոնք գտնվում էյին Տուր-Արդին կամ Կաշիարի (Masius) լեռների մոտ:

Ուրարտացիների և Ուրարտուի ազգաբանության աեսակետից մեծ նշանակություն ունի մեր կարծիքով նորագյուա Սարգուրյան աարեգրերի VI արձանագրությունը, վորը գրված է «Սարգուրյան նիշայի» հետևի պատի վրա, ցածում, քարտկոթողից հետև: Այստեղ կարդում ենք Սարգուրի բերնից «Յերբ Խալգը ինձ իշխանություն տվեց, (և) բազմեցի հայրական տեղում իշխանական, հետևյալ նվերները... Շուրա յերկրի համար (KUR Šuraani edini) պարտադրեցի (բերել)», հետո բերում է վարպետների, վրանների և զինվորացուների (հեծյալ և հեռակալ?) ցուցակը ավելացնելով «այս ardaie (նվերներ?) գորքի համար պարտադրեցի (inani ardaie Lu A SI^{pl}-nani edini turuubi)», իսկ հետագա թվարկության մեջ հիշվող կենդանիներ, այլևայլ պտրենն ու մթերք, ինչպես և բրոնզ և անաղ Սարգուրը հանձ-

նում եւ ururd- մարդկանց (Lu ururdani edini turubi = ուրուրդ մարդկանց համար պարտադրեցի)¹, Լեզվական կոնսարուկցիայի համար (KUR Šurāni edini, Lu A S!^{pl}-nani edini, Lu ururdani edini) համեմատել բրոնզե վահանների վրա գրած ulgusiani edini «առողջութեան համար» (=աստուր. ina put baiati-šu)², Արդյոք այս ururd-մարդիկ բնիկ ուրարտացիք չե՞ն այսինքն՝ ուրարտացիների ցեղային ընդհանուր հորջորջումը, վոր հեաագայուււււ տրվում եւ այդ նաիրյան ժողովուրդներին, արդյոք չի՞ պահվել այս «Ուրուրդ(ա)» մարդկանց մեջ վորպես թերևս իշխող դասի և՛ միջի այլոց Սարդուրյան այս արձանագրութեան նմանը կար և առաջ, ինչպես Արձեղի մոտ (Արնիսում), վորտեղ նման ներածութեանից հետո («Յերբ Խալզը ինձ...») ավելացվում եւ վորպես գլխավոր նախագասութեուն «նույն տարին գրեցի...», հետո դալիս եւ տնասունների քանակի թվարկում: Շուրա (Շուրի) յերկիրը այս մեր վերեի արձանագրութեան մեջ, ինչպես այդ տեանում եք նաև Գելիշինի արձանագրութեանից մինչև Զվարթնոցինը («Թագավոր Շուրայի և Բիայնայի»), ուրարտական թագավորների հոգատարութեան որչեկան եւ Այդ յերկիրը թշնամական չեւ չկա մի տեղ վորնա նվաճվի կտմ ավերվի Կա միայն մւ քաղաք Աղձնիքի, խեթերի և Ասորեսաանի միջև վորը յենթարկվում եւ նվաճման,—այդ Šurīšli(ni) քաղաքն եւ, վորը կարող եւ նշանակել «սյուրիացիք» (šurīše «սյուրիացի», իսկ և հոգնակի հայց. հոլովի նշանն եւ):

2 ՈՒՐԱՐՏԵՐԵՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԵՆԵԶԻՍԸ

Պատմութեան հնագույն շրջանի համար, յերբ դրավոր հիշատակաշաններ չկան, վորոշ չափով ոժանդակ գեր են խաղում նյութական կուլտուրայի մնացորդները, մարդկանց գերեզմանները իրենց պարագաներով, մարդու գանդը և այլն: Բացի այս պատմական տղրյուրներ են ծառայում լեզվի կազմութեունը և

¹ Lu (մարդ) դեաներմինասիվը դրվում եւ «հայր», «զորք», «սարուկ», «ժողովուրդ» և այլն բառերի առաջ: Ուրեմն ururd(a) կարող եւ լինել և վորեւեւ «գաս, գասակարդ, ցեղ» (gens) նշանակող բառ:

² Edini հետդիրի ճիշտ թարգմանութեունը («համար») առաջին անգամ ավել եւ J Friedrich-ը: Բայց այդ հետդիրը մեր կարծիքով կարող եւ դրվել և քայերի սկզբում—հմա edini sutukubi, edini tamxubi և այլն, ուր այդ edini ն ավելի շուտ նշանակում եւ «ի բաց, գաւրս, ՈՅ»:

կրօնը՝ Վերլուծենք նախ ուրարտերենի պատմական դենեգիսը, հետո՝ պանթեոնը: Իսկ արձանագրությունների լեզուն վորպես պատմության նյութ, յերկու ասպեկտներով (նիւթին՝ սոցիալ-սնտեսական և կուլտուր-պատմական կողմերով և արտաքին՝ սոցալական-ուղմական կողմերով), մենք կժննենք վերջում:

Ուրարտական արձանագրությունների (201 հատ) լեզուն յետ շատ բառերով ու ձևերով մնում է անհասկանալի: Բառարմատների թիվը մեր տվյալներով մոտ չորս հարյուրի յե հասնում և մեծ մասամբ վերծանված ու հոսկանալի յե: Արմատների ,, ձևերի սակավությունը մասամբ բացատրվում է արձանագրությունների վոճի սաերեոտիպ լինելով: շտամպան ու շաբլոնը գեո համառ են նստած դրանց մեջ, մանավանդ ուղմական արձանագրություններում: Մասամբ այդ կարելի յե բացատրել և անցյալի գրականություն չունենալով և կրոնական ազգեցությամբ, յերբ վորոշ վոճեր և դասավորվածություն կարծես թե սրբազան պահպանողականության հեականք եյին և պարաազիր եյին դարձել: Աստուրական արձանագրություններն ևս սկզբում կրում եյին վորոշ միապաղաղություն և հետո միայն բազմազան և հարուստ բովանդակության հասան, մանավանդ Աստուրբանիպալի ժամանակ: Բառարմատների տեսակետից ուրարտերենը այնուամենայնիվ արհամարհելի մեծություն չի յուր մոտ 400 բառարմատով (և մի յերկու ասանյակ մասնիկ-ձևերով՝ թեքակտն և բառասեզմական): Համեմատորեն քննենք նախ մասնիկ-ձևերը, հետո՝ բառարմատները:

ա) ՌԻՐԱՐՏԵՐԵՆԻ ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուրարտերենի հնչյունարանական, ձևաբանական և շարաչյուսական այն աւանձնահատկությունները, վորոնք համեմատալեզվաբանական արժեք կարող են ունենալ, առ այժմ հետևյալներն են

Նախ, ուրարտերենը չ բաղաձայնով հասարակ բառ չի սկըսում, իսկ հատուկներից էլ մեզ հայտնի յե միայն Rusa թագավորների անունը (Եթիունի ցեղերի մեջ կար Rašu թագավորանուն): Այս յերևույթը հատուկ է նաև խեթերենին, խուրրի լեզվին և հայերենին: վրացերենը ընդհակառակը ,,r“ բաղաձայնով ունի շատ բառեր: Ուրարտերենում շատ չեն նաև ,,l“ բաղաձայնով սկսվող բառեր (laragi «արտ», lutu «կին», laku du «վրչել»):

Յերկրորդ մեզ հասած ուրարտերենի գրական ձևի մեջ չենք նկատում շաղկապներ, — մի յերևույթ, վոր՝ այդքան բնութագրում է նաև հայոց հորավային բարբառները (Մոքս, Շաախ և այլն):

Յերրորդ թեքման սիսաներ ինքնուրույն է և կատարվում է մասնիկների կցումով վերջից (վրացերենում նաև սկզբում՝ v-ar «եմ», x-ar «ես», բայց ar s «ե»)¹: Ուրարտերենի խոնարհումը նման գրեթե բոլոր հին փոքրասիական (և սեմական) լեզուներին բայի վերջում կցում է որյեկտին վերաբերող ավելորդադիր գերանվանական մասնիկներ, ինչպես *iesē inili ebanilli maguulli buraštulli* «յես այս յերկրները ճնշեցի ծառայեցրի» (ասոացի՝ ստրկացրի) փոխանակ ասելու *iesē inili ebanilli magubi buraštubi*, ուր *ubi* մասնիկը (u-bi) աորիստ I դեմքի համար է: Կամ *alus ni tulie* «ով այն ջարդե» (փոխանակ *aluse inl tulie*), *kuletū-ni* «(թող) մասնեն հողին», ուր *ku* «մասնել, հանձնել», -*le* ապառնիի մասնիկ (կամ ներկայի?), *tu* 3 դեմք հոգնակիի համար (հմմտ. *ter-tu* «դրին», *tiaitu* «ասացին» և այլն), *խսկ -ni* մասնիկը վերաբերություն է ցույց տալիս որյեկտին («սրան»): Այս յերևույթը հառուկ է խեթերենին, խուրրիերենին, հայերենին, վրացերենին (սկզբում է լինում՝ v s-cer «յես այն գրում եմ»): Խեթերենը և հայերենը նման ուրարտերենին այդ կցումները կատարում են բայավերջում (և անվան վերջում), համեմատիբ հայերենից — «ոչ գիտեմ գաղմուկս յորում ըմբռնեցայս» կամ «իրև ծածկեցին դմեռեալն տնգէն ի տեղւոջն, յորում սպանաւն» (Փ Բյուզ.):

Չորրորդ ածական վորոշիչները կամ գոյական հատկացուցիչ նման վորոշիչները ուրարտերենում գրվում են գոյականից առաջ ինչպես *ᵛXaldini ušmaše* «Խալդյան փառք», *inili ebanilli* «այս յերկրները», *ᵛMenuai pili* «Մենուայի ջրանցք», *Tuš pa-patari* «Տուշպա-քաղաք» և այլն, բայց *LUGAL erelauē* (= *ereli erelawe*) «Թագավոր Թագավորների»: Գերիշխում են հետգիրներ, ինչպես *Menua kai* «Մենուայի առաջ», *ᵛMenua pi* «Մենուայի տակ»:

¹ Համեմատիբ նույն նախադիր գերանվանական ենկլիտիկաները բայի ընդհանուրական (պասսիվ) կոնսարուկցիայով, ինչպես՝ *minda* «ուզում եմ» (ասոացի՝ ինձ ցանկացվում է, *мне хочется*), *ginda* «ուզում ես» (քեզ ցանկացվում է, *тебе хочется*) unda «ուզում եմ» (նրան ցանկացվում է, *ему хочется*) և այլն:

Հինգերորդ. գերանունները լինում են կամ ինքնուրույն կամ կցույթի ձևով նման խեթերենին և հայերենին: Որինակ, uki 'Xaldisc ubardu-duni «ինձ Խալդը հանձնարարեց», բայց 'Xaldis me SARRUTU-xi aruni «Խալդն-ինձ իշխանություն արվեց» կամ šamū «իմ» բայց ebanī-uki «յերկիրս», euri-ukie «տիրոջս», kai-uki «առջևս, իմ առաջ» և այլն:

Վեցերորդ. նկատվում է մի հետաքրքրական յերևույթ՝ կոնպուտենցիա, յերբ հատկացուցիչը, փոխանակ իրեն հատկացական սեռական հոլովով գրվելու, վերցնում է իրեն հատկացյալի հոլովածեր: Որինակ, սովում է klurase DINGIR¹ še «հողի (յերկրի) սատվածներ» փոխանակ՝ klurai DINGIR¹ še (այդ չէ վերջավորութունը ուղղական հոլովի ձև է) կամ կարգում ենք «ազոթեցի DINGIR¹-aste KUR Biainaste = սատվածներին Բիայնայիս, փոխանակ ասելու D¹ aste KUR Biainei (կամ Biainai) և այլն: Այս կոնդրուենցիան կար և գրարարում և խեթերենում, ինչպես՝ «բարկութեամբ սրտի» փոխանակ «բարկութեան սրտի» (կամ բարկութեամբ սրտի), «ի ծագաց յերկրէ» փոխանակ ի ծագաց երկրի, «ի նահանգէն Տարոն գաւառէ» փոխանակ ի նահանգէ Տարոն գաւառի և այլն: Համեմատել խեթերենում šamnir-ma ^dGIŠ GIM. MAŠ-un ALAM-an «ձևավորեցին...»¹ 'Իրլգամեշի կերպարանքը» (յերկու յերրորդով աստված, մի յերրորդով՝ մարդ, հմատ. Քրիստոսի նման եյությունը): Այստեղ հատկացուցիչը (Gilgameš an) գրված է հայցական հոլովով, փոխանակ գրվելու սեռականով «կերպարանք» հայցականի համար: Վրաց հին լեզուն այս տարրորինակ համաձայնությունը կաարում է ուրույն կերպով՝ պահելով թե հատկացուցի սեռական հոլովածը և թե հատկացյալի հոլովածը որինակ, nebay mamisa čemisa zeçathaisay «կամքը հոր իմ յերկինքների», ուր neba y ուղղական հոլով է y վերջավորությամբ, ma misa čemisa—սեռական հոլով է -isa վերջավորությամբ, վորպես հատկացուցիչ, zeçathaisay—սեռական հոլով է հոգնակի թվով -tha վերջավորությամբ (zeçatha)+isa վերջավորությունը, վոր կար նախորդ բառում (mamisa čemisa)+y վերջավոր-

¹ Այս šamn-բայարմատը այս դեպքում, վորպես գոյական, նշանակել է «հիմք, շեմք», վորից բայը պիտի նշանակեր «առաջի՝ հիմնավորել, հիմնել» Հայոց «հիմն» բառը՝ կազմված *heman (<šam(a)n) ձևից ըստ իս ուղղակից է այդ խեթերեն արմատին

բուժյունը վոր կար դրա հատկացյալ nebay բառի մեջ: Վրացերենի հասկացուցիչը պահում է սեռականի ձևը ընդունելով նախորդ հատկացյալի վերջավորությունը, իսկ խեթերենն ու հայերենը կորցնում են այդ սեռականի ձևը: Հավանորեն նման յերևույթ յեղել է և խուրրի լեզվում բայց առ այժմ չի գտնված նյութի (արձանագրությունների) պակասության հետևանքով:

Յոթերորդ. ուրարտերենի հոլովածների շատությունը— ուղղական սեռական, արական հայցական (կոնկրետաբ), բացառական-գործիական, ուղևորական (Richtungskasus, Направление НЫՅ), թերևս նաև ներդոյական („a“ ձայնավորով?)— հար և նման է հայերենին և վրացերենին. խեթերենն ևս այդ կողմից հարուստ է (ուղղ., սեռ., ար., հայց., բացառ., գործ. և թերևս „a“-յով ներդոյական նման խուրրի լեզվին): Չենք կասկածում, վոր փոքրասիական հին մեռած լեզուները, վորոնցից քիչ բան է մնացել, ինչպես են խուրրի, պալա (բալա), կասսիտերենը և այլն լեզուները, նմանապես շատ հոլովածներ են ունեցել (սեմիտերենը այդ կողմից ազգատ ևր յուր հոլովական թեքույթներով): Վրացերենի հոլովածների հարստությունը գալիս է վոչ միայն փոքրասիական («հորեթական») ակունքներից, այլև բուն կովկասյան, կապված այժմյան կովկասյան լեզուների հետ (չերքեզերեն, ինգուշերեն, լեզգիների լեզուները և այլն):

Յեթե վերցնենք կոնկրետ Ֆլեքսիանների «ազգակցականությունը», ապա գիտվում է հետևյալը:

Հնդկերուպական ծագում ունեն ուրարտերենում՝ ուղղակ. հոլովի s (գրվում է ճ), սեռակ. հոլովի -i, կոնկրետ հայցականի ո: Վրացերենին մոտ է ուղևորական -ad(i) վերջավորությունը, ինչպես՝ Biainadi «դեպի Վան, ի Վան» նման վրաց khalakhad «մինչև քաղաքը»: Ուրարտերենի ուղղական հոլովի -s և հայցականի -n վերջավորությունները, և թերևս ներդոյականի a վերջավորությունը (ebania «յերկրում», esia «տեղում», edia «այնտեղ, այնդ...») նման են խեթական և խուրրիական նույն հոլովածներին: Խեթերենում միայն ներդոյականի a ձևը, վորպես պրոտոխաթթիական մնացորդ, քարացած (վոչ պրոդուկտիվ) գրությամբ է մեզ հասել, ինչպես են՝ keldia, kunzagassia, hubrusšia և այլն ներդոյականները: Ուրարտերենի tu Յ դեմք հոգնակի նիշը (արրիստում) նման է խեթական ndu, լտախներեն -nto հրամայական հոգնակի Յ-րդ դեմքին: Վերջավորությունների և

սծանցների քանակի աեսակեաց ուրարտերենը ամենից շատ մտա
 1 խուրրի լեզվին, ինչպես են—ուղղակ. հոլովի s, հայց հոլովի
 n, ներգոյական հոլովի a սեռական-տրական հոգնակի -aue
 (-awe)¹, աորիստ 1 դեմք հոգնակի -uše (teruše «մենք դրինք»),
 xi(ni) ամանցը (=մեր «ական», «ային»)²,

Հավանորեն uzi || -izi բառաստեղծական տծանցով վորոշ
 գոյականներ են կազմվել խեթական, խուրրիական, ուրարաա-
 կան, հայկական և այլ լեզուներում. համեմատել խեթական՝ du
 puzzi, ispantuzzi ուրարտական՝ armuzi «առհ»(?) հայոց՝
 պարկուճ, բրդուճ, կճուճ և այլն:

Ուրարտական չեղոք բայերի «a հատկանիշը, վորը թերևս
 հնդեւրոպական ծագում ունենա, հատուկ է և հայերենին: Որի-
 նակ, uštabi «արշավեց», uštadi «արշավեցի», nunabi «յեկավ» և
 այլն նման հայոց՝ ծխալ (չեղոք), բայց ծխել (ներդործական),
 տյդպես և՛ թվել—թվալ, ճոճել—ճոճալ: Այդ «a» չեղոքի ըմբռ-
 նումը ի հայտ է դալիս նաև բայերի մեծ մասի մեջ, վորոնք
 այդ խոնարհումով են, ինչպես—փութամ, ցանկամ, տենչամ,
 սոսկամ, լուտամ, հուսամ և այլն, ինչպես և ենամ || -անում բա-
 յերի մեծամասնության մեջ: Չեղոք են այդ «a»-յով և բնաձայ-
 նական այժմյան բայերը, ինչպես՝ ազգալ, մկկալ խոխալ,
 փուստալ, կչկչալ քչքչալ, խշխշալ և այլն: Ուրարտական «a» չե-
 ղոք լծորդի և «u» ներգործական բայերի լծորդ լինելու մասին
 մենք դիտել եյինք անկախ ուրիշներից: Ի միջի այլոց, ուրար-
 տական այդ «a» չեղոքի ազդեցությունը պիտի տեսնել մեր
 կարծիքով և հայոց կրավորակերպ աորիստի «a» լծորդի մեջ,
 ինչպես են՝ ալ, ար, աւ, աք, ալք, ան (բայց ներգործակերպ են՝
 ի, եր,—, աք, եք—լք, ին): Իսկ ուրարտական աորիստի (չե-
 ղոք բայերի) 3-րդ դեմք յեզակիի abi կամ abe վերջավորու-
 թյունը նույն հնչյունաձևով և լծորդով («a») պահվել է և հայե-
 բենում՝ աորիստի ~աւ վերջավորության մեջ (ուրարա ušt abi =
 ընթաց~աւ), ուր՝ ուրարտ. «b» բազաձայնը կանոնավոր կերպով
 պետք է փոխանցվի հայոց «ւ» (—վ) բազաձայնով, ինչպես

¹ Դեռ Սեյուր յուր ժամանակ (1822 թ) կարողացավ այդ -ave հոլովա
 կան մասնիկի ֆունկցիան մտավորապես հասկանալ, ասելով—, ue or we is a
 possessive suffix, denoting possession or attribute» (աես նրա գիրքը՝ էջ 434):

² Որինակ, խուրրի լեզվում ասվում է Xurruxe umini «խուրրիական
 յերկիր» նման ուրարտական Etiuxi ebanl D auexi ebanl Eriaxi ebanl և այլն:

Biaina = Վան, ebani = տւան, abili dubi = ավելացրի (abili = ավել) և այլն:

Այս բոլոր տվյալներով կարելի յե յեզրակացնել, վոր ուրարտերենի ձևաբանական-քերականական կառուցվածքը ավելի կամ պակաս չափով դրսևորում ե մի քանի լեզվական սխտեմների ու տարրերի խաչավորումը, իբրև հետևանք նախաուրարտացիների և այլ փոքրասիական ժողովուրդների կուլտուր-եթնիկական հարաքերակցության պատմական յերկար ու ձիգ պրոցեսների: Ամենից շատ ուրարտերենը այդ տեսակետից առնչություն ե կազմում խուրրի լեզվի հետ, և չենք կասկածում, վոր այս կապը հետագա գյուտերի և ուսումնասիրության հետևանքով ավելի կուժեզանա¹:

б) ՌԻՐԱՐՏԵՐԵՆԻ ԱԶԳԱԿՅԱԿԱՆ ԲԱՌԱՍԹԵՐՔԸ

Ուրարտերենի բառամթերքը (լեքսիկան) վորոշ մասով կապվում ե հնդեւրոպական լեզուների հետ (կ ճյուղի լեզուների հետ) և այն ել հավանորեն խեթերենի և նրա ազգակից հին լեզուների միջնորդությամբ: Կան վորոշ թվով բառեր, վոր ընդհանուր են միայն խեթերենին և ուրարտերենին: Անշուշա ավելի բառեր են յեզել, վոր սուբարիական (խուրրիական) ծագում են ունեցել, բայց քանի վոր այդ վերջինից քիչ մատերիալ ե մնացել, այդ պատճառով ել շատ համեմատություններ չեն կարող արվել: Սեմական (ակկադական, արամեական) լեզուների ազգեցությունը անշուշա յեզել և յերբեմն հաջողվում ե տեսնել Վերջում կրերենք այն ընդհանուր լեքսիկան, վոր հատուկ ե մի կողմից ուրարտերենին և հայերենին, և մյուս կողմից՝ ուրարտերենին և վրացերենին:

Հնդեւրոպական բառեր-արմատներ

Ուրարտերենում տեսնում ենք առայժմ հետևյալ հնդեւրոպական բառեր.

1) Ուրարտ ag «տանել» (գերիներ), «անց կացնել»

¹ Պիաի մասնանշել այդ ուրարտա-խուրրիական համեմատական ուսումնասիրության մեջ հասկացեա J Friedrich-ի հետևյալ աշխատանքը— „Zum Subarätschen und Urartätschen“, ապված Analecta orientalia № 12 (1935 թիվ), Roma, էջեր 122—125):

(Ջրանցք)¹ = լատ ago, հուն ἄγω, հայոց՝ ածեմ, սանսկր ajāmi
և այլն բոլորն ել *ágō ձևից:

2) Ուրարտ par «վարել, քշել տանել» (=уВОДИТЬ)՝ գերի-
հերի, անասունի և ավարի մասին (parubi «քշեցի տարա» = հու-
նարեն πορεύω („führe, verschaffe“) սանսկր. pi par-ti (=führt
hinüber geleitet), գոթերեն faran (=gehen) „fahren“ և այլն
(տես Fr. Hrozny, Bogh. St III, էջ 10, ծանոթ. 1)²:

3) ki || ke գերանվանական ածանց՝ անվորոշ առում պատ-
ճառելու համար ինչպես aluše, «ով», բայց aluki (aluke) «վորոշ
некоторый» կամ թերևս՝ յուրաքանչյուր (և նման բան) = խե-
թերեն ki (որինակ kuiški «ով»), լատին. que (որինակ՝ quis
que), լիդիերեն ke (որինակ՝ tike «վում») , արիական ča հա-
յոց -ք (ո-ք, ի-ք ձևերի մեջ) և այլն:

4) uli-še «այլ» (другой), վորի uli-արմատը մենք կապակ-
ցում ենք լատիներեն alius «այլ», հունարեն ἄλλος (կյուպրա-
կան՝ ἄλλος) հին իրլանդական aile, հայոց «այլ» և գոթերեն
aljis ձևերի հետ, վորոնց նախնական արմատն է *alyo :

5) uki «իմ», որինակ ebanl-uki «յերկիրս, իմ յերկիրը»,
eurl-uki «տիրոջս», kai uki «առջևս» = խեթ uka (uga, ugga)
«յես», վորի հետ միասին կապվում է հնդկերուական *ego
(=յես) դերանվան հետ. ուրարտական այդ uki «իմ» դերան-
վանական կցույթը խեթերենի uka-յի հետ սկզբում յեղել են
անշուշտ այլ ձայնավորով (e?), ինչպես ուրարտական uli(še)
«այլ» բառը յեղել է *ali :

6) at ubi «կերա, կուլ տվի», վորը վերաբերում է յերկր-
ներին («յերկիրը կերա») և մի յերկու տեղ փոխարինված է
նաև «ուտեստ» դադափարանշով (Սարգուրյան աարեգրերում) =
լատ. edō, գերմ itan հայոց ut em, խեթերեն ed || ad- «ու-
տել» և այլն:

7) parie «մինչև», վորը գործ է ուծվում ռադմական տր-

¹ Որինակ, mi pill agubi «այս Ջրանցքը անցկացի ի» aše SALlutu agubi
KLR Biainadi «այր(և) կին տարա (քշեցի) Վան»:

² Ուրարտերենի այս ստուգաբանչութունը, ինչպես և մյուսները, մենք
ենք առաջադրում: J. Friedrich-ը այս parubi-ն թարգմանում է „ich erbeute
te“ կամ „ich packte“: Topzawa-յի արձանագրության ուրարտական մասում
կարգում ենք— 1Urzanani... parubi „den Urzana. packte ich“ = «ստուր.
1Urzanā ina kati ašbai den Urzana packte ich mit der Hand“ (Caucasica
Easc 7, էջ 56):

ձանադրություններում (kuṭaadi pari KUR A «տիրեցի մինչև A յերկիրը») = խեթ parā «գուրս», սանակը pára- «գեներ, հեռու, առաջ», ավետար parō (id.) հուն περᾶ («weiter») գոթերեն fairra «fern», հայոց՝ հեռի:

Ուրարտա-խեթական բնդիանուր բառեր

Առայժմ մեզ հաջողվել է նկատել հեռույալ ընդհանրությունները.

1) Ուրարտա xaṭ ubi «անջատեցի», որինակ՝ xaṭubi (կամ kuṭubi) parie KUR A. = անջատեցի մինչև A յերկիրը. համեմատել՝ խեթերեն hatt («schneiden, schlachten», Papanikri էջ 83) և հայոց՝ հաս-անև:

2) Ուրարտա ti- «ասել անվանել» (aluše tiulie «ով ասե», tialtu «ասացին»¹, tiini «անուն») = խեթերեն te «ասել, խոսել»:

3) Ուր. aš «նստեցնել, բնակեցնել» (ašubi, ašulabi և «z» նախածանցով՝ zašuai «բնակեցրեց» յերկրները) = խեթերեն aš բայարմատին, վորը դործ է ածվում katta «ցած» նախադրությամբ և թարգմանվում է «katta aš- «absetzen verbannen», կազմած և հասարակ (deponens) բայից՝ aš «նստել» (ašatar «նիստ, հավաքույթ»):

4) Ուր. kai «առաջ» (=ասուր. ina pan «ի դեմ»), որինակ՝ ¹Argisti kai, ¹Menua-kai և այլն, իսկ մի անգամ տողավերջում և ka (Sarduri ka) = խեթերեն kâ «այստեղ, ահա»², թերևս սրանց հետ է և հայոց բարբառային «կու» (կու գնամ = ահա գնում եմ > կգնամ, пойдю), վորը կա և լազերենում ապառնի սանդեկու հաժար ko ձևով:

5) -uki «իմ» = խեթական uka «յես» (տես վերը):

6) edia «այնտեղ, там» = խեթ edi «գեներ, գեպի այն կողմ (տես Papan., 82): Ուրարտերենի կազմության համար համեմատել նաև խեթերեն apia «այստեղ» և գոյականներից ներգոյական հորովով — šinapšia, kunzagaššia, ḫuprušḫia, tuzzia, zaḫḫia, keltia և այլն և այլն (Papan., էջեր 11, 63): Կտ և ուրարտերենում edi առանց «a» ներգոյականի (edi šiabi kai-uki «այն տեղավ առջև») և ina բացառականի վերջավորությամբ՝ edini

¹ Ակիդերեն գրա թարգմանությունն է iktibiu («ասացին»)

² Sommer-ը և Ehelolf-ը թարգմանում են hier (in diesem Falle) տես նրանց Papanikri էջ 4:8

(Շնրանից, из того) վորպես հեադիր, ըսա իս այդ edin=հայոց անդէն, իսկ istini=հայոց աստէն:

7) Ուր. laku du- «փլցնել», վորից գործ ե ածված laku du lie (ով «փլցնե» այս բերդը), lakuiani «փուլ յեկած» = խեթերեն laki „il fait tomber“ (Hrozny Code hitt., եջ 6), ուր խոսվում ե ատամբ թափելու մասին:

8) Ուր. ini «այս» = խեթ. eni և չեղոք սեռի՝ eni ini «այս, այն», (Hr., Spr. d Heth 220):

9) Ուր. ulx- «հոսել (այդպես ենք հասկանում ulxulini բայածեր Գեղիշդյուրի Ռուսա I ի արձանագրության մեջ), վորը կազմած ե հավանորեն ւ նախածանցով (= ուսաց у ВОДИТЬ, у-ХОДИТЬ. = խեթերեն „u“ նույն նախածանցին) և *lax- արմատից, վորը անսնում ենք մենք խեթերեն lah_uul՝ «ջուր ե թափում», lah_uuraš - ջրի աման ե, lah_ua «արշավանք», lah_uiatar (id.): Ուրարտերեն ulx բայարմատը նույնությամբ մնացել ե և հայերի մոտ (ուղիս = ջրի հոսանք):

10) Ուր. Lu aweraš-ill «ողնական գորքերին» (Հայց հոլ.)¹(?) – խեթերեն wareš «ողնության դալ» (Hr., Bogh St III 176^s, Sommer, Héth II 48):

11) Ուր lur «պարտավորեցնել» (?) գործ ե ածվում միայն Սարգուրյան տարեգրի VI արձանագրության մեջ (աես մեզ մոտ եջ 25 – 26) turubi ատրիսա 1 դեմք յեզակի ձևով («պարտադրեցի, պարտավորեցրի»): Այդ lur արմատից ե և turini «պարտավորված» (= մեղավոր), վոր անսնում ենք անեծքի ֆորմուլայի – «ով այս արձանագրությունը ջարդե... մեղավորին Սալդը, Տեյշերան... թե անունը, թե տոհմը, թե սերունդը (mei tni, mel armuzi mei zilbi Զվարթնոցի տրձ-յան մեջ) հողին թող հանձնեն»: Համեմատել խեթ. tur «կապել». իմաստի փոփոխության տեսակետից (կապել > պարտավորեցնել) հմմտ լատ. ligo «կապում եմ» և obligo «պարտավորեցնում եմ», ուսաց ВЯЗАТЬ ե об’язать (սասցվել ե об-вЯЗАТЬ ձևից)

12) Ուր. šer du «բարձրացնել» (արձանաքարը անդից՝ esini) = խեթ. šarā da (նույն իմաստով): Ուրարտերենում կա ե առանձին šēri «ավելցուկ излишек», վորը մեր կարծիքով նույն բանն ե և հիմնականում նշանակում ե «բարձր» (հմմտ հայոց

¹ Այս պես եր թո ըգմանում Սեյ ը Թերես ավելի լավ լինի թարգմանել «առաջամարտիկներ»?

սարակ «գազաթ», այժմյան սար «լեռ», իսպանական sierra «սար, լեռնաշղթա»):

13) Ուր. tek «ձգել» (?) որինակ՝ Խալգը նվաճեց A յերկիրը (և) tekumi ¹Menua-kai «ձգեց Մենուայի առաջ»: Համեմատել խեթերեն tek uš nu (id.) (ըստ F Hrozny-յի tekušnu- „ü berggeben“?, ըստ Sommer-Eheioff-ի „zeigen, offenbaren“ ըստ A Götze-յի = „beweisen“): Թերևս ավելի ճիշտը լինի ուրարտերենը թարգմանել «մատուցել» վորո՞ւ ավելի մոտ կլինի խեթական բայի իմաստին¹: Հմմտ. հայոց յափօսակել («ափի մեջ ձգել» = յափս ասկել), ասլալել («ափ ձգել»), ցախալակել («առաջ գցել» իրեն, վորտեղից նախատակ — առաջի գիրքերում խիզախորեն կովող, իսկ հետագայում՝ մարտիրոս նահատակ), յիճալակել «հիշողության մեջ գցել» և այլն:

14) Ուր. nik «գումարել» (զորք), ինչպես մի անգամ գործ է անվել Սարգուրի սարեզրում «յես զորքերը nikuli» (= գումարեցի?): համեմատել խեթերեն կրկնակ բայը ninik «հավաքել (զորք)»:

15) Ուր. badg-ul-ubi «ցրիվ ավի» (?) = խեթ vatk- (id.) հմմա թերևս հայոց վայթ-եմ (առանց «ք» վերջահնչյունի)?

Ուրարտերենի և խեթերենի համեմատական բառադիտությունը անշուշտ ավելի շատ նվաճումներ կարող է ունենալ, յեթե ուրարտերենի շատ բառեր ճիշտ հասկացվեցին: Որինակ, ի՞նչ է նշանակում anuuni բայածեք (ատրիսա 3 դ. յեղակի), յեթե «պարաազրեցին», վորի դեմ բնագիրը չի մեղանչում, ապա այդ կապաչապանվեր խեթերեն նույն արմատի բայով (ania „leisten“, պարաազրել, anur „vorgeschriebene Leistung“, տե՛ս Papan, 41): Կամ, որինակ, ի՞նչ է նշանակում Մհերի գռան արձանագրության xuruna բառը, արդյոք «խորան» չե՞ վորի նմանը կա և խեթերենում (hurnau «վրան»?, կանանց մաքրվելու համար) և թերևս այդ xoron սկզբում նշանակեր «կամար», «յերկնային կամար» և «յերկինք» (հմմտ. սլավոնական хоромы храм «կամարածև շենք», պարսկերեն՝ harem), նման գերմանացոց Zelt «լրան» և Himmelzelt «յերկնային կամար» իմաստա-

¹ Խեթերենում կա և tekušami բայը, վորը դժվար է թարգմանվում. ի նկատի ունենալով, վոր դրա որչեպտը մարդ է, մենք առաջարկում ենք թարգմանել «վայր ձգել, վայր դնել» և նախադասության միտքը կլինի «այն մարդուն գու չպիտի վայր գցես»: Խեթագետները այդ tek- արմատը կապակցում են հնդերոպ *dek- = գերմ zeigen բայարմատի հետ

փոխությանը: Նման կոսմոգոնիական ծաղում և իմաստական անցումներ ենք մենք տեսնում խեթերին kammara «ոգ, բաց ասրածություն» բառի նկատմամբ, վորը թերևս սկզբում նշանակել է «յերկնային կամար» (=յերկինք) և պահվել է փոքրասիական յալազդի բառի մեջ (հույները վերցրել են Փոքր Ասիայից), հայոց կամար (=СВОД), լատին. camera գերմ Himmel «յերկինք» (ուր սկզբի «h» հնչյունը ստացվել է «k»-ից) և այլն և այլն: Յիթե մեր այս մտացումները ճիշտ են, ապա ուրարտական xuruna, հայոց խորան (=չագիր, վրան), սլավոնական хоромъ (храм) խեթական xurnau բառերը կարող էին նշանակել վոչ միայն «կամարածև վրան» այլև՝ «յերկնային—յերկինք» և կապվել հույների χιον-ος «ժամանակ» բառի հետ, վոր սկզբում նշանակել է «յերկնային շրջան» և հետո՝ ժամանակաշրջան:

ՈՒՐԱՐՏԱ ԽՈՒՐՐԻԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՌԵՐ

Ուրարտերենը քերականությամբ և բառամթերքով տմենից մոտ է խուրրի-միտաննի լեզվին: Մենք արդեն մատնաշել ենք ընդհանուր մորֆեմները—ուղղակ. հոլովի s, հայց. հոլովի n, ներգ. հոլովի a, սեռ.-տր. հոդնակի -awe (=խուրրիական we || wi), իսկ բայածևերից՝ աորիստ 1 դ. հոգն. uše: Մենք կարծում ենք, վոր խուրրիերենի յեզակի արականի d վերջավորությունը վորպես նպատակի արական («համար») նույն ծաղումով է, ինչ տեսնում ենք և ուրարտական ուղևորական հոլովի -d վերջավորության մեջ: Ռաս-Շամրայում յերևան հանված բևեռագիր, բայց միայն բազածայնական, գրության մեջ կարդում ենք Hbt d „für d Hepit“, šmg n d „für d Simigi և այլն (հմա. նաև šu-ta «ինձ համար»): Ուրարտերենում անգամ այդ d (=d) վերջավորությունը յերբեմն այդպիսի արականի իմաստ է պատճառում: Խուրրի լեզուն ևս ունի նման կոնգրուենցիա ինչպես ուրարտերենում, վրացիերենում և այլն: Ուրիական, DINGIR^{pl} URU-nibi na URU^y Samuh^{ah}-i-na duruh^{ah}-i-na: Խուրրի լեզուն ունի ni հատկացական ածականների համար նման ուրարտերենին (-ini):

Բառերից առայժմ կարելի չէ համեմատել—1) ուրարտ pitsuse (pisuše) «ուրախություն» = խուրրի piš «ուրախանալ» (տես «Zum Subār u Urart» էջ 135, ծան 2) 2) ուրարտ edi(a)

«այն(տեղ)» խուրրի eti «վերաբերմամբ»¹. 3) ուրարտ իս-k «ինձ» = խուրրի իս n «ինձ» իս-ta «ինձ համար», իս-we «իմ»¹ 3) ուր iēše «յես» = իս išaš «յես» (ըստ Friedrich-ի) 4) ուր pillie «ջրանցք»² = խուրրի («Ռաս-Շամրա») pala- (ըստ Fr-ի) 5) ուր. ar- «ասլ» = իս. ar (id) (ըստ Fr-ի), վորոնց հետ համեմատել և հայոց յ ար-իմ «при-даюсь» սկզբնական ar նույն արմատից 6) ուր euri «աեր» = իս. արի (|| ewiri)-id 7) ուր xuradi «զինվոր» = իս xurati (ակկադ. kurati), Իհարկի, բառամթերքը այսքանով չի սահմանափակվում, սակայն նյութական և հեռագոտական տվյալները առայժմ պակասում են³: Սուրբարյան արտահայտությունն ունեն ua, ia, a վերջավորվող հատուկ անունները, ինչպես Menua Inušpua, Tariria, Sugunia, Teišeba Rusa Xubuškia, Kacia (խուրուշկացիների թագավոր), դիաուլի թագավորի Asia անունը և այլն, նման Ušpia, Kikia, ũuia, Melitia, Daria, Arkania և այլ սուրբարյան ձևերին (հմտ հայոց՝ Շարա, Արա, Հարմա, Ամասիա):

Սուրբի ցեղի արձագանդը մնացել է հայոց հին մատենագրության մեջ: Խորհնացու կողմից հիշվող Խոռ, Բազ, Մանաւազը — վորպես «Հայկի» վորզիներ, անշուշտ ցեղանուններ են, պերսոնիֆիկացիայի յենթարկված, ինչպես այդ նույնը տեսնում ենք և այլ հին մատենագրություններում (Աստվածաշուհ, վրաց «Քարթլիս ցխովրեբա» և այլն): Խոռից Խորհնացին կազմում է Խոռխոռունի նախարարությունը, այսինքն պիտի ընդունենք, վոր այդ ազգեցիկ ֆեոդալական իշխանությունը խուրրիական ծագում ունի, ինչպես Մանգակունիները՝ manda ցեղից, Սլկունիները՝ sala ցեղից (saiak և mandak անուններից), Ամատունի mada («մեդացի») ցեղից և այլն: Հայոց «խոռ» արասմանությունը ցույց է առնում, վոր «խուրրի» անունը հնչվել է «խոռ(ս)ի» օձայնա լորով ունենք նաև «խոռ» բառը «Ժլաս» իմաստով վորը

¹ Մեր սառագրանությունն է

² Այդ pil- արմատը մենք տեսնում ենք հայ ց պեղ եմ բայի մեջ (բեղ <բի>)

³ Թերևս խուրրի լեզվով I u tanišawa „Scepterträger (գայխոտնակիր)» բառը հենց սկզբում նշանակել է «կրող» կամ ավելի ճիշտ «տանող». այն ժամանակ tan- արմատը «տանել» հիմնական իմաստով մենք կհամեմատեցինք ուրարտ նույնարմատ բայի հետ (tanuh «մատուցեցին» <տարան>), վորը կա հայոց լեզվում («տան-ել») և վրացիների մոտ (taneba): Սուրբի լեզվում առաջ ուղղունվում էր tan oš ikka «կմատուցեմ», վոր Թերևս նշանակել է «կաանհմ»:

նույնպես այդ ցեղի տնունից և մնացել, թերևս վորպես հասկանիշ դրանց առևարական լինելու համար: Այդ առևարականները Միջագետքի կուլտուրան ասարածում էյին դեպի փոքր Ասիա և Եգեյան կղզիները (հմմտ. դրանց ձիարուծության հմտությունը): Իրանական վորոշ ազգեցություն նկատվում և դրանց պանթեոնի մեջ ի դեմս Indra Našatia և այլ ասավածների. թերևս և իրանական («միտաննի») ցեղը ևս խառնվել և դրանց հետ, առաջացնելով վորոշ իշխող դինաստիա և mariannu ազնվականությունը (յերիտասարդներ), իսկ լեզուն շարունակել և մնալ բնիկ սուբարիականը՝ խուրրիերենը (h u ur li li)¹:

ԱԿԿԱԴԵՐԵՆԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Միջագետքի հզոր կուլտուրան և լեզուն (ակկադերենը) ընտկան և վոր պիտի ազգեյին Ուրարտուի և նրա լեզվի վրա, թեպես վերջինս սեմական լեզու չև վոչ սխաեմով, վոչ ևլ բառապաշարով: Ակկադերենի այդ ազգեցությունը անշուշտ ուժեղ և յեղել և այդ բանը մենք պետք և ընդունենք a priori, թեկուզ շատ մատերիալ դեռ պակասում և. Այդ ազգեցությունը յեղել և կամ տնմիջպես և կամ այլ նաիրյան (Սուբուսկիա, Կադմուխի...) լեզուների միջնորդությամբ, վորոնք դանվում էյին ուրարաացիների և ասուրարաբելացիների միջև Այդ փոխառությունները կարող էյին լինել և խուրրի լեզվի կամ թերևս արամեացիների միջնորդությամբ: Այդ ճանապարհներով են Միջագետքի մի շարք տերմիններ փոխանցվել հետագա հայերին

Ասուրա-բաբելական (resp սումերական) բառեր են ուրարաերենում—

1) zari(e) «ծառ», ինչպես և šuxe «թուփ բույս»(?), վորոնց սկզբում կս GIS դետերմինատիվը վորը նշանակում և «ծառ փայա»: Առաջին բառը կարելի յե դրել և šarie կամ tsari(e) և անցել և նույն հնչմամբ ու նշանակությամբ հայերին: Յերկրորդ բառից կա և ածանցավոր suxinatsie (թփուտ, այգի?):

¹ Mariannu («ազնվական» յերիտասարդներ?) տնունը, վոր շատ երգործ ածվում Մյուրիայի և այլ հարեան յերկրների հին իրանական և իրաներենից ազգված հին այլևայլ ժողովուրդների մեջ (և հնդկերենում?), մենք ուզում ենք յեղած աեսել և հին Պարսկաստանում: Մենք առաջարկում ենք Յեղիշե պամազրի «զունդ մատեան» լավագույն գորամասի տնունը կարգալ «զունդ մարեան», ի նկատի ունենալով, վոր հայերենում յերկաթագիր Տ և Մ օտաերը հեռությամբ կարելի ևր շփոթել:

2) mana(e)—վորոշ չափ ե (արծաթի, վոսկու, անադի համար) և համարվում ե բարելական բառ: Թողնելով բառի ծագման պրոբլեման, մենք կմատնանշելինք, վոր այդ բառը կար վոշ միայն ուրարտերենում, այլև հեաազա հայոց մի շարք բարրաուներում, ինչպես շամախեցոց ման (=կես փութ), Մարադայում ման (=մեկ լիտր):

3) Ê GAL «պալաա», իսկ ուրարտերենում «բերդ» իդեոգրաֆիկ գրությամբ բառը (սոււմերական, ծագումով ե) դառնում ե ակկադերենում ekai: Մենք առաջարկում ենք այդ իդեոգրաման հասկոնալ հնչյունական գործածությամբ ուրարտացիներից և թերևս ասորիներից այդ բառը մտել ե և Հայաստան, ուր գանազան տեղերի «Անդդ» հաաուկ տեղանունները սկզբում պարզ նշանակել են «բերդ». հայերից անցել ե և վրացիներին M angl isi ձևով: Սոււմերա-ակկադական egal || ekal-ը անպես ե դարձել հայոց մոա անդդ (<*agel կամ *agil նախնական ձևից), ինչպես «անդդ» թռչունի անունը ստացվել ե *akil նախնական ձևից (հմմտ լատիներեն aquila «անդդ») Անդդ բերդանունը ասորիների մոա հնչվում եր egil, հույների մոա Ingil-ēne:

4) Ուր xuradi «գինվոր» = ասսուր. kurati և խուրրիական hurati

5) Ուր nax adi «բաղմեցի» (դահի վրա) = ասսուր nah u (id)

6) Ուր. tamx-ubi աորիստը edinı նախագրությամբ նշանակել ե մոտավորապես «դուրս հանել, աքսորել» = ասսուր tama h u „ergreifen“ (բռնել, կախել)?

7) Ուր surx-ani «վարձկան (գորք)»? = ակկադ su h ur «վարձ» վորից հայոց՝ սխուր «վարձ» ան-սխուր, սխուրան («գլխադին») և վրաց m saxuri «ծառա» (սկզբում՝ վարձկան?): Թերևս šurx-ani նշանակե «արի, քաջ» (հմմտ. հայոց՝ սխր-ալի):

Ընդհանրապես պետք ե ասել վոր ուրարտական փոխառությունների խնդիրը դեռ գծվար ե լուծել: Շատ բառեր կան հայերենում, վորոնք Միջագետքից են գալիս սակայն ուրարտերենում չենք տեսնում: Այդ փոխառություններն են — կնիք (ասսուր kunnukku kanıku, վորից ըսա իս և ոուսաց книга = գիրք նման վրաց cigni «գիրք» < sign um «նշան» բառից), անագ (ասսուր. anaku), կուպր (=kupru), գադաթ (=kakkadu) ագարակ (=սոււմեր agar վորից հունալատին. ager, դերմ Acker և այլն), վորպես սարկական կամ Ֆեոդալական մի սոցիալ-տն-

տեսական նոր յերևույթ՝ կապված մասսայական պարագիծը աշխատանքի և հողի մասնավոր սեփականության հետ: Կան բառեր, վորոնց իմաստը պարզ չէ, ինչպես ուրարտ salmat xi («գաշնակից»?), վորի նմանը մենք տեսնում ենք և ակկադերենում (հմմտ և հայոց հասուկ անունը Սաղամուա): Իսկ շատ հայկական բառեր ունեն մինչև իսկ սուսերական արտաքին, ինչպես հայոց աւդի (օդի) = սուս. udu («վոչխար»), հայոց անաւթ (անօթ) = սուս. uutu (id) հայոց աւդ (օդ) = սուս. ud «ոք», հայոց պատ (сцена) = սուս. bad (id.), հայոց էշ — սուս. anša (վորից հուն <*osn-os, լատ. asinus ocel, Esel.), հայոց գարշապար = սուս. gir. šapal («վոտ» և «տակ», այսինքն՝ վոտատակ), հայոց՝ կապար = սուս. ud. kabbar (id) հայոց՝ ասրգալ (<*ասգալ) = սուս. adagur և այլն:

Այս բոլորը ցույց է տալիս, վոր ասսուրա-բաբելական և սուսերական ծագումով շատ բառեր են յեղել, մեծ մասամբ «կուլտուրական բառեր», վորոնք ուրարտացիների և պատմական Հայաստանի այլ բնիկների միջոցով անցել են հետագա հայերին

ՈՒՐԱՐՏԵՐԵՆԻ ՏԱՐՐԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայոց լեզվի վոչ հնդհրոպական ասորերը դալիս են մեծ մասամբ պատմական Հայաստանի բնիկների (անգրածինների) լեզվից վորոնք յեղել են վոքք Հայքում, Տուրուբերանում, Մոփքում: Ուրարտական ձևերն ու բառերը վորոչ սահմանափակ քանակով նույնպես թափանցել են հայոց լեզվի մեջ, վորպես կամ ընդհանուր բառեր ու ձևեր մյուս վոչ ուրարտերենների հետ և կամ միայն զուա ուրարտական տարրեր: Հայերենի վոչ հնդհրոպական ասորերը հետագայում հարստանում են նաև ի հաշիվ վրացական (մանավանդ ճան-մեղրելիտն) լեզուներից, մասամբ և սեմական ու իրանական, իբրև հայերի ձևավորման վերջնական արդյունք:

Քերականական տեսակետից ուրարտերենն ու հայերենը չեն սկսում բառեր „r“ բազաձայնից, ունեն կոնդրուենցիա, դերանվանական մասնիկների գործածություն, չեզոք բայերի համար „a“ նիշը (և կրավորականի „i“?), սեռական հոլովի համար „l“ ձայնավորը, աորիստ 3-րդ յեղակի—abi = հայոց—աւ և այլն: Իսկ բառամթերքից հայոց լեզվում կան, մեր սառլգաբանությամբ, հեռակալ ընդհանրությունները—

1) Ուր. abili (dubi) = «ազել (արի)», ազելացրի > միացրի (հմտ գրաբ յազելում «прибавляю»):

2) Ուր. ebanı «յերկիր» = «աւան» («մեծ գյուղ»), մեդրելահան abanı քարթվելահան ubanı (բայց և -abanı Gardabanı-յի մեջ, վորը կտար հայերենում՝ Գարգաւան): Այս «աւան»-ը ի դուր համարում են իրանական բառ:

3) Ուր. euri (ewri) «տեր» = հայոց արի (նույն իմաստով) հետևյալ բառերի մեջ՝ որեար (ճիշտը՝ օրեար < աւրի-եար) կամ աւրեանք (< աւրի-անք) «աերեր, ըսա ն Մառի՝ «ЗНАТЬ, ազնըվականներ» և աւրի-որդ «տիրոջ վորդի» (> աղջիկ): Այս euri-ն կար և խուրրի լեզվում: Համեմատել թերևս և վրաց արալո (=տեր Aralo?) բացականչութունը:

4) Ուր. inukanı «նույն» = հ ինքըն, սեռակ հոլ ինքեան:

5) Ուր. ištini «այստեղ» (հնչվել է՝ istin) = հ. ասաէն «այստեղ, այս նույն տեղից» (отсюда же), վորի համար կա և ուրարտ. ištini (= istin «այս տեղից»):

6) Ուր. edini, վորը գրվում է և edin և հախնորեն նշանակել է «այնտեղից» (edia = անդ) հ անդէն (там же отсюда же):

7) Ուր. ul «գնալ, ուղևորվել» (ui adı «գնացի», բայց ul u lie կյենթարկե, uluštaibi || uluštibi «առաջնորդեց» թալգը) = հայոց ուղի և կամ ուղ-առևղութուն, ճանապարհ» (ուղ-իդ, սանդ-ուղ-ք «աստիճան ուղի» կամ «փոսուղի», ինչպես տեսնում ենք վանի ժայռերի վրա)

8) uduli «գինի» հ տուլի «վայրի խաղող», վորը կա և արաբերենում (duali) և ուաիբերենում (tol) վերջինս անցել է ուրարտացիների միջոցով

9) meš- «մատուցել նվիրել» (meš ulı «մատուցեցին», umešini «նվիրվեց, արվեց») և meše «հարկ, տուրք» = գրարարի մես-իմ «նվիրվում եմ», մես-ութուն «նվիրվածութուն», ПОСВЯЩЕННОСТЬ» (մեր թարգմանութունն է)

10) suṭuk ubi (suduk-ubi) «ազերեցի» (?) — հ շտոդ-անեմ¹:

11) šani «կաթսա» = հ սան «կաթսա»²:

¹ Այս ստուգարանութունը Մանդալլյանինն է («Les inscriptions cunel formes urartiques Venise, 1900 էջ 419»):

² Այս šani (հնչվել է san) բառը գործ է ածվել Կելիշինի յերկլեզվյան արձանագրության մեջ և ստուգված է Götze-յի կողմից (տես ZA V, էջ 108): Մանդալլյանը պատահական կերպով տեքստի այլ հատվածում, ուր չկա այդ բառը, «կարգաց» այդ šani բառը, համեմատելով հայերենի հետ:

12) ^d Ar a (ասածու անուն է) = Արա, վորպես գարնան և վերածնունդի աստված (հմմա խեթերեն նույն գարնան կանաչի P Ara աստվածը):

13) ^d Araša- (^d Aratsa) վորպես «արօտի» աստված(?) = հայոց «արած-եմ», վորտեղից արաւտ (-արօտ)

14) arṁ-uzi «սերունդ» = հայոց՝ արմ-ասա, դ արմ, արմ (այս-անդից՝ արմ-անալ, գ-արմ-անալ, ընդ-արմանալ «քար կարել, оцененеть»):

15) paḫini «յեղ, կով» = պախրէ «յեղջերու» (п | г փոխան-ցումով, հմմա. արար bakara «յեղ, կով», ասորիների baḫrā, հրեական bākar «տավար» վորոնց հետ համեմատել վոչ միայն փոխանված պաքարայ-ք, այլև «պաճ սր»):

16) ḫat-ubi «կտրեցի, անջատեցի» = հ. հաա-անեմ, յաա-եմ:

17) šeeri «ավելցուկ» և ser (še-ir) «բարձր» = հ սար, սար-ակ («գաղաթ»), նման ուսաց сверх(того) «ավել (դրանից)» և вершина «գաղաթ»

18) tsue «ծով, լիճ» = հայոց «ծով» (և վրաց зγue?)

19) tsišul-dulini (Մհերյան գոան արձ.) «ծէս, ծխական արարողութուն» (?) = հայոց և վրաց «ծէս» (id)

20) kiura կամ kira «հող յ՛րկիր» (իսկ ebanı «յերկիր, страна») = հայոց «յերկիր», վորը ըստ իս, սաացվել է ekir հին ձևից erkin ըստի ձևաբանական նմանողությամբ (ազդեցու-թյամբ). հմմտ. և սուսերական ki ur (id):

21) pili(e) «ջրանցք» = հայոց պեղ-եմ (արմատն է յեղել pil):

22) veji «գունգ», «գորամաս» = հայոց պեղ-«գյուղ» (սեռ հողով պեղ-ջ վորից պեղ-ջ-ուկ) իմաստարանորեն համեմատել իրանական «գունգ» և քրդական գունգ «դյուղ» (հմմա նաև Գունգ ի Շապուհ):

23) uiri «պեր գիրուկ» (Մհերյան գոան արձ.)? — հայոց «յոյր» (id.):

24) ulx. «հոյել» — հայոց ուղիս «ջրի հոսանք, հորձանք»:

25) ulg-uše «առողջութուն» = հայոց «ողջ» (olj) <*olg-ից?

26) ipx ulie «փշրե»(?) = հ. փխ-ուր, փշ-ուր:

27) urb ulini «գոհեցին զեղևցին»՝ Lu urbika (urbikase ուղղ. հող, urbikani- բաց հող.) — քրմական պաշտոնյա («գե-ղող»?) = հայոց գավառական (Արարաս, Ղարաբաղ)՝ որովհետև, որ-փել (<orob el orb el) «հեղուկը շերեփով (բաժակով և այլն)

վերցնել և թափել նորից ամանի մեջ (դովացնելու համար)»¹, Թերես Որբելյան նախարարությունը քրմական ծագում է ունեցել? Orb-el սկզբնաձևը պիտի նշանակի ըստ այդմ՝ գոհող, դեղող ուր -eli ներդործական ներկա գերբայի իմաստ է պատճառում (հմմտ. վրաց՝ m šob eli «ծնող», m-čr-eli «կարող»... նախախեթական mašš el կամ parš el քրմանունը վոր պիտի նշանակեր «որհնող» կամ «բաժանող»)

28) Kariše ցորենի չափ է = հայոց «կապիճ» նույն-իմաստ բառին:

29) patari «քաղաք» վորը սկզբում նշանակել է «պատած, պարսպաաված տեղ» pat բայարմատից վոր կա և հայերենում (պատել պատազիմ, փաթ-ոյթ, փաթաթիմ...) և խեթերենում (pataliandu «թող պատեն» pitt-ula «բրդի փաթույթ, փաթուլ, փաթիլ»): Իսկ patar բառը անցել է ամբողջությամբ հայերին— հմմտ. Եղի-պատր-ուշ (ուր Եղի «վերին» = Եղի-վարդ «վերին ջուր»?), Փաթր-իճ «փոքր բերդ» համեմատակ նաև՝ Kul bitarni Uzina-bitarni քաղաքանունները հին Հայաստանի տերիտորիայի վրա (ըստ ուրարտ. արձանագրությունների) և այլուր պատահող Pitura Pitra, Ptera, Petra և այլն բերդանունները (այդ petra «բերդ» անունը անցել է հայերին «բերդ» և աստուրներին birlu անվանումներով)²:

Ուրարտերենը կարող է անշուշտ շատ բառեր պահած ունենալ հայերենի մեջ, բայց գրավոր մասերիալ չկա, իսկ վորոշ մասն էլ այդ ուրարտական բառերից մեզ մնում է անհասկանալի: Յերբեմն լինում է յերկու լեզվադրյուրների ազդեցություն ու կոնտակտ հայոց բառի մեջ: Որինակ, ուրարտերեն ieše (հնչվել է ies), վոր նշանակում է «յես, Գ», կարծես թե պահվել է հայոց «ես es» (> այժմ՝ յես) գերանվան մեջ, բայց սրա մեջ և կա հնդեվրոպական ego-ի նստվածքը վոր պիտի տար հայերենում *ec (եծ), կամ *ez (եզ):

ՌԻՐԱՐՏԱ ՎՐԱՑԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ

Արդեն մեր կողմից մատնանշվել է ուրարտերենի ուղեորական հոլովի (և խուրրի ար հոլովի) -di մասնիկի նմանությունը

¹ Տես Ս. Ամատունի.— Հայոց բառ ու բան (Վաղարշ, 1912, էջ 534)— «որփել, որոփել—յեռացող հեղուկը յեփից շերեփով առնելով՝ վեր բարձրացնել է ծորացնելով թափել կաթսայի մեջ վորպեսզի յեփը կաթսայի շրթունքից չթափվի»:

² Տես իմ «Общие элементы между урартским и хеттским языка ми», Госиздат Армении, 1936 г., էջ 40

վրացական ad մասնիկին: Բառերի մեջ մենք կհամեմատեյինք —
 ուր. atibi «10000» (=ath-ibi «ասա հարյուր»?) վրաց athi
 «տաս», ուր. tsali կամ zali, վոր հաճախ գրվում է šali (հնչվել է
 sali) «տարի» = վրաց tseli (id), ուրարա šexiri (հնչվել է sexi
 ri) «կենդանի, живої» = վրաց ԸXOVARI «կենդանի» (ЖИВОТНОЕ)
 ուր. durubani «ժամանակ» (?) = վրաց dro droeba (id)¹, ուր
 sila «կին» = վր. cola (id):

Ուրարաբերենի տյա համեմատու-լեզվաբանական հետազոտու-
 մը վորպես պատմության նախնական մի աղբյուր միզ ասում է,
 վոր տյը լեզուն ամենից շատ առայժմ ազերսակցվում է սուբար-
 յան (խուրրի-միաաննի) լեզուի հետ հետո՝ խեթերենի հետ և
 մասամբ վրացերենի Մահմանափակ քանակով հայերենում կան
 ուրարտական բառեր և ձևեր, վորոնց մի մասը կտրոզ եք ընդ-
 հանուր լինել Հայաստանի և այլ անդրածիններին, վորոնց ենք
 պարտական հայոց վոչ հնդկերոպական հոծ լեզվամթերքի համար:
 Այժմ քննենք նույն պատմա-համեմատական ասպեկտով և ուրար-
 տական պանթեոնը, վորպես նախնական աղբյուր

3 ՈՒՐԱՍՈՒԻ ՊԱՆԹԵՈՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Ուրարտական պանթեոնը անշուշտ արտացոլած պիտի ու-
 նենա, գեթ վորոշ չտփով, յուր կրողների պաամական զարգաց-
 ման այլևայլ յիլեջները, հտակապես ցեղերի կամ տոհմերի խա-
 չավորման, դրանց քաղաքական առաջնության և հնագույն
 դրանց և հարևան կուլտուրաների փոխազդեցության բնագավա-
 ռում:

Արձանագրությունների մեծ մասը (շինարարական, կուլ-
 տուրական...) նվիրվում են գերագույն աստված Խալդուն (Xal
 di), վորը Ուրարտուի քաղաքական հզորության և եքսպանսիայի
 սիմվոլն էր: Անշուշտ սա յեղել է սկզբում վորոշ ցեղի կամ ան-
 զի աստվածը, հավանորեն ուրարտացիների տյն սկզբնական

¹ Թեպետ վրացերենը (dro) տվելի մոտ է տտրիների dāra „aetas, sae] cuculi m“ (վորից հայոց դար) և հրեական dōr «դար» բառերին: Անշուշտ հայոց «տարի» բառն ևս մոտ է տյա սեմական ակունքներին քան վրաց tsei բառին, ինչպես վոր տառադրվում էր Մտոր (վրաց tseli || իվերական *išar = հայոց «տարի»)

հատվածի, վոր կապված է յեղել Վերին Չավ գետի վերին հոսանքում գտնվող Մուսասիրի շրջանի հետ: Այս քաղաքի Խալգյոն տաճարն են գալիս Իշպուխի և Մենուա թագավորները, նվերներ տալիս, զոհաբերություններ կաատրում, փոքր մի սըրբատեղի կառուցում: Մինչև իսկ ասուերների թագավոր Սարգոնը աղոթել է այս տաճարում. հիշենք այդ տաճարի քուրմ Ուրգանայի խոսքերը. «Իու ասում ես, վոր առանց թագավորի (Սարգոնի) թույլտվության վոչ վոք գորք չի մտցնում [Մուսասիր] աստվածներին յերկրպագելու, բայց յերբ ասուերական թագավորը յեկավ միթե յես խանգարեցի նրան ինչ նա եր անում, անում է և սա [Ռուսա I-ը], ինչպես յես ընդդիմանամ նրան»: Մուսասիրի Խալգու այս տաճարի ավերը և Խալգու սրձանի հափըշակումը Սարգոնի կողմից այնքան ցնցեց Ռուսա I-ին, վոր նա ինքնասպանություն գործեց: Ուրարտուի ժողովուրդները, գեթ մի մասը, իրենց խալգ եյին անվանում, վորն անշուշա յեղել է հետագայում Ուրարտուի հզորության ժամանակ. այդ ժամանակ, ինչպես և շատ դարեր հետո, ժողովուրդներն ու ցեղերը տվելի շուտ իրենց աստվածներով կամ հավատով եյին իրենց անվանակոչում, քան լեզվական հաականչով: Ուրեմն պիտի ընդունել, վոր Խալգ աստվածը սկզբում յեղել է ուրարտական կամ նաիրյան վորոշ ցեղի կամ ցեղերի աստվածը, վոր այդ ցեղը (ցեղերը) աարածվելով կամ գաղթելով վերջիվերջո Վանի շրջանը և խառնըվելով տեղական այլ ցեղերի (թերևս նույնպես ուրարտական) հետ, հավանորեն b1a ցեղի հետ ստեղծել են հետագա հզոր Բիայնան--Ուրարտուն: Միայն Խալգ աստվածն է, վոր ստանում է «տեր» անվանումը՝ մակդիրը (Xaldie eurile «Խալգուն, տիրոջը»):

Հաղվաղեպ արձանագրություններ ունենք, վոր նվիրվեն այլ աստվածների: Իրանցից մեկը Վանի «Սոսրով ջամի» մզկիթի քարակոթողն է վորը նվիրված է Xutuini աստծուն, վորը պետք է «առողջություն, ուրախություն (և) մեծություն» շնորհի Մենուային և յուր վորդի Ինուշպուլային (7 առդից է) Մի նման քարակոթող (6 առդից), վորը գանվել է Վարագում, նվիրվում է Մենուայի կողմից Teiseba ամպրոպի աստծուն: Քյուլանդոսի Ռուսա I-ի արձանագրությունը, թեպետ սկսվում է «Խալգու փառքով, տերունական» (= Խալգ աիրոջ փառքով), բայց այդտեղ շինվող բերդը նվիրում է Teiseba աստծուն, կոչելով նրա անունով [«^dIM 1 URU»]: Իշպուխիի և Մենուայի մի արձանագրության մեջ («Աշրուգ-դարգա»-յի արձ), վորը խոստում

Պալդու դուռը (Xaldiei susi) շինելու մասին, վորոշված դոհարերությունների մեջ Պալդուց հետո հիշվում է Uarubani աստվածը («մի գտա Պալդուն մի յեզ Պալդուն, մի երինջ (?) Վարուբանի աստծուն...») Սևանա ջրերի վրա կառուցված բերդը հասկանալի յե վոր նվիրվում է Teišeba ջրի, տարերքի և ամպրոպի աստծուն: Թերևս Xutuini աստվածը առողջության աստվածն էր, վորովհետև նրանից է հայցվում «առողջություն, ուրախություն, մեծություն», թեպետ հենց նույն «Պոսրով ջամի» մղկիթում կա և «Պալդ տիրոջը» նվիրված մի քարակոթող, վորով նույն Մենուան հայցում է այդ նույնը յուր և յուր վորդու համար¹: Varubani աստվածը հիշատակվում է «Պալդու դուան» շինարարության հետ թերևս դա կամ շինարարության կամ լեռների աստված է (այդ «դուռը» շինված է բարձր լեռներում):

Ռազմական մեծ արձանագրություններում միշտ հիշատակվում են յերեք աստվածներ—Պալդը, Տեյշեբան և Արգինի աստվածները: Վերջինը արևի աստվածն է իսկ առաջին յերկուսը մեզ հայտնի յեն: Թագավորները աղոթելիս միշտ դիմում են այդ յեռյակին, թեպետ արշավանքը ղեկավարում է և անձամբ գրավում յերկրներ ու քաղաքներ միայն Պալդը: Նմանապես արձանագրություն վոչնչացնողին սպառնում են ելի այդ յերեք աստվածներով: Բոլոր գեպքերում ել այդ յեռյակից հետո ավելացվում է և «աստվածներ Բիայնայի», վորը կարելի յե հասկանալ թե այդ յեռյակի նկատմամբ և թե մյուս չհիշատակվող աստվածների մասին, վորովհետև «և» շողկապը չի գրվում. այսինքն կունենանք, վորն ավելի հավանական է Պալդ, Տեյշեբա Արգինի (և) Բիայնայի (այլ) աստվածները: Այդ աստվածներն են ոգնության դալիս (xašial-me DINGIR^{pl}), հաղթություն տալով աղոթողին:

Միակ արձանագրությունը, գրված յերկու անգամ, վոր աալիս է ուրարտական ամբողջ պանթեոնը, գա Վտնի «Զիմղիմ դաղի» այսպես կոչված «Մհերի դուան» արձանագրությունն է,

¹ «Պալդ տիրոջը—Մենուան Իշպուլինի վորդին այս քարակոթողը գրե ավեց: Թող շնորհվի (manini) Պալդյան վողորմածությամբ (Xaldini bēdini) Մենուային Իշպուլինի վորդուն (և) Ինիշպուային Մենուայի վորդուն առողջություն (ulguše), ուրախություն (pitsuše), մեծություն (alsuše): Տես Սեյս § LXXX և Սանդ. § 82 Համեմատել նաև Մհերյան դուան արձանագրության —^d Xaldini bedini DINGIR^{pl} EM|^{pl} bedini manini ulguše ilšpuuini. IMenua...=Պալդյան վողորմածությամբ (և) ժողովուրդների աստվածների վողորմածությամբ թող շնորհվի առողջություն Իշպուլինին. և Մենուային...» (տող 24)

վոր գրել են Ուրարտուի թագավոր Իշպուլինին և յուր վորդի Մենուան, թերևս այն ժամանակ, յերբ գրանք միտսին են թագավորելիս յեղել: Իսան վերելի մասի վարիանտը ունի 31 յերկտր ատգ, իսկ տակինը՝ 63 ատգ:

Մհերյան դուան («Մեհեր կտպուսի») այս տրձանագրության մեջ կարգում ենք «Խալդ տիրոջը Իշպուլինին Սարգուրի վորդին (ե) Մենուան Իշպուլինի վորդին այս դուները շինեցին հասաատեցին («գրին») զոհարերություն («նվիրաբերություն») որվտ տմսվա՝ Խալդուն, Տեյշերային, Արգինիին (և) աստվածներին ժողովուրդների («լեզուների»): 6 գառ Խալդուն զոհել (nipsidi 'aali), 17 արջառ (և) 34 վոչխար Խալդուն զոհել (urbuae), Տեյշերային՝ 6 արջառ (և) 12 վոչխար, Արգինիին՝ 4 արջառ 8 վոչխար Խուաուլինիին՝ 2 արջառ 4 վոչխար, Տուրանիին՝ 1 արջառ 2 վոչխար, Ուտ աստծուն՝ 2 արջառ 4 վոչխար, Նալաինի տատծուն՝ 2 արջառ (և) 4 վոչխար Շերիտու աստծուն՝ 2 արջառ 4 վոչխար Արսիմելա աստծուն՝ 2 արջառ 4 վոչխար, Անապա տատծուն՝ 1 արջառ 2 վոչխար, Իդուաինի տատծուն՝ 1 արջառ 2 վոչխար, SIN (=Լուսնի) տատծուն՝ 1 արջառ 2 վ., Խալդյան զենքերին (beli⁹¹ «տերերին»?)՝ 1 արջառ 2 վ., Ատրինի տատծուն՝ 1 արջառ 2 վոչխար, Կուերտ տատծուն՝ 1 արջառ 2 վ., Ելիպրի տատծուն՝ 1 արջառ 2 վ., Տարրաինի աստծուն՝ 1 արջառ 2 վ., Ագարուտ տատծուն՝ 1 արջառ 2 վ., Իրմուշինի աստծուն՝ 1 արջառ 2 վ., տատծուն, վորը հոգիներ (?) ե փոխադրում՝ 1 արջառ 2 վ., Ալգուտուշինի տատծուն՝ 1 արջառ 2 վ., Երինտ աստծուն՝ 1 արջառ 2 վոչխար, Շինիրի աստծուն՝ 1 արջառ 2 վ., Ունինտ աստծուն՝ 1 արջառ 2 վ., Այրայնի աստծուն՝ 1 տ 2 վ., Զուգուժարու աստծուն՝ 1 տ 2 վ., Խարա տատծուն՝ 1 տ 2 վ. Արագտ (Արածա) աստծուն՝ 1 տ. 2 վ., Զիկեկունի աստծուն՝ 1 տ 2 վ., Ուրա տատծուն՝ 1 տ 2 վ., Արծիրեդինի աստծուն՝ 1 տ 2 վ., Արնի տատծուն՝ 1 տ. 2 վ., Խալդյան առնականության (iniriašie)՝ 1 տ. 2 վ., Խալդյան մեծության (al suišie)՝ 1 տ 2 վ., Խալդյան dirušie (հաղթության?)՝ 1 տ 2 վ., Խալդյան զորքերին՝ 2 արջառ 4 վոչխար, Տեյշերայի զորքերին՝ 2 արջառ 4 վոչխար, Արտուարարու աստծուն՝ 1 տ. 2 վ., 2 արջառ (3)4 վոչխար՝ Արգինի քաղաքի աստծուն, 1 արջառ (և) 2 վոչխար՝ Կուլմենու քաղաքի աստծուն, 1 արջառ 2 վ.՝ Տուշպանի քաղաքի տատծուն, 1 արջառ 2 վ.՝ աստվածներին Խալդյան քաղաքների, 1 արջառ 2 վ.՝ աստվածներին Արծուինի քաղաքի, 1 տ. 2 վ.

Պալլայան dašui-յին, 1 տ 2 վ՝ Շուբա տասածուն 1 տ 2 վ՝
 Պալլայան գոներին 1 տ. 2 վ՝ Տեյշերայի գոներին Երիզիտ քա-
 ղաքում, 1 տ. 2 վ՝ Արդինի տասածու գոներին Ուիշինի քաղա-
 քում, 1 տ 2 վ՝ Ելիա՛ա տասածուն 1 տ 2 վ՝ Պալլայան լեռան
 (arnie), 1 ա. 2 վ՝ Պալլայան փառքին (ušmašie), 1. ա 2 վ՝
 աստվածներին Պալլայան գոների, 1 տ. 2 վ՝ Թալափուրա աստը-
 ծուն, 1 տ 2 վ՝ Կիլիբանի տասածուն, 1 ա 2 վ՝ յերկրների
 ասածուն, 1 ա 2 վ՝ Ալգանի յերկրի ասածուն, 1 ա. 2 վ՝
 Ծուինի քաղաքի տասածուն, 1 ա 2 վ՝ աստվածներին յերկրի
 Ատկանտ, 2 արջառ 4 վոչխար՝ տաստվածներին յերկրի Դիրա,
 2 ա. 14 վ՝ տաստվածներին ժողովուրդների («լեզունների»), 4 տը-
 ջառ 18 վոչխար՝ Պալլայան ուրիսի-յին, 1 տ 4 վ՝ Ուտինի աստը-
 ծու գոներին Նիշիագուրունի քաղաքում, 2 վ՝ Բարանի յերկ-
 րին, 10 վ. Արուրայնի աստծուն, 1 երինջ 1 վոչխար Բուրա
 աստծուն, 1 երինջ 1 վոչխար՝ Տուշպուտ տասածուն 1 երինջ 1 վ՝
 Աուի (Ավի) աստծուն 1 հորթ 1 վոչխար՝ Այա աստծուն, 1 հորթ՝
 Սարդի աստծուն, 1 հորթ՝ Ծինույարդի աստծուն, 2 վոչխար՝
 Իշխարի տասածու(հու)ն, 1 վոչխար՝ Բարծիա աստվածուհուն, 1
 վոչխար Սիլիա աստվածուհուն, 1 վոչխար՝ Ար ա տասածուն, 1
 վոչխար՝ Ազիա (Ադիպիա) տասածուն 1 վ՝ Ուիա աստծուն, 1
 վ՝ Ատինի տասածուն, 4 վոչխար՝ Արդի աստծուն, 2 վ՝ Ինուանի
 աստծուն 17 վ՝ Պալլայան վողորմածության (Պալլ վ՝ դորմա-
 ծին?) (և) վողորմած աստվածներին ժողովուրդների՝ Թող շնորհն
 (շնորհվի) տողջություն Իշպուինիին Սարգուրի վորդուն (և)
 Մենուային Իշպուինիի վորդուն» և այլն և այլն:

Մհերյան գոան այս պտնթեոնի մեջ մենք ելի տեսնում
 ենք, վոր Պալլ, Տեյշերա և Արդինի տաստվածները տոտնճնաց-
 վում են, ինչպես վոր յեռյակով են հտնդես գալիս ոաղմական
 արձանագրություններում: Յեռյակ տաստվածության սկզբունքը
 գալիս է գեռ սուսերակտն-բարելակտն շրջանից (Էա, Էնլիլ և
 Անու յեռաստվածությամբ). այդպես եր և խեթերի մոտ—Արին-
 նտ քաղաքի տաստվածուհին (= Հեպիա?), Դատտա (= Տեշուպ)
 յերկնքի տաստվածը և Մեզուլլտ տաստվածը (կամ աստվածուհին?):
 Համեմատել նույն սկզբունքը պտնված և քրիստոնեության մեջ
 հայր, վորդի և սուրբ հոպի Բայց մենք գիտենք, վոր Բարելուն
 քաղաքի պիրքի բարձրացման հետևանքով հեաղհետե գերիշխում
 է տեղական Մարդուկ աստվածը վորից հետո գալիս է յուր կին
 Զարփանիթ և արևի տաստված Շամտը:

Նշանակալից է վոր ուրարտացիների մոտ Խալդ-Տեշուպ-Արդինի յերրորդությունից հետո գալիս է Խուտուինի աստվածը, վորին Մենուան նվիրում է առանձին արձանագրություն (տես վերը): Իսկ Աշրուտ-դարգայի Ուարուբանի աստվածը բռնում է յերկրորդական անդ Ղուանի աստվածը գլխավոր վարիանտում արտահայտված է գաղափարագրով (SIN) իսկ զուգահեռ վարիանտում տրված է հնչյունորեն՝ Šielardi անունով, վորը բարգ բառ է, կողմած sie]- կամ ավելի շուտ šei «գիշեր» և ardi «արև» բառերից, տյսինքն լուսինը պատկերացվել է վորպես «գիշերվս արև»: Նման կողմություն ունի անշուշա և Ծինույարդի տասածու անունը կազմված tsinu+ardi «արև» բառերից (թե՛րևս tsinu ardi «աստղ»?):

Հեաաքրքիր է դիտել թե ինչպես գոհի կենդանիների քանակը հետզհետե պակասում է — Խալդուն՝ 17 արջառ և 34 վոչխար, Տեշերային՝ 6 արջառ և 12 վոչխար Արդինին՝ 4 արջառ և 8 վոչխար, Խուտուինին՝ 2 արջառ և 4 վոչխար, Այգ Խուտուինին, ինչպես և Տուրանի Ուտ, Նայայնի, Շերիտու, Արսիմիլտ աստվածները առաջին յեռյակից (Խալդ-Տեշուպ-Արդինի) հետո կազմում են աստվածների յերկրորդ դասը: Յերրորդ դասը, վորոնց զոհվում է 1 արջառ և 2 վոչխար, կազմում են Անապսա, Դիգուայնի, Սելարդի, Ատրինի, Կուերա, Ելիպրի, Տարրայնի, Ադարուաա, Իրմուշինի, Ալդուաուշինի, Երինա, Շինիրի, Ունինա, Այրայնի, Չուզուամարու, Խարա, Արածա, Զիկեկունի, Ուրա, Արձիրիդինի, Արնի..., Շուբա..., Ելիա'ա ..., Թալափուրա, Կիլիրանի: Զորրորդ կարգի աստվածներն են (1 հորթ և 1 վոչխար) — Բարա, Տուշպուա, Աուի, Այա: Հինգերորդ կարգի աստվածներն են (1 հորթ) — Սարդի, Ծինույարդի: Վեցերորդ կարգինը (1 վոչխար) — Իյխարի (Իշխարի)¹, Բարձիա Սիլիա Ար'ա, Ադիա (Ադիպիա), Ուիս, Աաինի:

Աստվածների մի շարք անուններ կարծես թե տեղական ուրարտական լիզվով են ձևավորված: Որինակ, -im հատկացական ածանց ենք տեսնում Xušumi, Nalaini, Diduaini, Uarubaini, Irmušini, Alaptušiai և այլն աստվածների անունների մեջ: Դրանցից Xušumi մենք կարող եյինք կապակցել xušu- դոյականի հետ վրը կանում և սծանցավոր Xušutuxi «իշխանություն» (?)

¹ Այգ ասածուն զոհվում է 2 վոչխար, վորը թերևս սեկ պետ է լինի քստ զոհվող անասունների ստվճանական իջեցման

բառի մեջ, Diduaini տասվտածանունը կարելի յե կապակցել didu բառի հետ վորը զոհարերական ինչ վոր իմաստ ունի («զոհը didulini urbullini» նախագասության մեջ): Irmušini անունը -ini տծանցով ստացվել է irmuše գոյականից, վորը մեր կարծիքով նշանակում է «հիվանդություն» (հմտ. խեթերեն irma- «հիվանդություն», irmai «հիվանդ»): ուրեմն Irmušini աստվածը մարդկանց փրկում էր հիվանդությունից: Խարա աստվածը յերևի յեղել է ճանապարհների և ուղևորությունների աստվածը, քանի վոր ուրարտերենում կա և հասարակ xarie «ճանապարհ, ուղի, արշավանք» բառը, վորը մեծ մասամբ գրվում է գաղափարագրով (𐎧𐎶𐎵 «KASKAL»)¹: Այդպես և Այրայնի կարող էր լինել ayra բառից և նշանակեր «այրերի աստված» (հմտ. հայոց՝ այր), ինչպես Արածա աստծու անունը կարող էր կապ ունենալ «արտատեղերի» հետ ի նկատի ունենալով հայոց «արտծել» և «արաւտ» (<*արաւծ) բառերը: Արնի տաճու անունը մեր կարծիքով նշանակել է «լեռ, բարձրություն», ինչպես ունենք Xaldini arnie «Խալդյան (= Խալդու) բարձրությունը» կամ Xaldini arni ušmaše «Խալդյան (= Խալդու) բարձր փառքին»: Թերևս և այժմյան Արնոս-դաղ, հին հայոց Արնոյ տն, և հայոց հասարակ լեռան (լերին) բառը կողմած լինի li+arn բառերից²: Խեթական աստվածների մեջ ևս, յերզման համար, մատնանշվում են լեռների, գետերի յերկնքի ու յերկրի, հողմերի ու տմպերի աստվածներ, ինչպես և արական ու իգական տաստվածներ: Մեզ թվում է, վոր ուրարտական պանթեոնի վերջին աստվածները—Իպխարի (Թերևս՝ Իշխարի) Բարծիա, Սիլիա, Ուիա, Աինի և Թերևս Ար՝ա աստվածները յեղել են իգական: Առաջինը՝ Իշխարի կա և այլ լեզուներում (խեթ. Išhara) և նույնն է, ինչ վոր և Ištar-ը Բարծիա աստվածուհին հավանորեն Խալդու կինն էր վորը bag bart-u («աստված Բարա-ու») անունով ունեցել է արձան Մուսասիրում (ըստ Սարգոնի նկարագրության, վորը հտիշտակել է այդ արձանը) հնչյունաբանորեն bartsia և bart(u) հետու չեն իրարից (այդ կարծիքին էր և Սեյսը): Սիլիա տաստվածուհին Թերևս լիներ ծնունդի դիցուհի, ի նկատի ունենալով հայոց ցեղ (<çil), ուտիական çil «սերմ» և ուրարտ. sila «կին» (= վրաց çola): Ար՝ա աստվածը Սանգալջյանը համեմատում է մեր Արայի հետ սակայն այստեղ այն հնչյունական խոչընդոտը կա վոր ուրար-

¹ Թերևս Խարբերդ նշանակում է «ճանապարհաբերդ»?

² Թերևս «լիսեոն» բառը ունի նո յն li- նախամասնիկը «սեռն» (осб) տման իշ բառի հանդեպ

աերեն ar վանկագրից հետո գտլիս է կոկորդային պայթուկան՝ հնչյունը (հայոց «Արա»-ն, վորպես գարնան աստված մենք կապակցում ենք խեթական նույնահունչ և նույնիմաստ Ara („Flurgott“) ասածու հետ:

Քաղաքների տասվածների մեջ ամենից շատ մեծտրվում է գոհերի քանակով Արդինի կամ Մուսասիր քաղաքի աստվածը. իսկ մենք գիտենք, վոր Խալդու առաջին տաճարը տյտեղ է հիմնվել Մինչև իսկ այդ քաղաքը Մհերյան գոան այս մեր արձանագրության մեջ ավելի յե բարձր, քան Ուրարտուի այլ հարգատ քաղաքները—Տուշպան, Կումենու, Երիդիա Արծուինի (վորտեղից մեր «Արծրունի» իշխանները) և քաղաքները:

Հարևան ժողովուրդների տասվածներ քիչ են պատահում Մհերյան գոան այս պանթեոնի մեջ: Նախ հիշատակենք Տեյշեբա տասածու անունը վորը հատուկ է յեղել սուրարյան ժողովուրդներին Tešup տնունով: Ուրարաացիք այս անունը փոխեցին դարձնելով Teišeba, վորը Խալդուց հետո յերկրորդ սեղն է գրտվում: Արդյոք այս ցույց չի՞ ասլիս, վոր ուրարաացիք ամենից շտա աղղվել և ձևավորվել են այս խուրրիական (սուրարյան) ցեղերից, վորպես ընդհանրապես նաիրյան ցեղեր: Այս Տեշուպը կարելի յե ասել վոր ամենատարածված աստվածն է յեղել, վորպես յերկնքի, ամպրոպի, անձրևի, ջրի և կայծակի տասված. գերմանացի վորոշ գիտնականներ այդ Տեշուպապաշտ ժողովուրդներին կոչում էյին „Tešup-Völker“: Հայերը այդ անունը փոխել էյին փոյուգիտկան Սաբաձիոսով, վորը հետո դարձավ հասարակ անուն («ասառած»), իսկ նրա փոքրասիական-խուրրիական կնոջը—Hepit mušni-յին («Հեպիտ սքանչելուն», հմտ «Իշաար սքանչելի» արտահայտությունը թագավորական դոկումենտներում)¹—հայերը պահեցին, փոխակերպելով «հպիա հպտանք, հուպիտ հպաիմ լ հուպտիմ» և այլ բառերի իմաստի մեջ:

Յերկու աստվածություններ բարելոնական ազդեցությունն են մասնանշում: Մեկը Aia աստվածուհին է, վորը համարվում էր Mutter des Waldes“ (տես Kleinas. Forsch, B I, իջ 143, ծան 2)² և գործ է ածվում և խեթերի մոտ (^d A A.): Իսկ

¹ Համեմատել նաև հայոց «Արա գեղեցիկ» հորջորջումը:

² Ehelolf-ը ասում է „Vgl. für die Göttin Aia als „Mutter des Waldes“ ihre Beziehung zur Vegetation speziele zum „Grün“ m Kodex Hammitapi V s II 22 ff“ (անդ):

ուրարտական Ura աստվածը Ura š ձևով դործ և անվել Բարելունում վորպես գարնան և կովի աստված (հմմտ. մեր «Արա»-ն և հույների «Arei»-ը վորպես գարնան և կովի աստված)¹: Յեթե ուրարտական պանթեոնի Ip-xa-ri-e աստծու անունը կարգանք Iš-xa-a-ri-e, ինչպես Լեյարդն և տաջարիում (ip և iš նշանները շատ նման են), ապա կունենանք բարելոնական խեթական Išxara աստվածուհու անունը, վորը յեղել է լեանլ և յել գուլի աստվածուհի (KI For, B. I հջ 9):

Սեթական աստվածներին նման են ուրարտ. Xalrainie, վորը կարգում են Դաև Tar-ra-i-ni-e (xal և tar նման նշաններ են) վորը արտաքինով մոտ է խեթական Halara աստծուն: Այգպես և ուրարտական Atbinie աստվածը նման է հնչյունորեն խեթական ¹Hatebinu š աստծուն, ինչպես և ուրարտ. A āpša աստվածը նման է խեթական ^dNapšara աստծուն:

Մի աստված ևս կա ուրարտական պանթեոնում, գա—^ySardi աստվածն է վորին Սեյսը կապակցում էր լյուդիական Ձάρծուս («տարի», բայց և «արև աստված») աստծու հետ: Իսկ այս sard- «տարի» կար իրանական լեզուներում—սանսկր. çarad «աշուն, տարի», ավեստական sarōda «տարի», սանսկր. sārda «ամառ», նոր պարսկերեն sal «տարի»: Թերևս ուրարտական Sardur թագավորների անունը այս աստծու անունից է կաղնվել որ անանցով (հմմտ եթիոպի յերկրի Veduri այրանունը, Արժրունիների «Յաշկուր» այրանունը նման որ անանցով), և ի դուր չեք, վոր ուրարտական գրողները այդ թագավորների անվան մեջ աստվածութուն էյին տեսնում գրելով «Աստված RI (=Ištar)+du-ri», իսկ RI դադափարանիչը հնչվել է SAR՝ բայց խակականը իհարկե սա չե այլ sard+ur:

Համեմատական դիցարանության համար, հատկապես ուրարտական աստվածների ծագման և կապակցության տեսակետից մեր այս ուրարտական պանթեոնը շատ ավյալներ չի ընձեռում մեզ: Մի քանի աստվածներ—բարելոնական բնույթ են կրում, մի քանիսը կապվում խեթական աշխարհի հետ, մեկը՝ խուրրի (սուրարյան) ժողովուրդների հետ (Տեյլերա) մեկը՝ լրանական ծագումով է (^ySard) և այն Ուրարտական կրոնի և դի-

¹ Տես Kretschmer-ի հոդվածը „Indra und der heithitische Gott Inara (Kleinas. Forsch., B. I, H. 2 հջ 229), վորտեղ նա ասում է der babylonische Vegetation—und Kriegsgott Uraš“:

ցարանության պաամական տրժեքավորման համար շատ բան կարող եյին ասել մեզացիների մաննացիների, կասիտների խուրրիների, խուբուշկիացիների, լուլումիտների, ելամիտների և այլ հին արևելյան ժողովուրդների աստվածները և կրոնը, վորը մեծ մասամբ չի հասել մեզ:

Բնորոշ ե, վոր ուրարտական պանթեոնում քիչ ենք տեսնում կին աստվածներ, թերևս լավ չհասկանալու պատճառով, քանի վոր այդ մասին բնագրում ցուցում չկու: Համեմատական դիցարանական վերլուծման հետևանքով միայն կարելի յե ընդունել, վոր աստվածուհիներ են—Aia, Bartsia (=Bag bartu) թերևս և՛ Silia: Կնոջ դերը վորպես, սոցիալ-պատմական և իդեոլոգիական վորոշ ֆակտորների հետևանք, թույլ ե հանդես գալիս, ի համեմատությունն ազամարդական աստվածների, նաև սեմիտների մոտ: Փոքր Ասիայում ընդհակառակը, գերիշխում եր կնոջ սկզբունքը ի դեմս «մեծ աստվածամոր» Ma դիցուհու, Kibele դիցուհու, խեթերի Արիննտ քաղաքի աստվածուհու (Hepit?) լյուդիացիների Արտեմիդա դիցուհու¹ և այլն: Հայոց մոտ ևս Անահիտի տաշտամունքը ցույց ե տալիս հայերի վորոշ սկզբնական հատվածի (Փոքր Հայքի) փոքրասիական իդեոլոգիային պատկանելը: Մայրիշխանության հետքերը Փոքր Ասիայում յերևի ավելի ուժեղ են մնացած յեղել, քան Ուրարտուի և Միջագետքի ժողովուրդների մեջ:

Խալդ տասծու պատմութենիկական և կուլտուր-քաղաքական նշանակությունը նույնչտի մեծ ե յեղել ուրարտական ժողովրդի ձևավորման պրոցեսում, վորչտի հայերի համար թրակիական-փոյուզիական Sabadzi(os) աստվածը, վորը գրսևորում ե այդ եթնոկուլտուրայի սկզբնական գերիշխումը հայերի ձևավորման մեջ²: Յեվ այս դեպքում ճշավում ե հույն պատմաբանների

¹ Համեմատել գերեզմանաքարերի վրա անեծքի քարը հափշտակելու նկատմամբ „Nun wer diese Stele oder diese Höhle oder diese Mauer (?)... beschädigt nun ihm Artemis die Ephesische und Artemis die Kolo'sische Hof und Haus [aara? biraλ-k], Erde und Wasser (landlichen) Besitz sollen zerstreuen“: (Kl. F B I էջ 81):

² Ավելորդ չենք համարում այստեղ մատնանշել նաև ռայտնի պատմաբան Եղուարդ Մայերի կարծիքը այս խնդրի շուրջը Խոսելով ուրարտացիների մասին, նա ավելացնում ե („Geschichte des Altertums, 2 Aufl., B, II, էջ 419),— „Als ihr Hauptgott erscheint durchweg Chaldi, „der Herr“, als dessen Krieger Könige und Volk gelten. Dieser Name klingt an an den des Volks der Chalder (so auch in den pontischen Gebirgen), und so ist die Annahme

ասածը, թե հայերը փոյուզիական ծագում ունեն լեզվական ազերս ունեն նրանց հետ, նրանց հետնորդներն են, գինվելով և հագնվելով նրանց նման և այլն¹ Այդ տեսակետից շատ ճիշտ էր նկատել Ս. Սամվելյանը («Հին Հայաստանի կուլտուրան», 1931, էջ 92), ասելով՝ «Այն հանդամանքը, վոր արմենների աստվածը [Sabadzi-os] խոր ու ծավալուն հիմքեր է դրել, ցույց է տալիս, թե վորպիսի վճռական նշանակութուն են ունեցել հնդեւրոպական արմենները պատմական հայության իբրև ժի ազդության, ծագման շաղախի մեջ»: Հայերի այս եթնիկական և իդեոլոգիական կապը (աստվածներ) փոյուզիացիների, խեթերի, լյուզիացիների և այլ փոքրասիական ժողովուրդների հետ մենք կարող ենք հաստատել և այլ աստվածների ներկայությամբ հայոց պանթեոնի մեջ (Hepit, Tarku, Masan Zawall Ara և այլն), վորոնց մասին կխոսվի առանձին:

vielfach vertreten dies sei auch der eigentliche Name des in Urartu herschenden Volkes gewesen, so dass wie in Assur das Volk und Gott den gleichen Namen geführt hätten Ein gesicherter Nachweis aus den Inschriften ist jedoch bisher nicht gewonnen so dass hier Zurückhaltung geboten erscheint

¹ Հայերը իբրև ազգակից փոյուզիացիներին հիշվում են նախ Հերոդոտի կողմից (VII-րդ դիրք, 73), ուր նկարագրվում է Քսերքսեսի դժբախտ հայերի և փոյուզիացիների միատեսակ գինվելը և հագնվելը, իսկ այս բանը ազգակցության նշան էր համարվում: Հայերը, վորպես փոյուզիացիների հետնորդները (Φρυγῶν ἄποικοι), հիշվում են և Նեղոսոս Կնիդացու կողմից (IV դար Քր առաջ) — Ἀρμένιοι τὸ μὲν γένος ἔκ Φρυγίας καὶ τῆ φωνῆ πολλα φρυγίζουσι «Հայերը փոյուզիական ծագումով են և ունեն շատ փոյուզիականութուն իրենց լեզվում»: Հայերենի հնդեւրոպական շերտի ստվար մատերիալը չի հակասում այս սղերսին, ավելի շուտ հաստատում է այդ փոյուզիականութունը (resp հնդեւրոպականութունը):

ՅԵՆԻ ԿՐՈՐԴ ՄԱՍ

ՈՒՐԱՐՏՈՒԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

(ԸՍՏ ԱՐՁԱՆԱԳՐԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)

Այս մեր հաավաժը ողտաղործելու յե ս բձանագրությունների այն արտահայտություններն ու բառերը լորոնք քիչ թե շատ բնութագրում են ուրարտական պետության և հասարակության ներքին կյանքը: Նախ կվերցնենք այն վկայությունները, վորոնք վերաբերում են նյութական արտադրական կողմին, յերկրի եկոնոմիկային և տեխնիկային, բաժանելով այս բոլորը յերեք մասերի. ա) գյուղատնտեսություն (խաշնարածություն, հողի ողտաղործում և մշակույթներ), ի) արհեստներ (մետաղաղործություն, կավաղործություն) և յ) այլևայլ կս ուղեւորներ (ջրանցք, ժայռախոռոչներ կամ նիշաններ, բերդեր, տաճարներ...): Այս մասը լրացվում և մանրամասնվում է և այժմ մնացած նյութական կուլտուրայի հիշատակարանների ոգնությամբ, վորոնք մեծ նշանակություն ունեն ճիշտ հասկանալու արձանագրությունների այս վկայությունները: Յերկրորդ գլխի մեջ մենք տալու յենք այն տերմինոլոգիան, վորը արտացոլում է ուրարտական հասարակության սկզբնական կազմակերպությունները— ցեղ, տոհմ, ընտանիք, ժողովուրդ: Հետո նկարագրվելու յեն սոցիալական այն շերտավորումները և պետական որդանների ֆունկցիաները, վորոնք հատուկ են յնդել գոսակարգային Ուրարտին, վորպես պետության, ի մեջ առյալ դասակարգերը և գասերը, քրմությունը, պաշտոնեյությունը և այլն: Սրա հետ արվելու յե պետական-քաղաքական և վարչական մի քանի կողմերի նկարագրությունը: Վերջին յերրորդ գլուխը տալու յե ընդհանուր գծերով արձանագրությունների գաղափարախոսական և վոճային կողմը, այն է՝ նրանց կրոնական և մասնավորապես նաև ռազմական մասայնությունը:

A ՈՒՐԱՍՏՈՒ ԵԿՈՆՈՄԻԿԱՆ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱՆ
(գյուղատնտեսություն, արհեստներ, կառույցներ)

1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

a) ԽԱՇՆԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մաշնարածության վերաբերյալ տվյալները հարուստ և բազմակողմանի չեն: Հիշատակվում են մեծ մասամբ այլևայլ կենդանիների անուններն ու գրանց քանակը կամ վորպես զոհաբերության առարկա կամ վորպես ավար, վոր քշվում բերվում և Ռիայնա: Բուն ուրարտերեն միայն յերեք բառեր կան կենդանիների համար — paxini «արջառ» (= յիդ-կով), šušc «վոչխար» և Թերևս ultu(oi) «ուղտ»: Մնացող անունները — ձի, հորթ — տրվում են դաղափարանչերով: Գաղափար կազմելու համար խաշնարածության զարգացման մասին ավելորդ չենք հի մարում վորոշ վկայություններ բերել: Արգիշտի I Թագավորը մի արշավանքից հետո, վոր կատարել էր Մանա և Բուստու յերկրները (Ուրմիա լճի շրջանում), բերում և Վան 100 ուղտ, 790 ձի, 22629 արջառ և 36830 վոչխար (տես Սորիտրյան արձ. Col. IV, 6) Իսկ Իշմիլինի և Մենուա Թագավորները, յեւր այցելում են Մուսասիրի Սալդու տաճարը, նվիրաբերում են 1112 արջս ու, 9020 (կամ 9120) գառ, 12480 վոչխար (տես A Gotze-յի ուսումնասիրությունը ZA, № 7, V, էջ 110): Ջիերով հատկապես հարուստ է յեզել Դիտուեխի յերկիրը վորը վաստալիան մի մեծ յերկիր էր Ուրարտուի մեջ և հարկ էր վճարում վերջինիս Թագավորներին: Հիշենք այստեղ, վոր հետագա Հայաստանն ևս հայանի էր յուր ձիերով, վոր ուղարկվում էին Միջագետք կամ պարսից Թագավորներին, ինչպես և զոհվում էին արևի աստծուն: Ել չենք ասում հայոց հեթանոսական տաճարների (որինակ Անահտի) կամ հետագա քրիստոնեական վանքերի կալվածներում արածույ բազմահազար հոտերի մասին: Անշուշտ այդ տաճարներն ու վանքերը պիտի ունենային և մեծ քանակությամբ վարձկաններ կամ ստրուկներ այդ զործի համար, իսկ ուրարաացիների ժամանակ բացի այդ կար և ցեղերի համայնական անասնապահություն: Յեթե դաշտային մասերում (որինակ՝ Արտամեաի, Արմավրի, Ջվարթնոցի շրջաններում) ընդգծվում է այգեգործությունը, վորի համար ջուր է բերված լինում, ապա այլ մտտերում (Եթիունի, Նաիրի յերկրներ...) դերիշխում էր հացահատիկային տնտեսությունը: Աստուրական Թագավորները Տիգրիսի վերին հոսանք

քի մոտերքը (Տուսխա, Դամդամուսա քաղաքներում) շինել է յին հատուկ ամբարների ցորենի ու հարդի համար, վոր գրավում է յին կտմ հարկի տեղ բերում է յին Նաիրյան յերկրներից: Բայց սրա հետ զարգացած է յեղել և անասնապահությունը, հաակապես լեռնային շրջաններում, վորտեղ ցեղերը դեռ սոցիալապես չեյին շերտավորվել և տնտեսության ձևը խաշնարածական էր: Յերբեմն շատ աարորինակ է թվում, յիրք մի Երիախի յերկրից ամեն տարի տասնյակ հազար անասուններ են քշվում Բիայնա և այնուամենայնիվ տեղային այդ անտեսությունը շարունակվում է և վերջնականապես քայքայված չի լինում. թերևս արձանագրությունները ուղցնում են այդ պարբերական արշավանքների ավարի թիվը: Ուրարտական արձանագրությունները բացի վերոհիշյալից կոնկրետ տվյալներ ու մանրամասնություններ չեն տալիս: Աստուրական աղբյուրներից միայն գիտենք, վոր Ռուսա I թագավորը ժողովրդին սովորեցրել է ուզտ պահել:

б) ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՄՇԱԿՈՒՅՑՆԵՐ

Յերկրա գործուրյուն

Արձանագրություններից մեզ դեռ հայտնի չի մի այնպիսի անբմին, վոր արտահայտեր մշակվող հողը և լիներ դրա մի առանձին միավորը, ինչպես էր, որինակ, սումերական *agar*-ը, վորը հողի մասնավոր սեփականության հետ և կապված լինելով սոցիալտնտեսական վորոշ իրավակարգի հետ (ստրկատիրական և մտնավանդ՝ ֆեոդալական) անցնում է շատ յերկրների (=հայոց ու վրաց *agarak*, լատինացիներ *ager*, գերմ *Acker akra* և այլն): Մեզ հայտնի յե միայն *kiura* կամ կրճատ *kira* «հող» բառը վորը սովորական իմաստ ունի, թեպետ հասկացվում է նաև վորպես «գետին» համեմատել շինարարության ժամանակ *kiurani kuldini manu ui giei istini šidauri* «հողից դատվար (? թումբ) հանգերձ պատով այստեղ կառուցեցի(?)», ուր *kiura* բառը այլուր արտահայտվում է նույն կոնցեպցիայի նախադասություններում զազափարագրով *KI* (=հող): Բայց կա և *kiuraše* *DINGIR*^{pl} *še* «հողի աստվածներ», ուր «հողը» հասկացվում է վորպես գետին, ստորբերկրյա աշխարհ (սանդարածեա, *преисподняя*):

Ուրարտերենում կա մի բառ (*laragi*), վորը մեր կարծիքով պիտի նշանակի «արտ, անդաստան»: Որինակ, Ռուսա I-ի Քեշիշգյուլում թողած արձանագրության մեջ կարդում ենք — *A^{pl} ID alainini šiedui[e] ¹ Rusaxlnaidi ali A^{pl} ID alainini URU*

Tušpani[nt] laragi ulxullni all A^{pl} ' Rusaxinaue ipšaduli[ni] «Ջրերը գետից անց կացրի (բերի) Ռուսախինայի համար (=գետի Ռուսախինա), վորոշ ջրեր գետից (գետով) Տուշպանյան արտերը վորոգելու, վորոշ ջրեր Ռուսախինայի խմելու համար» (տողեր 28—32, թարգմ մերն է): Այդ laragi բառը կա և Արգիշտիի Խորխորյան արձանագրությունների առաջին սյունյակի հենց սկզբում — aieini («ասվում ե՞») . . azibie inaini laragi — ուր վերջին բառերը դոյականներ են:

Կտ և մի յերրորդ բառ xubii (hubi) անունով վորը մեր կարծիքով ավելի ընդարձակ իմաստ ունի և պիտի նշանակի «գաշտ, տափաստան, հովիտ (пашина)»: Գործ է ածվում հատուկ անունների մեջ և առանձին ինչպես Kuturlini xubi «Կոտորյան գաշտ» (=Չվարթնոցի շրջանը, վոր հայոց մոտ հնում կոչվել է «Քաղաքու գաշտ», «առապար»), Tuaratsiniei xubi (Խորխ. VII 12) = հայոց Տուարածատափ, Niribai xubi (Խորխ. II 13) «Նիրիրայի գաշտ» (Իրարբեքիրի գաշտն է ըստ ասուերական ագրյուրների և լեզվի Niribu «lowlands նույն իմաստի բառ է (տես Սեյսի մոտ, էջ 397), Askalai xubi (Խորխ IV 54)՝ Ուրմիա լճի կողմերում: Բայց կա Չվարթնոցի նույն արձանագրության մեջ և xubi graše (թե xubigi aše?) pii nikiduli «գաշտը (xubigi «գաշտերը») . . ջրանցքով ջրելու» (տող)¹:

Մի տեղ գործ է ածվում «ցորեն» (հաց) դադափարանիչը (202133 kapiše PAT «202133 կապիճ ցորեն», տես Սարգուրյան տարեգրերի VI₁₀ արձ), վորի համար վորպես չափ գործ է ածվում kapiše բառը, վորը մնացել է մեր կարծիքով և հայոց մեջ (ըստ Առձեռն բառարանի՝ «կապիճ—աման մը, չափ մը, շինիկ, և անոր մեկ մասը»): համշենցի հայերի մոտ դեռ մնում էր այդ բառը—«կապճակ—ցորենի սասանորդ վոր կտրվի ջաղացականին իրրև վորձ ցորենը աղալուն» (տես Հ Աճառյան, Գավառակտն Բառարան, էջ 551) Ի միջի այլոց և խեթերենում կա նման բառ (gabeššar || kapeššar) վորը հողի տարածության մի միավոր է, նման մեր հեկտարին և այլն թերևս սկզբում ցորենի չափ էր, հետո դարձել է հողի տարածության չափ, կապված այնքան տարածության հետ վորը վերցնում է ցանելու համար այսինչ չափի ցորեն, նման մեր դավառներում գործ ածվող «լիտր»

¹ Սառ գաբանորեն այդ x և b ն կա բելի յե համեմատել հայոց «(հ)ովիտ» կամ «խոպան» բառերի հետ

բառի իմաստափոխման, ուր լիար նշանակում է «12 ֆունա» (=բաուման) և լիտր հասկացվում է ցորենի արտի վորոշ տարածություն (որինակ, մեր արտը կամ այդին այսքան լիտր է)։

Արդիշտի I-ի Սորխորյան արձանագրության մի անդում (Col VII 41-42) կարգում ենք „hašubi KUR Etiunini URU Ardiniei aštiu zirbilani“, վորը թերևս նշանակե «հավաքեցի¹ Եթիունյան յերկրի Արդինի քաղաքի aštiu-ն (=հացը?) և zirbilani (= ?) համեմատել aštiu (հնչվել է astiu) բառի հետ հայոց «աշաուճ» կամ «աստուճ» բառը, վորը նշանակել է «չոր հաց»։

Ուրարտուի յերկրագործությունից մեզ մնացել են և այլևայլ իրեր յերկաթե խոփ, յեղաններ, կա նաև քարե աղորիք (յերկանք), վորը լիսեռի (осб) վրա եր ամրացված և պատվում։

Տեխնոլոգիաներ · աչքի, պարսեգ

Ուրարտուի, ինչպես և այժմյան Հայաստանի կլիմայական և ստիպանդներ պայմաններում, գյուղատնտեսական ավելի բարձր կուլտուրաների համար անհրաժեշտ էր ուղը վտուղեր Յեվ մենք անսում ենք, թե ինչպես Ուրարտուի թագավորները ջրանցքներ են կառուցում, տուններ են բերել սալի, այլևայլ պետքերի համար (վորոգելու, խմելու), այդինել և պարանգներ (պուրակներ) են տնկում և այլն։

Արհեստական վորոգման յեն թարկվել են, որինակ, այժմյան Վաղարշապատի Զվարթնոցի շրջակա հողերը, Վանի շրջանի «Շամիրամասու» (Menuai pili «Մենուայի ջրանցք») և Բեշիշգյուլի («Rusaxina») արհեստական լճի միջոցով, այժմյան Արմավրի («Argišixina») շրջակա հողերը, Ուլխու քաղաքի հողերը (Ուրմիա լճի մոտ), վորտեղի ջրանցքը «Պուրատու»յի (=Յեփրաաի) նման եր, ինչպես տուն են ասուրական աղբյուրները։

Զվարթնոցի Ռուսա II ի արձանագրության մեջ (տողեր 10—16) ասվում է «յես այս այդին (виноградник) անկեցի («գրեցի») մարգագետին («ղաշո»), պողատու ծառեր, ծառուտ-

¹ Այս haš- (xaš-) ս բառը յելել է և խուրբի լեզվում նույն իմաստով (Ֆրանսերեն թարգմանում են «percevoir» = հարկ հավաքել)։ Ուրարտուերենում կա և haši—բայարմատ «ոգնության հասնել» նշանակությամբ։ Յերբ արշավանքից առաջ թագավորները աղոթում են յեռյակ աստվածությանը՝ (և) Բիսյնայի աստվածներին, ապա վերջինները «ha ši-al me» = ոգնության հասան (=ոգնեցին) ինձ», ուր -me «ինձ», -al աորիստ 3 դ. հոգնակի նշան է չեղոք բայերի համար։ Համեմատել հայոց «հաս-անեմ» բայարմատը։

ներ այստեղ տնկեցի («գրի») ջրանցք Լժարունյա գետից տարա, նվիրվեց («մատուցվեց») անուն սրան՝ Ռուսայ(ի)նի»։ Քեշիշգյուլի Ռուսա I-ի արձանագրության մեջ կարգում ենք — «տնկեցի նույն այս (տեղում)» այգի («ծառ գինու»), անտառ (=պուրակ), սլարտեզ պաղատու ծառերով, ծառուտներ (GIS tsa ri) ձեռնարկություններ այստեղ կատարեցի» (տողեր 18—21)¹։

Արճեշի մոտ («Իլանի տաշ») գտնված Սարգուր II (III)-ի արձանագրության մեջ կարգում ենք «Սարգուրը Արգիշտիի վորգին տյս այգին («տունկը գինու») տնկեց»։ Սարգուրյան անուն (=անվամբ) Սարգուրյան այգի», ուր նույս «այգի»-ն մի ղեպքում արտահայտված է դադափարագրով (GIS GĒSTIN) իսկ յերկրորդ ղեպքում մի մասը հնչյունորեն (GIS uduliei)։

Մհերի դռան արձանագրության մեջ ևս կարգում ենք — «GIS uldie suxe teruni , GIS tsaarie šuxe teruni ui giei išti ni šidauri = խաղողի այգի տնկեցին (Իշպուլինի և Մենուա), ծառի այգի (—ծառուտ) տնկեցին, սլատով այս շրջապատելով» (տող 27—28)։ Ի միջի տյուց ի դուր են գրում GIS uldie, հասկանալով GIS-ը վորպես դետերմինատիվ (վորոշիչ) հետևյալ բառի համար, ինչպես այդ կարգում ենք Ֆրիդրիխի և ուրիշների մոտ։ Մեր կարծիքով uldi նշանակում է «խաղող» և հետևապես GIS uldie = ծառ խաղողի այսինքն GIS ը պիտի հտականալ վորպես իդեոգրամատ։ Համեմատել և uduli «գինի», վորը անշուշտ այդ uldi «խաղող» բառի հետ մի ծագում ունի։ Համեմատել նաև գրաբարի տուլի «վայրի խաղող», արաբերեն duali (id), ուտիերեն tol «խաղող»։ Այս բառի տարածումը Արաբիայից մինչև Ուտիք հավանորեն կաաարվել է հնում, ուրարտացիների ժամանակ, և գրանց աշխարհագրական և կուլտուրական միջնորդությամբ։

Մհերի դռան Իշպուլինիի և Մենուայի այդ հայտնի արձանագրությունների մեջ ուշագրավ են մեր թեմայի տեսակետից և հետևյալ տողերը (տողեր 28—31) — «սրբատեղու (burgana

¹ Այդ «ձեռնարկություն» (arniušinili) բառը գործ է ածվում յերկու ասարեր կոնսարուկցիաներում։ Մեկը՝ ուղղմական արձանագրություններում — inaniili arniušinili šusini šali zadubi «այս ձեռնարկությունները Քեկ տաքում կատարեցի», իսկ մյուսը՝ շինարարական արձանագրություններում, ինչպես Քեշիշգյուլի այս արձանագրության մեջ — arniušinili ištini dūli «ձեռնարկություններ այստեղ արի»

«ատճտր»?) այդին (šuxe) տնկեցին նշանակեցին զոհաբերություն, սուրբ (aše?) առնկերով (GIS^{pl}) հանդերձ կենդանու զոհերով—Պալղուն 3 վոչխար զոհեցին (և) 3 վոչխար ժողովրդի (այլ) աստվածներին, սրբազան վորթատունկը («վազը») մատուցել(ով) (aše GIS^{pl} uldi tanuli¹)։ Պալղուն 3 վոչխար զոհեցին (և) 3 վոչխար՝ ժողովրդի (այլ) աստվածներին, սրբազան վազը մատուցելով (aše GIS^{pl} uidi mešuli)։ Պալղուն 3 վոչխար զոհեցին, 3 վոչխար ժողովուրդներին (այլ) աստվածներին, դինի մատուցած («զեղած») լինելով (GIŠTIN mešiułli)։ Այստեղից կարելի չե յեղրակացնել, վոր խազողի տունկը և դինին ունեյին նուև ծիսակատարական և սրբազան նշանակություն, — մի բան, վոր բառացի կերպով տսվում ե և Սարգուր II (III)-ի Արմավիրում գտնված մեծ արձանադրության մեջ (տողեր 7—12)—„alukie bidli¹ Argištinu¹ Sardurini gubuštali ali ištini¹ aduile tsišuli tana ninl¹ Argištiei¹ Sarduriei¹ tini = յուրաքանչյուր նվերի (?) ժամանակ, Արգիշտին (ու) Սարգուրը ադոթեցին, (?) նաև այստեղ դինու ծես մատուցվեց՝ Արգիշտիի (և) Սարգուրի անուն (= անվամբ)։ Թե այս արձանադրությունը և թե Մհերի դռանը վերջանում են ծիսակատարական մի նախադասությամբ, վորն առ այժմ չի թարգմանվում (meieši metsi elmuše manuni) վորը թերևս կապ ունի դուշակություններին հետ։

Արգիշտի I-ի Սարգարապատում գտնված արձանադրության մեջ, վորն անշուշտ այդտեղ ե ընկել Արմավիրից և խոսում ե „Argištinili“-յի («Արգիշտեանք»), այն ե՝ Արմավիրի կառուցման մասին յուր բերդով և այլն կարգում ենք (8—10 տողեր) ID mu² na ni šanue^{pl} agubi GIS^{pl} uldie GIS^{pl} zarie terubi zadubi arniušinili ištini = Մունանի (—Արաքս?) դետից առուններ (šanue) անց կացրի, խազողատունկ, ծառ տնկեցի կատարեցի ձեռնարկություններ այստեղ)։

Մենուև թագավորը մինչե իսկ յուր կնոջ Թարիբի սյի հա-

¹ Ուրարտական այդ tan- բայարմասը, վորը գործ և անվում tanuli և tananini բայաձևերով, մենք առաջարկում ենք թարգմանել «մատուցել»։ Թերևս սկզբում նշանակել է «տանել» (հմմտ հայոց տան-իմ, վրաց taneba)։

² Այս mu նշանը աալիս ե Նիկոլսկին, իսկ Սեյբը կարգում ե „ * (ի միջի այլոց դրանք շատ նման են)։ Հետևապես կարելի չե կարգալ և ID i-na ni «զետից այս» (առունները անց կացրի և այլն)։ Քարը դանվում ե Վաղարշապատում և պեղք ե սառագել այդ նշանը

մար հատուկ այգի (խաղողի այգի) յե տնկում, նրա անունով կոչելով (Tarirlaxinili tini «Թարիրիականք» անուն)։

Չբերելով մյուս որինակները, մենք միայն այն պիտի մատնանշենք, վոր խաղողի մշակությունը քրիստոնեական դարաշրջանից դեռ 800 տարի առաջ բարգավաճում եր հին Ուրարտուի սահմաններում (Արարաայան դաշտ—Արմավիր, Վաղարշապատ, Վանի մոտ, Արճեշում, Ուրմիո մոտ .)։ Յեվ ի զուր չե, Թերևս, վոր շատ դիտնականներ խաղողի հայրենիքը համարում են այս Ուրարտուն և շրջակա յերկրները։ Պաղոզի և գինու մշակույթը մինչև իսկ սրբազնացրած եր, ծիսակատարության մեջ եր մտել, ինչպես գինու նկատմամբ այդ դեռ մնացել եր քրիստոնեական յեկեղեցում (դինին-Քրիստոսի արյուն)։ Հիշենք, վոր խեթական Tarku աստվածը քանդակված ե խաղողի վողկույղներով։

Պաղոզի այգիները, ինչպես և այլևայլ ծառուտներ տընկվում եյին ապահով վայրերում Որինակ, Արարաայան դաշտը Արմավիր կենտրոնով միայն Արգիշտի I-ի որով ե նվաճվում, ունենալով յուր կտյաղորը, փոխարքան և այլն. դրանից հետո մենք չենք գտնում մի արձանագրություն, վորը խոսեր այս շրջանը վերստին դրավելու մասին, այն ինչ դրան կից լեռնային մասերը (Վենինականի և Սևանի շրջանները) անընդհատ վերանվաճվում եյին։ Պաղոզի և մյուս անկարանները անշուշտ պետության միջոցով եյին տրվում, ստրկական ինտենսիվ տշխատանքի շնորհիվ, բերելով դրանց համար հեռվից ջրանցքներ և տուռներ, ինչպես և արհեստական լճերից ջուր բաց թողնելով։ Այդ հողերը և տեխնիկական այդ բարձր մշակությունները պետական սեփականությունն եյին կազմում, արքունական կալվածքներ եյին թագավորների և թագուհիների անունով եյին անվանադրվում և այլն։ Անշուշտ խաղողի մշակությունը, ինչպես և պտղաառ և այլ ծառերի տարածումը, կապված արհեստական ջրի հետ, չեք կարող լինել մասնավոր սեփականություն և սկզբում կատարվում եր տաճարների և հիմնական քաղաքների համար (Վան, Արմավիր)։ Սրանից պիտի յեզրակացնել, վոր այդ բարձր տեխնիկական կուլտուրաների տարածումը ստեմանափակ եր։ Պաղոզի և գինու արտադրությունը առաջ եր բերում և զարգացնում բրուտադործությունը, մեծ ու փոքր կարասներ ու անոթներ արտադրելը (akarki, xirusi, kall—տես ստորև) Հայերը, վրացիք և այլ հին ազգերը ավելի զարգացրին այս հին

կուլտուրան, վորը Միջերկրական ծովի հին քաղաքակրթությունները տարածեց հետադարձում և ամբողջ աշխարհում¹

2 ԱՐՀԵՍՏՆԵՐ (ՄԵՏԱՂԻ ԿԱՎԻ, ԲԱՐԻ)

Արհեստները և հատկապես մետաղագործությունը ուրարտացիների մոտ շատ դարգացած են յեղել, և այժմյան հայ վանեցիների վորոշ հմուտթյունը այդ ասպարեզում, որինակ, վուսկերչության մեջ, կարելի յե ասել, ավանդական շարունակությունն և ուրարտական այդ կուլտուրական նվաճման: Դժբախտաբար մետաղների աեղական անունները մեղ մնում են տնհայա քանի վոր արձանագրությունների մեջ դրանք նշված են միտյն գաղափարադրորեն և վոչ հնչյունորեն: Միակ բառը տյն ել վորպես բացատրող ս ծական, այդ tuaiե կամ tuagi բառն և, վոր կցվում և «վուսկի» գաղափարանշին և հավանորեն նշանակի «հնչուն» (ըստ Ֆրիդրիխի և այլոց): Գաղափարագիր արտահայտությամբ արձանագրությունները խոսում են բրոնզի (սլոնձի), վուսկու, արծաթի, արճիճի (անագի) և յերկաթի մասին:

Հայերն ևս, վոր նման տերմինները սլիտի վերցրած վինեյին տեղական հին ժողովուրդներից և մասնավորապես ուրարտացիներից, չունեն մնիկ բառ այդ մետաղների համար: Որինակ, տնագ բառը հավանորեն ասորեստանյան ծագում ունենտ — ասուրական anāku բառից, թեպետ կս և սյուերիական anḫa (կամ *anax) «արճիճ» (plumpum nigrum et album) ձևը, հրեական anax «արճիճ», արարական anuk բայց և սանսկրիտ naga «արճիճ, անագ»: Այդպես նակ «կապար» բառը մենք կադակցում ենք սուամերերեն ud kappar նույնիմաստ բառի հետ, ինչպես և «արոյր»ը (латун Messing) նույնպես համարում ենք սուամերական բառ (urud), վորը Միջագետքի վրայով անցել և այլևայլ ժողովուրդների (պեհլեվի՝ rod, բալուճի՝ rōd, սանսկրիտ՝ lōha, սլավոներեն՝ руда, լատին՝ raudus) հայոց «արոյր» ստացվել և հին *arōd ձևից և ըստ իս վոչ թե պարսկերենից (rōd), այլ անմիջապես սուամերներից ուրարտական և այլ հին ժողովուրդների միջոցով,

¹ Վրաց (vini (<vini) «գինի» և հայոց գինի (<*վինի) բառերը, ինչպես մանավանդ վրաց venaxi «խաղողի այգի» (виноградник) բառերը բացարձակ կերպով խոսում են այն մասին, վոր յեվրոպական բոլոր բառերը vin արմատով փոխառություն են Վրաստանից, Հայաստանից և Փոքր Ասիայից: Համեմատել նակ ուտիերեն vi «գինի» և իեթերեն vi «գինի»:

իսկ սկզբի „a“ հնչյունը վորպես «ալալոպիակալ» հատկութիւն, տեսնուած ենք նաև անօթ (Հանտութ) բառի մեջ հանդեպ սոււմերական սոսւս նույնիմաստ բառի: Հայոց պղինձ, արճիճ և պողովատ բառերն անմիջապէս կապվում են Իրանի հետ (=պարսկ. arzīz, „Zinn, Blei“, birinj կամ piring „Messing Kupfer» pōlād «պողպատ» պեհլեզի՝ pōlāpatēn || pōlāfatēn «պողպատ», տես Hübschmann, Arm Gram, էջ 111, 231, 232)¹ Իսկ յերկաթ, արծաթ, վոսկի բառերը տեղական ժողովուրդներէց պետք է լինեն կամ նրանց միջոցով անցած հայերին²:

Ինչպէս գիտենք ուրարտական խալիկները հետագայում մասամբ դադարեցելով Պոնտոս (այժմյան Լազիստան) շարունակուած ելին տարածել հարեաններէ մեջ իրենց մետաղագործական տեխնիկան: Բուն Ուրարտու յերկրում մեզ ծանօթ չեն հայտնի հանքավայրեր, վորտեղից պետք է վոր նյութ ստանային: Միտկ հարուստ հանքերը (պղինձ) գտնվում են հին Arkania, այժմյան Արղանա-մազեն քաղաքի շրջակայքում, յեթե չհաշվենք Յեփրատի վրա գտնվող Կապան-մազենը: Բայց թե դրանք միայն քիչ ժամանակ են յենթարկվել Ուրարտուի իշխանութեանը, մանավանդ Կապան-մազենը, վորը հավանորեն չի ել մտել այդ Ուրարտուի մեջ, թեպէտ Melitene-ն Արգիշտիի և Սարգուրի ժամանակ յենթարկվել և հարկ է վճարել, իսկ այդ հանքավայրերը, վոր կապար են տալիս, շատ ել հեռու չեն: Այնուամենայնիվ տեսնուած ենք, վոր ուրարտացիք ունենային իրենց բուն յերկրի ներսում պղինձի, յերկաթի, արծաթի, և վոսկու հանքեր նրանք կարող ելին բոլորը, կամ մի մասը, ստանալ նաև առևտրի կամ փոխանակութեան միջոցներով, յեթե չհաշվենք նման մետաղների հավաքումը պատերազմների կամ հարկատվութեան ու նվիրաբերութեան ճանապարհներով: Որինակ, Յեփրատի վրա գտնվող Կուստաշ յերկրի Քուստասպիլ (Kuštašpili) թագավորը Սարգուր II (III)-ին հանձնում է «հարկ՝ 40 մանա «հնչուն» վոսկի,

¹ Ե Մառք մի ժամանակ այս pīndz (վրաց splendzi) և պար brindz բառերը համարում եր պղքուրը յեփրոպական bronzա բառի, վորը վոմանք ցանկանում են կապել Brundizium քաղաքի անվան հետ (ինչպէս Kupfer «cuivre պղինձ» բառը Küpros կղզու անունից):

² Արծաթ բառը կամ համարում են պարսկերենից փոխառյալ (Կրեշմել, Անդրեաս) և կամ հնդկերոպական բառ. (Hübschmann) = սանսկրիտ՝ rajata- «սպիտակ, արծաթագույն, արծաթ», (=սփեոտական օթօտա), լատին.՝ argentum, գալլերեն՝ argento (Argento-ratum) հուն արքսորոս.

800 մանա տրծաթ, 3000 պղեստ, 2000 վահան (=աֆե ըստ Ֆրիդրիխի) բրոնզից (և) 1535 անոթ բրոնզից»¹ կամ թե հայտնի Դիտուռ իշխանության պետը հանձնում է Արգիշտի Լին—«41 մանա քհնչուն» վոսկի, 37 մանա տրծաթ, մեկ կամ սվելի (չի կտրգացվում) atibi (=տոս հազար) մանա տնագապդինձ (=բրոնզա)» կամ թե նույն ցեղապետը (կամ «թագավորը») հանձնում է Մենուտին «վոսկի արծաթ» («Յադլի տաշ»ի արձ., տող 16) կամ թե Մելիտե քաղաքի Նիլարուադա թագավորը տալիս է Սարգուրին «վոսկի արծաթ, bibu² didguš³» (Բզոգլուրի արձ., տողեր 24—25) Կտպար կամ անագ (plumbum) հիշատակվում է Սարգուրյան տարեգրերի VI-րդ տրձանագրության մեջ («7013 մանա բրոնզա, 336⁴ կապար ուրուրդա մարդկանց համար», տող 11), իսկ այդ նույն տարեգրերում (III₁₁) խոսվում է Կոլխա (Колхида) յերկրի Իլլամուշա քաղաքում (—Արտանուշ?) յերկաթե տախտակի վրա գրած տրձանագրություն թողնելու մասին (DUB? AN BAR zadubi DUB TE URU Ildamušani terubi =տախտակ (?) յերկաթե շինեցի արձանագրություն Իլլամուշա քաղաքում գրի»)

Մետաղե արտադրույթները բազմադան են յեղեր Հիշատակվում են բրոնզե գտնույթներ (GU ZA կամ թերևս guza վորպես ուրարտական փոխառյալ բառ)⁵, վորոնց մնացորդը հանվել է Թոփրակ կալեյի պեղումների ժամանակ, նաև՝ բրոնզե վահաններ (աֆե ըստ Ֆրիդրիխի), վորոնք կախվում էյին տաճարների պատերին (հիշենք Մուսասիրի տաճարի այդպիսի վկայություն

¹ Տես Аpx Экс Սարգս րի տարեգրերի IV տրձանագրությունը (տողեր 54—56):

² Տես Sayce XI V_{20 21} (Վանի « Սահակ յեկեղեցու բեմի տակի տրձանագրությունը):

³ Bibu բառը ըստ Կելիշինի յերկրագլխան տրձանագրության համարվում է տասուրական. սրան փոխարինել է ուրարտական բնագրում nirbi բառը, վորը յերկի նշանակել է «տավար, խաշն». իսկ didguš³ բառը, դեռևս անծանոթ մեզ իմաստով, կրկնվում է նաև Սարգուրի տարեգրում (II արձան) — «մարդ, կին nirbi, didguš³ տարա Բիայնա»:

⁴ Թերևս հայոց Արագած, Մենուգած (հին Սյունիքում, ըստ Ս Որբեյյա նլ) և նման բառերը կազմված են այդ guza «գտնույթ» բառից վորը սուսերական ծագումով է, և հեռակապես Արագած պիտի նշանակե «Արայի դահ» Մենուգած = Միհրի դահ, նման «Թախա ի Սուլեյման» և նման տեղանունների կազմության

նը), հետո՝ անոթներ կամ ամաններ (kiri ըստ Ֆրիդրիխի)¹ և կաթսաներ (šani)²։ Այդ վերջին բառը մտել է և հայերենի մեջ «սան» ձևով (= մեծ ու փոքր կաթսա)։ Կելիշինի տրձանագրության մեջ կարդում ենք ուրարտական «ղենք» նշանակությամբ uriš բառի մի մասը, վորի դիմաց ասուերական բնագիրը տալիս է bell (— զենք) թարգմանությունը (IV սյունակ, 8 ըզ տող), ինչպես այդ ճշտում է Götze-ն։ Մենք արձանագրություններից գիտենք (Մհերի դռան, Աշրուտ-Գարգայի և այլն), վոր ուրարտացիք «Խալդյան (= Խալդու) զենքերին» (^dXaldini BELI^{pl}) զոհեր եյին մատուցում, վոր դրանք սուրբ («լավ») եյին, ինչպես կարդում ենք Կելիշինի արձանագրության մեջ (urış- gazuli, niribi gazuli) «gute Waffen, gute Opfertiere» (?) ըստ Götze-յի թարգմանության)։

Պեղումներից և ասուերական աղբյուրներից մենք գիտենք, վոր Ուրարտուի պետության մեջ յեղել են նաև բրոնզե գոտիներ, մեծ ու փոքր տրձաններ (մեծերը մինչև 60 տաղանտ), մեծ կաթսաներ (քորեր), վորոնք գրվում եյին տաճարների տուաջ գինի զեղելու համար, յերկաթե խոփեր ու յեպաններ տեղեր ու նիզակներ և այլն և այլն։ Ուշագրավ է, վոր Սարգոնը յերբ արժարի յե յենթարկում Մուսասիրի Խալդու առճարը և Ուրզանայի պալատը, տպա թվարկում է բացի այդ արձաններից, կաթսաներից, վահաններից, քորերից անոթներից (kiuru), կրճելու ամաններից (kannu) և այլն, նաև այնպիսի առարկաներ, վորոնք կոչվում են «տեղական արտադրութիւններ» զժվար անուններով։ Անհնականի Մսի կոմբինատի հիմքը փորելիս գտնվել է կաղտպար (φորμα), վորով ձուլվում և արաագրվում եյին տապարներ (կացիներ)։

Տարակույս չկա վոր ուրարտացիք մեծ վարպետներ եյին մեծապ յգործության մեջ, ոգտագործելով սրա հետ և քարի արհեստը։ Որինակ թ փրախ կալեյի պեղումներից հանվել են ար-

¹ Տես Ֆրիդրիխի հոդվածը Arch. Orient. Vol. 4, 1932 թվի, էջ 66 և այլն, ուր կարդում ենք. «Es ist also zu vermuten dass kiuri ein fremdes Wort ist und der Sprache von Urartu entstammt» Ասուերական այս kiuru բառը, ինչպես և հին հրեական kiyōr «լաղան, կաթսա» բառը նա համարում է փոխառած (վերցրած) Ուրարտուից Ուրարտու kiri ն կարող է նշանակել և «լաղան, թեշտ»։

² Այս šani բառը պատահում է միայն Կելիշինի արձանագրության մեջ և ոտուղված է Götze-յի կողմից ուրարտ. naxuni šani EBI=ասուեր. nasi fiqar erī er brachte Gefässe von Erz» (ZA II, սջ 108)։

ձանիկներ վորոնց մարմինը և գլխի մասերը բրոնզից են, բայց յերեսը յեղել և սպիտակ քարից, իսկ աչքերի տեղ հավանորեն թանկագին քարեր: Մետաղի և քարի այսպիսի համագրումը համարվում և ուրարտական արհեստի (և արվեստի) սպեցիֆիկ կողմը:

Քարի արհեստը նույնպես զարգացած և յեղել Արձանագրությունների և նյութական կուլտուրայի մնացորդների վկայությամբ, ուրարտացիք քարը կոփում-կոկում եյին արձանագրություններ գրելու համար քարից արձաններ են շինել (թեպետ և կոպիտ), ժայռերում SUSI «դռներ» են շինել՝ նվիրելով Սալդուն (Հմմտ. հայոց «Մհերի դԱՐԱ», քրդերի „Aşrut darga“), ժայռերի մեջ նիշաններ են փորել արձանագրությունների համար քարակոթող—ստելաներ դնելու համար ժայռերի մեջ դահլիճներ ու սենյակներ են փորել (թերևս ուրարա. siršini «սենյակ»?) և այլն և այլն:

Կավագործությունն ևս վորոշ բարձրության և հասած յեղել Որինակ գինու արտադրության հետ կապված և յեղել մեծ ու փոքր անոթների շինությունը, վորոնք շինվում եյին (ինչպես և հիմա) կավից և հետո՝ թրծվում: Չթվարկելով այլեայլ տիպի կճուճներ, աքաշներ և այլն, վորոնք յայտնի յեն հին Հայաստանի այլեայլ անդերի պեղումներից, հիշենք այստեղ արձանագրությունների մի քանի անուններ, վորոնք վորոշ տարողություն ունեյին և հատկացվում եյին հեղուկների համար (գինի, յուղ...): Թե այդ արձանագրություններից (որինակ Սարգուրյան VI արձ) և թե Թոփրախ-կալեյի պեղումներից մոզ հայտնի յեն akarki-ներ վորոնք համապատասխանում են մեր գինու կարաններին և պարունակում եյին 120—150 լիտր գինի: Կար և փոքր տեսակը (xirusi), վորը ծառայում էր վորպես չափ. որինակ, կար մինչև ինը խիբուսանոց աման վորից մեծը արդեն akarki-ն էր¹: Այժմյան Բոստան-կայա գյուղում դանված մի արձանագրության մեջ ասվում է, վոր ս յգտեպ հիմնարկված մի սրբատեղու համար հատկացվում է 300 տկարկի: Թոփրախ-կալեյից հանված այդ կարանները վոչնչով չեն տարբերվում հայոց կամ վրաց այժմյան կարաններից. յերբմն դրանք ունենում են վզին կամ փորին դարդանկարներ նշեր և բեհագիր անվանումներ:

¹ Տես Lehmann—Haupt, Armenien einst und jetzt. B. II էջեր 474 467 Ուրարտական xirusi-ն անվաղն 10 լիտրանոց մի չափ էր (ibid.):

Մասնանշենք նաև Սարգուրյան տարեգրերի VI արձանագրության հետևյալ խոսքերը—«111 akarki գինի 26 akarki, 7 xirusi (ե) 20 kali յուղ» (Ու «յուղ», գրված գաղափարագրով)։ Բնորոշ ե Սալմանասար III-ի «Բարավատյան գոների» բրոնզե շրջագոտիների վրա գարգանկարված ուրարական այլևայլ անոթների արաաքինը այստեղ անհնում ենք նաև մի մեծ կարասի («akarki») տեղափոխումը գերիների միջոցով դեպի Ասորեստան։ Այդ կարասը պտուկեցված ե սայլի վրա և պարաններով կապկալված, իսկ գերիները (ուրարացիք) զույգ-զույգ լծված քաշում են

Յ Կ Ա Ռ Ո Ւ Յ Ց Ք Ն Ե Ր (СООРУЖЕНИЯ, СТРОЕНИЯ)

Կառուցումներ կատարվում էին քաղաքացիական, ռազմական և կրոնական նկատառումներով։

Վորպես ընդհանուր տերմին «ձեռնարկություն», բայց և «շինություն, շինարարություն» հասկացության համար գործ ե ածվում ըստ իս arai(u)šinili բառը։ Ռազմական արձանագրությունների մեջ հաճախ ենք կարգում «այս ձեռնարկումները մեկ ասրում կաարեցի» թե Արգիշտիի և թե Սարգուրի տարեգրերի մեջ։ Առաջին ճիշտ մոտեցումը այդ բառի բովանդակությանը («Taten Feidentaten») տվեց Հ Ֆրիդրիխը։ Բայց այս բառը գործ ե ածվում և վոչ ռազմական գործառնությունների համար, այլև շինարարության։ Որինակ, Արգիշտու «Սարգսրարատի» արձանագրության մեջ կարգում ենք— «գետից այս առունները անց կացրի, այգի (և) ծառ տնկեցի, zadubi arniušinili ištini (=կատարեցի ձեռնարկումներ այստեղ)» կամ Ռուսա I-ի՝ Քեշիշգյուրի արձանագրության մեջ գրեթե նույնը «անկեցի (պրի)» այստեղ, այգի, անտառ (=պուրակ), պարտեղ, պողի ծառ(եր), ծառ(եր), arniušinili ištini duuli (=շինարարություններ այստեղ արի)։ Արգիշտու Խորխորյան արձանագրության VII կորննայում (տող 79) կարգում ենք «RU^p ii Ê GAL^p GIBIL bi =շինությունները (և) բերդերը վառեցի», վորտեղ գաղափարագիր RU^{pl} li մեր կարծիքով հավասար ե ֆոնետիկորեն արտահայտված arniušinili բառին, վորը հոգնակի հայցական հոլովածակով ե յեղակի arniušini ձևից։ Այդ բնից ունենք կազմած arniušinani, վոր կարգում ենք Սարգուր II (III)-ի Արմավրի մեծ արձանագրության մեջ (mci giei Inani arniušinani lakuiani «թե վորվը այս շինության՝ փլած»)։ Թերևս այս arniušini բունը Ուրարտուի պատմություն—Ց

կապում լինի *arniuše սկզբնաձևից և նման pitsuše «ուրախութուն», alsuixe «մեծութուն», ušmaše «փառք», iniriaše «արութուն», anriše (id ?), nuuše «իշխանութուն» (?) և այլն կազմված լինի arni պարզ արմատից, վորը այլուր շատ գործածական է և մեր կարծիքով նշանակել է «բարձր»։ Իմաստարանորեն նույնպես դժվար չէ «կառուցում (> ձևոնարկում)» հասկացութունը կապել «բարձր—բարձրացում» նախնական յեղակետային հասկացության հետ (հմտ. ուստի ВОЗДВИГАТЬ «կառուցել» բայը վորը նշանակել է տառադի «բարձրացնել»)։

Վերջենք նախ այն շինարարության որչեկոտները, վորոնք «աշխարհիկ» բնույթ են կրում, իսկ հետո նաև՝ կրոնական շինությունները վորչափ այդ բոլորը դրսևորվում է արձանագրությունների ավյալներով։

Հիշենք նախ և տաջ Ուրարտուի պարծանք—Ջրանցքները, վոր մինչև հիմա լի տեղ-տեղ դեռ գործում են, ինչպես Վանի մոտ գտնվող «Շամիրամ-սու» ն կամ թերևս մեր Յերևանի «դալման»-ն Ջրանցք բառը, վոր առաջին անգամ ուրարտերենի մեջ գտան լեհմանը և Բելքը, դա նշանավոր pili-ն է, վոր գրվում է և pi-li-e այսինքն՝ հնչյունորեն հնչվել է pile («le» նշանը տառնձին չկար ուրարտերենում)։ Այս բառը Ֆրիդրիխը գտնում է և խուրրի լեզվում pala (թերևս pele?) ձևով։ Մենք սրանց նույնարմատ ենք համարում և հայոց պեղ-ել բայը քանի վոր հայոց -եղ -eł հնչյունակոմպլեքսը գրեթե միշտ առաջացած է լինում հիւ -il կոմպլեքսից (Նեղոս <Նիլ, Սեղրեստրոս <Silvestr os Բարսեղ <Basileos, Եկեղեցի—Akilisene և այլն)։ Այս մեր ստուգաբանությունը ցույց է տալիս, վոր ուրարտական-խուրրիական pile «Ջրանցք» բառը սկզբում նշանակած պիտի լինի «պեղվածք», ինչպես որինակ ուստի ըՅՆ-ը ստացվել է ըԿԵՆ «փորել» բայից։ Յեվ ուրեմն pili «Ջրանցքը» կարող եր լինել և գետնի յերեսին և գետնի տակ նման մեր դալմայի գետնատակ Ջրանցքին։ Ջրանցքների մասին խոսվում է շատ արձանագրություններում—Մուլարայագետի և Թալինի՝ Սարգուր II (III)-ի արձանագրության մեջ (pili sipruguni = ?) Կարակալայի (Արաքսի վրա) նույն Սարգուրի արձանագրության մեջ, Սարգարաատում գտնված Արդիշտի I լ արձանագրության մեջ, վորը վերաբերում է Արմավիրի շինության (Argištinili) և «առուններ» բերկուն, Ջվարթնոցի՝ Ռուսա II-ի արձանագրության մեջ Ամինից շատ խոսվում է Menuai pili «Մենուայի Ջրանցքի» մասին, վորը

հայերը վերագրել են Շամիրամին: Մենուա թագավորը մոտ քսան արձանագրություն է թողել 70 վերստ ձգվող այդ ջրանցքի պատերի վրա: Հիշենք նաև ասուրական աղբյուրներից Ռուսա I-ի այն ջրանցքի մասին, վորը «Պուրատտի (Յեփրատի) նման» վոռոզել է Ուլխու քաղաքի գաշտերը և ջուր է տվել այդ քաղաքին (Ուրմիայի շրջաններում): Այսպիսի ջրանցքների կառուցումը պահանջում էր իհարկե բաղմահաղար սարուկների պարտադիր աշխատանք

Ուրարտական թագավորները կառուցում էին և քաղաքներ, ինչպես Ռուսա I-ը կառուցեց Ուլխու քաղաքը, կամ Սարգուր II (III) ը Ռիսր քաղաքը: Ռուսա I-ի կառուցածը այժմյան Թոփրախ-կալեյում (Վանի մոտ) նույնպես կոչվել է քաղաք, այն է՝ Տուշպանտ քաղաք նման Տուշպա (=Վան) քաղաքին և տնվան վերջինս (Տուշպան) կոչվել է Ռուսայի անունով—Ռուսատիսնտ: Յերբեմն շինված բերդը յուր շրջակայքով նույնպես կոչվում է «քաղաք» (URU) ինչպես որինակ, կարդում ենք Մենուայի՝ Շուշանց գյուղում թողած արձանագրության մեջ— «Սալդու փառքով (փառքի համար) Մենուան Իշպուլինիի վորդին «տուլուրի» տունը (E tulūri) բերդը հոյակապ (Ê GAL badusie) կառուցեց, քաղաք (URU) կառուցեց՝ պարսպով նրան շրջապատելով: Մենուան Իշպուլինիի վորդին կառուցեց թե բերդը (և) թե քաղաքը» (Սեյս № XIII Սանդ Սանդ № 12): Ինչպես տեսնում ենք Մենուան շեշտում է միայն յերկու որյեկա—բերդը և քաղաքը, հետևապես E tuluri(ri) կարող է լինել միայն բերդին (Ê. GAL) հավասարազորը: Ուրեմն ուրարտերենում «բերդ» բառը տրվել է tuluri հնչյունական ձևով (կա մի տեղում և Ê^{pl}-ria, վորը հավասար է E. tuluria, տես Սորիս. Col. VII₇₅) համեմատել հայոց դղեակ (<duli+ak?) և սումերերեն DUR «պատ, բերդ, պալատ»: Իսկ ինչպես է հնչվել «քաղաք» բառը ուրարտերենում, այն քաղաքը, վորը կարծես թե միշտ բերդելի հետ է հիշատակվում Յերբ այդ բնորդը կամ մի սրբատեղի շրջապատվում է պարսպով ապա հեշտությամբ դա քաղաք է դառնում, վորպես այդպիսին է հիշատակվում¹: Հենց ինքը patari «քաղաք» բառը վոր գործ է ամ [ել URU Tušpa URU գաղափարագիր

¹ Համեմատել նաև Ռուսա I-ի Նոր Բայտգեսի արձանագրությունը (4—6 տողեր) — «Սալդու դռները (և) բերդը հոյակապ(?) յես կառուցեցի, դրի անուն «Սալդու-քաղաք» Բիայնի յերկրին է փառս (և) թշնամական յերկրին է սար

գրության փոխարեն յերբեմն հնչյունական URU Tušpa patari արտահայտությամբ, նշանակում է մեր ստուգաբանությամբ «պարբայած, загороженное», ինչպես ուսաց город բառը ստացվել է «городить, загородить» (=պատել) բայտրմատից (հմմտ. և գերմաներեն Garten «պարտեղ» բառը նույն արմատից): Ուրարտական թագավորները իրենց ախտոսը միշտ վերջացնում էին «տերը Տուշպա քաղաքի», համարելով ուրեմն այդ քաղաքը իրենց սեփականությունը (alusı «տեր, իշխան»): Դեռ 1931 թվին մենք այդ ուրարտական patar «քաղաք» բառը համարել ենք ածանցավոր pat- «պատել» արմատից և -ar ածանցից, վորը ցույց է տալիս գործողության հետևանք (նման գրաբարի -ոյթ ածանցին): Իսկ այդ pat արմատը կա վոչ միայն հայերենում (պատել, պատաակել, պատեան պաճ, պատաղիմ «զբաղվում եմ», փաթ, փաթակել, փաթոյթ, փաթեթ...), այլև խեթերենում, ուր կա այդ pat || pit արմատից՝ pataliandu «թող զբաղվեն» (հմմտ. գրաբարի պատաղիմ «զբաղվում եմ» և դ բաղ-իմ նման գոյացմամբ «բաղ» տրմատից, վոր կա՝ բաղադրել, բաղհյուսել..., բաղեղ բույսի անվան մեջ), ինչպես և խեթերեն՝ pittula «Schinge, виток, сверток, клубок (шерсти)» բառի մեջ, վորը անցել է և հայերին «փաթուղ» կամ «փաթիլ» նույնիմաստ ձևով: Լեհմանն Հաուպտը ուրարտական այդ patar «քաղաք» անունը ցանկանում է տեսնել վորպես հատուկ անուն դարձած մի շարք փոքրասիական տեղանունների (քաղաքների) մեջ, ինչպես—Παταρα (Լյուդիայում), Πτέρα (Կապպադոկիայում), Πατηρας (Կիլիկիա-Իսավրիայում և Լիկոնիայում), Pitura (Կիզվատնայի մայրաքաղաք)¹, Petra (Պոնապոսում)՝ Սև ծովի ափին, Pitru և այլն: Ավելի առաջ գնալով Լեհմանն-Հաուպտը սրանց հետ ցանկանում է աղգակցել և հույների հին ptolis և հեաագա polis «քաղաք» բա-

ստի: Նմանապես Ռուսո II ը Մակլի մոտ մի փոքր սրբատուն (կապելլա) է շինում, պարսպով շրջապատում և կոչում «Ռուսայի քաղաքիկ» (՝ Rusai URU TUR): Այդպես և Քյոլանդաունի՝ Ռուսա I-ի արձանագրության մեջ կարդում ենք—«Տեյշերայի այս բերդը կառուցեցի, [զբի անուն] «Տեյշերայի քաղաք» (եջ 17—18):

¹ Այդ Կիզվատնա յերկիրը յուր Pitura յով մենք զնում ենք հայոց Մեծ Մոսիքում: Աստուրնազերբայի կողմից նախրյան յերկրում (Տիգրիսից հյուսիս Գիարբեբերի մոտ), հին Դիբրացվոց յերկրում հիշատակվող Pitura քաղաքը մենք նույնացնում ենք հույների և հռոմայեցիների կողմից հիշվող Pitar քաղաքին, վորը դանվում էր in terra Sopheniorum Մարդինի մոտ տես H Адонц Армения в эпоху Юстиниана, եջ 31:

որ¹. Հավանորեն *petra* կամ *pitru* ձևը անցել է գրափոխությամբ (մետաթեզայով) և հայերին «բերդ» անվան մեջ, վորը վոչ թե ասուերական *birtu* «բերդ» բառն է, այլ ընդհակառակը՝ աղբյուրը այդ ասուերականի համար: Ուրարտական արձանագրությունները հիշատակվում են յերկու քաղաքների անուն *bitarn* մասով, վորը մեր կարծիքով նշանակում է «բերդ» այդ քաղաքներն են *Kuibitarni* (Սարբերդից հյուսիս), վորը հավանորեն պահվել է հայոց Կողոբերդ նույն տեղի բերդանվան մեջ, և *Uzina-bitarn*, վոր հիշատակվում է Բասենի կողմերում (= *Սձնա-բերդ): Ուրարտական արձանագրությունների մեջ հիշատակվող բազմաթիվ «քաղաքները» չպիտի հասկանալ հետագա լայն տուումով, ինչպես վոր «քաղաք» են կոչվում նաև Տուշպան (Վանը) և Բաբելոնը: Կուլտուրայես հետամնաց այդ *Veikuni*, *Eriaxi*, *Abilia nixi* և այլ յերկրներում, վորոնք Ուրարտուի հարկատու գավառներն էին, հիշատակվող տասնյակ «քաղաքները» յեղել են փոքր ամրացրած կետեր, բլուրներ գյուղեր:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր ուրարտերենում *tuluri* կոչված «տունը» կարող է պարսպապատ լինել և հետագայում այդ «պալատը» վորպես բերդ նշանակել և «քաղաք»: Ստուգաբանորեն և իմաստարանական փոփոխման անսակեալից մենք կմատնանշեցինք սոււմերական *dur* բառը, վոր սկզբում նշանակել է «պատ», *ctena*» (վորտեղից թերևս քրդական *duar* > *divar* «պատ»), հետո նշանակել է «պալատ» և վերջում նսև «բերդ» (*DUR Šarrukin* «Սարգոնի բերդ» = Սարգոնի քաղաք): Արդյո՞ք, Սյունիքում (Բաղք Քաշունիքում) հիշվող Տողոր կամ Դողոր (Դողար) գյուղանունը, այժմյան Տուր-ս գյուղանունը, ինչպես և թերևս Արագածոտնի Տեղեր (= այժմյան Դրղըր) չեն նշանակել մի ժամանակ «բերդիկ, դղյակ»², Բայց հայերը վերցրել էին և *egal* (= սոււմեր *E. GAL*) սոււմերական բառը, վոր սկզբում ելի նշանակել է «պալատ» (տառացի *E. GAL* = տուն մեծ), իսկ հետո նաև բերդ: Ուրարտացիների մոտ ինչպես ճիշտ կերպով ուզղեց *J. Friedrich*-ը, *E. GAL* գաղսփարանիշը վոչ թե նշանակել է «պալատ», այլ դրա հետագա զարգացումը՝ բերդ: Այս վերջին իմաստով այդ բառը, վորպես հասարակ բառ (*ekal*) գործ էր ան-

¹ Տես նրա *Armenien einst und jetzt*, B II, էջ 677

² Դուրեք լատիներեն *turr-is* «աշտարակ» նույնպես սոււմերական-ակկադական կուլտուրայի հետ կապված բառ լինի և կազմված հին **turur is* ձևից

վում և ակկագերենում «բերգ» իմաստով (հայերը այդ egal ը վերցրել են agil ձևով, այն էլ տեղանունների մեջ, ուր Անգղ < Angei < Agei սկզբում նշանակել և «բերգ») Ուրարտական pa tar-ը ցույց է տալիս փոքրասիական ծագում և կապվում է խեթական կուլտուրայի (և լեզվի) հետ, ինչպես մասնատնշվեց մեր կողմից:

Ուրարտական արձանագրությունները խոսում են (Երիախի յերկիրը գրավելիս) և մի այլ տառն (\hat{E}) մասին, վորը գրվում է «E murie» կամ հոգնակի հայցական հոլովածևով «E murili», Այս շինության տեսակը հայտնի յե մեղ դառնում Սարգուլայան տարեգրի II արձանագրությունից (տես , Арх ЭКСП “ II₂₇ II₃₀₋₃₁), վորանդ կարդում ենք—E murili ali ^{Lu} AD-se ^{Lu} AD AD še zaduali «murili շինքերը վորոնք հայրը (և) հոր հայրը (=պապը) շինել եյին» կամ մի յերկու տող հետո—1eše 150 E murie xaubi tašmābi 'aše ^{SAL} lutu nirbi didguši ištini ni šiubi «յես 150 muri տներ վերցրի (և) տեղահանեցի (ավարը), այր, կին, տավար (և) didguši այտեղից փոխադրեցի»: J Friedrich-ը առաջարկում է այդ «muri տները» թարգմանել «թագաստոցներ, շտեմարաններ», վորը հավանական է ի միջի այլոց արձանագրությունների մեջ, մի տեղ միայն, կարդում ենք ամբողջապես դադափարագրով գրված «E G1» (Sayse, § XI A₂) վորը գեռ ստուգման կարիք ունի Սեյսը այդ թարգմանում էր «firm house (?)»: Մենք կարծում ենք, վոր դրանք միևնույն շինության համար են գործ ածված, այսինքն \hat{E} murie և E G1 ցույց են տալիս վորոշ նպատակի շինք, թերևս և «թագաստոց, շտեմարան» վորը առանձին պետք է ամրացրած լիներ: Արդյ՛ք, հայոց ամաւր բառը վոր նշանակում է «ամուր, սլինդ» (крепкий) բայց և «ամրոց» (крепость) այս նույն ուրարտական muri «թագաստոց» բառից չի խոչընդոտն և միայն սկզբնաղիբ (սլրոթետիկ) «a՛ ձայնավորը (amur և murie=mure), վորը թերևս հատուկ բարբառային («ալարդիական») մի յերևույթ է¹:

Այ ձանագրությունների մեջ հիշատակվում են շինարարական և այլ տերմիններ—giei «պատ, պարիսպ», 'ari «բուրգ աշտարակ» (հմմտ kar «ամուր» հայոց կար-ք «կարս» կար-ին, կարոզ, կարեմ, տկար վրաց m gari և այլոց մեջ), kaldi

¹ Գուցե Մրենի անունը, կազմված muriana հին ձևից նշանակեր սկզբում «ամրոց» կամ «թագաստոց»?

«թումբ, պատվար» (?) guni (հմմտ. Չանֆիդայի Սարգուրյան արձանագրության guni terubi zagubi E «guni դրեցի, կառուցեցի տուն = տաճար») Թերևս այդ guni բառը նշանակե «հիմք»։ Պետք է մատնանշել, Վոր կառուցումների ժամանակ գործածվող kiurani kuldini manu ui giei istini sidauri դժվար նախագատությունը («հողից թումբ, պարսպով նրան շրջապատելով»?) Մակուի արձանագրության մեջ (Ռուսա II-ի) փոխարինված է karbi salzi manu և այլն, այսինքն՝ այստեղ kiura և karbi բառերը մոտ առնչություն ունեն մեկը հող (kiura), վորը հաստատ է (դրվում է և դադափարադրո՛ւ KI նույն կոնստրուկցիայի մեջ), իսկ մյուսը (karbi) յերևի նշանակել է կամ ելի «հող» և կամ ել՝ ավազ, կիր և նման բան։ Այդ վերջին բառը ևս հայերը պահել են (և վրացիք) վորպես տեղանուն—Կարբի (Աշտարակի մոտ) և վրաց Կարբի (Գորիի մոտ), թեպետ Սա. Որբելյանը հիշատակում է և «Շիկակարբ», «Կարբինք» (Վերին և Ներքին) գյուղերը ուր կարծես թե զգացվել է դրանյ վոչ հասուկ, հասարակ, առումը (հմմտ. Շիկակարբն բառի հետ և Շիկահող գյուղանունը, վորը կարծես թե արդարացնում է Karbi=kiura «հող» նույնությունը կամ համանիշ լինելը)։ Իսկ kuldi վորպես տատվար մենք կպաշտպանենք հայոց կոյա (<*koll) բառով, վորի փոխարինող salzi (կամ šalzi) բառը մենք տեսնում ենք հայոց շեղջ «կոյտ» կամ դավառական սեղճ («ցորենի կոյտ») բառի մեջ

Ուրարտացիք իրենց ժայռերի վրա շինում էին և աստիճաններ, վորոնք յերբևմե մեկ մետր իրարից բարձր էին լինում։ Այդ աստիճանները տեսնում ենք Վանում, Բալուի մոտ և Փոքր Ասիայի այլ քաղաքներում։ Այդ աստիճանուղու մասին արձանագրություններից դեռ տեղեկություն չենք ստանում (Թերևս շատ բառեր չհասկանալու հետևանքով)։ մեր կարծիքով հայոց սանդուղը (հոյնակի սանդուղք, վոր սխալ գրում են սանդուխք) ունի այդպիսի հնագույն արտահայտություն, կազմած սանդ «փոս» (որինակ, ձափար կամ աղ ձեծելու համար, վոր շինում են քարի մեջ) և ուղի «բառից», վորի «ի» վերջին հնչյունը այնպես է կրճատվում (վորպես Ֆրբմալ բառ), ինչպես ունենք այդորդ, ճանապարհորդ, օրիորդ (նաև՝ վորսորդ գնորդ․․), ուր վերջին «-ord»-ը ստացվել է ordi «վորդի» (տղա և աղջիկ է նշանակում) բառից։ Այգեդործս կան շրջաններում սանդ նշանակում է նաև հողի մեջ փորած այն փոսը, ուր տնկում են խաղողի տունկը։ Ակներև է, վոր sanduk է նշանակում է «փոս»

ուղի» > աստիճանուղի և կապ է ունեցել նյութական կուլտուրայի հետ՝ ժայռափորության հետ:

Ուրարական նիշաների մասին, վորպես քաղաքացիական կառույցի մի տեսակի, մենք յուր տեղում խոսել ենք:

Գալով կրոնական ընույթ ունեցող կառույցներին, պետք է ասել, վոր դրանց քանակը բավական ստվար է, թեպետ կոնկրետ նշանակությունները դեռ լավ չեն հաստատված:

Նախ հայտնի յե SUSI «դուռ» շինվածքը վորը լինում է ժայռերի մեջ վորպես առանձին մի սրբատեղի և բերդերի հեա կառուցված: Վորպես առանձին դուռ մենք գիտենք, որինակ, Վանի Զիմզիմ-դաղի հայտնի «Մհերի դուռ» կոչվածը, վորը տալիս է մեզ խալդական պանթեոնի նկարագրությունը յուր 94 տողանի արձանագրությամբ (տես էջ 47—49) և շինված է Իշպուլինի և Մենուայի կողմից: Նույնպես առանձին է կառուցված և նույն թագավորների կողմից «Աշրուտ-դարգա» կոչված դուռը Սալաքանա և Պապան գյուղերի մոտ (Վանից արևելք), վորտեղից իմանում ենք, վոր SUSI նշանակում է «դուռ»: Իհարկե այդ գոները, վոր փորվում էյին ժայռերի մեջ (մոտ 5 մետր բարձրությամբ), նվիրվում էյին Խալդ աստծուն և միշտ էլ գործ են անվում Xaldinili BAB-ի «Խալդյան դռներ» (հոգն հայց.), Xaldinani BAB, Xaldiei susi «Խալդու դռներ» կապակցություններով: «Աշրուտ-դարգա»-յի («Արշոտա-դուռ» քրդերեն լեզվով)¹ Իշպուլինի և Մենուայի արձանագրության առաջին յերկու տողերն ասում են—«Խալդ տիրոջը Իշպուլինին Սարգուրի վորդին (և) Մենուան Իշպուլինի վորդին Խալդու դուռը կառուցեցին (d Xaldiei susi šidištuni)»: Յերբեմն այդ SUSI «դուռ» անունը դուրակցվում է դադափարագիր կրկնությամբ, վորը կարծես թե կրկնվելով բացատրում է ինչպես «Մենուան», այս SUSI-ն կառուցեց, Խալդյան դռները կառուցից այս բերդը կառուցեց հո-

¹ Ավելորդ չենք համարում բերել այդ «դռան» նկարագրությունը ըստ Սանդալյանի («Les inscriptions cuneiformes urartiques», էջ 219)—«A l'est des villages de Salakhana et de Pagan, situés du côté d'est de la ville de Van, se trouve la montagne Aschrouth: vers le milieu du versant méridional de celui-ci on aperçoit une niche pratiquée dans le rocher et en forme d'une porte. C'est sur la partie supérieur de cette porte que l'inscription est gravée. Les Kurdes appellent cette niche Aschrouth—Darga: port d'Aschrouth».

յակապ (?)» (Sayce, VII₂₋₅)¹, Մեյազդերդում գտնված մի քարատախտակի վրա (1 մետր 20 սանտ. յերկարությամբ և 50 սանտ լայնությամբ) վորն այժմ Պոլսի Թանգարանումն է, կարդում ենք—«Պալդյան փառքի համար, Պալդ տիրոջը Մենուան Իշպուլինիի վորդին այս դուռը (susie) կառուցեց, բերզը (Ê. GAL) կառուցեց հոյակապ (bādūsie?)» և այլն: Այս susi բառը վերջապես դործ է ածվել և Մհերի դռան արձանագրության մեջ (տող 17)—«1 արջառ (և) 2 վոչխար աստվածներին «Xal dīnini susi» (= Պալդյան դռնից = Պալդյան դռան)», Թեպես այդ արձանագրության սկզբում «դուռ» բառը արտահայտված է գաղափարագրով (BAB)—«Պալդ տիրոջը, Իշպուլինին Սարգուրի վորդին (և) Մենուան Իշպուլինիի վորդին այս դռները (inili BAB || inili BAB^{pl}) շինեցին (zaaduali || zartuuli <*zad tu-li), Այստեղ «դուռ» հոգնակի ձևով է («դռներ»), ինչպես ռուսաց «ВОРОТА»: Այդպես է, որինակ, և Սարգուրի մի արձանագրության մեջ Արմավիրից—«Պալդուն, տիրոջը յուր, այս առնը (= տաճարը?) Սարգուրը Արգիշտու վորդին կառուցեց և Պալդյան դռները («Xaldinili BAB li) հոյակապ (?) բարձրացրեց (kušuni?)»: Այդպես է և Կողբանց գյուղում (ս Գևորգ յեկեղեցում) Մենուայի արձանագրության մեջ («այս susi-ն կառուցեց, խալդյան դռները կառուցեց, այս բերզը կառուցեց հոյակապ») և այլն և այլն: Ամենուրեք տեսնում ենք, վոր «դուռ» կամ «դռները» կառուցվում են կամ «առն-տաճար» շինության հետ և կամ բերդի³, Թերևս տյն քարը վորը վերջերս

¹ Ամբողջ այս արձանագրությունը գրված քարի վրա, գտնվում է Կողբանց գյուղի յեկեղեցում, Վանից մոտ 12 մղոն դեպի արևելք: Արձանագրությունը կրկնվում է բաղկացած լինելով 5 առղից յուրաքանչյուրը— «d Xaldinini ušmaašini d Xaldite euriie I Menuaše I Išpuuinišiniše ini susi šidistuni d Xaldinili BAB li šidištuali ini Ê GAL šidištuni baduusii» Վոր susi նշանակում է «դուռ» (դռներ), դրանում կասկած չկա: Առաջին անգամ այս նշեցին Լեհմանն և Ֆրիդրիխը: Իսկ šidištuni բառը միտյն կարող է նշանակել «կառուցեցին» և վոչ «վերակառուցեցին» ինչպես մատնանշեց Ֆրիդրիխը:

² Տես Սանդ № 67 Գարը այժմ գտնվում է Վաղարշտպատում (13 տո դանի յե):

³ Այդպես է և նորագյուտ՝ ՆորԲայազեաի արձանագրության մեջ—«Պալդյան դռները (d Xaldinili BAB^{pl}) (և) բերզը հոյակապ (?) կառուցեցի, դրի անունն «Պալդու քաղաք» (անս մեր «Նոր Բայազեաի սեպագիբ արձանագրությունը Յերևան, 1930 թ, էջ 30)

դանվեց Արմավիրի մոտ (Ջանֆիդա գյուղում), ուր Սարգուրը խոսում է «տուն» շինելու մասին, լինի հենց այդպիսի susi-յի մի մասը. այս քարը աստիճանաձև է և հատուկ է յեղել ուրարտական դռների (susi-ների) կողքերին¹:

Կրոնական և թերևս քաղաքացիական բնույթ պետք է կրեն այն ընդհանրական տները, վորոնք հիշատակվում են զանազան արձանագրություններում: Այս տուն (Ê) գաղափարանիշը կարող է նշանակել նաև «տաճար» և թերևս «պալատ»: Վերջին ըմբռնումը (E ria) մենք արդեն մատնանշել ենք, ուր E (=տուն) գաղափարանիշը ունի և հնչյունական լրացում (-ria), վորք դրվում է և լրիվ (E tulari)²: Իսկ թե ինչպես եր հնչվում «տուն» կամ «տաճար» բառը ուրարտերենում, այս առայժմ հայտնի չէ Կան կրոնական շատ շինվածքներ, վորոնք այլևայլ սրբատեղիների տեսակներ են և ունեն Ê բացատրությունը (դեատերմինատիվը) ինչպես burgana, barzudi-bidu sirxani E BARRA և թերևս iaranı և urbuatsı վորոնք աւանդ այդ բացատրիչ գաղափարագրի յեն

Սրբատեղու կամ տաճարի իմաստ ունի burgana բառը, վորը ընդունվում է խալդազեաների կողմից (Friedrich, Götze, Lehmann-Haupt) այդպես էլ թարգմանվելով («Heiligtum»): Այդ burgana-ն մենք տեսնում ենք նախ Վանից 1¹/₂ կիլոմետր հեռու դանվող Կալաջիկ գյուղի յեկեղեցու (նախկին Կուստան) արձանագրության մեջ³, ուր կարդում ենք. «Իշպուլինին Սարգուրի վորդին «բուրգանա» ն կոտուցեց Մալգյան վողորմածությամը (? usgini) Իշպուլինին Սարգուրի վորդին տունն (Ê) այս կառուցեց, այս հոյակապը (badusini), պարսպով շրջապատելով»: Այս կրկնությունը («տաճարն այս կառուցեց») փոխարինում է սկզբի այսպես ասած վերնագրային burganaı (Հայց. հոլ) բառը, համադր է այդ վերջինին: Այս բառը կա և Կելիշինի յերկլեզվյան արձանագրության ուրարտական բնագրում (աող 20-րդ), վորին ասուերական բնագրում համապատասխան բառն է յեղել յերևի parraku «սրբատեղի»: Մհերյան դուան արձանագրության մեջ ևս

¹ Այդ քարը այժմ Վաղարշապատումն է

² Այստեղ Ê դեատերմինատիվ է և վոչ գաղափարագիր

³ Արձանագրությունը գրված է մի քարի վրա, վորը ընկած եր մի ժայռի ստորոտում: Իսկ ժայռի վրա գաղաթին կա մի յեկեղեցի, վորը ըստ տվանդության յեղել է հեթանոսական կուստուն (ախ Սանդալջյան «Les inscr cuneif. urart.», էջ 251)

(29-րդ տող) պատահում ենք այս burgana բառին («Իշպուինին... և Մենուան... burganani šuxe teruni = տաճարի դարտեպը տնկեցին»)։ Տաճարի շուրջը ծառեր տնկելը հատուկ է յեղել և հայոց յեկեղեցիներին և մահմեդական մղկիթներին։

Յերկրորդ սրբարանն է barzudi-bidu, վորը սկզբում ունի E (տուն, տաճար) վորոշիչը՝ դեաներմինատիվը։ Այս բառը հայտնի յե մեզ միայն Մենուայի յերկու արձանագրություններից։ Առաջինը, վոր դանվում է ներքին Վարազի Կողրանց դյուպի սուրբ Գեվորդ յեկեղեցում և դրված է մի քարի չորս բուրբը, հետևյալն է—«Սալդյան փառքի շնորհիվ Մենուան Իշպուինիի վրդին այս E barzudi biduni (հայց. հուլ ու վերջավորությամբ) կառուցեց Մենուայի Ê barzudii biduuni անուն (= անվամբ)...» (եջեր 1 4) իսկ 12-րդ սողում այդ շենքը կոչվում է ելի շինողի անվամբ՝ ¹ Menuaini barzudi bidu ašxulini (= ?)։ Նույն ներքին Վարազ սարի վրս սուրբ Սաչ յեկեղեցում գտնվել է ելի Մենուայի նման բովանդակության արձանագրությունը— «Սալդյան փառքի շնորհիվ Մենուան Իշպուինիի վորդին այս E barzudi-biiduni կառուցեց, Մենուայի Ê barzudii-biiduni անուն, Մենուայան է (¹ Menuuani iaie)»։ Ինչպես տեսնում ենք barzudi bidu շինությունը կարող է և տանց վորոշիչ-բացատրիչի լինել (առանց E = տուն, տաճար) Անշուշտ այդ բառը բարդ է, վորի յերկրորդ մասը թերևս կազմեն նա bidu բառի հետ վորը մոտավորապես նշանակելիս պիտի լինի «նվեր, դոն» և նմանը, իսկ առաջին մասը թերևս կազմեն նա ելի կրոնական բնույթ ունեցող barzani բառի հետ (barzani.zieldi = ?)։

Արմավիրի դաշտում գտնված մի արձանագրության մեջ՝ կարգում ենք (տողեր 8—9)... zadini SJM-tsi Ê sirixani[ni] [ši]-duli inl E sirixanini, վորը մենք թարգմանում ենք «շինվեց զոհատեղի՝ sirixani շինեցի այս sirixani»։ Իսկ ինչ պիտի նշանակե այս sirixani բառը։ Յնթե հնչվել է sirhan ապա դանման է հին հրեական šulxan «սեղան» բառին և բարբառային *silhan ձևով կարող է դառնալ հայոց «սեղան»։ Շարունակության մեջ ասված է «Սալդյան դոան առաջ... ձախից (և) Սալդյան zeldie-ից աջ» Անշուշտ այս sirixani «սեղանը» գործ է ածվել զոհելու համար (SUM-tsi), բայց տարրերնակ է նրա Ê «տուն» բացատրիչը (Ê sirixani)։ Մեղ թվում է, վոր այդ sirixani «սեղան» բառի

¹ Գրված է կարմրավուն քարի վրա և այժմ վաղարշապատումն է։

բացատրիչը SUM ts1 «զոհարան» պետք է տեսնել լրիվ հնչյունական urbuatsi գրության մեջ վորը մենք տեսնում ենք նման կոնստրուկցիայի և բնույթի նախադասության մեջ այլ արձանագրություններում Այդպես Շուշանց դյուղի վանքի («Կարմրավոր») մի քարի վրա, վոր գրված է պատի մեջ (Վանի մոտ է), կարդում ենք.—[^d Xal]die urbuatsi zaduni [^d Xaldi] e ašxax tuli xaluli.. gudi GUB dia tulie. .“, վորը մոտավորապես նշանակում է «Պալղու(ն) զոհարան շինեց (կառուցեց), Պալղուն ձախից...», իսկ մի այլ տեղ (Sayse § 74) կարդում ենք «urbuatsi ^d Xaldina BAB e» այսինքն՝ զոհարան Պալղու դռան»։ Ինչպես տեսնում ենք Պալղու դռան առաջ ձախ կողմից դրվում էր սեղան-զոհարանը (sirixani urbuatsi), իսկ աջ կողմից zieldie (zeldie) անվորոշ առարկան։ Կա և urbue urbulini և ^{Lu} urbikaše («զոհող քուրմ») բառերը (տես եջ—)։ Իհարկե urbuatsi «զոհարան»-ը նոր առարկա չէ, այլ sirixani «սեղան» բառի բացատրությունն է կամ նրա այլաձև իմաստական արասնայտությունը։

Կելիշինի արձանագրության մեջ կա և iarani բառը, վորը թեպես վերջերս թարգմանվում է վորպես «սրբատեղի» (կամ հիմք, պատվանդան, ПОКОЛЪ), սակայն այդ դեռ ստույգ չէ։

Ռուսա II ի Մակվի արձանագրության սկզբում կարդացվում է դադափարագիր արասնայտությամբ E BARRA «(տուն) սրբատեղի, կապելլա», վորը կառուցել է Ռուսան, սլարսպով շրջապատել և յուր անունով կոչել «Ռուսայի քաղաքիկ»։ Այս դադափարագիրը անշուշտ փոխարինում է բուն ուրարտական կամ burgana կամ ավելի շուտ iarani բառը

Վանի մեծ ժայռում, ինչպես դիտենք, փորված են մեկ մեծ և յերկու փոքր սենյակներ, վորոնք դանվում են այդ մեծ սենյակից աջ և ձախ իսկ ժայռի վրա դրված է մի մեծ արձանագրություն Մենուա թագավորի կողմից և վերաբերում է այդ շինվածքներին։ Մինչև հիմա այն կարծիքն էր տիրում, վոր այդտեղ հանգուցյալների գերեզմաններն են յեղել, թեպես հետք անգամ չկա Մենք, հենվելով դրա արձանագրության վրա, առաջարկում ենք այդտեղ տեսնել վոչ թե գերեզմանոց, այլ անասունների դոմ, թերևս զոհելու համար պահվող կենդանիների դոմ։ Արձանագրությունը (17 տողից) ասում է։ «Մենուան, իշպուրինի վորդին, այս տեղը շինեց գոմ (ini esi zaduni siršime)», իսկ անեծքի ֆորմուլայի մեջ ասում է. «ով paxa[ni] (=արջառ?) այստեղից փոխադրե (šjullahi կամ šjuli aii?), ով xuali auiei

(= ?) ով (սուրբ) կենդանիները (niribi) այստեղից վերցնի, ով այս արձանագրությունը փչացնե՞ս և այլն¹: Այստեղ paxa[ni] բառը կարող է լինել paxini «արջառ» բառի այլ ձևը, իսկ niribi բառը վորպես զոհելու համար սուրբ կենդանի հայտնի յե մեզ Կելիշինի և այլ արձանագրություններից, այս ուրարտական բառի դիմաց կարողում ենք ասուերական BI BU, վորը սովորաբար ասուերերենում գրվում է bibbu «խոյ, վոչխար» նշանակութայամբ:

В ОТЕЦСВОИХ ЗЛОУМНЫМЫМЪ, ЧЕЛОВЕЧЕМЪ И ЧЕЛОВЕЧЕМЪ СЫМЪ ЧЕЛОВЕЧЕМЪМЪ ЧЕЛОВЕЧЕМЪ

1 ՏՈՂԾ, ՅԵՂ, ԸՆՏԱՆԻՔ, ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ուրարտական արձանագրություններում կան անշուշտ սրանց անբովանդակները, միայն լավ չեն բնորոշվում իմաստի տեսակետից:

Տոհմ կամ ցեղ հասկացողության համար ընդհանրապես դործ է անվել մեր կարծիքով ibirani անունը, վորը հոգնակի յե («տոհմեր», «ցեղեր») և կազմվել է ibir չպահված յեզակի ձևից: Այս ibirani բառը գրվում է և լրիվ հնչյունորեն և կիսադադարափարադիր ու հնչյունադիր (LU^{pl}-rani): Սեյսը առաջինն էր, վոր մոտավոր ճշտութայամբ տվեց այդ բառի թարգմանությունը (տես նրա գիրքը էջ 697 «ibirani—Men(?)») Սակայն այս բառի «մարդիկ» նշանակությունը սկզբնականը չէ, թեպետ այդ առումը «մարդիկ-ժողովուրդ» կարծես թե դերիշխում է ուրարտական արձանագրություններում: Հենց դադարափարանիշը (𐎠𐎼𐎷𐎫) նշանակում է «մարդ, մարդիկ, ցեղ, ժողովուրդ», թեպետ գրվում է մեծ մասամբ «մարդ» իմաստով: Բայց գրվում է և բարդութայամբ, ուր սկզբում գրվում է այդ դադարափարանիշը, վորպես բացասություն, այսինքն՝ դեպքովանատիվ հետևյալ դադարափարանիշը:

¹ Ska Götze յի հոդվածը («Zur Kelischin-Stein»), էջ 107—108: «Menuas sagt in der Inschrift am Eingang zum Felsensaal auf Wan-Kate: aluše niribi ištini. Իսկ «wer das niribi von dort wegbringt» nachdem parallel vor her von Rind(ern) die Rede war»: Այդ niribi բառը, վոր պատահում է և այլուր կենդանիներին վերաբերող տեղերում, Götze-ն առաջարկում է թարգմանել «Opfertiere» (զոհելու կենդանիներ), վորոնց տրվում է gazuli «մարդու» («հալալ») անունը:

բազիր UN «մարդիկ, ժողովուրդ» բառի ($\geq \text{Y} \text{Y} \text{Y}$), վորը ունի նաև հոգնակի նիշ Սեյսը այդ բոլորը թարգմանում եր Men persons» (տես նրա մտա եջ 725), վորի հնչյունական վերարտադրությունը նա համարում եր ibirani, թեպետ և հարցականով (ibid.): Աստիքիտրոգիական տառադարձությամբ այժմ գրվում ե այդ բոլորը այսպես $\text{L}^{\text{u}}\text{UN}^{\text{pl}}$ (կամ $\text{L}^{\text{u}}\text{UN}^{\text{meš}}$): Այդպես ե մեծ մտասմբ, իսկ վորոշ գեպքերում նաև կարգում ենք՝ $\text{L}^{\text{u}}\text{UN}^{\text{pl}} \text{rani}$ վորտեղ այդ վերջին հնչյունները մնացորդն են ibirani բառի՝ իսկ յերբեմն ել այդ ra-(a-)ni գրերին ավելանում ե և -tsi բառը, վորը յերևի «մեջ, միջում» ե նշանակել: Կարիք չզգալով բերել արձանագրությունների այդ բոլոր տեղերը, մենք միայն մի տեղ կմասնանշեյինք, վորը տալիս ե վոչ միայն այդ ibirani բառը, այլև KUR «յերկիր» վորոշիչով, վորը ցույց ե տալիս վոր «ժողովուրդ» (<ցեղեր) այդ բառը մարով փոխանցվում ե և յուր բնակեցրած տեղին (հմմտ. Հայք, Վիրք և այլն, վոր նշանակում ե «Հայաստան, Վրաստան. »), թեպետ լեզվամատածողությունը ունի և հակառակ իմաստական փոխանցումը (յերկիրը գազթեց, քաղաքը խոսում եր...): Այդ հեաաբրքրական տեղը մենք տեսնում ենք Սարիղամիշի՝ Արգիշտի I-ի արձանագրության մեջ, ուր կարգում ենք՝ KUR Etiuni KUR ibirani nunaali, վորը նշանակում ե «Եթիունի ցեղերը յեկան»: Ճիշտը կլիներ գրել (րևեաադրով)—KUR Etiuni-ibirani nunaali: Այստեղ այնպես ե գատված այդ ամբողջությունը, ինչպես ունենք KUR Uduri-Etini (Ադա Նխանի՝ Սարդ. II-ի արձ.) կամ KUR Weduri Etiuni (Apx. ЭКЕП III₄₈) և մյուս կողմից ¹ Uduri KUR Etiuxini (Պորխ. Col. I₃₂), վորոնք նշանակում են «ուղուրի (ցեղի) Եթիունի», իսկ ուղուրի կամ վեղուրի (—ուտիք, ուտիացիք?) անունը կրում ե և ցեղապետի անվանադիր (եպոնիմ) այրանունը¹: Այնպես վոր, ինչպես կա միացյալ Uduri Etiuni այդպես ել կար Etiuni ibirani «Եթիունի ցեղեր» կամ «Եթիունի ժողովուրդ»: Հետաքրքիր ե նաև այն, վոր բայը հոգնակի յե -ali վերջավորությամբ (nunali «յեկան») այնինչ յեղակիով կլիներ nunabi «յեկավ» (nunadi «յեկա» Քյոյսանդուանի արձ. մեջ): Տիգլատպալասար I-ի արձանագրությունները նաիրյան յերկրների մեջ հիշատակ էմ են

¹ Այդ մի յերկար վերտիկալ սեպ ե վոր աստերով վերսբաադրում են կամ ¹ նշանով և կամ m նշանով, գրված բառի սկզբում վերևից, վորպես այր անվան դեաերմինատիվ:

Նոնիրանու վորը մեր կարծիքով նշանակում է «չին ցեղեր», իսկ Շարնչի Ադադ IV-ի կողմից հիշատակվում է Նաիրյան Գնզիբր յերկիրը, վորը անշուշտ նշանակել է «գինդի ցեղ»: Համեմատել այդ *Etiani ibirani Նոնիրանու Գնզիբր¹ և նման կադմություններին հին հայոց նման տեղանունները, ինչպես՝ Տարուբերան (Տուրուբերան) Առբերանի կամ Առբերան, վորոնք տառացի նշանակել են «աավր-ցեղեր» (= Հայկական Տավրոս) և «առ-ցեղեր»: Յեթե ուրարտացիների մոտ յեղակին յեղել է *Ibir, ապա հայերը այդ վերցրել են, թերևս այլ ցեղերից bir հնչմամբ, վորը տեսնում ենք վոչ միայն Տուրուբերան և Առբերան(ի) անունների մեջ, այլև մի քանի նախարարական անունների մեջ, ինչպես՝ Տամբեր, Քաջբերունի² և Տարբերունի (ըստ Ղ. Փարպեցու), Դեռ ավելին. այդ ber ը պահել են վրացիները («e» ձայնավորով ինչպես և հայերը), վոր տեսնում ենք թե հին տեղանունների մեջ, ինչպես Kaxaberi, Cviberi, Saberio և այլն, այլև այժմյան աղղանունների մեջ (Ber ia, Ber-idze Gogoberidze և այլն): Իսկ bir ձևով («i» ձայնավորով) այդ բառը «տուն» նշանակությամբ հայտնի յե խեթերենից (bir) և լյուգիերենից (bir-aλ „дом“): Նշանակության տեսակետից դժվար չե բացատրել փոխանցումը «տուն» → ցեղ, առհմ»³:

«Տոհմ» կամ «ընտանիք» է հավանորեն նշանակում ուրարտական armuzii բառը, վորը միայն մի քանի անգամ է պատահում արձանագրությունների մեջ, այն էլ՝ տնեծքի Փորմուլտյի մեջ Այդ իմաստը մենք առաջարկում ենք տալ arm-uzi բառին նախ ստուգաբանական տեսակետից, քանի վոր հայերենում arm բառարմատը նշանակում է ծառի կամ բույսի արմատ (հմատ արմ ծառուց արմատ բւսոց ծառոց, արմաիք, արմ-անամ

¹ Համեմատել այդ ցնզ- ցեղանունը այժմյան Գենչի հետ վորը դանլ վու. է Արածանիի վրա («կադա Գենչ»):

² Թերևս այդ «քաջ» ցեղանունը մնացել է հին հայանի khaš- անունից Այդ կասիտները ապրում էին Չագրոշ լեռներում, աիրեցին վորոշ ժամանակ Բաբելոնին. դրանց մի մասը ապրում եր խեթերի յեղրում և կոչվում եր kaška (gasga), վորի վերջին k || g հնչյունը ցույց է աալիս ցեղական պատկանելություն (ինչպես հայ-կ, արմեն-ակ, պարս-իկ...): Կար Սյունիքում և Քաջունիք դավառ, իսկ Սուլեյմանիեյում այժմ էլ ապրո մ է kaška տվադակարս յո բուրդ մի ցեղ:

³ Քրդական bar «ցեղ» կարող է լինել արամեական bar «վորդի» բառը

դարմանամ, ընդարմանամ «քար կտրել» կամ ավելի ճիշտ ծառի «ստորին մասը, բունը»: Ուրարտերենում սՆՆ մասնիկ է, ինչպես այդ նույնը կա և խեթերենում ու հայերենում (տես եջ—): Իմաստարանորեն դժվար չի փոխանցումը «բուն արմատ» > աղդատոնմ (հմմտ. «աղզուտակը»): Յեվ վերջապես ուրարտական արձանագրությունների բնագիրը չի հակասում այս թարգմանությանը: Այսպես Չվարթնոցի անեծքի Փորձուլայի մեջ վերջում կարդում ենք— mei tiini mei armuzii mei zilbi kiuraidi kulle tuuni «Թե անունը, Թե առնձը (աղզը) Թե սերմը (սերունդը) հողին Թող հանձնեն» (աստվածները): Այդպես և Խորխորյան վերջին (VIII 14—20) արձանագրության մեջ «Խալդը, Տեյշեբան, Արդինին (և այլ) աստվածները Թող յենթարկեն (maani)¹ առնձը (աղզը՝ armuzil), սերունդը սերունդի նրա (NUMUN NUMUN SU) դատաստանին (տառացի՝ արև ասածու տակ), և՛ (նրա) arxiurulliani-ն, և (նրա) inaini-ն, և (նրա) nara-ն (=սերմը?) վոչնչացնեն»: Թերես arxiurulliani բարդ բառ է, կազմած arxi և uruli արձաններից (հմմտ DINGIR aluše urulie šiuali Մհերյան դռան արձ., առդ ⁹/₄₅) Սեյսը թարգմանում էր «ընտանիք» (հարցականով): Inaini բառը (Թերես = գոյք, ունեցվածք?) գործ է ածվում և Խորխորյան արձանագրությունների առաջին սյունակում (սկզբում՝ alieini. nie aziibie inaini laragie), իսկ nara բառը, վորը հավանորեն նշանակել է «սերմ», բայց և «առնականություն», կա շատ հնդեւրոպական լեզուներում (= հուն. anēr, հայոց arn—aran ց խեթ. Inara, սլավ. нрав, իրան nar «արու» և այլն): Արձանագրությունների անեծքը վերջանում է սովորաբար mei nara aue ululle «և (նրա) սերմը (Թող) վոչնչացնեն», վորի դիմաց Կելիշինի և Չվարթնոցի արձանագրությունները վերջում տալիս են zilbi || zilbe բառը (mei tiini mei armuzil mei zilbi kiuraidi kulietuni), ուրեմն կարելի չի յենթադրել վ ը nara և zilbi համադրը բառեր են

¹ Այդ maani բառը մենք առաջարկում ենք թարգմանել «Թող շնորհեն Թող հանձնեն» կամ ավելի ճիշտ «Թող յենթարկեն»: Համեմատել manini «Թող շնորհվի» և manuni «Թող շնորհեն, Թող մատնեն» (որինակ Մակվի Ռուսա II-ի արձանագրության մեջ «Խալդը... mekui iuni manuni dUTU-kai = նրա mekui-ն (և) անունը Թող մատնեն դատաստանին»: Այստեղ արև (Արդինի) ասածու անունը համադր է «ճշմարտության» > դատաստանին» (հմմտ. խեթերենում „ver ihn umstürzt, der soll dem Tešup dem Herrn, . . ein Mann des Gerichtis sein“, տես Sommer, Heth. II, էջ 5, հավելվածքը): Կամ՝ dXaldiše maani dUTU piemti (Sayce § 19) = Խալդը Թող մատնի դատաստանի ասկ

Ուրարտերենում կա *alxi* բառը, վորը զժրախտարար առանձին մի անգամ է գործ ածված: Այդ բառը հավանորեն նշանակել է «ժողովուրդ, հասարակություն»: Մարդուր II (II)-ի՝ Իզուզուի արձանագրության մեջ ասված է (6—7 առդեր) — *alxi bu ranadi tuišxi-manu ui ainiei LUGAL ištini uštuuri* «ժողովրդին [Մելիտե քաղաքի] ծառայության (ստրկության) բերել տվի(?) հանդերձ մի թագավորով այսանդ արշաված» Այդ ուղնության յեկած թագավորը Մելիտենեյի Խիլարուագան է, վոր Շահու դինաստիայիցն էր, իսկ ժողովուրդը (*alxi*) բացի այդպես առանձին գործ ածելուց, արտահայտվում է նաև *Meliše-alxie* կազմության մեջ (*LUGAL KUR URU Meliše alxie*): Բացի *Meliše alxie* արձանագրությունները, տալիս են նաև՝ *LUGAL URU Buini-alxi LUGAL URU Xuša alxi*, *LUGAL URU Uburda-alxi LUGAL KUR Kulxa-alxi* (բայց և *LUGAL KUR Kulxa xaliei*), *LUGAL KUR Kumaxa alxie* (բայց և *LUGAL KUR Kumaxa-xalii*): Յեթե դրանց վերջի մասը հասկանանք վորպես առանձին բառ *alxi*, բարդության մեջ մտած, ապա թարգմանությունը կլինի «թագավոր Մելիտե քաղաքի ժողովրդի», «թագավոր Բուինի քաղաքի ժողովրդի» և այլն, իսկ համառոտ կերպով այս կնշանակեր «թագավոր մելիտեացիների», «թագավոր բուինիացիների» և այլն: Ստուգարանորեն այդ *alxi* բառը մենք համեմատում ենք հայոց «ալխ» բառի հետ վոր նշանակել է «ժողովուրդ, բազմություն», բայց և «տան կահ կարասի, ունեցած չունեցածը» (скарб): Հայոց այդ «ալխ» բառը, վոր հնում հնչվել է *alx*, Ն. Մառը կապակցում էր վրաց *saxli* «տուն» (=մեզրեկերեն *oxori*) բառի հետ, իսկ սրանք էլ համեմատում էր սեմական արմատների հետ (արարական *ahlu* «ընտանիք», վորից մեր այժմյան փոխառությունը *m-ahla* «թագամաս», հրեական *ahl* «վրան, տուն»): Վրացերենի արմատն է յեղել — *axli*, վորը պահվել է սվաներեն *mu-axle* «աղախին» բառի մեջ, ինչպես և հայոց «աղախ-ին» (*ałax in*) բառը նույն *a x* «տուն» բառիցն է¹: Իսկ

¹ Ն. Մառը [զուր էր վրաց *saxli* բառի մեջ սկզբի *sa* հնչյունը համարում արմատական (տես նրա *Основные таблицы к грам. др.-груз. языка*, 1908 г., Петербург, էջ 6): Յեթե այդ *saxli*-ն լիներ արմատ ամբողջապես, ապա մեզրեկերեն կապտեյինք *šoxori և վոչ *oxori*, ինչպես վոր կա: Վրացերենի նախածանց *so-*յին մեզրեկերենում միշտ համապատասխանում է *o-*, էլ չենք ասում, վոր սվաներեն *mu-axle* բառի *alxe*-ն միանգամայն հառաատում է արմատի *axli* լինելը:

արդյոք այս ուրարտական *axi* բառը, վոր հայոց *ախ-ի* հետ ստացվել են մեաթեզայով *axi* ձևից միայն կովկասյան-ուրարտական-սեմական լեզուներումն եր: Թյուրքերից հայ ժողովուրդը փոխե և առել *ayal* «վոչխարի տնակ», վորը մոտե այս *axi*-ին: Ակկադերենը ունի *ekallu* «տուն, պալատ» վերցրած սուժերական *egal*-ից նույն իմաստով, վորոնք նույնպես մոտեն հնչում: Դադատանի լեզվիներին մոտ, այն է՝ ուտուլցիների մոտ տուն բառը հնչվում է *xal*, վորը կարծես թե աալիս է ուրարտական *Kumaxa xali* *Kulxa xali* բարդությունների յերկրորդ բառը, թեպետ այսանդ կարելի չե անանել տեղական ուրարտական առանձնահատկութուն, այն է *axi* ձևի շրջվելը *xali* ձևի նախորդ *Kumaxa* և *Kulxa* բառերի վերջին *xa* վանկի ազդեցությամբ: Կարելի չե այդ կովկասյան և Առաջավոր Ասիայի հին *axi*- «տուն» արմատը տեսնել և հույների *oxlos* «հասարակ ժողովուրդ, чернь» բառի մեջ, թեպետ և կապակցվում է լատիններեն *vulgus* նույնանիշ բառի հետ: Յեթե ընդունենք, ուրեմն, վոր *axi* (> *alx*) «տուն» բառը իրոք այդչափ տարածութուն է դրել, ապա դրա նորանոր նշանակությունները պիտի արտացոլեն տարբեր հասարակա-պատմական պայմաններ: Այդպես, այդ արմատը «տուն» է նշանակում վրացիների և յերբայեցիների մոտ, «ընտանիք» է նշանակում արարների մոտ «ժողովուրդ, հասարակութուն» է նշանակում հայերի և ուրարտացիների մոտ, «խուժան» է նշանակում հույների մոտ: Հայոց «աղխ» կարծես թե պահել է նախնական «տուն» զաղափարը «կահ-կարասի, скарб» իմաստի մեջ (հմմտ քրդերի *mal* «անասուն, ապրանք», բայց և «տուն»): Յերբ այդ *axi* || *alx* բառը ստանում է «ժողովուրդ բաղմութուն, ստորին խավ» և այլն նշանակությունները, ապա այդ ապացուցում է, վորին նախկին տոհմը կամ համայնքը արդեն ձևափոխվել է յուր հասարակա-տնտեսական բովանդակությամբ, այն է՝ առաջ են եկել նոր սոցիալական շերտեր, ստրուկներ և ստրկատերեր և այլն¹

¹ Աթենքում յուր ծաղկման շրջանում ամեն մի հույն ազատ քաղաքացուն ընկնում էր 18 սարուկ և 2 կիսաիրավագուրկ Կորինթոսում և Եգինայում ամեն մի քաղաքացուն ընկնում էր տասն անգամ ավելի սարուկ: Աթենքում ստրուկների քանակը հասնում էր 365000-ի և 45000 կիսաիրավագուրկ ների՝ Կորինթոսում՝ 460000 ստրուկի, Եգինայում՝ 470000ի: Յէս Փր Էնգելս, Происхождение семьи частной собственности и государства Եջ 120 և 169, ծանոթ. 2:

2 ԴԱՍԱԿԱՆԳ, ԴԱՍ, ՊԱՇՏՈՆԵՌԻԹՅՈՒՆ

Ազնվակ սնության կամ իշխող խավի անուն ուրարտական արձանագրությունների մեջ դեռ չի տեսնվում, թեպետ հասարակական ուժեղ շիրտավորում կար սարկական աշխատանքի հիման վրա: Մենք յենթադրում ենք, Վոր „ururd(a)“ մարդիկ, Վոր հիշվում է Սարգուրյան տարեգրերում (VI արձ.), թերևս Վորպես հիմնական ցեղանուն (Uruatri || Urartu), շարունակեր մնալ և գործածվել արդեն Վորպես իշխողներ, իշխող խավ, յերբ դասակարգային հողի վրա կազմակերպվեց Վանի պետութունը Իմաստարանորեն համեմատել նման յերևույթ այլ հասարակությունների մեջ, ինչպես թերևս «մոսոխ» ցեղանունը դառնում է «մշակ» (mošk > mšak), կամ aram ցեղանունը դառնում է «ռամ» (հասարակ ժողովուրդ) Վորտեղից՝ ռամիկ (ըստ Մառի և Ադոնցի), թեպետ այդ վերջին որինակը կասկածելի չէ, Վորովհետև դրանք (ռահ, երամ, երամակ) ավելի շուտ պարսկական փոխառություն են (հմատ պարսկ. ram, rama «բազմություն խումբ նախիր»): Այդպես և դերմանացիների մոտ sklav թե ցեղանուն է յեղել և թե «ստրուկ»: Յեթե դանվեր ուրարտական մի արձանագրություն, Վոր որենքներին վերաբերեր, կամ զոհարերության մեջ շեշտվեր այդ հասարակական այդ դասակարգերի և այլևայլ պրոֆեսսիաների անունները անմիջապես կերևային¹:

Արձանագրություններից մեզ հայտնի չեն «թագավոր» տնունը (ereš, nu), «իշխան իշխանություն» (xuštu xututu xi), «առաջնորդ» (sie), «տեր» (ewri աստծու մասին), «տեր-տիրող» (alusi կամ *alawı թագավորների մասին), ստրուկ (bura կամ pura), ծառա (wedia) քուրմ (kurni?), փոխարքա (= ?), կուսակալ (?) Վերջինների անունները միայն գաղափարադիր են, իսկ տեղական անունները անհայտ են Վերլուծենք այդ անուններն ու դրանց հետ կապված պատկան ըովանդակությունը:

¹ Որենքների ժողովածու ունեն բարեխոնացիք (Համուրապիի կոդեքսը) սպորեստանցիք խեթերը և հին հրեաները: Խեթական անբաստերում, ուր ազնվականների ու ստրկության հակադրությունը միշտ պահվում է (ստրուկը կրկնապատիկ է աստծու), դժբախտաբար դատակարգային և պրոֆեսսիոնալ տիրույթները գաղափարագրով են միայն տրվում: Միայն մեզ հայտնի չէ išxa-«տեր, хозряин» (հմատ. հայոց լշխել), arawam «ազնվական, ազա» և նման մի յերկու այլ տեր ինն եր

Erel(i) «Թագավոր» բառը մեծ մասամբ գաղափարագրով և տրտահայտված (LUGAL) իսկ մի յերկու անգամ տիտղոսի «LUGAL LUGAL^{pl}-ue «Թագավոր Թագավորաց» հորջորջման փոխարեն նույնը գրվում է LUGAL eri(e)lāue, այսինքն այդ վոճի յերկրորդ մասը արդեն հնչյունորեն և տրված: Այդպիսի կիսագաղափարադիր և կիսահնչյունագիր գրությունը տալիս է, որինակ, Մենուայի՝ Մելագգերդի արձանագրությունը (այժմ Պոլսումն է) կամ Սարգուրի՝ Արճեշի մոտ գտնված արձանագրությունը (այժմ Սանդ. № 43): Քանի վոր eriel(a)ue ձևը սեռական հոգնակի յե («Թագավորներին») ապա բառի բունը մինչև հիմա յենթադրվում էր eri(e)la- այսինքն „a“ վերջավորությամբ: Բայց յեթե բառի սկիզբը լիներ նաև eri(e)li կամ eriel- ապա հոգնակի սեռականը նույնը կլիներ, ինչպես վոր Biainaue Šuraue և նմանների սկիզբը կարող էր լինել Biain(i) և Šur(i) Այդպես և առաջարկում վերլուծել J Friedrich-ը, վորը մենք կպաշապանենք erieli «Թագավոր» բառի նկատմամբ¹:

«Թագավոր» անբմինը անշուշտ միևնույն բովանդակությունը չի ունեցել: Յերբ Տիգլատպալասարը այդ գաղափարագրով հիշաակում է 23 նաիրյան ցեղերի պետերին կամ 20000 մուշկերի (ժոստինների) հինգ «Թագավորներին» ապա մեզ համար պարզ է վոր այսանդ դրանք սոսկ ցեղապեաներ են թեպետ դրանով չի բացասվում, վոր իսկական Թագավորներին ժամանակ, յերբ ուրարտուն քաղաքական մեծ բունակալություն էր, պեաք է լիներ և մի այլ տերմին «ցեղապետի» համար, քանի վոր դեռ կային շաա ցեղեր (ըստ J. Friedrich-ի այդ ցեղապետ անունը պիտի տեսնել ուրարաական sie բառի մեջ վորը ըստ իս սկզբում կարող էր նշանակել և «հովիվ»)՝ Մեր կարծիքով ուրարաական «Թագավոր» բառը վոչ միայն հնչվել է ereli, ինչպես առաջարկում է J Friedrich-ը, վորը մենք կպաշապանենք նաև Քյոլանդուանի KUR Eriel tuaini տեղանունով («Թագավորաբլուր») և «2 LUGAL-lili [=2 erielili] edini suṭukubi (Sayce, XXX₂₄) այլև ծագմամբ նշանակել է «ժողովրդապետ» և թերևս «ցեղապետ», կազմած լինելով er-eli մասերից, իսկ er «ցեղ, ժողովուրդ» բառի համար համեմատել վրաց eri (id) և թյուրքական

¹ Թեպետ չենք ժխտում և մյուսների (Biaini Šuri..) այդպես լինելը:

² Համեմատել Սարգուր I-ի աստուղական արձանագրության մեջ, աի առևատ բայի մեջ «Թագավոր մեծ, Թագավոր հզոր.. հովիվ սքանչելի»:

el (id), իսկ ուրարտերենում այդ eli ածանցը թերևս ընդհանուր «ասիանիկ» լինելը (հմմտ. վրաց -eli նախախեթական mag šel կամ paršel քրմանունը, հայոց -ել՝ համեղ, գորեղ, լյուզիական li, որինակ, Maneli „Mane'ische“, Kumlili «ein Sohn des Kumli»¹ և այլն)։

Մեր կարծիքով յեղել է և յերկրորդ բառ «թագավոր» ի մաստով և „LUGAL“ դետերմինատիվով (Ֆրիդրիխը այդ LUGAL-ը տվյալ դեպքում ընդունում է վորպես առանձին բառ) Այդ բառի իմաստը ուրարտերենում կարծես թե սատրապաս է քան սովորական erel բառինը։ Հավանորեն այդ յերկրորդ բառը, վորը հնչվել է nu, նշանակել է «արքա» իշխան»։ Նման տարբերացում ըստ Մառի յեղել է և հայոց «թագավոր» և «արքա» բառերի մեջ (թագավորը ավելի դասական է և հատուկ է հնագույն հայ մատենագրության)։ Այս nu բառը գործ է ածվում յերեք-չորս ձևերով։ Նախ ամենասովորականն է ԴՍԻ (LUGAL nusi) «թագավորական» ածականը, վոր արվում է գրավիտոյ յերկրների գլխավոր քաղաքին («թագավորական քաղաքը այս ինչի գրավեցի»)։ Յերկրորդ, ունենք պարզ nu գործածությունը, որինակ, Պորիսորյան արձանագրության մեջ (Col I. սող 6) — uštadi¹ Diaueximedi LUGAL Diauxi LUGAL nu duubi «արշավեցի Դիաուլյան ցեղի դեմ թագավորիս Դիաուլ ցեղի արքա արի» (=արքա, իշխան դարձրի)։ Անշուշա այս nu-ն վաստակական առումով է։ Մի այլ դեպքում կարգում ենք LUGAL nuadi «իշխանության համար»(?)², յերբ Արգիշտին (I) յենթարկվող կամ նվաճվող թագավորին nu կոչմանն է արժանացնում, պարսագրելով հարկ վճարել այդ բանի համար (iu LUGAL nuadi ahieme³ Xaldiše aruni ui aldinie 7066 GUD paxini⁴ 50 878 LU⁵ «յերբ արքայության համար... Պալղը տվեց... 7066 արջառ, 50878 վոշխար»)։ Վերջապես կա nuuše բառը առանց LUGAL վորոշիչի, վոր մենք թարգմանում ենք «արքայություն, իշխանություն», այնպիսի վերացական se ածանցով, (=մեր «-ություն») ինչպես ունենք miria-še «առնականություն», alsui-še «մեծություն», usmaše «փառք», ulguše «առողջություն», pitsuše «ուրախություն և այլն։ Այդ արձանագրությունն է «Պալղու փառքով Մենուան Իշպուինիի վորդին այս տունը (տաճարը) կառու-

¹ Sks Klein Forsch B I 62 56—57

² Sks Պորիս արձ Col V 18-24

ցեց վորպես aše (=սրբություն?)¹, վորից հետո կարդում ենք ašxu me ^dUD ITU ^dXaldiei anriše nuuše, վորը թարգմանում ենք «Թող պահվի ինձ համար (me) որ (ու) ամիս(ներ) Պալղու առնականությունը (քաջությունը), արքայությունը (իշխանությունը)»: Այդ an-ri-še բառը սխալմամբ վերլուծում եյին վորպես ^dSAR še, այսինքն՝ Իշտար սասավածուհին, իսկ nuuše «ստիկին», գանելով ուրեմն, վոր այդ բոլորը հայցվում ե Պալղու կին Իշտարից: Այստեղ an և ri նշանները սոսկ հնչյունազրեք են և վոչ գաղափարազրեք: Վոր ուրարտերենում յեղել ե առանձին ու «արքա, իշխան» բառը, վորպես ešel-ից հետո յերկրորդ «թագավորական» հորջորջում այդ մենք կարող ենք մասամբ հասատել և ժաննայեցոց nula «թագավոր» բառով, վորը անշուշտ կազմած ե ու արմատից և la ամանցից

Յերրորդ բառը «իշխանություն» (ВЛАСТЬ) իմաստով պետք ե տեսնել xušutuxi բառի մեջ վորը դրվում ե թե այդպես, այսինքն՝ լրիվ հնչյունագիր և թե կիսագաղափարագիր—կիսահնչյունագիր (LÜGALTú-xi կամ LÜGAL-tú-xi): Այսպես, որինակ, Արգիշտիի՝ Խորխորյան արձանագրությունների VII սյունյակում (տողեր 16 և 78) մենք կարդում ենք. «Արգիշտին ասում ե. ^dXaldis-me UŠ aruuni e a xušutuxi e a gunuše «Պալղուդը ինձ (me) արիություն (МУЖЕСТВО) տվեց և իշխանություն և ուժ»²; նույնը տալիս ե և Սարգուրի մի արձանագրությունը Վանի ս. Պողոս-Պեարոս յեկեղեցում (Sayce XLVIII₂₈)—«Պալղը ինձ իշխանություն (LÜGAL tú-xi) տվեց. սասանձնեցի (բաղմեցի?) հայրական (LúAD-niesii) իշխանությունը»: Այս նույնը անսակ նորագյուտ Սարգուրյան տարեդրի VI արձանագրության մեջ („Арх Эксп I VI₂, б. 55), կամ թե Պալղը „LUGAL tuxi nina ^{GIS}GU ZA teru me=իշխանական գահի վրա նստեցրեց (teruni) ինձ (me)“: Մոլլա Բայագետի և Թալինի արձանագրությունների մեջ ևս կա այդ բառը—¹ Sarduriš LUGAL-tuxini ^dUTU ni kai [teru] ni targini KUR KUR^{pl}-di ŠU-yaidi (տողեր 7—8, տես Sayce LXIII և LXIV) «Սարգուրը [յուր] իշխանու-

¹ Պետք ե ընդունել վոր բացի aše «վահան» (ըստ Friedrich ի) կար և նույնահունչ aše «տուրք, սրբություն» բառը

² Gunuše բառը մենք թարգմանում ենք «ուժ» և վոչ «կռիվ»: Այդ բառից ունենք gunušini «մարտիկ». համեմատել հայոց դուն «ուժ» (գուն գործել չուժ գործագրել աշխատել)

թյունը Արև (Ardini) ասածու (=արդարության) առաջ (kai) դրեց targino (=?) յերկրների գեմ թշնամական(?)¹։ Կասկած չի կարող լինել, Վոր xututuxi և LUGAL-tuxi միևնույն բառերն են¹։ Ուրարտական xututuxi բառը ամանցավոր է ի մասնիկով xututu «թագավոր, իշխան» բնից։ Թերևս Սասունցի Դավթի կնեջ անունը՝ Խանդուտը Վոչ թե խանդ բառիցն է (խանդուտ «чррчар») ինչպես սկզբում թվում էր մեզ, այլ այս ուրարտական բառիցն է այսինքն՝ xuduth > xunduth «իշխան, իշխանունի»։ «Տեր» իմաստով, թե աշխարհիկ առումով (владелец) և թե կրոնական (владыко господь), ունենք alusi բառը Դեռ Կելիշինի յերկրեզվյան արձանագրության մեջ (15-րդ սյունակում) ուսուերական šakin alu Tušpan «տերը Տուշպան քաղաքի» («der Herr des Tušpan Stadt» տես ZA, 5 էջ 111—112) դարձվածքի դիմաց ուրարտերենը տալիս է alusi ALU Tušpaa [Alu]։ Առաջին հիշտ թարգմանողը alusi «տեր» յեղել է D H Müller-ը յուր «Die Keil-Inschrift von Aschrut-Darga» աշխատության մեջ Բայց այդ բառը գործ է ածվում և աստվածների վերաբերմամբ, որինակ, Քյուլանդուանի՝ Ռուսա II ի արձանագրության հենց սկզբում կարդում ենք^d Xaldinini ušmašini EN sinini «Խալդյան փառքով տերունական» (=Խալդ տիրոջ փառքով), ուր EN «տեր» արտահայտված է դադափարագրով (EN sinini = alusi nini)։ Այդպես և Սարգուրյան II աարեգրում (տող 30)—^d Xaldinini baušini EN-sinini «Խալդյան խոսքով տերունական» (=Խալդ տիրոջ խոսքով)։ Բացի այդ թագավորները արշավանքից առաջ աղոթելիս ասում են «Աղոթեցի Խալդ տիրոջը, Տեյշ-բային, Արդինուն, աստվածներին Բիայնա յերկրի, alusinini al suišini aliabadi, ողնության յեկան ինձ աստվածները»։ Այդ յերեք անհասկանալի բառերը, Վոր յերբեմն ասվում են և alauinini alsuišini aliabadi (Apx Эке IV, 16), մենք յենթադրորեն թարգմանում ենք—«տերունական մեծությամբ յես ապահովվեցի»

¹ Այդ վերջինը կարելի չէ գրել, ինչպես J Friedrich-ն է մի տեղ մասնանշում, կամ LUGAL-tuxi, այսինքն՝ վերջին tuxi կառքը համարել իբրև xututuxi բառի հնչյունագիր մնացորդը, և կամ կարելի չէ գրել LUGAL Tu-xi, ուր գադափարագիրը (սուսերական) սասնում է ակկադական լրացում TU վորպես մնացորդը SARRUTU «թագավորություն» բառի, իսկ սրա վրա ավելացվում է ուրարտական xututuxi բառի վերջին վանկը (-xi)։ Այսպես է գրվել և UDM¹-ni (ardini) «որ» բառը, կազմած սուսերական UD (=որ) բառից +MI լրացումը ակկադական yûmi (=որ) բառից +ni լրացումը ու բարա ardini բառից

(=ատրերի մեծությանը յես վասահացա?): Թերես alusi-յի հետ կար և alau (alaw)

«Տեր» իմաստով, բայց միայն կրոնական առումով, գործ և անվում և eurii- (= euri) բառը, վորը մոտ և խուրրի լեզվի ipri բառին, ինչպես և վրաց iwri չհասկացվող բառին Iwri-Aralo (= Thari Aralo) բացականչության մեջ, ուր Aralo ն մենք համարում ենք գործան (կանաչի) աստված, իսկ iwri-ն, ինչպես ուրիշներն (ն մատնանշել, անշուշտ նշանակել և «տեր»: Հայերենում այդ արմաար «տեր» իմաստով կա աւրի-որդ, աւրեանց (=աւրի-եանք) «տերեր», աւրեար կամ արեար (=awri ear) «տերեր» (բայց վոչ՝ մարդիկ, ինչպես Թարգմանում են բառարանները) և Թերես աւրէն է «վայել» («տիրոջական ե») բառերի մեջ: Ուրարտերենում արձանագրությունների մի զգալի մասը (20-ից ավելի) սկսվում և «Սալդ տիրոջը» ներածականով (^d Xaldie eurie կամ յերբեմն ^d Xaldie euri ukie «Սալդուն, իմ տիրոջը»):

«Սարուկ» բառը մեզ հաջողվեց գտնել Ռուսս II ի՝ Նոր-Բայաղետում գտնված արձանագրության միջոցով, ուր կարդում ենք «Թագավորին յերկրի Վիլիքուխի IR-aštubi»: Այլուր հաճախ նման կոնսարուկցիայում կարդում ենք Luburaštubi, վորը փոխարինում և նախորդ գաղափարագիր (կիսով չափ) գրությունը իսկ IR („SERVUS“) գաղափարագիրը նշանակում և «սարուկ, ծառա»: Ուրեմն՝ bu ra-āš-tú-bi նշանակում և տառացի «սարկացրի», իսկ հետո նաև փոխարեբարբար՝ «հպատակեցրի, հնազանդեցրի» ինչպես այդ տարրը յերևում և Քյոլանդոանի արձանագրությունից «յես այս յերկրները maguli (ճնշեցի)¹ հնազանդեցրի (buraštuli)», ուր ի միջի այլոց այդ վերջին բայը չունի Lu գետերմինատիվը, ինչպես ebanu «յերկիր» բառից առաջ չի նկատվում KUR (=յերկիր) գետերմինատիվը: Այդպես ուրեմն, ուրարտերենում «սարուկ, ծառա» բառը հնչվել և bura կամ pura (կա ¹ Išluburani անունով իշխան Ուրուրդու յերկրում): Առանձին այս բառը, առանց Lu գետերմինատիվի, մենք տեսնում ենք Սարգուր II (II)-ի՝ Իզդուլույի արձանագրության մեջ (alxi bura

¹ Սեվանի լճի շուրջը յեղած յերկրները գեո Սարգուր II (II)-ի ժամանակից նվաճված էյին: Այդտեղ կար և ուրարտական փոխարբար: Սակայն 714 թվից հետո (Ռուսս I-ի մահվանից և պարսությունից հետո) այդ յերկրները ապստամբում են իսկ Ռուսս II ը նորից գրանց ճնշում և

nadi tuišxi manu տես վերը էջ 81): J Friedrich-ը նույն կարծիքն է հայտնել (pura «սարուկ»), համաձայն լինելով մեզ հետ (տես նրա հոդվածը *Caucasica*, Fasc 8 1931, էջ 150),

«Սարուկ ծառ» իմաստով դործ է ածվում և wedia կամ wediani բառը առաջինը վորպես բայի մաս (wedia dubi «ծառա արի = ծառայեցրի»), իսկ յերկրորդը «մարդ» (LU) կամ «կին» (SAL) զետեղման արժեքով վորպես առանձին գոյականներ («սարուկներ», «սարկուհիներ») Դեռ Սեյսը յուր ժամանակ այս «hu-e-di-a» բառը թարգմանում էր «սարուկներ» («Slaves», տես *JRAS Voi XX, Part I, էջ 39*), իսկ այժմ յերբ անունում ենք, վոր այդ wedia dubi բայը դործ է ածվում միշտ burastubi հոմանիշ բայի հետ վորի իմաստը միանգամայն պարզ է, և հետագայում միայն դանված ապա Սեյսի մեծութունը ավելի յե մեծանում մեր աչքում, վոր յուր ժամանակ այդքան ճիշտ էր մոտեցել ուրարական լեզվին: Արգիշտիի՝ Վանի ս. Սահակ յեկեղեցում պահված արձանագրության մեջ կարդում ենք (Sayce XLV^{38 40})—LUGAL KUR Luša(e) uediadubi, KUR Igac buras [tubi] [er]tsi dubi Ես մե՛ ՝ Արգիշտիի արձանագրության մեջ կարդում ենք «2 թագավորի յերկրի Լուշա ծառայեցրի, Իդա յերկիրը ծառայեցրի (հպատակեցրի), ազատ արի (բաց թողի) անդում [թագավորին]՝ հարկ Արգիշտուն ասում» Կամ թե նույն արձանագրության մի այլ տեղում (տողեր 15—18) կարդում ենք «2 թագավոր ծառայեցրի (wedia-dubi)՝ Սասկի...յին (և) Բարտուլիսին... Դիաուելիի թագավորին ծառայեցրի (burastubi)»: Մեզ համար շատ գովար է վորոշել այդ vedi(a) և bura բառերի տարբերությունը գովար թե դրանք նույնանիշ յեղած լինեն: Luwediani կամ SALwediani բառերը (սարուկ, սարկուհի) գոյծ են ածվում սազմական արձանագրությունների այն տեղում, վորը նկարագրում է թվերով գերեվարվող մարդկանց (Lu taršuanu) քանակը: Այդ թվարկության մեջ սովորաբար լինում է—այսքան աղա (LUR յերիտասարդ), այսքան կին (SAL lutu), այսքան զինվոր (LuZAB^{pl} կամ Lu^{pl} gunušinii), բոլորը՝ այսքան մարդ (Lutaršuanu), սրանից հետո տրվում է այլևայլ անասունների անունները և քանակը, վոր քշվում է Վան: Յերբեմն այդ SAL lutu «կին» բառի փոխարեն լինում է SAL wediani (կին-սարուկներ), իսկ մի յերկու դեպքում էլ՝ Lu wediani («տղամարդ սարուկներ»): Թերևս այս վերջին դեպքում պիտի գրել SAL wediani և LU wediani, այս SAL և

LU չհասկանալ վորպես գեաներմինատիֆներ՝ վորոշիչներ հետևյալ բառերի համար, այլ վորպես ինքնուրույն բառեր («կին սարուկ», «այր սարուկ»)՝¹

Քրմության դասը անշուշտ վորոշ դիրք պետք է ունենա ր Ուրարտուի մեջ, թեպետ արձանագրությունները քիչ նյութ են տալիս այս հաստատության ուսումնասիրության համար, իսկ ուրարտական *ku ur ni* կամ *kur ni* բառի «բուրմ» նշանակությունը առ այժմ միայն վերապահորեն պետք է ընդունել: Սյդ *kurni* բառի բացատրությունը վորպես «բուրմ» ավելի և առաջին անգամ Սեյսը (տես IRAS, Vol XX, P 1, էջ 47 «*kurni* ‘Offerers’»), վորը կարելի չե ստուգաբանորեն մասամբ պաշտպանել և ստորինների *kumra* (=բուրմ) և այդանդից հայոց «բուրմ» բառով: Քրմության դասին և ուրարտական կրոնական ուսուցիչին վերաբերող ամենակարևոր արձանագրությունն է, ըստ իս, Արժավիրում դանված մի սրահասավոր արձանագրություն, վորը գրված է յեղել յերեք քարերի վրա (13-ական սողից) վորպես մի արձանագրություն, բայց դժբախտաբար միջին քարը կորած է: Այս արձանագրությունը, ինչպես և Արմավիրի մյուս արձանագրությունները, բավականին շեղվում է սովորական շարչոն ձևվերից: Յեթե կողր-կողքի դնենք մնացած յերկու քարը (մեջատեղի բացով), ապա մոտավորապես այսպիսի ընդհանուր գաղափար կարելի չե կաղմել (տես Սոյսի մոտ LXVIII և LIV)՝ Բո-

¹ Այս *bura* և *wedi(a)* բառերի ստուգաբանությունը դեռ չի կարելի ուր թերևս «խուրրիական» բառեր են (?), Յերկրորդ բառը (*wedi-*) թերևս նշանակել է «ցած, ստոր» (հմմտ Վեաի «НИЗКИЙ»? հայոց «տեղանունը»), ինչպես հայոց սարուկը ստացվել է սար բառից:

² Ավելորդ չենք համարում բերել այդ դժվար արձանագրությունը—
 «d Xaldinini alsuštini... | 1A- | giština 'Azani KUR-ni | 2 kini KUR Lulue
 manu iu 1Ar-[gištie]... aruuni šugabarant | 3 inani 6-še ušchauš... li uani
 barzani zieldi | 4 1Argištie 1Menuaxini... UZUxušu DUB-nini esini | 5 20 kur
 ni LuSeeluni... e guduli ameli-ulin | 6 aluki amani šugabari... ali bidiašta
 nulali | 7 ali taaše amani bidu... | 1Argištiet ti-]-ni teirdullni esie | 8 un |
 Lu Urbikani-kai... ue tariuxi manulle | 9 luabi iptuuni maa... xie uni LuUrb |
 kaaše | 10 mšanti tišni amani 'a[-āni]... li ali bidiašta nulalie | 11 un | LUPuru
 nurdadi... li ali bidiašta nulaale | 12 GUD-nini iradini 3 a... [LuSe-lluunite
 ani 1 nunulle | 13 alae 1 ixatduše t... sini urdidu [կամ ըստ Նիկոլսկու՝ 2 xu
 radu] LuSeluunite»: Փակագծի վերականգնումները մասամբ մերն են, Քարերը
 գտնվում են Վաղարշապատում հատկապես կարևոր է ստուգել վերջի առղի 8
 xupadu (hupadu) թե urdidu ընթերցումը

վանդակությունը մոտավորապես այսպես է—Պալղու մեծության շնորհիվ Արգիշտիխինա (=Արմավիր) քաղաքում անդահան «բարբարոսական» (Lulu) յերկրի Aza իշխանը սահմանված (manu) նվիրաբերություններ է տալիս (aruni «տվեց») վորոնք են՝ šugabari (= ?), միրգ (U še), ušulmuš (= ?). դրանք դրվում են Պալղու տաճարի կամ դռների առաջ (barzani zeldi): Այդպես բերվում են և զոհվող կենդանիներ (xušu «միս»), նույնպես սահմանված կանոններով (DUB nini esini «գրված անգով»): Հետո (5-րդ տողից) սկսվում է ըստ իս ծիսական նկարագրությունի: Այսանդ հիշվում է «20 kurni», այսինքն՝ 20 քուրմ, բայց ուրարտական սեպագրերով այդ «20» (քսան) նիշը ապա է և «թագավոր» (LUGAL) գաղափարանիշը, և ուրեմն «kurni LuŠe luini» կարելի չէ հասկանալ վոչ միայն «քսան քուրմ շելուխի մարդկանցից», այլև «շելուխի մարդկանց (ցեղի, տոհմի) թագավոր-քուրմը» այսինքն՝ գերագույն քուրմը, թագավորի դիրք ունեցող քուրմը («կաթողիկոս», pontifex maximus?): Հետո ասվում է, վոր զոհվող այդ առարկաները (gudull, amani, šugabari, bidi) Արգիշտի անունով (նրա ստողության կամ հիշատակի համար) են սահմանված (terdulini esie): Հետո արվում է զոհելու կարգը և թերևս քուրմերի յերարխիական մասնակցությունը: Նախ այդ զոհ(եր)ը դրվում է(ն) Urbika կոչվող մարդու առաջ (LuUrbikani-kai), վոր թերևս հողնակի յե («ուրբիկա» քրմերի առաջ), վորի արմատը (-ik ածանցով) մենք սերում ենք urb-uli(ո) «զեղեցին, զոհեցին» բայի հետ (կա և urbue ձևը, ինչպես և Urbuatsi «զոհարան»?): Իսկ այդ urbik քուրմը զոհում է ('aah = գաղափարագիր SUM) սեղանի կամ Պալղույան դռների աջ կողմում (tišni, հմմա. ZAG tišnu «աջից» այլ արձանագրության մեջ): Հետո մասնակցում է Purunurda (Burunurda) կոչվող քուրմը («մարդը») արջառ (GUD-nini) զոհելով, ելի յերեկ Շելուխի քրմական տոհմից: Իսկ վերջում մասնակցում են նաև 1 նունուլի 1 իխայդու(շե) և 2 խուպադու քրմեր նույն Շելուխի տոհմից¹:

¹ Այս արձանագրության մեջ հիշվող յերկրի անունը չի արվում յեթե չհաշվենք այն, վոր այդտեղ իշխել է Ազա ցեղը կամ զինաստիան, վորի անունով և կարող եր կոչվել նույն շրջանը: Ազա թագավորանունը հիշվում է և Մաննա յերկրի (Ուրմիա լճի մոտ) թագավորների մեջ, վորոնցից յերկուսը այդ անունն են կրել: Իսկ Արմավիրի մեր այս արձանագրության KUR Lulue մեր կարծիքով հասուկ անունն չէ, այլ նշանակում է «բարբարոս» յերկիր: Կա

Մի այլ արձանագրության մեջ հիշվում է Շուպաշի քաղաքի աածարլ («աուն») համար սահմանված (manu), այդ «հիմնարկի քրմի» (kurni guniei) կողմից զոհվող կենդանիների քանակը (3 յեզ, 3 երինջ, 5 վոչխար տես A Sayce LXXVIII Սանդ. § 52): Զոհաբերության նկարագրությունն է տալիս և Արմավիրի մի այլ պահասավոր արձանագրությունն, զբլած կարմրավուն քարատախտակի վրա (Sayce, № LIX), վորը բաղկացած է 11 աողից¹: Ծիսակատարական մեծ նշանակություն ունի և Վանի՝ Մհերի դռան արձանագրությունը (վերջին տողերում), բայց այդանկի չկա քրմերին վերաբերող վորևե հիշատակություն: Արմավիրի արձանագրությունները հասաատում են, վոր այդանկ յեզի և կուլտուրական մեծ նշանակություն ունեցող սրբավայրի տաճարներով, պարանդներով Խալդյան դռներով և այլն: Նույն այլ նշանակությունը Արմավիրը պահել էր և հին հայերի մոտ:

3 ՈՒՐԱՐՏՈՒԻ ՊԼՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՎ ՎԱՐՉԱԿՍՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆ

«Պետություն» բառը նույն անունն է կրում ինչ վոր կրում է և սովորական «յերկիր» անբմինը Սկզբում ebanī «յերկիր» տերմինը տրվում է ամեն մի հողամասի կամ շրջանի, և ուրարտական արձանագրություններում հանդիպում ենք անչափ նման «յերկրներին»: Բայց յերբ սոսկ անդանունը դառնում է մասամբ քողաքական առումով մի շրջանակի անուն յուր «քաղաք» կենարոնով ապա հաճախ հին արձանագրությունները (խեթերի մոտ և այլն) դրում են «յերկիր այս ինչ քաղաքի», յերբ յերկրանունը տրվում է հաճախ բացակայող անգամ քաղաքի անունով: Հաճախ է դատահում, վոր յերկրի անունը—Eriaxi, Abilianixi

այլուր և KUR Luluina, վորպես հակադրություն KUR Biaini յերկրին, ինչ պես և Զլարթնոցի արձանագրության մեջ կա հակադրություն biainiše «բիայ նացի» և luluiniše «լուլուինացի»: Լուլուինացիների այդ բարբարոս (վայրագ) ըմբռնումը նման է մեր «խուժան» բառի ծագման (խուժ ցեղից) Այս ընդունված է ասուրագետների կողմից:

¹ Տես մասամբ մեզ մոտ էջ 75—76, Առաջին աողն է «զոհը (bidi?) վերցը նում մասուցում է» յերկրորդ՝ meieši metsi elmuše manuuni (վորով վերջանում է ի միջի այլոց Մհերի դռան արձ-ը): Սրանից հետո արվում են Խալդուն նվիրվելիք զոհների անսակները և խոսվում է սեղանի շինության մասին Խալդյան դռների առաջ

Etiani և այլն—կրում է կամ KUR «յերկիր» վորոշիչը այդ բառերի սկզբում, կամ ցեղի նահապետի անձնատնվան վորոշիչը (մի յերկար ուղղահայաց սեպ է): Այս նշանակում է, վոր ավյալ տարածությունը բռնված է այսինչ ցեղով (սոհմով) կամ գեղերի միությամբ, նման Etiani կամ Diauxi յերկրին, այսինքն՝ այս տերրիտորիան գտնվում է այսինչ ցեղի գերիշխանության ներքո: Այրանունը հանդիսանում է վորպես անվանադիրը ավյալ ցեղի համար կամ ավելի ճիշտ ավյալ ցեղի անձնավորումն (պերսոնիֆիկացիան) է մի այրանվան մեջ վորպես ղինաստիայի հիմնադրողի: Ել չենք խոսում այն մասին, վոր ընդհանրապես ցեղի անունը կարող է փոխանցվել տեղին (Հայք, Վիրք...) և ընդհակառակը:

Բայց ebanu «յերկիր» բառը սոսկ անդայնություն չի ցույց աալիս յերբ քաղաքական և հասարակա-անաեսական հանդամանքները այդ տերրիտորիան գարձնում են վորքը ի շատե կաղմակերպված մի միավոր յուր գորքով ու կենտրոնական քաղաքով: Այստեղ արգեն ebanu-ն գառնում է քաղաքականորեն կաղմակերպված մի հասարակություն, մի պետություն: Այսպես վոր մի KUR Biaini կամ KUR Aššur կամ KUR Xate (KUR Xatina) գրությունները սոսկ Biaini, Aššur և Xate յերկրներ չեն, թեպետ ըստ ավանդության այդպես են գրվում, այլ՝ այդ անուններով պետություններ: Ուրեմն, մեր երայից ութ դար տաաջ, ինչպես այդ նույնը տեսնում ենք ավելի վաղ ասուրա-բարելացի ների, խեթերի և այլոց մոտ, «պետություն» հորջորջումը տրվում էր «յերկիր» բառով, այսինքն այնպիսի բառով, վորով նշվում էր թե մի փոքրիկ դավառակ և թե մի ընդալ ձակ գեսպոտիա:

Ուրարտուի պաաեր: ղմներն ու սնընդեստ ն լաճումները արտահայտում են դրա նեղ ցեղային («յերկրային») սահմաններից դուրս դալը և պեաականության կազմավորման հոր աենդենցը: Պեաական-քաղաքական այդ տարածման ու ընդարձակման, այդ տնտեսա-քաղաքական եքսպանսիայի վերջին ձևավորումը և արտահայտությունը մենք տեսնում ենք դեռ Սարգուր I ի (IX դարի յերկրորդ կես) տիտուլատուրայի մեջ՝ գրված ասուրերեն ուր կարդում ենք—«թագավոր մեծ, թագավոր հզր, թագավոր բաղմության (LUGAL ŠU վորը թերես = ուրարտական LUGAL KUR Šuraue) թագավոր յերկրի նաիրի, թագավոր, վորին թշնամի չդանվեց հովիվ բարի, չվախեցող ընդդիմու-

Թյունից, թագավոր նվաճող յուր անհնազանդներին: Սարգուր
 Լուտիպրիի վորդին՝ թագավոր թագավորների՝ բոլոր նրանց թա-
 գավորներից հարկեր առա...» (առդեր 1—5): Թեպետ այս տի-
 տուլատուրայի ձևական նկարագրությունը համարվում է ասուու-
 բականից վերցված կամ ազդված, այնուամենայնիվ այս ցույց է
 տալիս, վոր ուրարտական թագավորը իրեն համարում է արդեն
 ուժեղացած, հետևում է Ասորեստանի մեծ թագավորների որի-
 նակին, հարկեր է վերցնում յենթակա «թագավորներից» (= ցե-
 դապետներից) և այլն և այլն: Կարևորն է այստեղ պետականու-
 թյան և քաղաքականորեն տարածվելու (եքսպանսիայի) գաղա-
 փարը, վորը ճիշտ է արտահայտում պաամական փոփոխությու-
 նը այդ Նաիրի-Ուրարտու յերկրում:

Ուրարտական իշխանավորները, ծագած անշուշտ իշխող մի
 կամ մի քանի ցեղերի ղեկավար խմբակից, այնքան էլին մեծա-
 մանի իրենց քաղաքական և կուլտուրական տենդենցներով, վոր
 նվաճվող յերկրները կոչում էին ընդհանուր Lulaina (կամ Lu-
 lue) բառով, վորը նշանակում է «բարբարոսական յերկիր», — մի
 ըմբռնում, վոր աածվել է նույն այդ լուլումիանների («թափա-
 ոականների») նկատմամբ և ասուուբական իշխանավորների կող-
 մից: Արդիշտի I-ը այժմյան Արմավիրի շրջանի Ազա տնունով
 թագավորի յերկիրը կոչում է «Լուլուե յերկիր»: Սարգուր II
 (III)-ը յուր արձանագրություններում Բիայնային հակադրում է
 Լուլուինա յերկիրը իսկ Ռուսա I-ը Վելիթուխի յերկիրը նվա-
 ճում է «ի փառս Բիայնայի և ի սարսափ թշնամու յերկրի
 [= Լուլուինայի]»: Վերջապես Զվարթնոցի՝ Ռուսա II-ի արձանա-
 գրության մեջ, անեծքի Փորմուլայի մեջ ասվում է՝ «ով այս ար-
 ձանագրո թյունը ջարդի լինի գա բիայնացի, լինի լուլուինա-
 ցի» (աստվածները նրա անունը, առհմը և սերունդը թող հողին
 հանձնեն): Այստեղ ևս ակներև է իշխող բիայնացու, վորպես
 պետության իշխող քաղաքացու, և «բարբարոս» լուլուինացու,
 վորպես յենթարկվող հարկաառ պրովինցիալի հակադրությունը:
 Ուրարացիք («ururda մարդիկ») իրենց համարում էին ար-
 դեն իրենց սանդած պետության իշխողներ, իրենց դուռն էին
 վորպես պետական հարազատ քաղաք սցիք, իսկ մյուսներին՝ բար-
 բարոսներ, ստրուկներ և այլն:

Ուրարտուն վորպես Հին Արևելքի մի պետություն, վորը
 նվաճվող յերկրներին սյս կամ այն կախվածությամբ յենթար-
 կում էր իրեն, հեազհետե վեր եր ածվում մի Ֆեղերաս իվ կամ

ավելի ճիշտ կոնֆեդերատիվ քաղաքական միության բուն Բիայնայով և Տուշպա մայրաքաղաքով, վորպես հիմնական կորիզ: Այս ֆեդերացիայի մեջ մտնող վորոշ իշխանություններ, ինչպես Եթիունի կամ Դիաուեխի, ներկայացնում էին ցեղերի դաշնակցություններ, իսկ վերջինը (=ասուր. Daiaeni) Տիգլատպալասար I-ի ժամանակ մինչև իսկ ՉՅ (կամ 60) նախրյան ցեղերի դիտավորն եր յուր Սինի թաղավորով Ուրարտական արձանագրություններից անգամ յերևում է, վոր ուրարտական թագավորները միաաեսակ վերաբերմունք չունեին դեպի այդ մեծ «յերկրները»: Դիաուեխի իշխանությունը, յենթարկվելով Ուրարտուին Մենուայի և Արգիշտիի ձեռքով (հեաագայում չի հիշվում), ու «վասսալ թագավորի» աստիճանին է լջեցվում: Հավանորեն այդ diau դինասալային եր յենթարկվում Արածանիի միջին տարածություններից սկսած մինչև Բասեն ու Բադրևանդ, իսկ այստեղից սկսած տեսնում ենք Եթիունի դաշնակցության ներկայությունը, վորը մեր կսրծիքով բռնում եր այժմյան Հայաստանի մեծ մասը, բացի Արարատյան դաշտից, և թերևս արածվում եր Բադրևանդում ինչև Ալաշկերա («Anasie») և Ապահունիք¹:

Ուրարտական թագավորները, առսջանալով վորոշ տեղական ցեղի կամ ցեղերի (bia, ururda?) նախկին առաջնորդներից, դառնում են ժառանգական իշխանություն: Սարգուրն ասում է «Պալդն ինձ իշխանություն (թագավորություն) տվեց ստանձնեցի հայրական իշխանությունը», կամ «Պալդը ինձ նստեցրեց հայրական գահի վրա» և այլն: Սարգուրը յուր թագավորական իշխանությունը դնում է արև աստծու վողորմածության կամ արգարամիտ պաշտպանության ներքո, հայցում հաղթանակ և տյլն (տես եջ 86)

Ուրարտական թագավորների սկզբնական արտաքին հարաբերությունն լը և ուժեղացման միջոցները — պաաերազմներն ու

¹ Անկախ նրանից, վոր շատ տեղանուններ թե ուրարտացիների ժամանակ և թե հեաագայում (հայերի մոտ) հոգնակի թվով են լինում, մենք կմասնանշեյինք Բիայնա կամ Բիայնի անլան հոգնակիով գործածվելը: Biainna: ձևի վերջին «ն» ձայնավորը կարող է հոգնակիում միայն գործածվել, վորը տեսնում ենք և Biainawe սեռակ.-արակ. (հոգն) ձևի մեջ: Այդպես և նորՔայաղեռի՝ Ռուսա I-ի արձանագրություն մեջ «aluše KUR Biainili nul duali»-ով Բիայնաները || Բիաինա յերկրները ընդարձակեց (կամ վերականգնեց):

ավարառություններն են: Բերվում եր մեծ քանակությամբ խոշոր և մանր յեղջյուրավոր անասուն, դերիներ, ստացվածք և այլն: Ուժեղանում և ներքին ռեսուրսների արտագրությունը, սարկությունը դառնում և պետական հողերում հիմնական հասարակա-տնտեսական դործոն, դարգանում են շինարարությունը, գյուղատնտեսությունը, վոռոգումը անխնիկան և արհեստները մետաղագործությունը մեծ նվաճումներ և ձեռք բերում: Ստեղծվում են դորք, պեռական պաշտոնեություն: Չարգանում են տաճարները ուր քրմական գասը հերարխիական դարգացում և սաանում: Քրմությունը և պետական գրագիրները տարածում են դիրք (բեռնագիր և թերևս հիերոգլիֆ), սիտուալ ու որենքներ հաստատում: Թագավորները իրենց կուսակախների հետ բեռնադիր ախտակների միջոցով գրավոր հարաբերություն են սահլծում և այլն և այլն: Իհարկե տվյալները պակասում են Բիայնայի հասարակական ներքին կյանքի բովանդակ ուսումնասիրության համար: Յեթե հայանաբերվեր մի «որենագիրք» կամ քրմական ու պետական արխիվ, դրանով թերևս այդ գգալի բացը մեղմանար Միանդամայն անմատչելի կմնան այնպիսի խնդիրներ, ինչպես մի շարք տնտեսական փոխհարաբերություններ (առուծախս դրավ, հարկ...), դորք կազմելու և ղինվածության (ղինելու) պարադաները, քաղաքացիական-իրավական խնդիրները, լեզվի խնդիրը, քրմության և քաղաքական իշխանության՝ փոխհարաբերությունը և այլն և այլն: Լեզվի տեսակետից կմանանաչեյինք, վոր գրավոր ղոկումենտների լեզուն կարող եր վորոշ ցեղի կամ խավի լեզու լինել, կրելով սրբազան-պաշտոնական ընույթ: Կելիշինի ուրարտական տեքստը, որինակ, վորոշ բարբառոտյություն և աալիս, այդտեղ Xaldi աստծու անունը հնչվել և՛ Aldi առանց սկզբի »x« (կամ h) հնչյունի: Այնուամենայնիվ այն ինչ վոր աալիս են արձանագրությունները, դրանք ել բավական են բավարար չափով պատկերելու Ուրարտուի պետական, քաղաքական-վարչական և տնտեսական կողմերը: Սկսենք դորքից և պաշտոնեությունից:

Չորք բառը արտահայտվում և փոխառյալ ası (A SI) բառով վորը միշտ ունի «մարդ» վորոշիչը սկզբից և հոգնակիի գաղափարագիրը վերջից (^{Lú}A. SI^{pl}) այսինքն այդ բառը միշտ հոգնակիով («գորքեր») և արտահայտվում: Հոգնակի հայցականով ունենք, որինակ, 1eše ^Iu A SI^{pl} nikuuli «յես գորքեր գումարիցի» (niku-li <*nikub-li), իսկ վորպես յենթակա ունենք

L⁶A SI^{PI} uštaali ¹Abilianiximedi «գորքերը արշավեցին Արի-
լիանիսի» (Apx ՁԿԵ II₆) L⁶A SI^{PI} še paartu «գորքերը թա-
լանեցին» Շատ հաճախ գործ է անվում xuradi «գորք» և xu-
radini «գին լոր», ունենալով «մարդ» վորոշիչը Որինակ, tarnuni
L⁶xuradinili veli-dubi «քաջ(?) գորականներ հավաքեցի» (Apx
ՁԿԵ V₂), kuei-danuui L⁶xuradinieli KUR Eriaximedi KUR
ebani xāitu «ուղարկեցի (?) գինվորներին Երիախի յերկիրը,
յերկիրը գրավեցին» (Apx ՁԿԵ II₂₇₋₂₈), karuni KUR AŠŠUR
L⁶xurādie (Պորխ. Col II₅₃) «նլաճեց Սսորեստանի գորքը»,
KUR AŠŠUR L⁶xuradiie KUR ebaniuki ašdu (Col. III₂₅) «Սսո-
րեստանի գորքը իմ (uki) յերկրում ašdu (= ?)»: Տրվում է գոր-
քին և šurxani մակղիրը (šurxani L⁶A SI^{PI} veliduli)², վորը թերևս
նշանակե «վարձկան»: Վումանք ցանկանում էին asi անվան մեջ
տեսնել «հեծելագորք», իսկ xuradi անվան մեջ՝ հեանակագորք:
Վերջին բառը նույնպես ուրարտական չի, թերևս խուրրիական
լինի, ուր նույնպես է հնչվել, թեպես գործ է անվում և ասուու-
րա-բարելական լեզվում (kuratu «գորք») Կա և gunuše «կոխի,
ուժ» բառը, վորը հաճախ գործ է անվում ներդոյականի ձևով
gunušaa «կոխում» կամ թել ևս գործիական հոլովով՝ կոխով ու-
ժով: Այս բառից կազմվել է գոյական gunušini «մարտիկ»: վորը
ծագումով անական է՝ բազմական (> բազմիկ): Այս բառը ունե-
նում է նաև «մարդ» դետերմինատիվը: Այսպես որինակ, gunu-
šinie suui dulusibi «գինվորացուներ վերցրի» (Pulu յ'ըկրից,
տես Apx ՁԿԵ. IV₉), 2114 BE LI^{PI} gunušinie (ibid VI₉)
«2114 գնեքեր գինվորականի», 6000 L⁶gunušinii (Sayce XLIX)
և այլն: Ուրարտական գորքերը ունեցել են նաև մարտականքի,
հեծյալներ այս մասին, որինակ, խոսում է Սալմանասարը յերբ
հաղթում է Արամեյին, սպանելով նրա զորքից 3400 հոգի Ռու-
սս I-ի արձանը Մուսասիրի տաճարում քանդակված և մարտա-
կառքի լրա ստամ յուր հայտնի արձանագրությամբ: Ուրար-
տական գորքերը ունեցել են և ընդհանուր հրամանատար՝
սպարապետ, վորի ուրարտական անունը գժրախտաբար չի մնա-
ցել: Այս մասին վկայում են ասուուրական աղբյուրները, յերբ
խոսելով Ռուսս I-ի ժամանակվա խուրվությունների մասին (Ա-
շուրրիսուռայի հաղորդմամբ) նրանք լատենանշում են Կակկադա-

¹ Տես Պորխ արձ Col III₁₀

նու «տուրտանի» (սպարապետի) ապաստամբության մասին Ուսի շրջանում (Վանա լճից հարավ-արևելք?): Պատերազմի հետևվանքով վերցված հարկը արվելիս և յեղել զորքին՝ Որինակ, Մենուայի մի արձանագրության մեջ (Ղանի՝ Պողոս-Պետրոս յեկեղեցու կամարին) կարգում ենք «[meze] e ali manu arubi Lu xuradinaue^{pl} = հարկը վոր նշանակված եր (ըստ այլոց manu «կար») ավեցի դինվորներին» (Savce XXXII₁₀): Այդպես և գերիներին եյին հանձնում զորքի կարիքի համար կամ վորպես գինվորացուներ կամ վորպես ստրուկ-աշխատողներ, որինակ, «Սարգուրն ասում և—šeeri 'age^{SAL} lutu Lu A SI^{pl}-ue arubi (Арх Эксп V₂₈) = հավելյալ այր—կին զորքերին ավի»: Այս նշանակում և, վոր մի մասը այդ գերիներից ասրվում եր Ղան պետական կարիքի համար (շինարարություն, դաշտային աշխատանքի և այլն), իսկ մի մասն էլ, հավելյալ մասը (šēpi «излишек, ավելցուկ») տրվում եր զորքին: Նմանապես, որինական կամ չափի յենթարկված (manu) հարկից բացի՝ զորքին յերբեմն թույլ եր տրվում ավելի թալաներ Որինակ, Սարգուրը Բարիլու յերկրում արշավանրի ժամանակ նկարագրում և «inani LUGAL e nunabi mei ali Lu A SI^{pl} še paartu šeeri paartu (Арх Экс, եջ 42)— այս թագավորը յեկավ և ինչ վոր զորքերը տարան հավելյալ ասրան», այսինքն՝ ավելի եր, վոր տարան: Նույնը կրկնվում և և Աբիլիանիի գինաստիայի Մուրինի թագավորի մտան—inani LUGAL e nunabi mei ali Lu A SI^{pl} še irbitu šeri partu (Арх Экс II_{45 46}): Ինչպես տեսնում ենք արշավանքների 1 ավարտումների մեջ շահագրգռված եյին վոչ միայն թագավորները, այլև ուրարտական գինվորները: Իրանով Վանի տիրակալները ավելի եյին յենթարկում իրենց այդ զորքերին:

Պետական բարձր պաշտոնեությունն եյին կազմում փոխարքաները կամ կուսակալները („Statthalter“), վորոնք նշանակվում եյին նվաճված վայրերում կարգ պահպանելու, սահմանները պաշտպանելու, հարկեր հավաքելու և տեղական «թ սգավորներ» վրա հսկելու: Ինչ աստիճանյան ազբյուրներից մեզ հայտնի յե, վոր Մուսասիրի Ուրգանա թագավորի կողքին կար և ուրարտական փոխարքա, վորի անունն եր Անալուկունու: Բացի այդ, Թոփրախ-կալեյի պեղումներից հայտնաբերված աղյուսակը մեզ ասում և, վոր այժմյան Շիրակի «Իշկիդուլու» կոչված վայրում (Անինականից հյուսիս) նստած էր ուրարտական փոխարքան,

վորի անունն էր Շադաշտար (թերևս՝ Շաուշաաար): Վերջապես արձանագրությունները հաճախ են խոսում փոխարքա գնելու (նշանակելու) մասին: Որինակ Արդիշաի I-ի (ս. Սահակյեկ Վանում) արձանագրության մեջ կարգում ենք— «[2] LUGAL^{pl} uediadubi¹ Šaškī. ¹ Ardarakixi ¹ Baltulxi ¹ Kabi. , EN NAM^{pl} esia terubi (Sayce XLV₁₅₋₁₇)=2 թագավորի յենթարկեցի (ածառայեցրի)՝ Սասկի...-յին Արդարակի վորդուն (և) Բալտուլխիին Կարի...-յի վորդուն... փոխարքաներ տեղ(եր)ում դրի»: Մենուայի՝ Մեծկերաի արձանագրության մեջ ասվում է «terubi ¹ Titiani ištini ^{Lú}EN NAM=դրեցի թիթիային այստեղ փոխարքա»: Սարգուրն ևս փոխարքաներ է նշանակում Վիխիրուխի յերկրում (Արք ՅԿՍՈ III₁₈₋₂₁) և Իշտելուանի, Կադիայնի, Ապուունի և Արիլիանիխի յերկրներում (^{Lú}EN NAM^{pl})¹: Հիշենք վերջապես Նոր Բայազետի Ռուսա I-ի արձանագրությունը, ուր ասվում է «թագավորին Վելիքուխի յերկրի նվաճեցի, յենթարկեցի (ածառայեցրի)». փոխարքա այնտեղ դրի»: Փոխարքան անշուշտ ուրարտացի պիտի լիներ վորը հսկեր տեղական իշխանության վրա և հավասարիմ լիներ: Բայց այս չի բացասում և այն վոր այդ պաշտոնում կարող էին լինել և անդացիք. որինակ, Պարբերդի մոտ (Մեծկերտում) հիշատակվող Titia անունով փոխարքան կարող էր և տեղացի լինել, վորովհետև այդ անունը կարծես թե «սուբարյան» արտաքին ունի (թեպեա համտ. ուրարտական Tariria .), իսկ խեթական և ակկադական աղբյուրներից մենք գիտենք, վոր Tette կամ Titti անունով թագավորներ յեղել են Բարդայում, Կարգեմիշում, Սյուրիական մի շարք մանր պետությունների մեջ և այլն: Յեթե չհաշվենք Դիաուելի իշխանության մոտ հիշվող Սասկի և Բալտուլխի յերկրների համար նշանակվող (յերկու) փոխարքաներին, ապա բոլոր մեր բերած տվյալները դույց են տալիս, վոր փոխարքաները գլխավորապես նշանակվել են ծայրամասերում, ինչպիսիք են—Նոր Բայազետ (Ռուսա I ի արձ.), Արիլիանիխի—Ապուունի (Արածանու վերին հոսանք և Կադղվանի մոտ), Լենինականի շրջանը (Իշկիզուլու ռայոնում) Վիխիրների յերկրում (Ճորոխի մոտ), Մեծկերտում (Պարբերդից հյուսիս), Մուսասիրում (Վերին Չար գետ, Ուրարտուից հարավարևելք): Յեթե յենթարդենք, վոր այդ փոխարքաները կարող էին լինել և անդական իշխաններից, ադա ուր սլ ասի ն

¹ Տես Արք Օ Կ V 13—16

այս փոխարքայությունը մեզ հիշեցնում է հետագա Հսյաստանի բղեջսությունը: Բղեջսներն ևս պարտավոր էյին անդյակ պահել հայոց թագավորներին քաղաքական տնցուղարձի մասին պաշտպանել Հսյաստանի սահմանները և այլն:

Պետական պաշտոնեություն մեջ վորոշ դիրք ու կազմակերպություն ունեցած պիտի լինեյին, ըսա իս, և զբաղիրենբ՝ այն ժամանակվա բարձր մտավորականությունը: Թագավորների նվաճումներն ու քաջագործությունները, շինարարությունը, այլևայլ պետությունների կամ հենց ուրարատկան փոխարքա-կուսակալների հետ դրավոր հարաբերություն պահելը որենքները, քրմական դասի պահանջները, տնտեսական-հարկային պահանջները (հաշիվները) և այլն և այլն, այս բոլորը ընկած էր դրագիրների վրա, վորոնք նաև շրջադայում էյին նվաճող թագավորների հետ, արձանագրություններ գրելով ժայռերի կամ քարերի ու քարակոթողների վրա: Ուրարտական թագավորները արձանագրություններ են թողել իրենց բոլոր սահմանների վրա ինչպես տեսնում ենք Սևանի մոտ, Ջըլղըր լճի մոտ («Դաշ Գյոփրի»), Ildamusa քաղաքում (Կոլխա յերկրում) ըսա Սարգուրի ասրեգրի, Իդոգլուի մոտ Յեփրատի ափին, Կելիշինի մոտ և այլն: Եւ ի գուր չեր ասում Մ. Պորենացին, վոր Շամիրամը «և ի բուզում տեղիս ստիմանս նովին գրով [= բևեռագրով] հաստատեաց» (Ա. դիրք, § ԺԶ): Ուրարտացիների մոտ գրի տարածումը այն չափի չհասավ, ինչպես այդ տեսնում ենք ասուրների, բաբելոնցիների, խեթերի, և մյուսների մոտ¹ Կավե տախտակների դործածությունը, վոր ամենից հարմարն էր, չտարածվեց: Դժբախտորար ուրարտական արձանագրությունները վոչ մի տեղեկություն չեն բերում սեպագրողների մասին: Միայն այն են թագավորները հաճախ կրկնում վոր դիցուք թե մի Մենուա այս ինչ քարը kui

¹ Պեթերի մոտ գրելու արհեստը, իբրև վարպետություն, անցնում էր թողից թոռ, ինչպես կարելի յե տեսնել նրանց որենագրքի մի հատվածից, ուր վերջում տեսնում ենք գրողի ասորագրությունը՝ առած շրջանակի մեջ: Այս վերջին յերևույթը ինձ շատ հիշեցնում է Անիի նման ասորագրությունները կնիքով և շրջանակավ: Հրողնու Code hittite (եջ 98—99) հրատարակության մեջ կարգում ենք այդ ասորագրությունը, « 1 Hanima—ILIM-iš, le scribe fils du jardinier petit-fils du chef des scribes...»: Այստեղ «գրող»-ը արտահայտված է DUB. ŠAR, իսկ գրողների շեֆը՝ GAL. DUB. ŠAR («մեծ գրող»): Նման ասորագրություն տեսնում ենք և Պապանիլիի քրմի հայանի ժխարանի վերջում գրա գրողն և Կուպարագի, վորը ակկագերեն անուն է

guni (կամ kuguni) «գրել ավեց», կամ Մենուան ու Իշպուինին այս ինչ քարը կամ ստեղան kuituni (kutuni) «գրել տվին», ուր բայը ku(i)tuni կազմվել է ku(i)g-tu-ni ձևաբանական մասերից՝ gt>t հնչյունական փոփոխությամբ¹: Մասնավորապես պիտի ընդգծել Արգիշտի I ի մի փոքր արձանագրության գրության առանձնահատկությունը, վոր այլուր չի պատահում. այդ կեզքի գյուղի (Վանի մոտ) նրա արձանագրությունն է «¹ Argistiše ali inuaxini ABNU SU aie = Արգիշտին ասում է – այս քարը իրենն (SU) է (aie)», այսինքն՝ այս յուր արձանագրությունն է²:

4 ՏԻՐԱԿԱԼԱԿԱՆ ՅԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՈՂՈՒԻԱ

(գրավում կցում կայագր, կուսակալություն, ծառայեցում հարկադրություն...)

Այս հատվածում վերլուծվելու յե արձանագրությունների այն տերմինոլոգիան, վորը կարող է պարզել վորոշ չափով նոր նվաճվող հողերը կառավարելու և յուրացնելու ընթացքը՝ Այս-աեղ անունում ենք, ընդհանրապես ասած, վոր ուրարտական թագավորները նվաճվածներին «հպատակեցնում են» կամ «ծառայեցնում են» պարբերաբար ասելով դրանց յերկրներից «մի տարվա մարզկանց» պետական պետքերի համար, վոր ուրարտական այդ «բարի հովիվները» նվաճված յերկրներում տեղական ամրությունները քանդելուց հետո իրենց սեփական բերդերն են կառուցում, պահակազորքեր գնում, կուսակալներ նշանակում, յերկիրը միացնում Բիայնային, կամ թերևս մեկը միացնելով մյուսին՝ հարկատու դարձնում շինարարություն կատարում, կարգավորում և այլն Այս մասին են խոսում արձանա-

¹ Այստեղ արմատն է տե՛նուրեք kuig tu մասնիկը նշում է անցյալ կատարյալ 3 դ հոգնակի, իսկ վերջին -ni մասնիկը որչեպիվ դերանվանական ենկիտիկա յե և ցույց է տալիս վերաբերություն դեպի որչեպալ (քարը, արձանագրությունը) Սխալվում եր J Friedrich-ը, յերբ «դրեյ» բայի համար վերցնում եր յերկու ստորերը» (?) աբմատ, մեկը ku(i)-, իսկ մյուսը ku(i)g-: Ուրարտերենում հաճախ է պատահում յերկու բաղաձայններից առաջինի սղուժը, ինչպես՝ terun me>terume šid-tu-li «կառուցեցին այն (-li)» դառնում է šituli: Նմանապես սխալվում է նա, յերբ կարծում է, վոր կա g || t հնչյունների ալտերնացիա ի դեմս kulietuni և tulietuni: Այդ վերջինը չկա Զվարթնոցի արձ մեջ միայն առաջինն է (տե՛ս J. Friedrich ի «Einleitung ins urartaische» (MIII d vord.-as eg Ges. B. 37, էջ 28.

² Թարգմանությունը մերն է:

գրությունների վորոշ վոճեր ու անբմիճներ, վորոնց նկարագրությունը մենք այստեղ տալիս ենք:

Ռազմական արձանագրությունները վորոշ շաբլոնով, այն է, սկզբից Պալզ աստծու կողմից և հետո արշավող թագավորի, նկարագրում են Վանի թագավորների այլևայլ արշավանքները գեպի այս կամ այն յերկիրը: Իրանք գրավվում կամ նվաճվում են (xaubi «վերցրի» karubi «նվաճեցի» և այլն), ավերվում են, «քաղաքները» քանդվում են յերկիրը «ուտվում է», այր ու կին ջշվում են Բիայնա, բազմաթիվ ավար և գերիներ են աարվում (յերիտասարդներ ծառաներ, զինվորականներ) յերկիրը գցվում է հարկի տակ և այլն: Բացի այս սովորական և ընդհանուր շաբլոնից, յերբեմն նաև կարգում ենք վորոշ հավելումներ, վորոնք հատուկ արժեք են ներկայացնում: Նախ սովորական և պարաազիլ՝ «յերկիրը գրավեցի քաղաքները—բերդերը քանդեցի, յերկիրը կերա» և նման արտահայտություններին յերբեմն հետևում և «բերդեր (կամ բերդ) կառուցեցի» կամ «արձանագրություն այս ինչ քաղաքում գրի»: Իսկ այլուր կարգում ենք նաև «յերկիրը իմ յերկրին կցեցի», «վոխարքա այնտեղ գրի» «հարկի տակ գցեցի» և այլն: Այս նշանակում է վոր այս նվաճումը վոշ թե ժամանակավոր բնույթ էր կրում՝ ավարառության կամ այլ նկատառումով այլ ընդհակառակը, նվաճված յերկիրը վասսալական կապերով միացվում էր Բիայնային, կամ վերջինիս պրովինցիան էր գտնում: Տեղական «թագավորները» կարող էին և մնալ կաարելով Վանի կուսակալների կամքը:

Առաջին կարևոր տերմինը «կցելու» կամ «միացնելու» համար այդ ուրարական abili dubi ասույթն է վորի ճիշտ թարգմանությունը առաջին անգամ տվեց Մ Մերեթելին: Տառացի abili dubi նշանակում է «աւել արի, прибавил» (=գրաբարի՝ յաւելի), ուր հետևապես ուրարական abili բառը և սառգարանորեն արգարացվում է հայոց «ավել» նույն արմատով: Իսկ որչեկտը, վորին միացվում է տվյալ յերկիրը կամ քաղաքները, գրվում է ուղևորական հոլովով (di վերջավորությամբ), ինչպես՝ KUR A abili dubi ^{KUR}ebani-ukie-di «Ա. յերկիրը միացրի (կցեցի) իմ (-uki) յերկրին»:

Ավելորդ չենք համարում արձանագրություններից բերել մի քանի ախպիկ որինակներ յերկրների ու քաղաքների այդ «աննեքսիայի» վերաբերյալ՝ Նորագյուա Սարգուրյան աարեգրբում, որինակ, կարգում ենք

«Արշավեցի Մանա յերկիրը, յերկիրը գրավեցի, քաղաքները վառեցի յերկիրը կերա (կլանեցի), այր-կին քշեցի Բիայնա, Դաբբա(ն) քաղաքի բերդը, ամրացրած, ուժով (կովով) վերցրի, պահակազորքեր այգտեղ ընակեցրի (հաստատեցի) յերկիրը իմ յերկրին կցեցի» (Арх ЭКСП. I 12-14)

«Արշավեցի Պուլուա յերկիրը. նա յեկավ առջևս ղինվորացուներ վերցրի ..., Լիպլիունի քաղաքը քաղաքը արքայանիսա, ամրացրած, կովով վերցրի, ալ ձանագրություն այնտեղ դրի, քաղաքները վառեցի, յերկիրը կերա, այր-կին այտեղից քշեցի, բերդեր այգտեղ շինեցի, Բիայնային ի փառս Լուլուինային ի սարսափ, յերկիրը իմ յերկրին միացրի: Սարգուրն ասում ե—սույն տարին ամառը (?) արշավեցի Երիախի յերկիրը, յերկիրը գրավեցի, քաղաքները վառեցի քանդեցի յերկիրը կերա, այր-կին քշեցի Բիայնա, բերդեր այտեղ շինեցի, յերկիրը յեկրիս կցեցի» (ibid., IV 8-24):

«Արշավեցի Դիդինի յերկիրը՝ Զուա քաղաքը Դիաուցեղի Զուա քաղաքը վառեցի, դրի արձանագրություն զուացիների յերկրում, Աշկալաշի յերկրում բերդերը քանդեցի, 3 յերկիր ավերեցի (? edini suřukubi)՝ յուր մարդկանց(ով). միացրի իմ յերկրին Կալի(նի) յերկիրը, Աշկալաշի յերկիրը, Շաշիլուինի քաղաքի [յերկիրը]» (անս Sayce, XI V 2-11) Շարունակության մեջ թվարկվում են գերեվարվող յերիտասարդները [ղինվորները] և սպասավոր (սարուկ) կանայք հետո ասրվում են ձիեր, արջառներ, վոշխարներ: Սրան ավելացվում է «2 թագավոր ծառայեցրի՝ Սասկին Արդարակի վորդուն (և) Բալտուլիին Կաբի...-յի վորդուն. կուսակալներ տեղում դրի, Դիաուցեղի թագավորին ծառայեցրի (հպատակեցրի), ղցեցի հարկի տակ» արվում է այդ հարկի քանակը վոսկով, արծաթով և այլն:

«Յեկավ Խիլարուադան իմ առաջ..., ստացա վոսկի, արծաթ..., յենթարկելով (mani?) ղցեցի հարկի տակ 9 բերդ ավերեցի, կցեցի յերկրիս (ebana-ki-di)՝ Խադանի քաղաքը, Ուրախի քաղաքը, Տումիշլի քաղաքը...» (անս Սարգուրի՝ Իզոգլույի արձ Sayce L. 22 31):

Յերկրները գրավելիս ընական է վոր բերդերը պիտի քանդվեն-վառվեն, բայց յերբ դրանք միացվում են, այսինքն նվաճումը չի կրում պատահական բնույթ, ապա շինվում են հենակետեր՝ նոր բերդեր կամ թերևս հները վերաշինվում են: Այդ

անհրաժեշտ եր պահակազորք դնելու համար հարկ ու մթերքը կանոնավոր հավաքելու համար՝ կուսակալների միջոցով

Կոյուզար կամ պառնակազար բառը (irdi) շատ քիչ է հիշվում: Մեզ հայտնի յե՛ն յերեք գեպք միայն, թեպե՛ս արձանագրություններում չհիշատակվելը գե՛ռ ապացույց չէ վոր դրանք միայն մի-յերկու տեղ միայն կայլն Այս կայազոր անունը առաջին անգամ է հայտնի գառնու՛մ ուրարտագիտությանը՝ շնորհիվ նորագյուտ Սարգուրյան տարեգրի, վոր 1916 թվին գտավ Վանում Որբելին: Այդանղ (I 12-24) կարգում ենք՝ «պահակազորքեր այգտեղ [Մաննայում] հաստատեցի»¹, Նաև (II 11-15) խոսվում է Կուլխա (Կուլխիդա) յերկրի տեղական կայազորների մասին, վորոնց կոտորում է Սարգուրը (L^uIRDI ali KUR Kuxai istini manu zašgubi՝ «կայազորը, վորը Կուլխա յերկրի այս տեղում նշանակված էր, կոտորեցի»): Նմանապես (III 27) Վիխիրների յերկիրը գրավելիս ուր Սարգուրը հանդիպել է 6 ցեղապետների, ասված է «Ուրայա(նի) քաղաքի բերգը կառուցեցի, կայազոր (L^uirdi) այտեղ նստեցրի (ašubbi)»: J Friedrich-ը այդ Irdi բառը թարգմանում է «Kommandant» (տե՛ս Caucasia Fasc VII, եջ 83)² բայց ավելի ճիշտը կլիներ թարգմանել վոչ թե «պարեա, կոմենդանտ», այլ «կայազոր, պահակազոր», ի նկատի ունենալով, վոր այդ յեղել է և Ատորեստանում և Բիայնայում ըստ աստուրական աղբյուրների իսկ «ժարդ» վրոշիչը դրվում է և դորք բառից առաջ (L^uA SI կամ L^uxuradi):

Կուսակալների կամ փոխ որդ սների ինստիտուտի մասին մենք արգենք խոսել ենք մասամբ (տե՛ս եջ 106—107) Կուսակալները կամ փոխարքաները հետամուտ էյին վերահսկելու տեղական ցեղապետների կամ իշխանների վրա վոր չապստամբեն և չմիանան այլ թշնամի պետություններին: Կուսակալները հսկում էյին հարկ հավաքելու և պարեն հայթաթելու վրա, նվաճված յերկիրը Բիայնայի ձեռքում պահելու՝ իրենց կայազորների իջոցով և այլն: Ուրարտուի ներսում ամենաուժեղ ներքին վտանգը կարող էյին ներկայացնել Եթիունի և Դիաուեխի իշխանությունները կամ ցեղերի դաշն սկցությունները, վորոնց վրա անշուշտ

¹ Lu irdi pl [կամ L^uIRDIpl ?] istini ašubbi, Իսկ aš- նստեցնել բնակեց Եկ (և zaš նույն իմաստով) կա և խեթերենում (տե՛ս եջ 38)

² Այդ «կոմենդանտ» թարգմանությունը Ֆրիդրիխից առաջ ավել է Մ Մերթթելին:

պիտի նշանակվեյին կուսակալներ կամ փոխարքաներ Արգիշտի I-ի՝ Վանի և Սահակ յեկեղեցում պահված ստելայի մնացորդը (40 տող) ամբողջապես նվիրված և այդ յերկու «յերկրներին», խոսելով նախ Դիաուլյան թագավորին և նրա ստորադաս յերկու ցեղապետներին (Սասկի և Բալտուլխի) հնազանդեցնելու և կուսակալներ զնելու մասին և հետո՝ Եթիուենի յերկրի մասին: Կուսակալներ (կամ կայազոր?) նշանակելիս կարծես թե յերբեմն տեղական ցեղապետներից վճանք ոգնում են: Որինակ, յերբ Սարգուրը արշավում էր Վիխիրների յերկիրը (Սև ծովի մոտ, Ճորոխի շրջաններում), մասնանշելով, վոր յերեք փոխարքաներ է նշանակում և յերեք անդ արշավանք գործում (3 a esaa uxtib-te zadubi), ապա ավելացնում է՝ KUR Vixtruxini 6 LÚ šia išti nie irtsi dubi «Վիխիրուխյան (այլ?) վեց ցեղապետների ոգնությամբ ազատեցի (=բաց թողի)»: Կամ թե Եթիուենի յերկիրն ուղևորվելիս (uladt «ուղևորվեցի») նույն Սարգուրն ասում է՝ „KUR Etiunia ištiniie andani KUR Eriaxt 'aal dubi salmatxi KUR Kurianini (Արք. ՁԿԵՈՒ V₅₋₆)=Եթիուենի յերկրի ոգնությամբ ի վերա Երիախի յերկրի պեցեցի՝ (նրա) դաշնակից (հպատակ) Կուրիանի յերկիրը»: Իսկ Kuriani յերկիրը մեր կարծիքով նույնն է ինչ վոր և վոմն Կուլիանիի յերկիրը (ըստ Կուլիջանի արձանագրության, Լենինականի մոտ): Երիախին բռնում էր այժմյան Շիրակը, Լենինականի շրջանը (ըստ Ղանլիջայի արձանագրության): Վոր 6 LU-šia ištiniie նշանակում է «վեց ցեղապետների ոգնությամբ» կամ KUR Etiunia ištiniie նշանակում է «Եթիուենի յերկրի ոգնությամբ», այդ մենք պաշտպանում ենք ^d Xaldia ištiniie «Խալզու ոգնությամբ» վոճի թարգմանությամբ վորը ըստ Ֆրիդրիխի այգրան նման է այլ հին լեզուների նման վոճին (հմմտ հին պարսից vašna Ahuramazdaya «շնորհիվ Որսուզգի»): Ինչպես անունում ենք, ուրարտական թագավորները հաշվի եյին նստում անդական մեծ և ազդու իշխանությունների հետ (Դիաու, Եթիուենի, Վիխիրուխի...), ի նկատի եյին առնում նրանց դիմազրական ուժը և այլն: Մեծամիտ և գոռոզ վոճը, վոր այդչափ հատուկ է ասսուրական¹ և ուրարտական ռազմական արձանագրու-

¹ Որինակ, Ասսուրնագիրբալը այսպես է նկարագրում մի ինչ վոր թիյա քաղաք գրավելու մասին. «Կովով և ճակատամարտով քաղաքի վրա հարձակվեցի, ատրեցի նրանց 3000 պատերազմող մարդկանց զենքով, յերկիր կոր-

թյուններին իհարկե միշտ չի համապատասխանում իրականության, այդ արձանագրությունների լեզուն պիտի հասկանալ վոչ միայն լեզվական այլև պատմական ճշտությամբ: Ուրարտական թագավորները վոչ միայն հաշվի եյին առնում անգական այդ ուժեղ իշխանությունները այլ հավանորին յերբեմն և անդացիներից փոխարքաներ նշանակում, ինչպես սյգ մասամբ կարող ե վկայել Պարբերդի շիջանում (Մեծկերտի արձանագրություն) Titia անունով և Լենինականի «Իշկիդուլու» շրջանում Sagaštar անունով փոխարքաներ նշանակելը, վորոնք ըստ իրենց անվան ուրարտացիք չեն թվում մեզ (Թիթիա-ն անդացի խուրրի եր, իսկ Շագաշտարը՝ իրանացի?)¹: Յեթև հավատանք ուրարտական արձանագրություններին, արշավանքներից հետո անդերում ել վոչինչ չպիտի մնա, քանի վոր տասնյակ հազար բնակչություն և մի քանի ասանյակ հազար ել անասուն եր քշվում տարվում դեպի Վան, իսկ յերբեմն մի Էրիախի կամ Արիլիանիխի մի տարում մի քանի անգամ եյին այդպես աուժում: Յերկրի անտեսության արմատական կործանում, դժվար թե ոգուտ բերեր հենց Ուրարտուի այդ գոռոզ աիրակալներին: Հաճախ փոքրիկ ապստամբությունները, մանավանդ լեռնային շրջաններում (Eriaxi Abilianixi և այլն), առիթ եյին հանդիսանում մեծ արշավանքների ու ամպաղղորդ հազորագրությունների:

Ուրարտուի մեծ պարաություններից հետո ինչպես այդ անդի ունեցալ Սարգուրի (Ա) և Ռուսա I-ի ժամանակ, անդական իշխանությունները և ցեղերը ապստամբում եյին, գոգարում եյին հարկ վճարելուց և այլն: Յերևի Սարգուրի կրած պարաությունից հետո Ուրարտուն կազմալուծվել եր վոր Ռու-

ժանեցի նրանց ավարը, ինչքը տավարը, նրանց վոչխորները տոա, շաա դերիներ կրակի մեջ այրեցի. շաա մարդիկ կենդանվույն ձեռք ձգեցի, վոմանց ձեռքերը և թևերը կտրեցի վոմանց քիթը—ականջները կտրեցր. շաա մարդ կանց աչքերը բրեցի (Սարգոնը այս կերպ նկարահանված ե գերինների աչքերը բրելիս), կենդանի յեղողներից աշաարակ կանգնեցրի. մեկ հաա ել կա ուսիններից կանգնեցրի: Մառերի վրա իրենց քաղաքի սահմաններում նրանց դուռները վարսեցի: Իրենց աղաներին ու աղջիկներին կրակի մեջ այրեցի: Քաղաքը ավերեցի, քանդեցի, հրով այրեցի վոչնչացրի (տես Լեո «Հայոց պատմություն», Թիֆլիզ, 1917, էջ 246 և այլն):

¹ Ուրարտուի հյուսիսային մասի (Արաքսի հովտում և այլն) իրանական անունների մասին մասնանշել եր դեռ Մարկվարտը Մենք այս մասին ավելի մանրամասն խոսում ենք մեր մի այլ աշխատության մեջ: «Историко-лингв значение топонимики др. Армении»:

սա 1-ը Քյուրանդոսի արձանագրության մեջ ասում է «յես այս յերկրները [Սևանի շուրջը] ընկճեցի (maguii) և ծառայեցրի» այն ինչ գրանք նվաճված են յեղել դեռ Սարգուրի որով, իսկ Արգիշտի 1-ը հասել էր մինչև Որդակլու: Նույնպես այդ Ռուսա 1-ը Նոր Բայազետի յուր արձանագրության մեջ շեշտում է «Վեղիքուխի յերկրի թագավորին նվաճեցի...», փոխարքա դրի, բերդ շինեցի. ., ի փառս Բիայնայի, ի սարսափ թշնամու յերկրին, Ռուսան...», վոր Բիայնայի յերկրները (նորից) ընդարձակեց» (aluše KUR Biainili nulduali): Այս բոլորը ցույց է տալիս, վոր անգահան իշխանությունները կամ ցեղերը այնքան էլ թուլացած չեյին լինում, ինչպես կարելի յե յեզրտակացնել արձանագրություններից: Լեռները վերջին հաշվով այդ կողմից դրական դեր էյին խաղում և փրկում շատ մեծ ու փոքր ժողովուրդների: Մինչև իսկ Մենուայի արձանագրություններում Եթիունի վորոշ ցեղեր կամ «թագավորներ» (Luša, Katarza, Viṭeruxi) ունեն այնպիսի մակդիրներ, ինչպես arnu'ali («բարձր, գերագույն») կամ zašili («բնիկ»), իսկ Դիաու ցեղադաշնակցությունը ունի tarai ածականը, վորը նշանակում է «հզոր» կամ «շատ» (usiadi 'Diauexiniedi KUR taraiuedi)¹: Դիաու իշխանության ղեկավար գերը մեզ հայտնի յե և XI դարից, յերբ Տիգլատպալսուար I ը արշավեց Նաիրի յերկրների (23 կամ 60) դեմ:

salmatxi aptini

Ուրարտական արձանագրությունները առլիս են յերկու բառ salmatxi և aptini վորոնք պատմա-քաղաքական նշանակություն ունեն: Առաջինը մենք թարգմանում ենք «դաշնակից, բարեկամ» կամ թերևս «յենթակա վասսալ», իսկ յերկրորդը՝ պատկանող: Որինակներն են — a) salmatxi KUR Btani KUR Xušani 'aal dubi andani KUR Tariuni (Խորխ Col. I₈) «դաշնակից Բիանի և Խուշանի յերկրները գցեցի ի վերա Տարիունի յերկրի» (= կցեցի Տարունին)², b) uštadi KUR Xatinātsie andani

¹ Չշփոթել Tariuni (=Տարուն) յերկրի հետ: Մենուայի Յագլի-աաշի (Արճեշի մոտ) այդ KUR taraiuedi մենք համարում ենք (-di հոլովով) նույն բառը, վոր տեսնում ենք և թագավորների տիազոսում (LUGAL taraiē=LUGAL DAN NU «թագավոր հզոր») և Կելիշինի արձանագրության tarae „viel բառի մեջ (=ասուր ma'dutu, տես Götze-յի մոտ ZA V էջ 108), կա և taraiuxi «մեծ» կամ «ուժեղ» (անասունի մասին է):

² Այդ Btani և Hosan տեղերը մենք տեսնում ենք այժմյան Նազիկ լճից դեպի արևմուտք, ուր դանվում է Հոսանան գյուղը: Այս լինում է արդեն Տարունի հյուսիսային մասը, մոտ Հարջին

1) Tuatexini KUR ni 'aaldubi salmatxi URU Melteani (Col II₁₅₋₁₆) «արշավեցի Խաթինա յերկրի ներսը (և) Թուաթե ցեղի յերկրի վրա գցեցի զաշնակից (ազգակից) Մելիտե քաղաքը», c) andani KUR Ugištini 'aaldubi salmatxi KUR Uusini (Col IV₅₅₋₅₆) «ի վերա Ուգիշտի յերկրի գցեցի զաշնակից (նրա) Ուսինի յերկիրը», d) KUR Eiumia istinie andani KUR Friaxi 'aaldubi salmatxi KUR Kurianini („Apx Экеп“ V₅₋₆) «Եթիուսի յերկրի ոգնությամբ ի վերա Երիախի յերկրի գցեցի (նրա) զաշնակից Կուրիանի յերկիրը»¹, Այդ Կուրիանի յերկիրը իրոք սահմանակից և ազգակից (զաշնակից) պիտի լիներ Երիախիին, վորն այժմյան Լևնինականի—Ղանլիջայի (Մարմաշենի) շրջանումն եր իսկ Կուրիանի մարդու յերկիրը հիշատակվում է վոչ շատ հեռու գտնվող այժմյան Կուրլիջան գյուղի շրջանում: Salmatxi բառը հիշատակվում է և ակկադական ընագրերում և թերևս ընդհանուր կուլտուրական բառ լինի սեմական ծագումով sim «խոնարհվել» արմատից, սակայն վերջին x1 մասնիկը ավելի շուտ ուրարտական և ուրարտյան ընդգծում:

Պակաս վորոշակի յե aptini բառը, վորը մոտավորապես կարող է նշանակել «պատկանող, յենթարկվող»: Որինակներն են— xaaituu [1 Šada'ali-Jexinini KUR nini URU Šuršili URU Tarxi gamani [URU .]turaani 1 Šada'alixiniliani aptini, [URU .-]llei ABNU karbie KUR Xatinaštaani aptini (Sayce XXXII₄₇) «գրավեցին (գործերը) Շադաալյան յերկրից Շուրիշիլի քաղաքը, Տարի իգամանի քաղաքը, -turaani քաղաքը Շադաալյան ցեղին պատկանող, (և) և- յի քաղաքը (ու) հողը Խաթինա յերկրին պատկանող»: Յերրորդ որինակն է տալիս Սևանի լճի Քյուլանդոանի մոտ գտնված Ռուսա 1-ի արձանագրությունը— «յես այս (=հաեյալ) յերկրները մեկ արշավանքում ընկճեցի, ծառայեցրի՝ Ազախունի, Վելիբուխի, Լուեխուխի, Արկուկինի, չորս թագավորներին՝ սրանց պատկանող ծովի շրջանում (4 LUGAL^{pl} inani aptini tsuinia), Հետո թվարկում է ևս 19 յերկրանուն (Երիմելի, Շանատուալյի, Տերիուխանի...), վորոնք՝ [19] LUGAL išani aptini tsuiniani KUR babania = 19 թագավորներին (— ցեղապետներին) իրենց (?) պատկանող ծովային՝ հարևան (?) յերկրներ (են)»: Յերրորդ գիտքը տա-

¹ Մենք առաջարկում ենք andan(i) բառը Պարզմանել «ի վերա, на, над»: Համեմատել խեթերեն andan „hinein“ (աես Sommer Eheloll, Papanikri, էջ 81):

լիս և Որդակուռի Արգիշտի I ի արձանագրությունը, ուր կարգում ենք՝ «գրավեցի Կիեխունի քաղաքը (և) յերկիրը, տիրեցի (kuṭubi) մինչև (pari) Իշաիկունիու քաղաքը iṣana (կամ KUR šana?)¹ aptini tsuunie (= սրան պատկանող, ծովյա?)», այսինքն՝ Կիեխունի քաղաքին պատկանող (և) ծովի (լճի) մոտ գտնվող: Kuṭubi «տիրեցի» ձևի փոխարեն գործ է տծվում և չեզոք բայի ձևով kuṭaiadi «տիրացայ» (մոտավոր թարգմանություն է): Ստուգաբանորեն aptini բառը մենք համարում ենք ածանցավոր -ini մասնիկով, նման tsu-ini «ծովյա», Xald-ini «Խալդյան»... ti ini «անուն» (ti- «ասել»), iṣpuu ini (հմմտ. iṣpuuiubi = կարգավորեցի?), իսկ apt «պատկանել, յենթարկվել» բայարմառը մենք համեմատում ենք խեթերեն hapat-ia «հպասակվել» և hapatiš «վաստալ» բառերի հետ:

ՀՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Յերբ այլևայլ յերկրներ վոչ միայն նվաճվում են այլև «իրավականորեն» ձեակերպվում, յուրացվում, ապա այդ արտահայտվում է «ծառայեցնելու» և հարկաավության միջոցներով, ինչպես և փոխար, ա կամ կուսակալ նշանակելով թերևս այդ արտահայտվում է վոչ միայն պարբերաբար (տմեն աարի) հարկ վճարելով, այլև մթերք, սնասուն և մսրդ հանձնելով: Բերենք արձանագրությունների տվյալները—

«2 թագավորներ ծառայեցրի w diadubi)՝ Շաշկի...յին .(և) Բարտուլխիս... կուսակալներ տեղում դրի, Դիաուեխի թագավորին ծառայեցրի (buraštubi) զցեցի հարկի տակ (aaldubi mešiu pii), վոր հարկ Արգիշտիին Դլատ խինին տա» (Սանդ. № 20¹⁵⁻²⁰):

«Լուշա յերկրի թ գավորին ծառայեցրի (wediadubi) Իգանի յերկիրը ծառայեցրի (buraštubi), թուրի ազատ տեղում հարկ Արգիշտիին տալու» (Սանդ. № 20³⁸⁻⁴⁰):

«Յեկավ իմ առաջ նիզին, թագավորը Վելիքուխի յերկրի, խոնարհվեց (?suluştibi), ծառայեցրի (buraštubi), հարկի տակ զցեցի՝ հարկ Սարգուրին տալու» («Арх Экеп» V¹⁹²):

¹ KUR" (= յերկիր) նշանը նման է „1“ հնչյունագրին և դրանք կարող եյին շփոթվել (պետք է ստուգել): Կա ի միջի այլոց նման բան և մի պակասավոր առողում „...bi-i šá-na ap-ti-i-ni“ (տես Sayce XI₂), վորը թերևս ճիշտ լինի բաժանել bi t šá-na ap ti-i-ni:

«Թագավորին Բուինի քաղաքի ժողովրդի ծառայեցրի (burashtubi¹, հարկի աակ գցեցի» (Sayce, № 45):

«Յես այս յերկրները մի արշավանքում ընկճեցի ծառայեցրի» (Քյոլանդուանի արձ.), վորոնց թվարկումից հետո Ռուսա I-ը ասում է mešini šali nunadi «հարկային աարին յեկա» այս բերգը կառուցեցի և այլն:

«Ուսուպուրշը, Թագավորը Դիաու աոհմի, յեկավ իմ առաջ բոնեց վոաքերս..., գցեցի հարկի աակ, ավեց վոսկի, արծաթ, տվեց հարկ» (Sayce XXX₁₂₋₁₇), վորից հետո գալիս է ali Lu¹⁴taš muše bedi manu biduni ibirani «ինչ(քան) պաասանգ (?)... նշանակված եր (manu) վերադարձրեց ժողովրդին (?)»:

«Յեկավ Մուրինի՛ն Աբիլիանի աոհմի («Աբեղենից»), բոնեց Սարգուրյան վոտքերը. ազաո թողի աեղում գցեցի հարկի աակ» („Арх Экеп“ III₃₆).

«Յեկավ Երքուայի յերկիրը (— ժողովուրդը), Լուխիունի քաղաքը..., գրավեցի Լուխիունի քաղաքը գցեցի Լուխիունի քաղաքը հարկի տակ» (Sayce XXXIV₈₋₁₄):

«Յեկավ Խիլարուադաս իմ ա աջ, խոնարհվեց, բոնեց վոաքերս ..., ստացա վոսկի, արծաթ, անասուն անոթեղեն (didgusi?), Բիայնա տարա, յենթարկելով (mani?) գցեցի հարկի աակ» (Sayce § 5¹)₂₀₋₂₆):

Համեմատել նաև՝ [meše] e ali mānu arubi Lu¹⁴xuradinaue (Sayce § XXXII₁₀) «հարկը, վոր նշանակված (եր) ս վեցի զինվորներին»

Այս բոլոր որինակներից ակներև է վոր յերբ «ծառայեցնում են» նվաճվող յերկրի պեաին, ապա այս նշանակում է վոր նրա վա զնում են վորոշ տարտավորություններ, այն է՝ ամեն տարի վորոշ քանակի հարկ վճարել, ինչպես և պարեն և թերևս զինվորացուներ: Այս բանի վրա առաջին անգամ ուշագրություն հրավիրեց հայասի խեթագետ և ուրարտագետ J Friedrich-ը, ասելով՝ «մարդ պիտի գրանից լավ յեղրակացնի վոր (L¹⁴)burashtubi-ն նշանակում է mešini p₁ aldubi- յին զուգահեռ բայց զեռ վոչ Գրս հեա նույն սուումը»¹: Բայց նույն յերևույթն ևնք աես-

¹ Տես Caucasia, Fasc. 8, էջ 149: „Man darf daraus wohl schliessen dass (L¹⁴)burashtubi eine dem mešini p₁ aldubi parallele, aber doch nicht mit ihm identische Handlung bezeichnet“, Բայց Ֆրիդրիխը այդ հոգվածում սխալում է յիր կարծում և լոր Քյոլանդուանի (Sayce § 55) արձանագրու-

նուժ, յերբ արձանագրություններն ասում են, թե յեկավ այս-ինչը, վոտքերիս փարվեց խոնարհվեց և այլն: Այդ «յեկավ» բայը (nunabi) համազոր է «յենթարկվեց» կամ «հպատակվեց» բովանդակությանը իսկ սրանից հետո ել ինչպես burasubi «ծառայեցրի» (տառացի՝ ստրկացրի) բայից հետո ավելացվում է հարկի տակ գցեցի (mešini pii 'aaldubi), և թվարկվում է հարկը և այլն: Կան և արձանագրություններ, ինչպես, որինակ, Ռուսա I ի՝ Նոր-Բայազետի արձանագրոթյունը ուր կարդում ենք «Վելիքուխի յերկրի թագավորին նվաճեցի ծառայեցրի» և այլն բայց չի ասվում հարկի տակ գցեցի: Մինչև իսկ Փրիդ-րիխը KUR ni edini tamxubi թարգմանում էր «յերկրից (նրան) հեռացրի», վոր կարծես թե հակասում է «ծառայեցնելուն»: մենք այդ նախագասությունը առաջարկում ենք թարգմանել «յերկի-րը (նորից) գրավեցի» (հմտ ալկադ. tamahlu „ergreifen“):

Շատ հետաքրքիր է ուրարտերենի 'aaldubi mešini-pii վոճը Վերջին (-pii = -pī) հետդիրի ճիշտ թարգմանությունը տվել է Փրիդրիխը, իսկ 'aaldubi «գցեցի» թարգմանությունը առաջարկում ենք մեր կողմից, ի նկատի ունենալով, վոր այլուր, այլ կապակցությունների մեջ պատահող (andani URU A 'aaldubi «ի վերա A քաղաքի գցեցի» = կցեցի Ա. քաղաքին) այդ 'aaldubi-ն կարելի յե նույն «գցել» բայով թարգմանել Յեվ յերկ-բորգ, այդ նույն վոճը և նույն «ծառայության» աղերսով մենք տեսնում ենք և հայոց հին գրականության մեջ շրեդ հարկաւ (ար-կօք) արկանել» վոճի մեջ Որինակ, ըստ Հայկազյան բառարանի կմտանանշեյինք — «զաշխարհն ի հարկի ծառայութեան կացուցին» կամ «արկ զնսսա Սուլտանն ընդ հարկօք ծառայութեան» և այլն: Սա ցույց է տալիս, վոր պետականության գերիշխանության (սուվերենիտետի) արտահայտությունը հին ցեղային, կիսասարկական — կիսաֆեոդալական միությունների («յերկրների») նկատմամբ յեղել է հարկ վճարելու միջոցով, կամ թերևս նաև՝ զին-վորացուներ ու սլարեն տրամադրելու միջոցով: Յեվ ի գուր չե վոր շատ արշավանքների հանրագումարում կարդում ենք, վոր այսքան յերիտասարգ այսքան սպասավոր, այսքան զինվորացուներ տարա վորոնց ընդհանուր դուժարը կոչվում է «(մեկ)

թյունը չունի burasub և mese (=հարկ) էտալրի աղերսը ի միջի այլոց մենք գեւ 1931 թվին ավել ենք meše բառի (=հարկ) ճիշտ լմաստը (տես մեր Chetto armeniaca, 19 8 ծան 1, ուր дашь գրոսսան սխալ ավել են день)

սարվա մառդիկ» (I^utaršuanu MU կս մ I^uUN^{pl}-rani MU) վորից հետո գալիս և այլևայլ կենդանիների թվարկումը:

Յերբ այդ հին ցեղային միությունները վեր են ածվել Ֆեոգալական հասարակությունների, իսկ ժողովուրդը հայացել և կորցնելով իրեն հին այլևայլ տեղական լեզուները տեղի տալով հայկական այլևայլ բարբառների, ապա նախկին «թագավորները» վեր են ածվել հայկական Ֆեոգալների (նախարարների) վորոնք նույնպես շարունակել են պահել իրենց կիսատնկալի պետական-տնտեսական և վարչական վորոշ ինքնուրույնությունը, հարկեր և գորքեր (հեծելազոր) տրամադրելով կինտրոնտկան իշխանությանը՝ հայ թագավորներին Ա,ս դեպքում ևս, ինչպես Ուրարտուի ժամանակ, հարկը և գորքը «ծառայության», այսինքն՝ քաղաքական կախվածության արտահայտությունն և յեղել սյուզերենի՝ հայ թագավորների հանդեպ Հայ Ֆեոգալը, այդ նախկին ցեղերի նահապետը, պահեց յուր տնտեսական և հասարակական դիրքը, վորպես իշխող դասակարգի ներկայացուցիչ՝ տախտավոր շինականի հանդեպ, ինչպես և քաղաքական-պետական դիրքը՝ կենտրոնական իշխանության հս դեպ

С О Б Р А Т О В А Н И Е М Е Р У М А Р К И Р О Т О С О Т Н Е С Е Н И Я Գ Ա Գ Ա Փ Ա Ր Ա Ն Ո Ս Ա Կ Ա Ն Յ Ե Վ Վ Ս Ճ Ա Յ Ի Ն Կ Ո Ղ Մ Ը

а) Կ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ր Մ Ի Ն Ո Ւ Ն Ո Ւ Ա Ն Ո Ւ Մ Տ Ա Յ Ն Ո Ւ Յ Ո Ւ Ն Ը

Յեթե Մհերյան Դուան արձանագրությունը մեզ տալիս և ուրարտական ամբողջ պանթեոնը յուր իշխանական յերարխիկ սանդուղքով, իրև արտացոլանք Ուրարտուի պատմա-հասարակական գոյացման յերկար պրոցեսի ապա այդ և մյուս արձանագրությունները առաջնությունը միշտ տալիս են Պալգին նրանով վոգեորվում ու նրանով բացատրում թե շինարարությունը և թե ռազմական հաջողությունները,¹ Գրեթե բոլոր արձանագրությունները իրենց ներածականում՝ հենց սկզբի բառերում՝

¹ Ինչ հայտնի յեն միայն Վանի Պոսրով-Չամի յերկու սալքարերի արձանագրությունները, վորտեղ Մենուա թագավորը այդ արձանագրությունը նվիրում և Տեյշերային և Պուտուինի սասժուն հանուն յուր և յուր վորդի Ինուս-

կամ նվիրվում են Խալդ աստծուն (Xaldie eurie «Խալդուն տիրոջը»), կամ «Խալդ հզորի (մեծի, վողորմածի...) միջոցով» թագավորները կառուցում են արշավում են և այլն: Յեթե ուրարտական թեոկրատիան դրսևորումն է ուրարտական ժողովրդի պատմական անցյալի, թեկուզ ցեղերի դաշնակցության կամ յենթարկության միջոցով, եւ չենք ասում դասակարգային, ամ միջդասային շերտավորումների դրսևորման մասին, վորը նույնպես կարող եր լինել¹, ապա Խալդ աստծու (մյուսների հանդեպ) րացարձակ տիրակալությունը մեզ կարող է վկայել ուրարտական կամ խալդ ցեղի վերին իշխող շերտի (թագավորական ղինաստիան, քրմեր, ազնվականություն և թերևս բարձր ղինավորականություն, յեթե վերջինս տռանձնացած եր) քաղաքական առաջնությունը Համեմատիր— «Խալդը և լեզուների (ցեղերի, ժողովուրդների) աստվածները» վոճը Մհերյան Դոան արձանագրության մեջ: Իսկ վոր ուրարտացիք ունեյին սարուկների հոծ մասսա, այդ ևս կասկածից դուրս է, և այդ տեսակետից հեռաքրքիր է, ինչ է արտահայտում «DINGIR¹ še kluraše «ղեանի (սանդարամետի) աստվածներ» ասույթը, չունի՞ արդյոք վորևե փոխաբերական իմաստ:

Իրազմական մեծ արձանագրությունները՝ գրեթե իրենց կեսը զբաղեցնում են Խալդով «Խալդը արշավեց յուր ղինանշոզ (maslne ⁶ šxurle)², նվաճեց A յերկիրը, B յերկիրը, մատուցեց (teḫuni կամ tekuali) Արգիշտու (կամ Մարդուրի կամ Մենուայլ) առաջ: Խալդը kuruni (յաղթող?) է Խալդյան ղինանիշը kuruni յե: Խալդյան փառքով (զորությամբ, կամքով...) արշավեց Արգիշտին Մենուայլի վորդին (կամ այլ թագավոր), առաջնորդեց Խալդը: Արգիշտին ասում է նվաճեցի A յերկիրը, B, յերկիրը...»

պուայի առողջության (ulguse), ուրախության (pitsuše) և մեծության (alsui še): Ինուսա I թագավորը Քյուլանդասնի յուր արձանագրությունը սկսում է «Խալդ տիրոջ շնորհիվ...», բայց կառուցված բերդը կոչում է ջրի (ի նկատի ունենալով Սևանա լիճը) և տարերքի աստված Տեյշերայի անունով: Թերևս այդ այսպիսի սակավ դեպքեր էլ լինեն:

¹ Թերևս Խալդը կամ դուցե և Տեյշերա ու Արգիշտի աստվածները տրտացուի են սկզբում ցեղեր, բայց հետագայում՝ այդ ցեղերի ազնվական-քրմական բարձր դասակարգը, նման արիացիների մարիաննի դասակարգին, վոր իշխողն էր Հնդկաստանում, Իրանում ու Հին Արևելքի արիական ժողովուրդների իշխող շերտում (Միասննի, Սյուրիա...):

² Այդպես ենք առաջարկում թարգմանել ա սջ թարգմանվում էր այուր հզորությամբ»:

այսքան քաղաք վերցրի, ավերեցի, քանդեցի, այսքան ձի, տավար, վոչխար տարա, այսքան այր, կին, յերիտասարդ, յերկիրը իմ յերկրին կցեցի...» և այլն: Այստեղ Քալդը արշավում և գրավում է նույնը, ինչ վոր քիչ հետո թագավորը: Առաջին մասը, վոր վերաբերում է Քալդուն, մի տեսակ ներածական է, կամ գուցե ավելի լավ ասած, մի տեսակ վերնագիր է թագավորի կողմից հետագա ճիշտ նկարագրվելիքի համար: Այդ տեսակ գրվածքին նախորդում է հաճախ՝ «ազոթեցի Քալդ տիրոջը Տեյշերային, Արդինուն, աստվածներին Բիայնայի, տիրական (իշխանական) մեծությամբ ապահովեցի(?) աստվածները ինձ ընդառաջեցին», և յերբեմն ավելացվում է՝ «ինձ համար ստեղծեցին ճանապարհ (= արշավուղի)»: Այդ տեսակ արշավանքները, յեթե մի տարումն են կատարվել, ելի Քալդով են վերջանում՝ «Քալդու ոգնությամբ այս գործերը մի տարում կատարեցի»:

Յեթե այս «խալդամուրությունը» չլիներ, մենք կլինապատիկ տեղ կունենայինք արձանագրությունների մեջ այլ գեպքերի կոնկրետ նկարագրության համար: Աստուրա-բաբելական կամ հինց հիթիտյան (խեթական) արձանագրությունները չունեն այսպիսի աստվածամուրություն: Ուրարտական արձանագրությունները ունեն և ուրիշ առանձնահատկություն, վոր հետո ընդորինակվել է հին պարսից թագավորների (Դարեհ, Քսերքս և այլն) կողմից այդ տյն է վոր թագավորը յուր բուն արշավանքը կամ այլ բան (վոչ ռազմական արձանագրություններում) նկարագրելիս՝ միշտ ասում է՝ «Արդիշտին (Սարգուրը, Մենուան, Ռուսան) ասում է (alie = alē)...», վոր շատ հաճախ է կրկնվում. այդ ձեռ նույնպես հատուկ չե աստուրա-բաբելական արձանագրություններին:

Մեծ շինարարական և յերբեմն ուղակական (որինակ, Խորխորյան) արձանագրությունները վերջանում են «անեծքի ֆորմալայով», վել այսպես է լրիլ ձևով՝ «ով այս արձանագրությունը ջարդի, ով փչացնի ով փշրի (ipxulie), ով ջուրը գցի¹, ով հողին հանձնե (= հողով ծածկե), ով ուրիշին դրդե (inilidulie) ով տեղահան անե, ով ասլ՝ «յես եմ կառուցել [այս ինչ բերդը, ջրանցքը]» և այլն, կամ «յես եմ նվաճել [այս ինչ քաղաքը], ով մի ուրիշին ասե «գնա ջարդի», Խալդը, Տեյշերան, Արդինի աստվածները թող այդ փնասարալին (վոճրագործին) նվիրեն դա-

¹ Ուր. xuš ulie (|| hos ul e հնչմամբ) բոյաձեղ («գցի») ունի x s || ho արևաքը, վոր կա և հին հայերենում՝ հոսել «ցած դցել» իմաստով:

տաստանին (mani ^d UTU-kai)¹, և անունը, և սերունդը և ունեցվածքը (?) վոչնչացնեն», (=avle ululie) կամ այլուր՝ «հողին հանձնեն»:

Թագավորները իրենց տիպոսներն անգամ թալգով են բացատրում՝ «Պալդյան մեծությամբ Մենուան Իշպուինի վորդին, հզոր թագավոր ե, մեծ թագավոր ե, թագավոր թագս վորների»: Իշխանը Տուշպա-քաղաքի»:

Յերբեմն ել պատահում ե այսպիսի դսրձվածք «Պալդն ինձ թագավորություն տվեց, ստանձնեցի հայրական թագավորությունը» (=հոր տեղ իշխանությունը) կամ «Պալդը ինձ դահի վրա նսանցրեց»:

Վորոշ վոճեր ու ձևեր յերբեմն նմանեցնում են ասուրականը ինչպես՝ 1 որում այսքան յերկիր (քաղաքներ, ...) գրավեցի, կամ, որինակ՝ Պալդն առջևից եր գնում (ուղի եր ցույց տալիս, Xaldini uluštaibi)² և այլն, թող թե անեծքի Փորձուլայի նմանությունը (մանավանդ Չվարթնոցինը կամ Կելիշինինը) այդ ասուրականի հետ:

«Աստվածային» վոճը իհարկե հատուկ եր բոլոր հին լեզուներին³, Կրոնը և մնտախապաշտությունները գերիլ եյին մարդկանց, և բարձր խավերը այդ ոգտագործում եյին, ի սպաս ունենալով քրմերի շատ ու շատ գտսեր (համեմատել՝ բուբելացոց ba ru — գուշակներ zammaru — յերգիչներ pašitu — ոճյախներ, ašipu — թովիչներ և այլն)⁴, Հավանորեն ուրարագիք ևս ունեցել են քրմական դաս յուր ստորարածանյակներով վորը մենք յեն-

¹ Այդպես ենք մենք առաջարկում թարգմանել այդ յերկու բառերը, ի նկատի ունենալով, վոր manni այլուր անվիրել, շնորհել, հանձնել թարգմանությամբ հաջող ե դուրս գալիս, իսկ ^d UTU, իրի արևի աստված, եր միաժամանակ և արդարության աստված (որինակ Պամմուրայիի որենք ները նվիրվում են Շամաշին, վերջինիս քանդակով, Շոշ քաղաքում):

² Այդպես հիշա բացատրեց Job Friedrich-ը:

³ Համեմատիր մեր ժողովրդի մեջ դեռ մնացած «բարե-Ասուր բարին» «գրողը լանիզ», «գրողը կաշի յերեսիդ...», «դիվատես», «ջրհաննամն եթամ» «ըն դուճելի մատող ընի», և այլն: Այդ վերջինի համար համեմատել շարաթվա որերի նշանակությունը բաբելացիների մոտ... Третий день посвящен Мардуку и Зарпанит. Благоприятный. Вечером царь прин сит жертвы Мардуку и Истар и совершает возлияние. Воздеяние рук его бог принимает» (տես Ե. Կուրաև, Ист др. Вост ч I, էջ 137): Ընդգծուվը մերն ե:

⁴ Իսկ բուբլը կոչվում ե առանձին šangu կամ nissaku (տես Տուրակի նույն գրքում, էջ 135):

Թագրում ենք Արմավերի մե պակասավոր արձանագրությունից (գտնվել է 2 քար, իսկ մեջտեղինը կորած է) այդանգ կարդում ենք „20 ku ur-ni LuŠēluinie կամ Թերևս LUGAL kurni LuŠ “ ալսինքն՝ «20 քրմեր(?) Շելուինի մարդկանցից (= սոհմից)» կամ «Թագավորական քրմեր(?) Շելուինի մարդկանցից»։ հետո կարդում ենք „LuUrbikaše“, վոր մենք Թարգմանում ենք «զեղող (քուրմ), возлиятель» LuPurunurda (= ?), «1 nunulie», «1 ixaiduše», «2 xupadu» անհայտ նշանակությամբ (տես Sayce LXVIII, LIV): Արդյոք, սրանք քրմական դասին չե՞ն պատկանում:

Չեն նշմարվում գուշակություններ (omina) վոր այդքան հատուկ էին հին ժամանակ, Թերևս զոհարերություններից հետո հիշվող mei ešimetsi elmuše manuni հենց դրան վերաբերի [«ե e imetzi (և) գուշակություն սահմանեցին (կատարել)»]: Անասուններ զոհարերելուց բացի կար է գինիով զեղում (ВОЗЛИЯНИЕ, meš կամ tan արմատից) կար է թշնամի մարդկանց կրակով վառելը, իրրե Տեյեբային զոհ¹:

Պալդի կուլտը այնքան բարձր էր Ուրարտուի Թագավորների համար, վոր յերբ Ռուսա 1-ը լսում է Մուսասիրի Պալդի ատճարի ավերումը և աստծու ու Թագավորների արձանների հափշտակումը, անձնատապան է լինում, Թեպետ այսանգ կարող էր լինել և կիմմերների հարվածի ճնշիչ տպավորությունը Ռուսայի վրա (ըստ Lehmann-Haupt-ի):

Հետսքրքիր է, վոր ուրարտական Թագավոր Սարդուրի, Լուաիպրու վորդու, հնագույն արձանագրությունը՝ գրված աստուրերեն՝ չի տալիս Պալդ աստծու անունը, այնինչ գրա վորդի Իշպուինիի (Կելիշինի Մհերյան Դուան և տյն) ուրարտական լեզվով արձանագրությունները հագեցված են «խալդիզմով»: Ուշագրության տրժանի պիտի լինի Թերևս ինչպես մենք շեշտել ենք, վոր kar «գրավել-նվաճել» բայը ավելի շատ է վերտղըրվում Պալդուն, քան Թագավորներին, վորոնց բայն է xau . հմմա euրi «տեր, господь» (Պալդու մասին) և alusi «տեր, իշխան, владыко» (Թագավորների մասին) Թեպետ յերբեմն, հազվա-

¹ Սարդուրն ասում է ali LuUNpı Oššurginikamı kuluturšibi šatumı (անհասկանալի)․ Ուշկիանի յերկիրը, Բամիի յերկիրը ցրեցի, կոտորեցի, ali pı kuluturšibi d TEIŠEBA še KIBII -di, «իսկ վոմանց... Տեյեբան այրեց» (տես Арх. Эксп. в Ван, 1916 г., V26-28):

գյուտ դեպքերում, այդ բայերի «աստվածյան» կամ «թագավորյան» սահմանադժուժը խախտվում է:

Մենք արդեն ասացինք, թե վորքան ընդհանուր հին վոճ է «Աստժո ոգնությամբ», «Աստժո գորությամբ» «Կամաւն Այ» (հմմտ Xaldinini baušini «Խալդու խոսքով») և այլն, վոր հատուկ էր շատ լեզուների¹ և վորք մտել է (ի՞նչ ճանապարհով) և հայ արձանագրությունների մեջ: Նմանապես՝ անեծքի ֆորմուլան²: Ուշագրավ է, վոր հայերը իրենց խաչքարերն անգամ, պատվանդանով և կոթողի սուր ծայրով (ոուսերեն՝ ՍՊՈ), ընգորինակել են ուրարտական այդ արձանաքարեր-կոթողներից՝ («pulusi»-ներից)

б) ՌԱՋՍԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՈԼՈԳԻԱՆ ՅԵՎ ԻԳԵՆՈԼՈԳԻԱՆ

Ուրարտական հզոր թագավորները, վորպես հին արևելքի բռնապետներ, վոչնչով յետ չեյին մնում իրենց վայրագություններով Ասորեստանի գոռոզ Սարգոններից, Սալմանասարներից և այլն: Նրանք ևս իրենց դիրքին պատշաճ գործ են ածում ահագնազորդ ֆրագեոլոգիա հազարավոր մարդկանց խոզխողումով կամ այրումով, գյուղերի ու քաղաքների կործանումով և այլն: Ասորեստանի Սալմանասար III թագավորը, որինակ, հետևյալ կերպ է նկարագրում յուր ընդհարումը ուրարտացի Արամե թագավորի հետ (տես Լեո, Հայոց պատմ., Թիֆլիս, 1917, էջ 257—258) «Ուրարտացի Արամէն հզոր զինուցս սաստկութենէն և ուժգին ճտկատամարաէն զարհուրեցաւ իւր քաղաքն թողուց Ազդուրի երկիրն, լերանց վրայ ելաւ: Անոր ետեէն լերանց վրայ ելա, լերանց մեջ սաստիկ պատերազմ տուի, 3400-ի նրա պատերազմողաց զինուք նկուն արի: Ռամմանի նման անոնց վրայ վոթորիկ տեղացուցի, անոնց լեռն տարի պէս ներկեցի, անոր բանակատեղն առի, անոր մարտակառքերը, հեծեալները, ձիերը, ջորիները, հորթերը գոյքը, կոզոպուտն ու հարուսա ինչքը լեռներէն առի տարի Արամէ առ ի զերծուցանել զիւր կեանս դժուա-

¹ Համեմատիր ասուրական ina rišule ša ilu Šamaš „unter der Bethülfe des Šamaš („unterstützt von Š.“) կամ ina icnēni ilu Xaldi «mit der Gnade des Xaldi» (=ուրարտ. d Xaldinini ušgini կամ Կելիշինի d Aldinini ušgini):

² Հայ արձանագրությունների սովորական անեծքն է «ՅԻՑ Կայրապետ հերի կողմից թող գատապարավի»:

րին լերան մը վրայ ելած էր: Իմ առնի զօրութեամբս իւր երկիրը վայրի ցլու մը պէս առաջուր կոխեցի, իւր քաղաքները աւերակ գարձուցի. ղԱրգասկու՝ քաղաքօք իւրոց վիճակին՝ տւերեցի, քանդեցի, հրով այրեցի Անոր գոան առջեր կառափունքէ կոթող կանգնեցի: Զոմանս կենդանւոյն գերաններէն կախեցի և զոմանս գերաններուն բոլորաիքը ցիցերու վարսեցի»:

Ուրարտական թագավորները ևս յետ չեյին մնում նման ռազմատուտական վոճից: Որինակ, Սարգուրը նկարագրելով յուր արշավանքը Սեանա լճի հարավային ափի շուրջը ասում է «Արշավեցի Արգուկյան յերկիրը [= այժմյան Զաղալույի շրջանը], նվաճեցի Արգուկյան յերկիրը, Աղախունի յերկիրը [= այժմյան Քյուլանդունի շրջանը], Լուխարունի յերկիրը, Եշումուայի յերկիրը, Քամ(ա)նիուի յերկիրը Կուալրանի յերկիրը, Ուխունինի յերկիրը, Թերիանի յերկիրը 20 բիրգ ամրացված վիճակում կռվով գրավեցի, 120 քաղաք 60 որում վոչնչացրի (ašgubi), բերգերը քանդեցի (ավերեցի) քաղաքները վառեցի (amaštubi), յերկիրը կերա (atubi), այր և կին այստեղից տեղափոխեցի [Վան]: Սարգուրն ասում է—գրոշների առջեից մարդկանց kulutursibi šatu ni (= ?), Ուշկիանի և Բամնի յերկիրը ցրեցի (?), կոտորեցի, վորոշ (alipi?) kulutursibi Տեյլերա աստվածը վառեց, Սարգուրն ասում է—հավելյալ տղամարդկանց և կանանց զորքերին տվի [վորսկես սարուկ ծ սուայիլու]: Սարգուրն ասում է—վոր մարդկանց գերի յես այստեղ դարձրի (այն է՝) 10000 տղա (յերիասասարդ) տարա, 4600 մարդ քշեցի, 23200 կին [քշեցի], ընդամենը 378000 մարդ, վոմանց սպանեցի, վոմանց կենդանի տարա [Վան] 3500 ձի 40380 յեզ (կով), 214700 վոչխար»¹:

Յեթե հավատանք այսչափ գերության և կենդանիների ավարի թվին, ապա յերևի տեղում ել վոչինչ չպիտի մնար: Իսկ ուրարտական թագավորները հաճախ եյին կրկնում իրենց արշավանքները դեպի միևնույն անդերը տանելով ամեն անգամ այդչափ գերի և ավար: Որինակ, հենց այդ նույն Արգուկի, Քամանի, Լուերունի և չորրորդ՝ չհիշատակ լած Ուղուրի-Եթիունյան թագավորների նվաճման մասին խոսում է նույն Սարգուրը յուր III արձանագրության մեջ (առդեր 45—52)², Կամ թե, որի-

¹ Տես Սարգուրյան V արձանագրությունը («Археол Эксп ԿՂ 53 առդեր 22—31): Քարգմանությունը մերն է

² Տես նույն տեղում, ԿՂ 49:

նակ, Մարդուրը մի տարվա մեջ արշավում է Մանա և Երիախի յերկրները վերջինում նա վերցնում է բազմաթիվ գերիններ (8153 հոգի) և ավար (4112 ձի, 6665 յեզ ու կով, 25735 վոչխար), իսկ մի այլ անգամ նա նկարագրում է արշավանք դեպի Աբիլիանիխի և Երիախի յերկրները գրավելով վերջինը մեկ որում և վերցնելով 150 թագստոցներ (?), տղամարդկանց և կանանց, տավար և didguš և այստեղից տեղափոխելով վան քաղաքները վառելով, յերկիրը շուտելով» և այլն (տես նրա I և II արձան „Арх Экеп.“ I²⁰⁻⁴⁷, II²⁵⁻³⁴): Երիախից վերադառնալով նա նվաճում է Աբիլիանիխի յերկիրը յուր Մուրինի թագավորով, վերջինիս հարկատու դարձնելով և վերցնելով 7150 գերի 500 ձի, 7560 յեզ ու կով, 25110 վոչխար և թողնելով, վոր դորը յուր համար ել «հավելյալ» (šeri) ավար վերցնի. իսկ այդ նույն Աբիլիանիխի յերկիրը նա թալանում է և այլ ասրում (տես նրա V արձան., տող 15) Ի միջի այլոց նա Երիախին գրավում և տարագրում է ժողովրդին յերրորդ անգամ (V արձան., տող 12—13): Երիախին—այժմյան Լենինականի շրջանն է, իսկ Աբիլիանիխին—Արաքսի ձախ ամին եր, Կազգվանի դիմաց (մոտավորապես):

Կան շատ ուղղակի անուններ, ինչպիսիք—uštabi «արշավեցի», xaubi «գրավեցի, վերցրի», karubi «նվաճեցի», suui dubi «զրավեցի, վերցրի»¹, Ջորքի համար ունենք xuradi, վորը կա և ասուրերենում (kuratu) և asi (A.SI), վորը համարվում է խուր ըիաներեն: Վորպես դորքի մականուններ ունենք—surxani (= սրխարալի կամ վարձկան?) և tarnuni (արի, քաջ?): «Ջորք հավաքել» կամ «գորահավաք անել» արտահայտվում է kuei dan(uubi), nik-(ul), veli - du(bi): «Կսիվ» կամ «մարտ» իմաստն է տալիս gunuše բառը, վորից gunušini «մարտիկ, զինվորական»: Կան նաև հետևյալ ուղղակի անունները՝ edini tašmuubi «կալանավորեցի»(?), վորից և tašmuše «կալանավոր» կամ «պատանդ»

¹ Բայց վոչ թե «հաղթեցի», ինչպիսի թարգմանում է J. Friedrich ը, քանի վոր կա՝ ևս այս արձանագրությունը—քարը տեղից sūi-dulle=վերցնի:

² Որինակ 1 Xaxāni LUGAL KUR Xušaalxi LúUN³l-rani | edini taašmuub parubi eirtsu du[bi] | KUR ebaniukie (Арх Экеп. II³⁻⁴)=Պախալին, Պուշայական ժողովրդի թագավորին, կալանավորեցի, տարա, արձակեցի իմ (uki) յերկրում: Բայց կա և «150 Ê murili xaubi taašmuubi (ibid II³¹)=150 թագստոցներ(?) յեւ վերցրի բռնագրավեցի

(ըստ Ֆրիդրիխի) edini taamxubi (որինակ, նոր-Բայազետի արձան KUR-ու edini taamxubi), վորի իմաստը պարզ չե, edini sutukubi («2 թագավորներ» որյեկտով) burastubi «սարկացրի > ծառայեցրի», magubi (= ընկճեցի?), amastubi «վտռեցի», atubi «կերա», xarxaršubi «քանդեցի, ավերեցի», a gubi («յերկիր» որյեկտով) = վոչնչացրի (?), nuistubi (= ?), nuuldubi «ընդարձակեցի», zašgubi «սպանեցի» (մարդկանց), parubi «քշեցի, տարա», agubi «աարա (մարդկանց), անց կացրի (Չրմուզ)», tuxi «գերի» (?), agununi «ամրացրած» (բերդ, քաղաք), և այլն և այլն:

Շատ բնորոշ է Ճամանակի դադափարախոսության տեսակետից «յերկիրը կերա (= կլանեցի)» վոճը, վոր գրեթե միշտ գործ է ածվում յերկիրը գրավելուց հետո: Այդ վոճը, ինչպես ցույց է տալիս Ֆրիդրիխը, կա և ուրիշ հին լեզուներում: Բայց հետաքրքիր է թե ինչպես այդ կամ նման վոճը փոխել է յուր իմաստը մեր միջնադարում, ֆեոդալական դադափարախոսության մեջ: Համեմատիր, որինակ, Ս Որբելյանի մոտ հետևյալ տեղերը — «եւ յայսմհետև իշխան ես դու, Տէր Գուրիթ՝ Սիւնեաց եպիսկոպոս, .. զայդ շէնդ [«Նորաշինիկ ի Կովսական դաւառի»] ուտել և վայելել, պահել և ունել, գնոյ տալ և գրաւական դնել...» (տես նրա՝ Պատմ եջ 210 տես և նույն վոճը 219 և 270 եջերում): Բայց այլ առումով է այդ «ուտել» բայը, որինակ Փալսաոսի մոտ — «եւ համակ գերկիրս Հայոց դոցա [— Մամիկոնէից] է կերեալ, մանաւանդ Մուշեղի» (տես Ք. Պատկանյանի հրատ., եջ 199):

Հետաքրքրական ուղղական մոտիվներ ենք տեսնում ուրարտական թագավորների տիտղոսում: Դեռ Սարգուր Լ-ը, Լուտիպրիի վորդին, իրեն հորջորջում է յուր ասորեբն գրած տախտակում — «թագավոր մեծ, թագավոր հզոր, թագավոր աշխարհի («բազմությանց»), թագավոր յերկրի Նաիրի, թագավոր իրեն վոսոխ չունեցող («ոսոխ նմա վոչ գտաւ»), սքանչելի հովիվ չվախեցող ընդդիմությունից, թագավոր նվաճող իր անհնազանդներին Սարգուրը, Լուտիպրիի վորդին թագավոր թագավորների...»: Համեմատել այս պայմաններում հայոց միջնադարյան իշխանների կամ թագավորների նման արտահայտությունները — որինակ, Գագիկ Լ-ը յուր շինած յեկեղեցու (սուրբ Գրիգոր) մակետի տակ Անիում իրեն հորջորջում էր «արքայից արքայ», համեմատել նաև Ուզուզլիի մի արձանագրության (1001 թվին արած) հետևյալ սկիզբը — «ես Այոտ, իշխանաց իշխան, որդի

Գէորգայ..., տուն քոջի և պտտերուզմոդի. » (աես Կ Կոստանյան, Վիճական տս ըեզիրք, հջ 12), Ուրարտական թագավորները իրենց հզորութեան շրջանում միշտ ել բարձր վոճ եյին պահում իրենց ախողոսում, ինչպես «Թագավոր մեծ, Թագավոր հզոր, Թագավոր Թագավորների» և այլն: Վերջին թույլ թագավորներն անգամ շարունակում եյին իրենց կոչել «Թագավոր հզոր, Թագավոր (և) տեր Տուշպա քաղաքի» ինչպես կարդում ենք Ռուստ Երմենյանի վահանի վրա, վորը գտնվել է Թոփրակ-կալեյում (Վան):

Ուրարտական արձանագրությունները դժբախտաբար չեն նշում այլևայլ ռազմական բառեր ու վոճեր, վորոնք անշուշտ յեղել են, ինչպես—սաղաւարա, տէգ, նեա, նիգակ, նեակ, հրամանատար (հմմա. ասսուրական «աուերան» հորջորջմամբ սպարապետին), հեծյալ, մարտականք, վրան և այլն: Կա յերկու բառ միայն, վոր կարող են մասնագիտական ռազմական աերմին լինել—¹awerašil ki danubi KUR AŠŠUR suu-dūbi (Xopx Col III₃₀), «ոժանդակ գորքեր (?) յես կազմեցի, յերկիրն Ասսուրեստան գրավեցի» կամ «uštadi^{Lu}veli zūsinie KUR Velikunigidi (Արք ՅԿ V₁₆₋₁₇)—յես արշավեցի մեկ գնդով Վելիքունի յերկրները»: Veli «գունդ դումարտակ» բառի համար հմմա. գեւզ gewl բառի geł արմատը (սեռ հոլ. —գեղ-ջ), սաացված *vel-ից, ինչպես իրաներենում gund «գունտ, գումարտակ» բառը նշանակում է նաև «գյուղ» (Ջունդ-ի-Շապուհ) համեմատել քրդերին gund «գյուղ»: Veli «գունդ» (полк) թարգմանությունը տվել է Մառը, իսկ awerašili (ուր «li» —հոգն հայց. հոլովի նշանն է) «ոժանդակ գորքեր» Սեյսինն է թեպետ այդ արվում էր հարցականով:

Յ Ե Ր Ր Ո Ր Կ Մ Ա Ս

ՈՒՐԱՐՏՈՒԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

I Ն Ա Ի Ր Ի

Այս հատվածում մենք անփոփակի նկատագրելու յենք արձանագրություններից այն բոլորը, ինչ վերաբերում է վա նի թագավորության գոյացմանը և տարածմանը, այն ամենը, ինչ վոր նրա քաղաքական եքսպանսիային է վերաբերում, նրա նվաճումներն է թվարկում և այլն: Արձանագրությունների այս «արտաքին» կողմը կապված նրանց ներքին բովանդակության արտահայտության հետ (ուրարացիների ծագումը, կրոնը, լեզու, մատերիել և հոգեկան վոդյ կուլտուրան) ինչպես և նյութական կուլտուրայի մնացորդների և արտաքին աղբյուրների (ասսուրական արձանագրությունների տվյալները) ուսումնասիրության հետ միասին մեզ լիակատար հնարավորություն կոս Ուրարտուի պատմությունը հասկանալու:

Առաջին ուրարտական թագավորը վոր իրեն կոչում է Նաիրիի թագավոր և հիմնավորվել էր վան քաղաքում (ուրարտ. T ušpa-յուն), դա Սարգուրը, Լուտուպրիի վորդին էր: Նա թողել է ասսուրական լեզվով մի արձանագրություն (յերկու, անգամ գրված) վանա բերդում («Sardurburg»-ում ըստ Լեհմաննի), ուր բերում է յուր ախտոսը (աես վերը էջ 124) և ավելացնում է, վոր՝ «յես քարերն այս Ալնիուսու քաղաքի միջից փոխադրեցի, յես բերդ այսանդ շինեցի» (anaku pulani annute ištu libbi ALU Alniunu nahaku anaku dur annišam artišip): Իններորդ դարի վերջից (Սարգուրը I-ը յեղել է 835—820 թ Քր առաջ) արդեն սկսվում է Ուրարտական տետության վանյան շրջանը, վորը Մենուա Իշպուին, Արգիշտի Սարգուր (II) և Ռուսա I թագավորների որով ապրում է յուր վերելքը (մինչև Ռուսա I-ի մահը 714 թվին): Այդ տևում է ինչպես տեսնում ենք, շուրջ հարյուր տարի: Իհարկե կտ նախորդ, այսպես ասած նախապատաստական շրջանը և հաջորդ շրջանը, վորն յեղել է Ուրարտուի

և ուրարտացիների թուլացման և անհետացման վերջին ժամանակաշրջան: Ուրարտուի պատմության նախնական շրջանը վորոշակիորեն կապվում է այն ժամանակի հետ, յերբ ուրարտական ցեղերը դեռ հասարակայնորեն շերտավորված չլինելով դրավում էին վանա լճից դեպի արևելք ընկած ասրածությունները (մոտավորապես Տարսն Տուրուբերանի շրջաններում), չհաշվելով դրան թերևս նախորդող Ուրուատրիի կամ Մուսասիրի հետ կապված ժամանակը: Կարելի չէ ընդունել նախնական թափառական այդ ururda, xald, կամ taur-ցեղերի առկայությունը միանգամից թե Տիգրիսից հարավ այն ե՛ Ջաբի կամ Խարուրի հովտում (?) ինչպես և Ուրուատրիի շրջանում (և Մուսասիրի շրջանը?) և թե այդ արևմտյան Տիգրիսի և Արածանիի միջև ընկած շրջաններում մասնավորապես Տարսնում: Կասկած չկա, վոր «նայիրյան» կամ «ուրարտական» (ալարոդիական) այդ ցեղերը Ասսուրեստանի հզորացման և ճնշման (շահագործման) հետ համընթաց պիտի հետզհետե տեղի տային և հեռանային դեպի ավելի ապահով հյուսիսը և լեռները (Ուրարտու = Արարադ | Արարատ տերմինը աշխարհագրորեն համանիշ էր Ասորիքի աափասաանից վեր ընկած լեռնատարածության, գլխավորապես հայկական Տավրոսին)¹: Յեթե ընդունենք, վոր ուրուատրեցիք դադարեցին հյուսիս այն ժամանակ նրանք Ջեզիրեյի իրն Ոմարից արևելք դանվող Խարուր-սու դետահովտի շրջանից («Uruatri») պիտի բարձրանային Տիգրիսով ու այժմյան Բիթլիսի գետով և մտնեյին Տարսն, այսինքն պիտի անցնեյին այժմյան Խարզան և Շիրվան շրջանների միջև, հետո Բիթլիսի մոտով: Այժմ էլ Ջեզիրե իրն Ոմար քաղաքից քիչ արևելք հիշատակվում է «Ջուդի լեռներ», ուր ասորական և արաբական ավանդությունների համաձայն դադար է առել ջրհեղեղից հետո նոյան տապանը հենց այդ վավառն էլ անշուշտ յեղել է Uruatri-ն, մանավանդ վոր ըստ Աստվածաշնչի Արարատ (=Urartu || Uruatri) անվան հետ է կապվում այդ տաապելը: Uruatri յերկիրը, վորը գտնվում էր այս մասնանշված շրջանում (ըստ Ե Ֆորբերի), առաջին անգամ հիշատակվում է Ասսուրեստանի Սալմանասար I (1266—1243) թա-

¹ Աստվածաշնչի մեջ հիշատակվող Արարատը այդ լեռնաշխարհի հետ է կապված և վոչ թե մեր այժմյան Մասիս ստրի հետ: Նոյեան տապանը կանգնում է ըի լերին Արբատայու Հմմտ նաև—«Պատուէր տուք յինէն Արարատեան թագաւորութեան և Ասքանազեան գնդին», վորով ոգնության են կանչվում ուրարտացիք և սկյութացիք (aškuz ները):

Թավորի կողմից, վորն այգտեզ 51 քաղաք և ավերում և այդ յերկիրն ու շրջանները Յ որում վերագրավում:

Մեզ այստեղ ի հարկե պիտի հետաքրքրի վոչ թե Urartu ան վան և ժողովրդի այդ ծագումը, կապված Սալմանասար I-ի այդ Uruatri-յի հետ, վորը դեռ պրոբլեմատիկ է, այլ պատմակ սնուեալ Ուրարտուն, վոր գրավում եր IX դարում Վանա լճից արևմուտք ընկած շրջանները (Տարոն), իսկ հետո՝ նաև այդ լճից («Նախրի ծովից») դեպի արևելք յուր Տուշուա մայրաքաղաքով:

Ի այց Ուրարտուի քաղաքական կողմավորումը և պատճառ-թյան ասպարեզ իջնելը կապված եր նախրյան ցեղերի ընդհանուր վերելքի հետ: Մեր երայից ասաներեք դար առաջ Սալմանասար I-ի որով, հիշատակվում է Տիգրիսի և Մուրազի միջև «Նախրի» անունով յերկիրը. «Սալմանասար..., արքա Ասորեստանի, վորդի Ազադ-Նիրարիի..., վոր տիրեց... Նիրի, Լուլուսիի... և Մուսրի»¹: Այս նույն թաղավորը Նախրիի դեմ պահակազորք եր դրել Սինարու և Տիգու քաղաքներում (այժմյան Դիարբեքիի մտերը)²: Այժմյան Կարաջա-դաղ և Տուր-Արդին լեռները (= ասսուրական Kašīari, կլասսիկ՝ mons Masius) համարվում եյին Նախրիի հարավային սահմանը: Տիգլատպիլասար I-ի որով (1110—1085) Նախրի ցեղերը այնքան եյին քաղաքականորեն առաջադիմել, վոր գեթ ինքնապաշտպանության համար մի դաշնակցություն եյին կազմել Դալանի ցեղի ղլխավորությամբ, վորի թագավորն եր Սինի Սկզրում 23 և հետո 69 «թագավորներ» միասին դիմագրում եյին Տիգլատպիլասարին, սակայն անհաջող: Արշավելով արևմտյան Տիգրիսի հովտով, վորի անձավում արձանագրություն է թողնում, Տիգլատպիլասարը մտնում է Արածանիի ընդարձակ հովիտը ճնշում 23 թագավորների (և ապա 60) և հասնում է մինչև Մանազկերտ, ուր թողնում է արձանագրություն: Վանա լիճը կոչվում է «վերին ծով» կամ «Նախ-

¹ Թերևս ասսուրական արձանագրությունների ալս Musti-ն լինի հայոց «Մշար» ը (հմտ նաև Մծուր—Մզուր գետը) Յեփրատի մոտ, իսկ Lulu-mi-ն այլ գեղքերում հիշատակվում է վորպես «Լուլուսիի գաշտերը», վորք թերևս բանում է Դիարբեքիի և Յեփրատի միջև ընկած ասիաստանները:

² Այս Սինարու (Կինարու) և Տիգու քաղաքները գտնվում եյին այժմյան Դիարբեքիից քիչ հյուսիս, վորովհետև յերբ Ասուրնազիբբալ թագավորը ճնշում է Ամիդիի (= Դիարբեքիի) ժողովրդին, այստեղից նա բարձրանում է Տիգրիսի ափունքը պատճելու Արիմի շրջանների մարզկանց, վորոնք գրավել եյին Սինարուն և Տիգուն և գերեզմարիլ եյին այդտեղ բնակեցրած բոլոր ասորեստանցիներին (տես Мещанинов, Халдоведение, էջ 14):

րի ծովը, Նաիրին դրանից հետո կարծես թե ապահով եր, վորովհետև Տիգրասապիլասարից սկսած (1110 թ.) մինչև Ասսուրնագիրբալը (884—860), շուրջ յերկու հարյուր ասրի, վոչ մի վկայություն չկա վոր Ասորեստանը ճնշել և նաիրյան ցեղերին Այդ համարում են Ասորեստանի թուլության հետևանք: Ասսուրնագիրբալը հիշատակում է 250 նաիրյան քաղաքներ, վորոնք նա ավերել է և ցորենն ու հարզը գրավել բերել է Տուշխա քաղաքը ուր «պիլի շողուն քարի անձինս պատկերը շինեցի...», Նաիրի յերկրներն սեջ կատարած դյուցազնական գործերիս պամությունը նրա վրա գրեցի»¹, Այս թագավորը հաճախ և շեշտում ցորեն հարդ կամ դարի հավաքելը Նաիրի յերկրից, վոր պիտի բացառվել իրեն յերկրի աղքատության և կարիքի պամառով Տուշխա քաղաքում նա հասուկ ամբարներ է շինել ասլիս: Ասորեստանի պայքարը Նաիրիի հետ վոչ միայն ստրատեգիական կամ քաղաքական շարժառիթներից եր այլև գերազանցորեն՝ անտեսական. ել չենք խոսում, թե ինչքան այլևայլ քանակի և վորակի ավար էյին տանում, ինչպես և գերիներ:

Աշշուրնագիրբալի վորդի Սալմանասար Ա-ից (860—825) սկսած ասսուրական արձանագրությունները այլևս «Նաիրի» անունը չեն հորջորջում այլ միայն «Ուրարտու», «ուրարաացի», Այս անշուշտ վկայում է այն մասին, վոր նաիրյան ցեղերը կոնստիդացիայի էյին յենթարկվում, թե քաղաքականորեն, և թե սոցիալ-տնտեսորեն (ցեղերի քայքայում և նոր սոցիալական հարաբերություններ), մի ավելի ուժեղ և դարգացած «ուրարական» պետության մեջ: Ուրարտական Արամե Շիդուրի և այն իրոք վոր թագավորներ էյին կամ թագավորներ էյին դառնում և վոչ թե ցեղապետներ էյին, թեպետ արձանագրությունները դրանց բոլորին «թագավոր» են կոչում դրանց անվան առաջ «թագավոր» գ սղափարանիչն են գործածում:

Յեթե կոնկրետ կերպով ցանկանանք իմանալ թե ինչ նաիրյան ցեղեր կամ տոհմեր են ապրել պատմական Նաիրիում, այն է՝ Տիգրիս Մուրադ գետերի միջև, ապա դրա համար միակ ուսվ վկայություններ կարող են լինել այդտեղի յերկրների, քաղաքների» (— գյուղեր) և «թագավորները» (= ցեղապետների տոհ-

¹ Այդ Տուշխա քաղաքը հիշատակվում է Գամղամուշա քաղաքի հետ Շաա Աեմանն-Հուուպի առաջինը այժմյան «Գախ» անդումն և իսկ յերկրորդը՝ «Տսֆյանթեփյունում» — Գիսրբեքլբից 18 կլմ հարավ իրար մոտ:

մապեաների) անունների քննությունը: Տիգլատպիլասարը աա-
լիս և հեաեյալ 23 յերկրանունները— Նեմմե [կամ Նիմմի = Սուխ-
մի?], Տուենուբի, Տուալի, Քինտարի, Ուզուլա, Ունդամունի, Ան-
դիարե, Պիլաքիմնի, Աթուրգիմի, Կուլիբար(գ)իմի, Շինիբիրանի,
Հիմուա [Խիմուա] Պախաերի Ուիրամ Շուրուբիա, Արաեմի,
Ադաեմի Կիրիմի, Ալբաա, Ուզիմա Նազարիա Աբարսիունի
Դաիաեմի, Յեթե սրանք ճիշտ են տրված¹, ապա Շինիբիրանի և
թերևս Կուլիբարիմի տեղանունները տառագի պիտի նշանակեն
«շին (սին)-մարդիկ» և «կուլ(ի)-մարդիկ» կամ ավելի ճիշտ՝ շի-
ն(ի) (սին ի)-աներ (ցեղեր) և կուլ(ի) աճեր (ցեղեր) ինչպես
ուենենք նախահայկական Տուրուբերան և Աորեբան(ի), իբրև
«տուրու (=տավրու)-ցեղեր» և «առ(ի) ցեղեր» հմտու նաև
Քաջ-բեր-ունի, Տամ-բեր Տար բեր-ունի, վրաց beri «հասարա-
կություն» (↔ «առհմ»), վորոնք (ber) մենք կապակցում ենք
խեթական ber «տուն, տոհմ», լյուգիական bir-ալ «տուն» և այլն
բառերի հետ (տես եջ 81—83): Կուլիբարգիմի ձևի համար համեմա-
տել ուրարա Kulbitarni = Կողորերգ (Քղի գետի վրա) Քինտարի
տեղանունը հավանորեն նույնպես յեղել և ցեղանուն և պահվել
և մեր կարծիքով Քսենոֆոնի կողմից հիշվող Kentr-it is գետան
վան մեջ, վոր տառացի նշանակում «kent(a)r-ների յերկրի (it ||
-et = վրաց ethi)» գետ Դա այժմյան Բոխտան գետն և (= Արևել
յան Տիգրիսը), վորի անունը, ինչպես և այնտեղ գտնվող բոխ-
տու (ՃՕՄՎ) քուրդ ցեղի անունը ն Ադոնցը կապում եր «պակ
տի» ների հետ (Դարեոսի ժամանակ պակտիները և սրմենները
կազմել են 13-րդ սաարադիան)²: Թերևս Տիգլատպիլասարի
Պախաերի (կամ Պաիտերի?) Անունը նույն պակտիների հետ կապ
ունենա: Պիլաքիմի տեղանունը պահել և հետագա Βελγαν'α-ն, վոր
հիշում և Պաղոմեոսը ըստ Ադոնցի դս հետագա Բելիսան քա

¹ Իմ ձեռքի տակ յեղել և Լեոյի պատմ. էթյան մեջ բերված ցո ցակը
վորտեղ կան կարծես թե սխալներ: Որինակ, գրված և (ե՞ 220) Կուլիբարիմի,
բայց բնագրի մեջ (եջ 240) և քանկում (եջ 715) կարդում ենք Կուլիբարգիմի
կամ թե Լեոն ամեն տեղ դրում և Պաիտերի, իսկ Ա Պոչսարյանի մոտ կար
դում ենք Պաիտերի: Այս վերջին անունը Ա Պաչ-ը ցանկանում և համեմատել
այժմյան Մուգանի դաշտում և ավելի արևելք հիշատակվող հին հայոց Փայ
սահարանի հետ (կա և «Դառա(ա)կարան»): Այդ իհարկե սխալ և Պաիտերի
(Պաիտերի) յերկիրը Նաիրիի մեջն եր վորից այն կողմը աստորեասանցիք
կյին անցեր

² Տես II Адон 1рм в э I Ост 62 393—394

դաքն է, վոր գանվում է Մուշարի և Խարբերդի միջում¹, թեպետ համեմատիր նաև այժմյան «Բողլան» դյուղանունը սուրբ Կարապետի վանքից (Հաշտյանքում) մի քիչ դեպի արևմուտք: Ունդամունի «տեղանունը» ըստ իս սխալ է ասուողարձվում — «սոպիտի կարդալ վորպես գաղափարագիր և վոչ թե վանկագիր և UN սումերական այդ «ժողովուրդ, մարդիկ» գաղափարագիրը (KUR UN-zamuni?) միասին թարգմանել «յերկիր գամունի ժողովրդի», ինչպես Ամիդայի (Իհարբեքի) շրջանը կոչվում էր «Բիթ—zaman», վոր ասուցի նշանակում է «տուն-գաման» այսինքն՝ գաման ցեղ (ժողովուրդ), վորը կամ նույնն է UN-zamun-ի հետ, կամ մի մասը: Դաիանի յերկրանունը համապատասխանում է ուրարտական հայտնի Diauexi տեղանվան և թագավորական դինաստիային (=այժմյան Բալու-Ճապաղշուր-Գենչ-Մանագկերտ), վորը մինչև ուրարտական ցեղի և թագավորների հանդես դալը իշխում էր նաիրյան յերկրում, դրա 23 (և 60) «թագավորների» և կոալիցիայի գլուխն էր կանգնած և ուրարտական Իշպուհին-Մենուա և Արգիշտի թագավորների ժամանակ ամենամեծ ախոյանն էր հարավային Ուրարտում (հյուսիսում՝ Etiuni): Տիգլատպիլասարին ամենից շատ դիմադրեց (այդ 23 կամ 60 թագավորներից) Դայանի թագավոր Սինին: Ինչպես Տիգլատպիլասարի արձանագրության մեջ է տսված — «զՍինի, Դայանի թագավորը, վոր Ասուրա իմ տյառնս չեր հպատակած, գերի շղթայակապ իմ քաղաքս յԱսուր ասրի և թողություն շնորհեցի անոր. իմ Ասուր քաղաքես իբրև ծառասառուծոց մեծաց ծառայելու և ապրելու աղազով գանի թողուցի վոր երթա Յերկրաց Նաիրյա, լայնածավալ բովանդակ տարածությամբն տիրեցի և անոնց բոլոր թագավորները ինձի հպատակ կացուցի» (ըստ Մանդալլյանի թարգմանության տե՛ս Լեո, էջ 241): Արանի յերկրանունը հավանորեն ուրարտացիների կողմից հորջորջվող Apuuni (կամ Abuuni = հայոց Ապահունի) շրջանը լինի, վոր դանվում էր Մանագկերտի և Բագրևանդի միջև, Մուրսուդ-չայի լրա հավանորեն Տիգլատպիլասարը թևակոխած լինի և Մանագկերտից հյուսիս՝ հեռագահայոց Ապահունիքը, քանի վոր Մանագկերտի մոտ նա թողել և բևեռագիր արձանագրություն, այսինքն՝ մինչև այդ կողմերը հասել է:

¹ Между Мушаром и Харбердом известен город Белхан у подножья одноименных гор — Βελχανία Πτολομαεя“ (ibid, էջ 33).

«Նաիրյան» այլ ևս տեղանուններ են հիշատակվում, վոր քերում և Ասորեստանի Շամշի-Ադադ թագավորը (տես Լեոյի մաս, էջ 220) սակայն, մենք կարծում ենք, վոր դրանց նաիրյան լինելը դեռ չի հշտված¹:

Նաիրյան այս «յերկիրները» իհարկե տեղագրական ատրքեր բովանդակություններ են. մեծ մասամբ դրանք մի տվանի կամ գյուղի կամ դղյակի շրջապատն են: Հետագայում, ուրարտական պեռության ժամանակաշրջանում (800—600 թվերին) դրանք զաղթում կամ ձուլվում են և անհետանում, սոցիալապես քայքայվում են, մանավանդ դաշտամասերում: Բայց վալիս են և ուրիշ ցեղեր—մուշկեր, բալայցիներ, թերևս խեթեր և այլն ժողովրդի դրադմունքը յեղել և յերկրագործություն և անասնապահություն. զարգացած և յեղել և մետաղագործությունը, յեթե ի նկատի ունենանք Արգանայի հանքերի առկայությունը և այն այլևայլ անոթների քանակը, վոր տուրք էյին բերվում Ասորեստանին: Յորեն և հարզ ամբարելու համար հատուկ շահմարաններ են շինվում Տուսխայում. «Նաիրիի հունձքը հնձեցի և իմ յերկրիս ոգտին համար զանոնք Տուսխայի, Դամդամուսայի, Սինարուի և Տիգուի մեջ համբարեցի» (Լեո, էջ 227): Կամ համեմատել հեռույալ խոսքերը—«Չորինելու, արջառի, վոշխարների, դինու, պղնձի անոթներու հարկն ու տուրքը առաջվանե ավել բարձրացուցի» (Լեո, էջ 229): Մանգալյանը ասուրական արձանագրությունից բերում և նաև հետևյալ կտորը մեկ նաիրյան իշխանավորի մասին—«Սպառազինյալ կառքերը, զորականաց կազմածը, յերիվարները, 460 յերիվար, կառուց ձրոց հարկիքը, 2 տաղանդ արծաթ

¹ Դրանք են—Բարարուրա (իշխանել Սիրաաշմե), Հարմիշանգա (իշ Ամահար), Պարսանի (իշ Չարիշու), Հունդուր (իշ. Չարիշու) Կիպարարուտակա (իշ Մանաշու) Ուշաաշա (իշ Արդարաա), Կինուկա (իշ. Շուամա, Գինգիբիբ (իշ. Տաատաի), Արիմաս (իշ. Բիսիրաին), Կիպարուշա (իշ Պարոնուշաա), Ուելիա (իշ. Աշպաաշաատուկ), Կինգիշտիկնդա (իշ Ամամաաշ), Մասիրաուշ (իշ Մարսիհու), Լուկաս (իշ. Մամանիխ), Դիմամու (իշ. Չամնգար), Սիմգուրի (իշ. Սիրաաշու), Արգանա (իշ. Գրիշտա), Ասատի (իշ. Ադադաանու), Դինխուխու (իշ. Ուրսի), Դինգինա (իշ. Բաարա), Կինդուաաուշ (իշ Աուուա), Կիբրու (իշ. Դիբրնակուուշ), Չուզարուրա (իշ. Չարանու), Դինգիբիդա (իշ. Իրախուտաի), Տաուրլա (իշ Բաարգուաա), Նանի (իշ. Շուուա), Սաաիրիա և Արաասիրարի: Տես Լեո, Հայոց պատմ., էջ 220—221: Լեոն այդ քաղել և Մաքսիմիլյան Շարեբի գրքից («Հայաստան, Գրդաստան և արևմտյան Պարսկաստան, ասուրաբարելա կան սեպագրերու համաձայն» թարգմ. Հ. Պելեգիկճյանի, Վիեննա, 1904 (էջ 8—9):

[=17187 ֆրանկ], 2 տաղանդ վոսկի [275000 ֆր], 200 տաղանդ անագ, 100 տաղանդ պղինձ, 300 տաղանդ յերկաթ, 100 հատ պզնձե անոթներ, 3000 պղնձի սկավառակ, 1000 հաս դույնզգույն հյուսած կաավյա զգեստներ, բաժակներ, նեցուկներ, փղոսկրե և վոսկիե աթոռներ..., 2000 զվարակ, 500 վոչխար անոր (=խշխողի) կինը՝ իր հարուստ ոժտիքն, զգասերս ավադորերո նորա իրենց հարուստ ոժտներովն» (տես Լեոյի մոտ, էջ 229): Մարգ աղամայից չի հավատում այս թվերին և հարստության, թեպես ուրարտական արձանագրությունների մեջ ևս պակաս ավար չի հիշատակվում: Որինակ, Սարգուր III-ը արշավելով Կուստախի յերկիրը գրավում է թագավորական Vita, Xalpa [=Halep?] և Parala քաղաքները պարտավորեցնելով Kuštašpili թագավորին հարկ վճարել—40 մանա հնչուն(?) վոսկի, 800 մանա արծաթ, 3000 զգեստներ, 2000 բրոնզե վահան (aše ըստ Ֆրիդրիխի=վահան)¹, 1535 բրոնզե անոթ (Арх ЭКСП. IV₄₈₋₅₆): Կամ Դիաուխի (=ասուր. Դաիանի) թագավորը տալիս է ուրարտացի Մենուային—41 մանա վոսկի, 37 մանա արծաթ, .տաս հազար մանա անագապղինձ 1000 վրան և այլն (տես Սեյս № 45 = Սանդ № 20, էջ 20—21)

՝ ՈՒՐԱՐՏՈՒ

Ինչպես տեսանք Նաիրյան ցեղերը հանդես գալով վորպես մի դիմադրական ուժ վորպե մի քաղաքական միություն (23 ցեղ, 250 քաղաք) Ասորեստանի տիրապետության դեմ, այնուամենայնիվ այդ շուրջ չորս հարյուր տարվա ընթացքում (1300—900), այսինքն մինչև Սալմանասար III (860—825), նրանք չկարողացան քիչ թե շատ սերտ և մնայուն միություն կամ պետություն ստեղծել: Դրա համար թերևս չկային հասարակատնտեսական և քաղաքական վորոշ ավյալներ: Պեաք է յենթադրել, վոր զլիսավոր ուժը այդ շրջանում կենտրոնացնում էյին իրենց մեջ, դեթ վորոշ նահանգներում, Դիաու ցեղերը իրենց թագավորական դինաստիայով: Դեռ Սալմանասար III-ի ժամանակ էլ նրանք մեծ ախոյան էյին ասորեստանցիների համար: Այդ թագավորի 845 թվի արշավանքին դեռ Դիաու (Դաիանի) և ուրարտական ցեղերը կարելի չէ ասել հավասարադրել էյին

¹ Տես J. Friedrich Einführung ins Urartäische, Leipzig 1933 էջ 60—61

Մալմանասարը Արածանիի հովառւմ հիշատակուած ե միտյն դրանց. «Կառավարութեանս 15-րդ տարին դեպի Նաիրի յերկիրը քալեցի Տիգրիս գետուն շարերականց վրա, լերան քարածերպի մը մեջ, տնօր աղբերական բազկին ծագման տեղը իմ արքայական պատկերս շինեցի: Կարող դորությունս և զպատմություն իմո ղյուցագնական քաջութեան տնօր վրա դրեցի Տունիրունի յերկրի մտից կիրճին մեջ մտա: Ուրարաացի Արամինն քաղաքները մինչև ցզլուխ շրուն Յեփրատա ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: Յեփրատա աղբերակունքը գնացի [=Ալաշկերտի հովիտը?], աստուածոց զոհեր մատուցի: Հոն Աստուրա գինքերը փառավորեցի: Ասիա Դաիանի յերկրի թագավորը, վտաքերուս փարվեցաւ ի սակ հարկի բազմաթիվ ձիեր ընդունեցաւ թագավորական պատկերս շինեցի տնօր քաղաքին մեջտեղը կանդնեցի» (Մանդալճյանի թարգ., տես Լեո, եջ 259)։

Սակայն IX դարի այս առաջին կեսից Նաիրիի գլուխն են կանգնուած ուրարտացիք, վորոնք հանդես են դալիս այժմյան Տարոնի շրջաններում, վորպես յերևի մի տոր ցեղ կամ ցեղային միություն: Այլևս Նաիրի հորջորջումը, վորպես քաղաքական նշանակություն և ֆակտոր, հանդես չի դալիս. դրա տեղը բռնուած և Ուրարտու և ուրարտացիք Մալմանասարից սկսած, մանավանդ նրա հաջորդների որով, ասորեստանյան արձանագրությունները նախկին բովանդակ Նաիրիի (Տիգրիս-Մուրազ միջագետը) փոխարեն գործ են ւածուած Urartu (Urardhu): Յեվ իրոք, Ուրարտուն դարձել եր իսկական մի պետություն, քաղաքական-տնտեսական իսկական առումով: Նա արևելյան հին բռնակալ կիսաստրկատիրական-կիսացեղատիրական մի մեծ բռնակալություն (պեսպոտիա) դարձած, սկսած Տիգրիսից հարավուած և վերջացնելով Չրբըր-Սևան լճերի գիծը՝ հյուսիսում, ինչպես և արևմտյան Յեփրատից մինչև այժմյան Պարսկա-Տաճկական սահմանը, թեպես վորոշ տեղեր այդ գծերս ել եյին անցել:

Ուրարտական թագավորները իրենց կարծես թե շարունակողն եյին համարում Նաիրիի քաղաքական ֆունկցիայի, նրա «պետականութեան» սկզբնական դերի: Ինչ իրենց առաջին արձանագրություններում, դրված աստուրական լեզվով, նրանք իրենց հորջորջում եյին «քաղավար յերկրի Նաիրի» յերբ միաժամանակ ուրարտական բնագիրը, ինչպես ե Կելիշինի յերկրագլխին, արձանագրությունը («բիլինգուան»), տալիս եյին տեղական յոր յ իտղոս՝ «քաղավար Շուրայի և Բիայնայի» Այն

կարծիքն է ստացվում, վոր ասորերեն բնագրում «Նաիրի» յերկիր կոչելով ուրարտացիք ուզում էյին ասուրներին և նրանց թագավորներին զգալ աալ, վոր իրենք անցյալում հզոր են յեղել, ասուրներին ծանոթ նախկին ախոյաններն են և դրանց պեհականության շարունակողները, այն ինչ ասուրական թագավորները այդ նոր պետությունը նոր անունով էյին կոչում (Urartu) և ժողովրդին ըստ տեղի՝ «ուրարտացի ուրարական»։ Իրենք ուրարտացիք ինչպես են կոչել իրենց՝ տարակուսանքի նյութ է գառնում։ Ըսա Լեհմանն-Հաուպտի և մյուսների նրանք կոչել են իրենց խալդե, «Խալդ» աստծու անունով։ Բայց J Friedrich-ը, վորը հայանի իեթագետ և այժմ էլ ուրարտագետ է (գրել է մի շարք արժեքավոր ուրարտագիտական աշխատանքներ), այժմ դեմ է դուրս յեկել այդ կարծիքին (տես նրա հոդվածը Chalder oder Urartäer?, տպված Zeitschrift der Deutschen Morgenländischen Geellschaft Band 90, Heft 1, էջեր 60—82) Biaina (=Վան) տերմինի մասին մենք արդեն խոսել ենք մութ է մասամբ Sura յերկրանունը («թագավոր յերկրի Շուրա, յերկրի Բիաինա»), թեպես այդ յերկուսի մեջ կարևորությունը և նախապատվությունը արվում էր Բիաինային, վորովհեանե կան, ինչպես ասվել է, արձանագրություններ, ուր թագավորների ախողոսի մեջ առկա յե միայն Biaina («թագավոր հզոր, թագավոր մեծ թագավոր Բիաինայի, աեր Տուշպայի»)։ Ասուրական արձանագրությունները մինչև վերջը շարունակեցին կոչել «Ուրարտու» և «ուրարտացի», թերևս դրանով ցանկանալով ցույց տալ և շեշտել դրանց նոր լինելը և Ասորեստանից փոքր կամ կախյալ լինելը։

Ուրարտացիների ծագումը, ինչպես և շատ ցեղերի ու ազգերի ծագումը, դեռ վերջնականապես լուսարանված չի կարելի համարել։ Նրանք կարող էյին լինել և բնիկ, գլթ մի մասով, այսինքն լինեյին նաիրյան ցեղերից մեկը կամ մի քանիսը, թեպետ ասուրական արձանագրությունները վորքան էլ մանրամասն են հազորդում Նաիրիի մեջ մտնող տեղանուններն ու ցեղանունները, այնուամենայնիվ Նաիրիում այդ «ուրարտ» արմատով անուն չեն բերում։ Յեթե Ֆրիդրիխի ու Գյոտցեի հետ ընդունենք, վոր Biaina (կամ Biaini) պիտի նշանակե bia-յոց յերկիր («biaisches Land»), ապա ուրարտացիների մեջ եթնիկական մի նոր ասոր ևս պիտի ընդունել թերևս հենց դա լինի սկզբնականը, իսկ urart-ը կապվի Uruadri (Uruatri) : հղանվտն հետ, վոր ինչպես ասվել է՝

գտնվելիս և յեղել Ջեզիրե իբն Ոմար քաղաքից դեպի արևելք ընկնող ասրածության մեջ, մոտ Նինուեին: Սակայն ուրարտացիների եթնիկական գեներալը բարդանում և նաև նրանով, վոր դրանց սկզբնական հնագույն սրբատեղին յեղել և Մուսասիրը (Արդինին) Խալդու տաճարով, թեպետ այս շրջանը հեռու չէ Uruatri-յից և յերկրորդ, Սարգուրի մի արձանագրության մեջ ինչպէս ասվել է, հիշատակվում են ururda մարդիկ, վորպես խնամելի և հարազատ ժողովուրդ, վորպես յերկրի գլխավոր ժողովուրդը (?): Յեթե մեր այս գիտողությունը ճիշտ է, այսինքն՝ Բիայնայի հիմնական եթնիկական կորիզը կազմում էին urur da-ները, թերևս վորպես իշխող խավ, ապա ուրարտացիներին կարիք չկա դադարեցնելու Միջագետքի հյուսիսում դանվող Uruatri-յից: Այնուամենայնիվ յենթադրություններից ամենահավանականը պիտի ընդունել ըստ իս ururda և bia (և թերևս այլ փոքր ցեղերից?) սկզբնական յերկու ցեղերի խաչավորումը և միաձուլումը, վորոնցից մեկը (bia) թերևս իշխող խավ էր, իսկ մյուսը՝ հասարակ ժողովուրդ (ururda-): Այս դեպքում չի բացառվի ասուրացիների urart (u) արմատաձևը, թեպետ նեժ հնչական տարբերություն չենք տեսնում ururd-(a) և urart-(u) հորջորջումների մեջ: Իսկ uruatr արմատաձևը (Uruatri տեղանունից) կամ կապ չունի դրանց հետ և կամ հնագույն ձևն է, թերևս բարբառային (XIII դարի սկզբում)

Յեթե ընդունենք ուրարտացիների դադար Uruatri-յից և յեթե ընդունենք նաև, վոր նրանք սկզբում հաստատվեցին միմիայն և միմիայն Վանա լճից արևմուտք ընկած շրջանում, ինչպես և մասամբ այդ լճից հյուսիս իսկ ասուրական արձանագրությունները դրանց այդտեղ են հիշատակում իրենց Արամիյով և Սիդուրով, այն ժամանակ պիտի ընդունել նաև, վոր ուրարտացիք իրենց սկզբնական հայրենիքից դադարել են Տիգրիսով դեպի հյուսիս և այստեղից էլ Բիթլիսի գետով դուրս են յեկել Տարոն, հետո Առերանի (Վանա լճից հյուսիս) և վերջապես անցել են այդ լճից արևելք՝ այժմյան Վանը: Այստեղ պիտի շեշտել, վոր Վան քաղաքի անունը, վոր ստացվել է Biaina կամ Biaini ձևից, սկզբում չի յեղել այդ քաղաքը հետո յե կոչվել այդ անունով նոր պետության պատմական և քաղաքական ազգեցության հետևանքով: Առաջ նա կոչվել է Tušpa (= մեր «Տոսպ», հույների Θωσπ(α), իսկ ասորեստանցիների մոտ հնչվել է Tūrušpa (Dhurušpa): Յեվ յեթե հնագույն ձևը Turušpa-ն է, ապա սխալ կլինի

դրա ծագումը կապել *Tešup* (ուրարտ *Teišeba*) ամպրոպի աստրծու հետ: Յեթի անգամ *Tušpa*-ն լինել նախնական ձևը, վորը ասրակուսելի յե, ախուամենայնիվ դժվար է այդ կապակցել *Tešūr* - || *Teišeba*-յի հետ (t=մեր «ա», իսկ t-մեր «թ»):

Տեսականորեն նախնական *uruatr* արմատը հեշտությամբ կարող է մետաթեզայով դառնալ *uruart-* (*tr > rt* հատուկ եր հե-աադա հայերին *ևս*), իսկ այս ձևից ասրերի հնչման հեռեանքով (ըստ բարբառների) կարող ենք սաանալ թե *ururt* և թե *urart*: Աստվածաշնչի *ararad*-ը է Հերոդոտի *alarod*-ը նույնպես կապվում են այս հնչաձևերի հետ լիաձայնության և ձայնավորների փոփոխման հեռեանքով (ուսերենով ասած՝ *через полногласие и перегласовку*): *Ararad* ձեռի վեր ածվելը *alarad*-ի հետընթաց դիսիմիլացիայի հեռեանք է վոր հետագայում հատուկ եր նաև հայերին (վրացիք ավելի շուտ կասեյին *aralad* - || *aralod*): Յենսեն գիտնականը Հանձիթում յեղած (6-րդ դարում մեր երայից հետո) *orta* անունով ժողովրդին կապում եր *urart*- անվան հետ, համարելով գրանց ուրարտացիների մնացորդ (*orart* - > *orta*): Մենք դիտենք նաև, վոր Սասունում 10-րդ դարում *ևս* կար մի լեռնական ժողովուրդ, վոր իր հատուկ լեզուն ուներ արաբացիք դրանց կոչում էյին *al-Artan*, վոր թերևս ժողովրդական ստուգաբանություն է (*Volksetymologie*) *arart an* նախնական ձևից արաբական *al* նախամասնիկի ազդեցությամբ¹:

Սալմանասար III-ը Արամեյի և Շիդուրի (Սսրգուրի) յերկիրը մանում է այն ժամանակ, յերբ Տիգրիսի աղբերակունքները և կիրճը անցնելով (=այժմյան Չերենե-սու, ուր կա և բնական թունել), իջնում է *Enzite* (=Անձիտ-ք, Հանձիթ), անցնում է Արածանին և նրա հյուսիսային ափի վրա գրավում է Սուխմի յերկիրը (=հայոց Բալահովիտ?), հետո շարժվելով արևելք մտնում է Դաիանի (=հայոց Հաշտեանք—Հարք) և դրանից հետո ընդհարվում է ուրարտացիների հետ գրավելով *Arzasku* մայրաքաղաքը և իջնելով ախուհետև Վանա լճի ափը: Այդ Արզասկ- կամ Արծասկ- անունը մոտ է հայոց Սրձկեյին՝ Վանա լճի հյուսիսային յեզրին [*Արծասկ*-ը յերկու մասից է՝ Արծ-ասկ ինչպես ունենք «Մնձոր-եսկ» Սյունիքում, «Ձր-եսկ» Շիրակում., հմմտ *Արճ-էշ* (նմ սն Բազ-էշ) կա! Արծ-ափ Արծ-նի, Արծ-ն

¹ Այս մասին տես Hubschman *Die altarmenische Ortsnamen* հայոց թարգմ էջ 55

և այլն, ուր կա arts- կամ arts արմաաը], Այդ արշավուղին ամենա- սովորականն էր Ասորեստանի թագավորների համար. Սուրնաաի այդ կիրճում կա չորս թագավորական քանդակ ժայռի վրա, ինչպես և այդ թագավորների արձանագրությունները իրենց գործողությունների մասին Նաիրի յերկրում: Բայց մենք ուզում ենք տեսնել և մի այլ ճանապարհ, վերով Սալմանասարը (և թերևս ուրիշները) մտել են Արածանիի և Տարոնի շրջանը այդ— Սղերդի շրջանից դեպի հյուսիս ընկած ճանապարհն և, վոր տա- նում է Բիթլիսի գետի հովտով և մտնում Տարոն: Ասսուրնագիր- բալը յերբ արշավանքի մեջ էր Կիրրուրի յերկրում ասում է «Մինչդեռ զորքս Կիրրուրիի մեջ կգտնվեր, Ասսուրա իմ այառնս պայծառությունն զԿիրզանացին և զՍուրուսկացին յերկիր կոր- ծանեց» (տես Լեո, էջ 244). այդ յերկրները մոտ էյին Կիրխի (— Բարխի) յերկրին, վոր գտնվում էր յերկու Տիգրիսների խառ- նըվելու մոտ: Խուրուսկի և Կիրզանի յերկրներից նա անցնում է Իսաարատի յերկիրը, հետո՝ Մատիատ քաղաքը վոր այժմ էլ գոյություն ունի (Մարդինի և Ջեղիբեյի միջև) և կոչվում է Մի- դիադ: Ասսուրնագիրբալի այդ Kirzani և Xubuskia յերկրները մենք տեսնում ենք այժմյան Խիզանի և Սղերդի շրջանի («Շիր- վան») տարածություններում, իսկ «Խիզան»-ը հնչյունորեն հենց նույն Kirzan-ն է: Սալմանասար թագավորը ևս հիշատակում է Խուրուսկիան, վորից հետո մտնում է ուրարտացիների իշխանու- թյան մասը, քանի վոր այդ ճանապարհին նա դրավում է Արա- մեյի «Սուզունիա» ամրոցը, վորը մեր կարծիքով կամ Բիթլիսն է կամ նրա մոտ մի այլ բերդաքաղաք: Բերենք իրեն թագավո- րի խոսքերը. «Խուրուսկիա քաղաքին մոտեցա. Խուրուսկիա քա- ղաքը և իր վիճակին 100 քաղաք հրով այրեցի: Կակիա Նաիրի թագավորն և իր զորաց մնացորդներն զինուցս սաստկութիւնս զարհուրեցսն և ահագին լեռներ բռնեցին... Խուրուսկիա քաղա- քին յիւր ուրարտացի Արամեյի բերդաքաղաքն Սուզունիային մոտեցա քաղաքին վրա հարձակեցա անոր տիրեցի: Անոր զոր- քերն շատերը սպանեցի կողոպուտն առի տարի, անոր քաղա- քին զիմացը կառավորներն կոթող մը շինեցի: Յուր յերկրն 14 քաղաք հրով այրեցի: Սուզունիայն յիւր, դեպի Նաիրիի ծովն վար իջա զենքերս ծովուն մեջ մխրճեցի. ասավածոց զոհեր մա- տուցի: Նույն ժամանակ իմ անձիս պաակերը շինեցի, Ասսուրա՝ պերճափայլ այառն, իմ այառնս համբալն և իմ կարող զորու- թյունս անոր վրան դրեցի, ծովուն քով կանգնեցի» (տես Լեոյի

մոտ, հջ 55) Այս արշավանքը Սալմանասարը կատարել է իր Թագավորության առաջին տարվա ընթացքում (860 թվին), Ուշագրավ է այսանգ այն հաղորդումը վոր Խուրուսկիան նտիրյան յերկիր է Kakia Թագավորով ի դեպ այդ անունը իրոք խուր-րիական-ուրարտական արտաքին ունի (հմտ ուրարտ. Tariria, Menua, Inušpua ., Դաիանիի Թագավորի Asia անունը): Ուրարտագեաներից շատերը այդ Xubuskia-ն սխալմամբ ասնում էյին արեվելք, Ուրմիա լճի մոտ, և այդտեղից արշավեցնում ասորեստան-ցիներին դեպի Վան, յերբ ի զարմանս դրանց այդ Թագավոր-ները նախ հնտրավորություն չունեյին ճանապարհների բացա-կայության պաանառով (լեռներ են) Նինուեյից գնալ Ուրմիա լճի մոտ և այդտեղից մտնել հայոց Վասպուրականը և հետո Վտնա լճից արևմուտք՝ Տարոն Այնինչ դեպի Տարոն նրանք կարճ և հեշտ կարող էյին անցնել Սղերդի գաշտավայրից (Xubuškia բառն անգամ այդ է նշանակում, հմտ. ուրարտ xubi «դաշտ», խե-թական Xubišna քաղաքի անունը = Դաշտակ?) բարձրանալով Բիթ-լիս դետի հովտով: Ի նկատի պիտի ունենալ նաև, վոր Xubuskia-ն և Kirzani-ն Նաիրիին մոտ էյին, իսկ Արամեյի ժամանակ Ուր-միա լճի տրևմտյան շրջանները բնավ Նաիրիի մեջ չէյին մանում:

Սալմանասարի յերկրորդ արշավանքի մասին (857 թվին) մենք արդեն ասել ենք Այդ ժամանակ նա Բիտ-Չամանից (Դիարբեքիլի շրջան) իջնում է Ինդիտե («Իջի յերկիրն Ին-դիտի երկրին Իսուա»), վորի Սալուս քաղաքում կանդնեց-նում է յուր բնակ հաղթ պատկերը» և իր քաջագործությունները վրան գրում: Հետո ասում է. «Ինդիտեն յելա Արգանիային վրա-յեն անցա, Սուխմի յերկրին մոտեցա անոր բերգաքաղաք Վաս-տալին աիրեցի. դՍուխմի բովանդակ տարածությամբն ավերե-ցի, քանդեցի, հրով այրեցի. դՍուա, անոնց քաղաքին աները, իմ ձեռքովս բռնեցի: Սուխմիյեն յելա Դաիանի յերկրին վրա իջա Դաիանիեն յելա ուրարտացի Արամելն Թագավորական քաղա-քին Արգասկուին մոտեցա Ուշարտացի Արամեն հզոր դինուլցս սաստկութենեն և ուժգին ճակաամարտեն զարհուրեցավ» և այլն: «Արգասկուեն չվեցի ի լյաոն Իրիգիա յելա. Թա-գավորությանս մեկ պատկերս շինեցի Ասուուրա իմ տյաոնս

¹ Ուրարտուի ամենագորեղ ժամանակաշրջաններում են միայն այդ մա սերը (Mana, Parsua, Busta և այլն) յերբեմն նվաճվելիս յեղել, ինչպես Menua Argišti և Sardur Թագավորների արձանագրություններն են վկայում

կարողությունը և Ուրարտուի մեջ իմ գործ դրած հզոր գործությունս անոր վրա գրեցի, Իրիգիա լեռան վրա կանգնեցրի: Իրիգիային չվեցի, Արամալի քաղաքին մոտեցա. անոր քաղաքներն ավերեցի, քանդեցի, հրով այրեցի Արամալիյին յիւր Զանգուինա քաղաքին մոտեցա. իմ ճակատամարտես վախեցավ, վոտքերուս փարեցավ: Զիեր, հարկիք ձիոց, արջառ, վոչխարներ անկերնդունեցա անոր թողություն շնորհեցի... Յընթացս արշավանացս ի ծովն Նաիրի իջա Ասսուրա հզոր զինքերը ծովուն մեջ մխրճեցի, զո՞ն մատուցի թագավորությանս մեկ պատկերը շինեցի, զկարողություն Ասսուրա, մեծի այսոն, իմ տյառնս, իմ դյուցազնական քաջադործությանս պատմությունն ու զորեզ գործերս վրան գրեցի» (Լեո, եջ 247—258):

Չորրորդ արշավանքը Ուրարտուի դեմ Սալմանասարը անձամբ չի կատարում այլ ուղարկում է (833-ին) յուր սպարապետ (turtan) Իսյանասուրին, վորը Բիտ-Չամանիից իջնում է Ամասուրիի կիրճով, անցնում է Արածանի դեպը «Ուրարտացի Սիդուրին այս բանի լուրն առավ, յուր մեծաթիվ զորաց ըագմությանը վստահադավ և պատերազմ ու ճակատ ապուռ համար ինձի դեմ քալեց: Անոր հետ պատերազմեցա, անոր հաղթեցի յուր զորացը դիակներովը ընդարձակ դաշար լեցուցի» (Լեո, եջ 263)

Դժբախտաբար չի ասվում թե Սիդուրին ում վորդին էր՝ Արամեյի թե մի ուրիշի Արամե թագավորի, իբրև ուրարական պետության առաջին կազմակերպողի այս յերեք կռիվները ավանդաբար անցել են և հայերին, յերբ Մ Խորենացին Արամին պատերազմի մեջ է մացնում արևմուտքում Պայապիս քաղաքայի հետ, արևելքում մեդացիների հետ (Նյուքար-Մադես) և հարավում ասորիներին հետ (Բար-շամին)

Սալմանասարի զորքերը, ինչպես յերևում է այս վերջին դեպքում մեծ հաղթություն չեն աարել Սարգուրի դեմ. իսկ դրանախորդ Արամեն, թեպես ըստ ասորեսաանյան աղբյուրների հաղթվում է, առաջին անգամ զիջելով Սուզունիան (Բիթլիս?) յուր շրջակա 14 «քաղաքներով» (860 թ.), յերկրորդ անգամ (857 թվ.) ապուվ 3400 սպանված և մայրաքաղաքի (Արգասկու

Արծկե) ավերում և յերրորդ անգամ (845 թ.) իբր ըլոր քաղաքները մինչև Յեփրատի ակունքները ավերված տեսնելով, սակայն նա իսպառ չէր կորցնում իբր քաղաքական հեղինակությունը և ուժը: Յենթագրում են, վոր Արամեն պարտության

հետևանքով զիջում է իր անգը նոր դիքաստիայի ի դեմս Սիդուրիի (Սարգուրիի), վորը կարծես թե ավելի լավ է դիմադրում Սալմանասարի գորավարին: Սակայն այս կարծիքը զժվար է հիմնավորել, քանի վոր այլ փաստեր չկան: Սալմանասարը 829 թվին վերցնում է Մուսասիրը, բայց Ուրարտու չի մտնում, յերևի չակնկալելով հեշտ հաղթանակներ: Այնուամենայնիվ նրա արշավանքները վորոշ գրական գեր խաղացին, ստիպելով ուրարտացիներին ավելի լավ կազմակերպվել և լավ պաշտպանվել և կուլտուրայես ևս առաջադիմել և սովորել: Հենց այդ ի նկատի ունենալով է վոր Լուտիբրիի վորդի Սարգուրը յուր մայրաքաղաքը տեղափոխում է ավելի արևելք, Վանա լճի արևելյան ափը, այժմյան Վանը: Յերկրորդ գրական հետևանքը այն յեզավ, վոր ուրարտական թագավորները վերցրին ասուրներից բևեռագիր գրության նոր կուլտուրան—արվեստը նրանք ևս դարձան «հոր», «մեծ» թագավորներ և իրենց գործերը ցանկացան հավերժացնել քարերի կամ ժայռերի վրա թողած բևեռագիր արձանադրություններով: Առաջինը Սարգուրն (Լուտիբրիի վորդի) էր, վոր թողել է ասուրական լեզվով արձանագրություն, վերջինս գրված է մի մեծ քարի վրա, Վանի միջնաբերդի ստորոտում, հայոց ս. Հ վհաննես յեկեղեցու ավերակների մեջ Այգաեղ տրվում է նրա տիտղոսը, ս լեւոյնելով, վոր նս քարեր բլրեց Ալնիունու քաղաքից և բերդ կառուցեց: Անշուշտ նոր մայրաքաղաք „Tušpa“-ն (ասուրական Turuspa) ավելի հարմարություն ուներ այգալիսին լինել, քան մի Արգասիու, Սուգունիա և այլն¹: Սարգուրն արդեն վոչ միայն իրեն ապահով էր զգում այլև այլ «թագավորներից» հարկ էր հավաքում (յուր արձան 4—5 տողերը — «յամենայն ի նոցունց թագավորաց հարկ առի»):

Մեծ նշանակություն ունեն սոցագրական արվեստի և թերևս մարդաբանական տեսակետից այն բարձրաքանդակ նկարները, վոր ասուրների Սալմանասար III թագավորը թողել է յուր պալատի բրոնզե դռների վրա, կցելով հետը բևեռագիր բացասություններ: Նման յերկրորդ մեծ հուշարձանն է ելի

¹ Արգասիունից հետո հիշվող Aramali-ն անշուշտ ուրարտական քաղաք էր և իր Aram-մասով կառվում է Arame թագավորանվան հետ: Համեմատել Մուխմի յերկրի Vašt-ali քաղաքի նմանածանց կաղմությունը և հայոց -աղի մասնիկը (<ali) Մարգաղի, Դարանաղի, Ման(ան)աղի անունների մեջ:

վորպես կենդանի նկարագիր, Սարգոնի նկարած Մուսասիրի տաճարը, ուրարտացիների այդ հիմնական սրբավայրը

Արամի և Սարգուրի դեմ մղած կռիվների մասին ուսու հայտնի պատմաբան Տուրանն ասում էր «Хотя ассирийский царь [Салманасар III] и говорит о взятии крепости Сугуниа, Арзашкуна и Арамачи, и изображает эти подвиги на барельефах своих знаменитых балаватских врат, тем не менее он не мог справиться ни с Арамом ни с его преемником Сардуром I. Последний называет себя сыном Лутипри (может быть происходил из другой династии?), он построил г. Ван с его неприступной цитаделью и оставил там ассирийские надписи, в которых называет себя „царем Наири“ с титулатурой заимствованной у ассирийских царей» (տես Բ. Тураев История древнего востока, СПб 1912 II кн 43):

ԻՇՊՈՒԻԼ(Ի) ՄԵՆՈՒԱ

Իշպուինը (ասոր Ուշպինա) Սարգուրի վորդին էր, այն Սարգուրի, վոր Վանը դարձրեց յուր մայրաքաղաքը: Իշպուինին առաջինն էր, վոր ասսուրական բննազդերը վորոշ չնչին փոփոխմամբ հարմարեցրեց ուրարտական լեզվին, իսկ այս բանը հեշտ չէր, քանի վոր ուրարտերինի հնչունական մասը կարող էր ունենալ շատ դժվարություններ և տունձնահատկություններ անշուշտ պաշտոնական նշանները ճիշտ չեն արտահայտում այդ լեզվի հարուստ հնչյունները: Ինչևիցե, Իշպուինը հսկայական ծառայություն մատուցեց դրանով Ուրարտուի և Հայաստանի պատմության, ինչպես և հին արևելքի պատմության. մեր հիմնական պատմաաղբյուրները այդ ուրարտական արձանագրություններ են:

Իշպուինը հիշվում է ասսուրական Շամշի-Ադադ IV (825-812) թագավորի ժամանակաշրջանում, վորովհետև դրա մի գործավարը արշավելով (արևելքից?) Ուրարտուի վրա խլում է Ուշպինայից 11 բերդ և 200 քաղաք, հասնելով իրը մինչև Վանա լիճը: Ուրեմն մինչև շուրջ 825 կամ 820 թվականները այսինքն Իշպուինից առաջ թագավորել է Սարգուրը, Լուտիբրիի վորդին: Յեթե Սալմանասարի գործավարը 833 թվին հանդիպում է պատերազմով Սիդուրիին, ապա այդ Սարգուր-Սիդուրին և Սարգուր Լուտիբրիի վորդին, յեթե միևնույն անձնավորություն-

ներն են, պիտի կառավարելին 835 (կամ 840)—825 (820) ժամանակաշրջանում. յեթե ամենաշատը աանք 20 տարի (840—820) ապա այդ ևս յերկու Սարգուրների մասին չի կարող վկայելու մնաց, վոր վումանք ուզում են և Լուտիբրիին ել թագավորած տեսնել: Թեպես Արամեյից հետո յեղած Սիդուրին (Սարգուրը), չի հիշվում ասորական արձանագրության մեջ յուր հայրանունով բայց այս չի նշանակում, վոր նա նույնը չի Լուտիպրիի վորդի Սարգուրի հետ: Մենք գործ կածենք Սարգուր I միայն այդ Սիդուրի-Սարգուրի համար, ինչպես անում եյին և ուրիշները, ապով նրա թագավորելուն մոտավոր ժամանակաշրջան՝ 835—820 թվերը: Իշպուլինին թագավորել և մոտավորապես 820—800 թվերին ի մեջ առյալ և շուրջ հինգ ասրվա այն թագավորելը, վոր նրա հետ կատարել և յուր վորդի Մենուան (805—780): Ուրեմն 805—800 թվերին հայր և վորդի միասին են թագավորել. այս բղխում և մի քանի արձանագրությունների (հինգ) տվյալներից: Իշպուլինն ևս քիչ արձանագրություններ և թողել (հինգ?), և այն ել կրոնական կառուցումների մասին

Իշպուլինը յուր այդ արձանագրություններում նկարագրում և հետևյալը՝ 1) Վանի մոտ, $1\frac{1}{2}$ կիլոմետր հեռու Կալաջիկ գյուղի յեկեղեցու մեջ մնացած արձանագրության մեջ ասում և «Իշպուլինի Սարգուրի վորդին burgana (= սրբատուն) կառուցեց Խալու անաշությամբ (հովանավորությամբ) Իշպուլինին, Սարգուրի վորդին, տունն (= տաճարն) այս կառուցեց, այս ամուր (? badusi nt), պարսպով շրջապատելով (ui giei šidauri)»: Մի ուրիշում ելի նույն շինարարությունն և անում («Իշպուլինի, Սարգուրի վորդին այս տուն-տաճարը կառուցեց» (Զվիստան գյուղից Վանի մոտ): Յերբորդը (Պաթնոցում) ելի խոսում և շինարարության մասին, հավանորեն աաճարի մասին (անունը չի մնացել) և չորբորդը նույն անգում՝ մի բառից և «Išpuuiale» (= Իշպուլինին): Չինդերորդի պատկանելը Իշպուլինին մենք չենք ընդունում, քանի վոր այդ արձանագրությունը (Վարագուն, Կարվրավոր վանքում) հեղինակի՝ թագավորի համար միայն մի նշան ունի -ni, վորը իբր թե Išpuul-ni բառի վերջին վանկն է՝ [Išpuul]-ni kai¹ «Իշպուլինիի առաջ»:

¹ Այդ ֆրագմենտար արձանագրության մեջ միայն վորոշ և [ABNUPU lu]-si kugubi ասողը վոր նշանակում և արձանագրությունը պահել ավի:

Ինչպես տեսնում ենք, Իշպուհինիի սեփական արձանագրություններն ազգատ են բովանդակությամբ և քիչ են. խոսվում է աաճարաշինության կամ փոքրիկ սրբատների (burgana և Ê-aše) շինության մասին: Բաթնոց քաղաքը Իշպուհինիին եր պատկանում, քանի վոր այդտեղ է գանված նրա մի արձանագրությունը:

Բայց նշանակությունը այդ չի, տյլ այն կարևոր սկիզբը, վոր նոր ուղի բացեց ուրարական գրական պրակտիկայի և կուլտուրայի մեջ: Ի՞նչ են ասում Իշպուհինիի և Մենուայի միացյալ արձանագրությունները, Առաջին շաա կարևոր մի արձանագրությունը (Յ4 աոդ), գրված յերկու անգամ (վերևում և ներքևում), այդ՝ հայանի Մհերյան դուան («Մհեր-կապուսի») արձանագրությունն է Վանի մոտ, Զիմզիդ-դադի վրա: Այստեղ Իշպուհինին ու Մենուան հաղորդում են այդ «դուռը» շինելու մասին, տալիս են գլխավոր և յերկրորդական բոլոր տասվածների անունները, վորոնց պիտի կանոնավոր կերպով (ամսե-ամիս) դոհեր մատուցվեն. զոհեր են մատուցվում և Պալդյան ղենքերին, զոհերին (SUSI), բնության այլևայլ ասավածներին (լեռան, արոտատեղի...), Բիայնայի դաշնակից հիմնական քաղաքների ասավածներին (Տուշպա, Արդինի-Մուսասիբ, Կուվենու, Արծու(ի)նիունի), տնկում են խաղողի և ծառերի այգիներ, շրջապատելով պարսպով, սրբաանդերի այգիներ, նվիրատվություններ և վերջում զոհաբերություններ են կատարում թե կենդանիներով և թե գինու զեղմամբ: Այս արձանագրությունը ունի այն կարևոր քաղաքական իմաստը, վոր ասվածների կազմավորության մեջ, այսինքն՝ խալդական պանթեոնով յուր յեռասավածյան գլխավորությամբ (Պալդ, Տեշուպ-Տեյշերա, Արդինի), արտահայտվում է ուրարտական ժողովրդի և պետության կոնսոլիդացիան, հավաքական ձևավորումը՝ կազմավորումը: Այդ գլխավոր ասավածների յերարխիան արտացոլում է և ուրարտացիների պատմական ծագումը այլևայլ ցեղերից (տես մեզ մոտ եջեր 45—55) Յերկրորդ կարևոր և ելի կրոնական-քաղաքական բնույթի արձանագրությունը—այդ՝ Կելիշինի հայտնի յերկլեղվյան արձանագրությունն է ուրարտական բնագրով և ասուրական թարգմանությամբ վորի լավագույն նոր հետազոտությունը տվի է գերմանացի խեթագետ և խալդագետ Ալբրեխտ Գյոտցեն (A. Gotze)¹:

¹ Siehe Zeitschrift für Assyriologie № I V 1929 S. 100—128 Zur Ke-
Irischm. Stclc“

Կելիշինի արձանագրությունների (ասսուրական և ուրարտական) նշանակությունը բացարձակ մեծ է: Իրանք գրված են մի մեծ քարակոթողի յերկու յերեսների վրա. ուրարտականը համարվում է հիմնական-սկզբնականը, իսկ ասսուրականը նրա բառացի-առաջի թարգմանությունը (ըստ Götze-յի): Կելիշինի (Kel-i-šîn քրդերեն՝ «կապույտ սյուն») արձանագրությանց այդ կոթողը (1 մետր 71 սանտ ըստ ճշտությանը և 0,62 սանտ լայնությամբ) ձևով նման է շատ այլ ուրարտական pulusi-ներին («քարակոթողներին»), կամ «ստելա»-ներին (Stele, стела), նման Ձվարթնոցի կոթողին և հայոց խաչքարերին իրենց փշիկով (ՊՊՊ)՝ ամրացած պատվանդանի վրա¹: Կելիշինի կոթողը գտնվում է այժմյան Ռեվանդուզի շրջանում: Ուրարտական բնագիրը նորից գծված է մի այլ քարակոթողի վրա (1 մետր 98 սանտ. բարձր 66 սանտ լայնությամբ և 33 սանտ. հաստությամբ), վոր գտնվում է Կելիշինից 6 ժամվտ ճանապարհորդության հեռավորությամբ, այժմյան Ուշնի գյուղի մոտ (Ուրմիայից հարավ արևմուտք՝ Տաշ Թեփեյից արևմուտք, Ձիլիկի մոտ): Ուրարտական բնագիրը 40 տողից է, ասսուրականը՝ 42: Կելիշինի արձանագրությունը շատ վնասված է²: Այս յերկկեզվյան արձանագրությունը, ինչպես և Ռուսայի (1) յերկկեզվյանը Թոփ-գաուեյում, հսկայական ծառայություն են մատուցում ուրարտական լեզվի կառուցվածքը (քերականությունը) հասկանալուն ուրարտերենի լեզվական միակ ռեալ բանալին³ սրանք են

Սարգուր II (III)-ի՝ Վանում հայտնաբերված մեծ կոթողը ունի հատուկ (մետրի չափ բարձր) պատվանդան, վորի առաջին յերեսը կրում է Մառի մոտ բերված V մեծ արձանագրությունը՝ Մյուս ստելաները ամբողջված են յեղել անմիջապես զեանի (քարի) վրա:

¹ Տեղական քրդերը ողբապարծում եյին վորպես հրացանի համար նշան խփելու առարկա: Ի դեպ Կելիշինի մասին առաջին հաղորդողը յեղել է H Rawlinson-ը (1841 թ.), հետո գոկտոր Rosch-ը. սա առաջինն էր, վոր ետամպած կարողացավ հանել, սակայն ինքը և յուր ոգնականների մեծ խումբը սպանվեցին տեղական քրդերի կողմից: Ուշնիի (Ձիլիկի) արձանագրությունը, վորը գտածենն է Կելիշինի ուրարտական բնագրի, առաջին անգամ ետամպած հանվեց Շուլցի կողմից, վորը նույնպես գոհ գնաց այդ քրդերի կողմից:

² Այս առթիվ Götze-ն ասում է. „Ihre [Կելիշինի] bilingue Natur macht die Kelischin-Stele trotz ihres fast trostlos zu nennenden Erhaltungszustandes zu einem Monument von ausserordentlichem Wert. Neben ihr gibt es nur noch einen bilinguen assyrisch—chaldischen Text: die Stele von Topzauä; auch diese ist schwer verstummelt und, wie mir nach der vorläufigen Publikation scheint noch schwerer als die von Kelischin ergänzbar und

Կելիշինի տրձանագրության բովանդակությունն և «Յերբ նրանք Խալդու առաջ Մուսասիր [=ուրարտական տեքստում՝ Արդինի] յեկան, Իշպուլինին Սարգուրի վորդին (մեծ արքայն), հզոր արքայն, (արքա աշխարհի), արքա Նաիրի յերկրի [=ուրարտական տեքստում՝ արքա Շուրա յերկրի, արքա Բիտինա յերկրի], տերը Տուշպան-քաղաքի, (և) Մենուա, Իշպուլինի վորդի, Խալդուն քարակոթող կանգնեցրին նրա վրա արձանագրություն գրեցինք: Քարակոթողի առաջ բերեց Իշպուլինին, Սարգուրի վորդին, լավ զենքեր, լավ [=սուրբ] զոհակենդանիներ (?) նա բերեց բրոնզե կանթեր¹, նա բերեց բրոնզե անոթներ, նա բերեց... նա բերեց շատ զոհակենդանիներ (?). նորից գրեց (այդ) ցած Խալդու դոնների առաջ (և) այդ ավեց Խալդուն, տիրոջը, յուր կյանքի համար: Նա բերեց 1112 արջառ (= յեզ կամ կով), 9020 (|| 9120) գառ, սուրբ զոհակենդանիներ (?) (և) 12480 մեծ որհնած գառներ Յերբ նա Խալդու առաջ Մուսասիր (|| Արդինի) յեկավ, Իշպուլինին՝ Սարգուրի վորդին, (մեծ արքան), հզոր արքան) (արքան աշխարհի), արքան Նաիրի յերկրի [|| արքան Շուրա յերկրի, արքան Բիտինա յերկրի], տերը Տուշպան-քաղաքի, վողորմությամբ (?) Խալդու այս սրբատեղին հիմնադրեց [հիմնեց]. (իսկ) անվանյալ իրերը միշտ նորից գրվելու յեն Խալդու դոնն առաջ՝ ճանապարհին, Մուսասիրում [|| Արդինի] Խալդու դոններից զոհակենդանիներ (?) նորից միշտ տարվելու յեն: (Արդ՝) նշանակեցին— յերբ նրանք Խալդու առաջ Մուսասիր [|| Արդինի] յեկան, Իշպուլինին՝ Սարգուրի վորդի (և) Մենուան Իշպուլինի վորդին, որհնեցին զոհակենդանիները (?) Խալդու և հետևյալը ասացին «Ով զոհակենդանիները Խալդու դոններից գուրս տանի (և) նրանց վոջնչացնել ձգտի յերբ նա մի ուրիշի մի այլ տեղ տանել գրգի, նրանց թագցնի, այն ժամանակ...: Ով (նրանք) Մուսասիրից [|| Արդինից] ելի (?) գուրս տանի, յեթե նա (մեկին) վորեկ զոհակենդանիներ Խալդու դոններից գուրս ոտնել

verständlich (Z. A., V, էջ 99): Ասուրերենում Կելիշինի բնագրի շարահյուսությունը շեղվում և նորմալից, թերևս տեղացիք են թարգմաններ Լեզուն սարգոնյան շրջանի բարբոս և („Die assyr. Version ist i i Dialekt der Sargonidenzeit“, ibid.):

¹ Սուրերեն գրած և ia š [uri-gal]-ju^{pl} sa erī, լսկ խալդերենում ia [URU]-GAL-Ū^{pl} GRI, վորոնք Götze-ն թարգմանում և „Er brachte myr-claite aus Erz“: Փակագծերով լրացումները առաջին անգամ հիշա նշել և հայտնի ասուրագեա Ebeling-ը (ibid., էջ 108)

դրդի, տյն ժամանակ թող Քալդը նրա անունը յերկրից ջնջի: Ով այս արձանագրությունը (= քարակոթողը) սրբատեղիից դուրս հանի (վերցնի)¹, ով այն ջարդի, ով մի ուրիշի ասի—գնահարդի, թող հանցավորի անունը Քալդը, Տեղբան, Արդինին (և) աստվածները Մուսասիրի [|| Արդինի] յերկրից բնաջնջեն»

Կելիշինի նշանավոր այս արձանագրությունը ցույց է տալիս ուրարտական հզորության աճումը, ուրարտացիների սպառնանքը Ասսուրեստանին, իրեն յերկրի մտաավոր սահմաններին, այն է՝ վոքբ Ջարի վերին հոսանքի շրջաններին. դա մի պատասխան է Շամշի-Ադայի հարձակումներին, յերբ վերջինիս աուրտանը ավերում է ուրարտական 11 բերդեր և 200 քաղաք՝ Փոքր Ջարի նեղ կիրճով հեշտ եր դուրս գալ և ասպատակել Ասորեստանի հողերը, քանի վոր այդ ճանապարհը ավելի կարճ եր և դիմադրելը ասսուրացիներին ավելի հեշտ: Վերջապես Մուսասիր Արդինին յուր Քալդու տաճարով շարունակում եր մնալ և պաշտպանվել վորպես ուրարտացիների սկզբնական և հիմնական սրբավայր. չե՞ վոր այդ քաղաքը նախկին Uruatri յերկրին մտա եր կամ թերևս հենց մեջն եր:

Կելիշինի արձանագրությունը, բացի լեզվական և վոճական արժեքի տեսակետից, ունի և ռիտուալ նշանակություն և քաղաքական (հմմտ. այդտեղի տիադոսը): Կարծես Իշպուլինին ավելի յե ընդդժվում, քան նրա վորդի Մենուան: Հատկապես կարևոր է այսպես կոչված «անեծքի ֆորմուլան», վորը սկզբնական ուրարտագիտության շրջանում ծառայում եր վորպես մի ուժեղ միջոց լեզուն վերժանելու համար, համեմատության մեջ դրվելով անեծքի այդ ֆորմուլայի վոճաբանական արտահայտումներին այլ հին լեզուներում, մանավանդ ասսուրականում:

Այս արձանագրության վերջին նկարահանողը Լեհեանն-Հաուպան եր վորը ստիզված եր քարակոթողը տեղից հանել նկարելու համար, վերստին հաստատելով յուր աեղը՝ Այդ բազմաշխատ ուրարտադետին ենք պարտական Կելիշինի արձանագրության դեռ պահված մասի գիտական ոգաագործման համար²:

¹ Gotze-ի թարգմանությունը այստեղ մենք ուղղում ենք ուրարտերեն (alu)še Tappu Ini suui-dulie նշանակում է ե ով այս արձանագրությունը վերցնի» (կա այլուր KUR ASSUR suui dubi=Ասորեստանը վերցրի):

² Այս կարևոր արձանագրությունը շատ թանկ նսանց գիտությանը Քացի Ռոշի և Շուլթի արագիկ փորձերից այս վայրն ես յեկել (Ռեվանդուզի մոտ սարերում) նաև Կահիրեյի մուզեումի գիրեկաոր M. J de Morgen, վորին

Իշպուլինիի և Մենուայի կրոնական շինարարութեան վկան է նաև այսպես կոչված «Աշրուտ-դարդա»-յի արձանագրութեանը (5 յերկար տող), վորը գտնվում է Սալաքանա և Պադան գյուղերից (Վանից արևելք) գեպի արևելք ընկած Աշրուտ սարի վրա, այն է՝ նրա հարավային լանջի մեջտեղում, մի ժայռի վրա, ուր կոփված է մի դուռ (քրդերեն «Աշրուտ դարդա» նշանակում է «դուռ Աշրուտի» = Աշոտի?): Այս դռան վերին մասում փորագրված է այդ արձանագրութեանը հետևյալ բովանդակութեամբ «Սալդուն, տիրոջը. Իշպուլինին Սարդուրի վորդին (և) Մենուան՝ Իշպուլինիի վորդին Սալդու դուռը կառուցեցին: Սալդյան (= Սալդու) փառքով (= շնորհիվ և փառքի) Իշպուլինին՝ Սարդուրի վորդի (ե) թագավոր հորը, թագավոր մեծ, թագավոր Բիաինա յերկր(ներ)ի, տեր Տուշպա քաղաքի: Սահմանեցին նվիրաբերութեան (? ardiše) kudulaani (= ?)¹ այդու մեջ (? šuxinaatsie)²: (Մի) գառ Սալդուն են դոհում, (մի) արջառ Սալդուն են դոհաբերում (? urbuulini)³, (մի) «վայրի-յեղ» (= երինջ?) Ուարուրանի ասածուն, (մի) վոչխար Սալդյան դռան (դոհերին), (մի) վոչխար Սալդյան դենքերին»: Արձանագրութեանը առաջին տեղամ հայտնաբերել է պրոֆ. J. Wunsch (1882 թ.), իսկ հրատարակել է 1886 թվին D. H. Müller Վիեննայում («Die Keilschrift von Aschut-Darga էջ 1 13»)

հաջողվել է ետամոգած հանել (1891 թ.), ուստի արևելադեա Սանիկովը (1852 թ.) և դոկտոր Blau: Թե նախորդի և թե վերջինի ձուլածոները շարքվել էին է կառուկառ յեղեզ: Blau-յի ձուլածոն չորս մասի վերածված 1858 թվին ու դարկվել է Գերմանիա (Halle):

¹ Կասկած չկա, վոր այդ բառի հիմքն է kudula, իսկ an անանց է (|| հայոց հան, -ան, -ավոր): Kudula բառը թերևս նշանակե «կոթող» (հմմա. վրաց godoli «աշտարակ»), ծագած բաբելոնյան kuduru բառից, վոր նշանակում է այն սահմանորոշ քարը, վոր անկվում էր արտերի (հողերի) մի ջև և ունեք յուր վրա գրված արձանագրութեան՝ սահմանների մասին, անի ծելով նրանց՝ սվքեր կհամարձակվեյին խախտել այդ հողային սահմանները: Kudula կարող է նշանակել և «որհնք, ցայր» և ուրեթև kudulani = բառ որինի, կանոնավոր կերպով (?):

² Šuxe գործ է անվում ծառերի է վորթատունկերի հեա (tsarle šuxe terunt, uldie šuxe terunt, ինչպես Մենուայի դռան արձանագրութեան մեջ վոր նշանակում է «ծառի այգին անկեցին, խաղողի այգի անկեցին»):

³ Nipsidulini մենք թարգմանում ենք «գոհում են»: Զվարթնոցի արձանագրութեան մեջ մի տեղ դահաբերման համար գրված է գաղափարագրով (SUM), մի տեղ այս բայը: Urbulini մտավորապես նույնը պիտի լինի կա և «մարդ Urbikaše» = գոհող քուրմ (?):

Ուրարտուի պատմությունը—10

Իշպուլինիից և Մենուայից ռազմական մի արձանագրությունն միայն կա, թեպետ յերկու վարիանտներով, մեկը Գյուանենց գյուղից (Վանի մոտ) կամ Կասրմ-ողլուլից (կոթողի մնացորդ է), մյուսը Վանի ս Պողոս-Պետրոս յեկեղեցուց (մի քար է յերկուսի բաժանված և պատի մեջ գրված): Ըստ իս դրանք յերկու արձանագրություններ պիտի կոչել, թեպետ ընդհանուր բովանդակություն ունեն: Առաջինի մեջ ասվում է «Սալդուն աիրոջը Իշպուլինին Սարգուրի վորդին (և) Մենուան Իշպուլինիի վորդին այս քարակոթողը գրել տվին: Սալդը արշավեց, յուր ղինանշով (?) նվաճեց Վիտերուխին նվաճեց Լուշային, նվաճեց Քատարգային.. Սալդյան փառքի շնորհիվ արշավեցին Լուշայինի [յերկրի] դեմ Իշպուլինին Սարգուրի վորդին (և) Մենուան Իշպուլինիի վորդին... գորքերով՝ 66 մարտականքով, 1460 հեծյալով (և) 15760 հետևակով Սալդը առաջնորդում էր Իշպուլինին Սարգուրի վորդուն (և) Մենուային Իշպուլինիի վորդուն. Վիտերուխի, Լուշա (և) Քատարգա [յերկրները նվաճեցին], տիրեցին մինչև (kutetu pari) ¹: Մենք առաջարկում ենք pari (մինչև, do) նախդիրից հետո պակասավոր յերկրի կամ քաղաքի անունը (իսկ ըստ արձանագրությունների մեջ kutubi կամ kutuni, kutetu pari-ից հետո լինում է քաղաքի կամ յերկրի անուն) լրացնել URU Anašie «Անաշիե» քաղաքի անունով: Նախ Պողոս-Պետրոս յեկեղեցու վարիանտում կարդում ենք „.anašiee.. ¹Ušaruxi burgalali LUGAL^{pl} KUR Etiuxinili arnuyali uštābi ^dXaldin mašini ցիŠurie ¹Ušaruxiniedi ¹Lušainiedi ¹Katarzaniedi KUR Etiuxinaedi LUGAL^{pl}-di... uštābi ¹Išpuuinini ^{1d}SARdurixi Menuani Išpuuinixi suui-dutu ¹Ušaruxi ¹Luša ¹Katarza burgalali LUGAL^{pl} KUR Etiuxini li zašili ma-[kuri] anašie nunabi ištini .“: Այս թարգմանում ենք «Anašie [քաղաք]. Ուտարուխի [Լուշա և Կատարգա] գերագույն (բարձր) թագավորներին, Եթիունյաններին, arnuyali (= ? բարձրերին) արշավեց Սալդը յուր ղինանշով Ուտարուխյան (յերկրի) դեմ, Լուշայան (յերկրի) դեմ (և) Կատարգայան (յերկրի) դեմ, Եթիունյան յերկրների թագավորների դեմ.. Արշավեցին Իշպուլինին Սարգուրի վորդին (և) Մենուան Իշպուլինիի վորդին նվաճեցին Ուտարուխին, Լուշային (և) Կատարգային բարձր

¹ Այս արձանագրությունը բերված է Ֆրիդրիխի (Einkl. aus Urart, էջ 22) աշխատությունից, թարգմանությունը վորոշ կրճատումներով է արված:

Թագավորներին Եթիունական (և) բնիկ (zašili).. Anašie-ն յեկավ ալատեղից...»։ Սրանից հետո թվարկվում է այն ավարի քանակը (ձիեր, արջառներ վոչխարներ) և գերիների քանակը (չերիտասարդ, կին...), վոր ասարվում են այդտեղից. իսկ վերջում կցվում է «անեծքի Փորմուլան» (տես Սեյս № 31, Սանգ № 3)։ Վոր Anasie բառից առաջ պակասավոր անընթեռնելի մատում պիտի լինել URU (քաղաք) գաղափարանիշը, դրանում մենք չենք կասկածում, քանի վոր Ալաշկերտի պակասավոր արձանագրության մեջ (այնտեղի Թոփրակ-կալե բերդի պատի մեջ) մենք կարգում ենք— α_1 ^dXaldini uštabe ma[sinie].. $|\alpha_2$ ^dXaldi kuruni ^dXai[diri ^{GI}ššuri kuruni] $|\alpha_3$ ^IMenuani ^IIšpuui[nixi] $|\alpha_4$ [ku-]tetu pari URU A na-ši-e i (տես Н Мара Фрагмент халдской надписи из Алашкерта Изв Ак Ист Мат. Культуры т I 1920 г кр 53)։ Մտաք վերջին առդից սխալ եր վերականդնում xi lu pa-ri «A na-ši-e-i»։

Այսպիսով ստացվում է հետեյալ յեզրակացությունը—1) Վլատարուխի, Լուշա (=Լուսա) և Կասարգա (Քասարծա, Քասարգա) թագավորների յերկրները գրավվում են Իշպուլինիի և Մենուայի կողմից 2) այդ «գերագույն» կամ «բարձր» թագավորները կամ յեղի ևն հայտնի Եթիունի ցեղերից (լեղվով, ծագումով) կամ քաղաքականորեն յենթարկվել են այդ Եթիունի կոնֆեդերացիային, վորպես վաստալ մանր իշխանություններ 3) այդ յերեք իշխանությունները («թագավորությունները») մտա են յեղել Anasie (Անաշիե կամ Անասիե) քաղաքից, քանի վոր այդ անունը հիշատակվում է յերկու արձանագրություններում, ի տեղ առանց «քաղաք» գաղափարանշի (Չնջված է), մի այլ տեղ այդ նշանով. 4) Anasie քաղաքը, մինչև վորը տիրում են (kufetu pari «տիրեցին մինչև, овладели до «). այդ յերեք թագավորների յերկրները գանվում էյին այժմյան Ալաշկերտի շրջանին կից, քանի վոր այդ արձանագրությունը տեղային է և գտնվում է Ալաշկերտի Թոփրակ-կալեյում. 5) այդ յերեք յերկրները, մեր կարծիքով, հակառակ Մեջանինովին (Archiv für Orientforschung, 6, 1931, կր 205—207) և Լեհմանն-Հաուպպին (Armenien einst und jetzt II I [1926], կր 165), դանվելիս են յեղել Ալաշկերտի հովտում հին հայոց Բազրեանդում և Բասենում ապարալիս եր Ապահունիքը Յեփրատի հովտով մինչև Մանազկերտ։

Ալաշկերտի այս պակասավոր արձանագրությունը անշուշտ չէ յն ձևով և գրված յեղել, ինչպես և Վտնի մտա յեղած (Կա-

սիմ-սղլու և Գյուանենց գյուղի ու Պողոս-Պետրոս յեկեղեցունը)։ Այդ վերաբերել և Վիսարուխի, Լուշա և Կատարդա յերկրների նվաճմանը (յերկիրը արվում և բաս իշխանի առհմանվան), վորը համարվել և շատ մեծ քաղաքական դեպք Իշպուլինու ու Մենուայի կողմից։ Վոր այդ Ալաշկերտի Ֆրագմենտար արձանագրությունը յերկուսով են գրել (Իշպուլինի ու Մենուա), այդ յերևում և բայից. Մառի „ xi-tu“ նշանները պիտի կարդալ [ku-] ' !' è tu, այսինքն վերականգնել ku, վորից հետք չի մնացել, հետո քè (de) վորից մնացել և վերջի կեսը (> >), վորը Մառը շփոթել և xi նշանի (> >) հետ ն Մառը դժբախտաբար չի բերում յուր այդ փոքրիկ հողվածում Ալաշկերտի այդ դեֆեկտավոր արձանագրության եստամպածի լուսանկարը։ Իսկ kuțetu նշանակում և աիրեցին (մոսավորապես), վորը այլուր փոխարինվում և xat- արմատով (xatubi pari «կտրեցի, սնջաանցի մինչև») նման կոնստրուկցիայի մեջ։ Ուրարտական թագավորները սովորություն ունեյին (ինչպես և ասուրական)՝ թե նվաճվող տեղերում թողնել արձանագրություն և թե իրենց մայրաքաղաքի հավաքածո-աննտններում (որինակ Արգիշտիի և Սարգուրի)։ Ալաշկերտինը անդականն և և գրված և յերկու թագավորների կողմից։

Իշպուլինիի և Մենուայի միասեղ դործողությունները քաղաքական և կրոնա-շինարարական բնագավառում սահմանափակվում են այս չորս-հինգ արձանագրություններով (Կելիշին-Ուշնի, Մհերյան դուռ, Աշրուտ-գտրգա, Գյուանենց || Պողոս-Պետրոս և Ալաշկերտ), չհաշված քաղաքական այդ վերջին արձանագրության վարիանսները վորոնք վերաբերում են Եթիունյան յեքեք իշխանությունների նվաճմանը։

Մ Ե Ն Ո Ի Ա (800—780)

Վոչ մի ուրարտական թագավոր այնքան շատ ու բազմաբովանդակ արձանագրություններ (թվով մոտ 50) չի թողել, վորքան Մենուան։ Դրանք վերաբերում են արաաքին քաղաքական դործերին (նվաճումներ), վորպես ուղղական արձանագրություններ, հետո՝ քաղաքացիական ներքին շինարարության (ջրանցքներ, այգիներ...) և վերջապես՝ կրոնական շինարարության և նվիրաբերության։

Ռազմական-քաղաքական արձանագրություններից մեկ

հայանի յե գառնում վոր Մենուան արշավել և արևելքում Ma na (Ուրմիա լճի մոտ) յերկիրը, մի բան, վոր պարզ պետք և հասկացվեր և կելիշինի արձանագրությունից, հետո արշավել և դեպի հյուսիս-արևմուտք և արևմուտք, դրավելով Դիաուլիի իշխանության յերկիրը և խեթական հողերը, իսկ հյուսիսային ուղղությամբ նա հասնում և, բացի Ալաշկերաի հովտից, ինչպես տեսանք վերը (հոր հետ և կատարել այդ արշավանքը), այլև Մասիսից դեպի հյուսիս, այժմյան Իգդիրի—Տաշքուրունի շրջակայքը՝

Մելազգերդի (Մանազկերտի) մոտ թողած յուր հայանի արձանագրության մեջ¹ նա ասում և. «Պալը արշավեց յուր դինանշով Դիաուլիինի [գինաստիայի] յերկրի դեմ, հզոր յերկրի դեմ (¹ Diauexinedi KUR taraiuedi)². Պալդյան փառքով (= Պալդյան փառքի շնորհիվ կամ համար) արշավեց Մենուան, Իշպուլի-նի վորդին, առաջնորդեց Պալը: Մենուան ասում և—գրավեցի Դիաուլիի յերկիրը, Շաշիլու(նի) քաղաքը արքայական գրավեցի կովով, յերկիրը վառեցի, բերդերը, ատրեցի մինչև Շեշեաինի յերկիրը, Ջուաինի քաղաքը, Ուտուխա քաղաքին կից (?), Մենուան ասում և—Ուտուրուրը, արքան Դիաուլիի, յեկավ իմ առաջ, փարվեց վոաքերիս, վայր ընկավ (= ծնկի յեկավ, չոքեց) ... գցեցի հարկի տակ, բերեց վոսկի, արծաթ, բերեց հարկ և այն կալանավորյալներին (փախստականներին ?) ... վերագարձեց մարդկանց (ցեղերը), բազմաթիվ Դիաուլիինի ձիեր ու զորքեր ... փոխադրեցի ... յերկու թագավորների ավերեցի (? edini su şukubi)՝ Բալաուլիի տոհմի (Բալաուլական) յերկրի (և) Պալդիրիուլիի (Պալդիրիուլական) քաղաքի յերկրի, բերդերը aşilli (= ?) ամբացված (և) յերկրամիջի յես ավերեցի (? (edini su şukubi)» հետո արվում և անեծքի ֆորմուլան:

Տաշքուրունի արձանագրություններում ասում և, վոր նվաճել և E-ri-ku-a-xi (= Erkuaxi) տնձի յերկիրը, նրա Լուխիունի քաղաքը: Այս Erkua-xi-ն տառացի նշանակում և «Երքուական, Երքուայի տոհմի (ցեղի), Երքվյան»,—մի անուն, վոր անունում

¹ Մանազկերտի շրջանի «Յաղլի սաշ» (Դահար լեռան մոտ) գյուղի մոտ և

² Ի զուր են գրում KUR Taraiuedi, կարծելով թե դա անդանուն և (Տարան?) tarai, վորպես «շառ» թե «հզոր», զործ և անվում և այլուր, իսկ Տարունը գործ և անվում Արգիշաիի մոտ Tariuni անունով

ենք և Եթիուսյան-Լիքյան շրջանի թողտվորների մոտ (գրված է Ir ku a || Er-ku-a):

Մաննա յերկրի մասին կարդում ենք Վանի Պողոս-Պետրոս յեկեղեցու միացնող միջի աղեղի վրա գետեղված մի քարի վրա (գեֆեկաավոր է) — Սարգյան փտոքով Մենուան Իշպուլինի վորգին ասում է. յերբ tušuxaanı (դարնան?) Մանա յերկիրը արշավեցի, յերկիրը կերա, վառեցի նույն տարին դորքերը ուղարկեցի — գրավեցին Սադա ալիական (Սադա ալի տոհմի-ցեղի) յերկիր(ներ)ը, Շուրիշիլի(նի) քաղաքը, Տարխիգամա(նի) քաղաքը... Սասինասաա(նի) յերկրին հողատակ (?) և Ալգինի [= Աղձնիք] յերկրից 2113 մարդ տարա, վոմանց սղանեցի վոմանց կենդանի տարա հարկը վոր կար (Ֆնացել եր) տվի դորքերիս...»

Բալուսի մոտ թողած մեծ արձանագրության մեջ Մենուան ասում է. «Սարգը արշավեց (և) յուր ղինանշով գրավեց Պուլաերիա քաղաքի յերկիրը, նվաճեց Սուլասնա քաղաքի յերկիրը, նվաճեց Մոփա յերկիրը...»: Այս նվաճումները կրկնելով արդին յուր անունից, ավելացնում է, վոր այդ բոլորին (թե միայն Tsupa քաղաքին?) նա աիրում է մինչև Սաթեինի յերկիրը (kutuni pari KUR Xateinaa «աիրեց մինչև Սաթեինի || Սաթեինա յերկիրը»), Սալու(ն) քարակոթող գրել ավեց (կանգնեցրեց?) Պուլաերիա քաղաքում (= Բալու)..., Մելիտե քաղաքի Շուլեհավալի թագավորին դցեց հարկի տակ սրանից հետո տրվում է անեծքի ֆորմուլան:

Մշո դաշտում ևս Մենուան ավերածություններ է կատարել յերևի այս վերևի արշավանքների ընթացքում՝ դեպի Մելիտենե արշավելիս: Իրմերդ գյուղի (Մշո դաշտում) գերեզմանոցում անգլիացի կապիտան Կլայտոնի կողմից հայտնաբերված արձանագրություններից (3 հաա) միայն մեկում կարելի յե կարդալ, վոր Մենուան 4 «քաղաք» է վոչնչացրել, վառել. Kulme քաղաքը, E karšū քաղաքը...: Յերևի այստեղ բերդ է շինում, վորովհետև քարի հեակյալ յերեսի վրա տրվում է անեծքի ֆորմուլան, ուր ի միջի այլոց ասում է. «ով (մի) ուրիշը ասե (aluše uliše tiulie) յես կառուցեցի (ieše zaaduubi)», իսկ այդ որչևկար կարող եր լինել բերդ, աաճար կամ նման բան:

Սարբերդից հյուսիս Մաղկերտում դանված (բերդի վրա) մի արձանագրության մեջ Մենուան ասում է, վոր «Թիթիային

(Tilia-ni) այստեղ փոխարքա դրեցի՝ (տողեր 10—12)¹, իսկ Պաղինի յուր արձանագրության մեջ թվարկում և Աշուրնի (= Ասորեստան) սահմանների նվաճումը, Դիաուխի յերկիրը, Ուրմինի յերկիրը, Նարգում և խեթերին և միացնում և յուր թագավորությանը մինչև Մելիտե (Մելիտենե) ընկած շրջանները²:

Բադրեանդի և Բասենի սահմանների մաս, Եշակ-Եյլադ սարի մոտ (Դիլիրաբայի մոտերքը) Մենուան թողել և մի արձանագրություն ժայռի վրա, վորը կրկնությունն և Մելադկերաի «Յադլի տաշ» արձանագրության:

Բասենի Հասան-կալայում ևս յեղել և ի քարակոթող, բրված հավանորեն Մենուայի կողմից սակայն բերդի վրա միայն պատվանդանն (ցոկոյն) և մնացիլ:

Բոլոր այս վերևում բերած արձանագրություններից պիտի յեզրակացնել, վոր Մենուան յուր քաղաքական եքսպանսիան տարածել եր Ուրմիա լճի (Մանա) մտից մինչև Արևմտյան Յեփրատ (Մալաթիա) և Հայկական Տավրոսից մինչև Հայկական Պարր, տնցնելով մասամբ այդ վերջինից դեպի Արարատյան դաշտը (Տաշրուրուն): Նա գրավել եր Արածանիի ամբողջ տարածության վրա ընկած շրջանները և հավանորեն նաև Բասենը: Կարելի չե ասել, վոր Մենուան և հիմք գրել Ուրարտուի հղորությանը և ստեղծել Ուրարտուն, վորպես Հին Արևելքի մեծ դեպոսիտներին մեկը:

Նրա շինարարական արձանագրությունները ևս շատ են և բեքավոր: Տասից ավել արձանագրություններ կան, վորտեղ նա հաղորդում և յուր «Մենուայի պիլի (Menuai pili)», այսինքն՝ Մենուայի ջրանցքի մասին, վորը հայերը վերագրում եյին ասուրական Շամիրամ թագուհուն («Շամիրամասու» — Շամիրամի առու): Ահա ինչպես և նկարագրում ուրարտական այդ հոյակապ ջրանցքը Վ. Բելքը—

«Շամիրամ-սու ըսվածը արվեստական ջրմուղ մըն և վորն Վանա լճին հարավային արևելյան կողմը Հայոց Ձորի հարավային սահմանը կազմող բարձրաբերձ ժայռոտ լեռան մը ստորոտեն կլ ըղխե և Վերին Մեջինկերաին»

¹ Տե՛ս Մանդ., էջ 230 (№ 46 A.): Այս արձանագրությունը, գրված մի քարի վրա, սկզբում գտնվել և Կղլ-կալա բերդում, Մեծկերաի շրջանում (Խար բերդից հյուսիս): Հետո օտարվել և 4 1/2 կիլոմ. հեռավորությամբ գտնվող մի հայկական գյուղի յեկեղեցի և դրվել և ֆասադի պատի մեջ: Մենուան ասում և վոր քարը յես գրել ափի:

² Տե՛ս Тираев, Ист др Вост II էջ 44

ու Յոշապ գետին վրայեն անցնելով՝ քանի մը գյուղեր ու քաղաքներ վտարանելեն յետև Վանա լիճը կը թափվի համանուն քաղաքուն քիչ մը վար Ջրմուղին ակունքը հոկաները ամսուս մեջ, ամենեն չոր ժամանակը, վայրկյանի մը մեջ ապահովապես 1500 լիտր ջուր կուտան Այս ջուրը, վորը մեծ քանակությամբ ամիսներու կը պարունակե, ժայտերու ճեղքվածքներեն յելլելով անմիջապես դահափածարար ու մեծ շառաշյունով ժայտա գետնի վրա կը նետվի և ի սկզբան ուղղակի Յոշապ գետը կը թափվեր, վորն վոր ակունքին 5 քիլոմետր հեռու յե Յեաքեն ընդհանուր ոգտին համար ջրմուղը շինվեցավ ջուրը ազրյուրի քովեն գարննելով և ուղղելով դեպի Վերին Մեշինկերա, ուր մեծ ավազան մը շինվեցավ դանոնք ժողովելու համար։ Հոս՝ ըստ հին ավանդության՝ ժամանակով մեծ քաղաք մը կար։ Վերին Մեշինկերաին՝ ջրմուղին հասակը բարձրացնելով ջուրը աարված եր Սաորին Մեշինկերա, և անկե բարձրաբերձ ծառերու հաստ կոնգերով շինված հարթ խողովակով մը Յոշապ գետին վրայեն մյուս կողմն անցված և Յոշապեն անդին ջրմուղը ցցված ժայտերու և լեռան սաորոտին քովեն դեպի արևմուտք՝ Իշխանի Գոմ գյուղը կերթա՝ Սյուլլասան հեմ, Քարավանց, Անգղ և Մաշիերեք գյուղերը վտարանելով։ Իշխանիգոմի քովը՝ լեռան հյուսիսային սաորոտը գառնալով կամաց կամաց դեպի արևելք կուղղվի, կանցնի Յաղամ Քյոշկ, Ս Վարդան և Յարաբրյոյ գյուղերեն և կերթա մինչև Արտամեսա Արտամեսա յետևեն, Ծլ վրասան գյուղեն ջրմուղը կը շրջի դեպի հյուսիս և կը վազե Վան քաղաքին հարավային կողմն յեղած դաշտերու միջև, ուր հավանաբար հին ժամանակ ները Վանա հոշակավոր բուրստաններն ու աուները կը գտնվեին, բայց հիմա մեծավ մասամբ անմշակ և խոպանաղյալ յերկիր մըն եր Հսինք վոր ջրմուղին ակունքը Վան քաղաքեն 70 քիլոմետր հեռու յեն. սակայն ջրմուղին յերկայնությունը՝ անոր կորություններն ալ հաշվելով՝ 80 քիլոմետրի կը հասնի։ Ջուրը Յոշապ գետի վրայեն անցնելեն յետև մինչև Ս. Վարդան՝ ջրմուղին շինությունը մեծ գծավարությանց չե հանդիպած, վորովհետև մեծավ մասամբ կակուղ յերկրե կանցներ. բայց այնպես չեր Ս Վարդանեն մինչև Արտամեսա, ուր գետինն ապառաժուս ե և խորին վիհերով պատաստաված. հոս հարկ յեղած եր ամենամեծ գծավարությամբ վիհերուն յեղերքը՝ հատակեն մինչև վեր 10—15 մետր և ավելի բարձր կիկլոպյան լայն պատեր շինել մեծ ու պզակի ժայտերու կաորներ առանց շաղախի վրայի վրա դիգելով և ջուրն անոնց վրայեն անցընելը Յեզ այս պատերը դեռ կեցած են։ Այս ջրմուղին քովերը՝ վերեն մինչև վար գանազան տեղեր, գլխավորաբար ուր շինությունը գծավարությանց հանդիպած ե՝ ժայտերու վրա սեպածև արձանագրություններ գանված են՝¹

Քաղաքացիական-կրոնական այլ շինարարություններից Մենուան յուր արձանագրությունների մեջ հայտնուս և «քաղաքի» շինության մասին (Վարագի ս Նշան—«Յեղի քիլիսա»), բերդի և քաղաքի մասին՝ պարսպով շրջապատված (Շուշանց գյուղի Ասավածածին յեկեղեցուս), բերդի և քաղաքի մասին՝ պարսպով շրջապատված (ibid) siršini-յի շինության մասին

¹ Տես «Հանգ Ամս» 1903 եջ 84—85 (Լեոյի մոս եջ 271—272)

(յարանձա՞վ ?), դրված է Վանի ժայռի վրա՝ արվեստական ան-
 ասանկով (վրա), «Սալդեյան դռները» շինութեան մասին
 (Արտիստարի վանքում), SUSI-յի, Սալդեյան դռները և բերդի շին-
 ութեան մասին (Վարագ ս Սիոն), քարակոթող (pulusi) և
 գրել նվիրել Տեյշեբա (Վարագում) և Սուաուրի (Վան, Սուաուր
 ջամի) աստվածներին, Մենուայի կնոջ Թարիբիայի անվան
 «Թարիբիայի» («Թարիբիականք») այգու մասին (3 կիրով
 արևմուտք Արամեայից), տան (resp. տաճարի) շինութեան մա-
 սին (տես Սեյս, № 24, յերեի Վանից), Արծունիուրի քաղա-
 քում Սալդեյան դռները մասին (Սիկիկ գյուղի յեկեղեցում, 9
 կիրով. Վանից հեռու), SUSI (գուռն), Սալդեյան գռները և բերդի
 շինութեան մասին կողպանից գյուղում (ս Գեվորգ յեկ., Վա-
 րագ) Սալդեյան գռները շինութեան մասին (ibid.), տան (աա-
 ճարի) և բերդի շինութեան մասին «Մենուայի» անունով
 (Թոխանշալու գյուղի մոտ «Դավուալու» կոչված բլրի ստորո-
 սում, Տաշրուրունի մտերքը) susi (գուռն) և բերդ կառուցելու
 համար (1 մետր 20 սանտ. յերկարութեամբ և 50 սանտ. լայնու-
 թեամբ քարի վրա Մանաղկերտից, այժմ Պոլսի Թանգարա-ձուհի
 և), բերդ կառուցելու մասին (Հասան-կալայից, Երզրումի մոտ),
 տուն (É aši xuusi) կառուցելու մասին (գրված է 3 անգամ և
 դանվել է Յեդի-քիլիսա վանքում, Վանից արևելք), ,barsudi
 bidu“ կոչված տան (սրբատուն ?) շինութեան մասին (ibid)
 և այլն և այլն:

Մենուայի այս բազմազան և բազմաքանակ արձանագրու-
 թյունների մեջ կա ևս մեկը, վորը յուր «ժանրով» միանգա-
 մայն առանձնանում է ուրարտական բոլոր արձանագրութեան-
 ների մեջ: Այդ վերաբերում է Մենուայի ձիուն, այն է՝ նրա
 սրագավաղութեանը և գրված է այսպես՝ inukani esinini ANŠU
 KUR RA Artsibini tini ¹ Menua-pili aštibi 22 𐎠𐎺𐎠𐎺𐎠𐎺𐎠, վորը
 J. Friedrich-ը թարգմանում է «այս տեղից ձին, Արծիվի նի ա-
 նուն(ով), Մենուայի աակ, 22 (տարածական) չափ վաղեց»¹:

Յերկրորդ յուրահասուկ յերևույթը մենք կհամարեյինք

¹ Տես նրա Beiträge zu Grammatik des Chaldischen, Caucasia 1931
 Fasc. 8, № 146: „Von dieser (?) Stelle an ist das Pferd (Sing.!) namens
 Aršibini unter (?) Menua 22 Massenheiten (weit) galoppiert (?)“: Թերևս
 Artsibini (կամ ինչպես հիմա գրում են Aršibini) մականունը նշանակե
 «ար-
 ձուկ» (=արծիվ)? և հետևապես հնգերոպական ծագումով բառ լինի

Մենուայի կողմից յուր կնոջ Թարիբիայի մեծարումը և հիշատակի հավերժացումը: Նրա համար առանձին այգիներ են արնկվում («Թարիբիականք»): Արդյո՞ք այգ պիտի բացատրվի Մենուայի բարձր կուլտուրականությամբ, թե ասորական իր ժամանակակից Շամիրադադ թագավորին հետևելով. սրա կնոջ՝ Շամիրամի մասին պատմական վկայություններ կան, վոր նա բարելացի լինելով Նարու դիցուհու պաշաամուհւքը մտցրել եր Ասորեստան և արաստովոր բարձր դիրք ուներ: Ինչպես Բ. Տուրակն և ասում—Шаммурагат, несомненно, прототип Семирамиды Она единственная царица с самостоятельным положением и политикой, в ее время были частые войны с мидянами и севером Мидяне впервые увидели блеск ассиро-вавилонской культуры, и у них сложились легенды о Семирамиде, записанные потом уже в позднем виде Ктесием Точно также и халды запомнили это имя, и Моисей Хоренский относит к Семирамиде все доармянское в стране» (II, 69 44):

Կարծես թե Թարիբիայի խաղողի այգիները արձագանգը լինեն Սեմիրամիդայի կախվող այգիների (висячие сады): Բայց հայոց ավանդությունները Մենուայի վերոնկարագրյալ հոյակապ և հարուստ շինարարությունը նույնպես վերագրում են Շամիրամին, այն է՝ Ուրարտուի մայրաքաղաք Վանի և նրա ջրանցքի շինությունը: 42000 սովորական բանվոր և 6000 վարպետներ («փայտի և քարի պղնձի և յերկաթի») Շամիրամի հրամանով կատարում են այդ շինարարությունը (տես Մ. Պորենացի, I գիրք, § 16): Ինչպես հայ պատմագիրն է ասում—«Եւ հրամայէ նախ դամբարտակ զետոյն ապառաժիւք և մեծամեծ վիմօք շինել, կրով և աւազով մածուցեալ անբաւ լայնութեամբ և բարձրութեամբ. որ կայ հասաատուն, որպէս ասեն, մինչև ցայսօր ժամանակի»: Բայց Շամիրամ-սու ջրանցքից Պորենացին նկարագրում է նաև քաղաքի շինարարությունը, վորը կատարվում է մի քանի տարվա ընթացքում («ամբագունիւք պարբսպօք հանդերձ դրամրք պղնձակերաիւք») քաղաքի մեջ Շամիրամը շինել է տալիս սպարանքներ («ի պէսպէս քարանց և ի դունից զարդարեալս կրկնայարկս և եռայարկս») շինում է բաղնիքներ, ընդարձակ փողոցներ, քաղաքով ջուր է ասնում («ի սպաս ամենայն պիտոյից և յարրուցմունս բուրաստանաց և ծաղկոցաց») շրջակայքում մարգիկ է բնակեցնում և այլևայլ ծառաստաններով, վորոնք աարբերվում էին զի պաուդս և ի ան-

րևա» միջնարբերդ և կառուցում և նման շաա բաներ, վոր խոսրով չի լինում պաամեր Վերջում Պորենացին ավելացնում և «այս ասեմք միայն, թէ ամենայն թագաւորականաց գործոց, որպէս լուաք, առաջին և վեհադոյն համարեալ»: Պորենացին չի մոռացել խոսել և արձանագրությունների մասին, ասելով «Իսկ դամենայն երեսս քարին [Վանա հարավային ժայռի] իբրև գրչաւ դմոմ հարթեալ՝ բաղում դիրս ի նմա գրեաց որոյ հայեցուածն միայն դամենայն ոք ի դարմանս ածէ: Եւ ոչ միայն այս, այլ և ի բաղում անդիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով [= բևեռագրով] յիշաակ ինչ իւր հրամայէ գրել և ի բաղում անդիս սահմանս նովին գրով հաստատէր» (ibid.):

Մենուայի հսկա շինարարությունը միայն այդ 42000 բանվորներով («յասորեսաանեայց և յայլոց իշխեցելոց») և 6000 վարպետներով չեր վոր կաարվում եր: Պորենացու ասած «ասորեսաանցիներից և այլ հպատակներից» կազմած բանվորությունը—այդ ստրկության, այսինքն՝ նորմալավորված և իրականություն դարձած մի հասարակա-տնտեսական կարգի արտահայտությունն է: Այդ բաղմաթիվ քաղաքները բերդերը, տները, տաճարները ջրմուղները, այդիները և այլն չեյին կարող այդքան շուտ և հեշտությամբ կառուցվիլ առանց ստրկական ձրի աշխատանքի: Այդ ձևի ներքին շինարարությունը, բարիքների ավելացումը և կուտակումը, վորոչ անխնիկական առաջադիմության հետ (մետաղագործության և ուղմական արտադրության անսակեաից զենքեր, մարասկառքեր և այլն արտադրելու մեջ),—այս բոլորը նպաստում էյին խալդական պետության հզորացման, յեղած ցեղաաիրական շրջանների սոցիալական շերտավորման և փոփոխման, լավ զորք ստեղծելուն և արտաքին եքսպանսիան ևս ուժեղացնելու՝ թե այլևայլ նյութ, արտադրույթ (ցորեն, անասուն և այլն) և թե կոիվների միջոցով սարուկներ ձարելու համար:

Մենուայի քաղաքական լայնածավալ եքսպանսիան Տավրոսից մինչև Արարատյան դաշտը և Ուրմիա լճից մինչև Մելիտանն, ինչպես և այդ թագավորի գբանդիող շինարարությունը մեղ վկայում են, վոր Ուրարտուն այլևս Արամեյի և Սարգուրի շրջանի հասարակա-քաղաքական միավորը չե, այլ վորակով նորր, փոխվածը, ավելի ուժեղը և ավելի լավ կազմակերպվածը Իրոք վոր միայն այդ ժամանակից գոյություն ստացավ Ուրար-

տուրի պետութիւնը, և Մենուան նրա այդ վիճակի մարմնավորողն ու արտահայտիչն էր:

Ա Ր Գ Ի Շ Տ Ի (780—755)

Մենուան ուներ յերկու վորդի՝ Unušpua և Argišti: Վերջինն յեղավ հոր գործի փառավոր շարունակողը, իսկ Ունուշպուայի գոյութեան մասին մի արձանագրութիւնից ենք իմանում, վոր գանձում և վանի «Կուրշուն-Ջամի» մղկիթում¹: Յերեկ նա գնաց կրոնի գծով, դառնալով Մուսասիրի գլխավոր քուրմ, ինչպես այդ արել էր յուր հորեղբայր Սարգուրը: Ուրարտական թագավորները իրենց եյին յենթարկում յերկրի այդ գերագույն յերկու ֆունկցիաները՝ քաղաքական-հասարակական և մյուս կողմից կրոնական: Իշպուինի ժամանակ յուր վորդի Սարգուրն էր գրավում Մուսասիրի գահը, վորպես գերագույն քուրմ (չրա արձանը մնացել էր և 714 թվին վերցվել էր Սարգոնի կողմից) իսկ Մենուան դարձաւ Իշպուինին գահակից և հոր մահից հետո ինքնակալ թագավոր, կառավարելով մենակ Ուրարտուն: Կարելի չե յենթադրիլ, վոր այդ յերկու մեծ պաշտոնների ոգտագործումը պիտի լիներ և հետո, այն է՝ Մենուայի վորդի Արգիշտին վորպես թագավոր իսկ մյուս վորդին՝ Ինուշպուան վորպես գերագույն քուրմ: Այդ ձևով Լուաիբրիի ժառանգորդները («Լուաիբրյան դինաստիան») իրենց ձեռքին եյին պահում վորջ պետական կյանքը:

Արգիշտու թագավորութեան ակոզութիւնը մոտավորապես է արվում՝ 780—755 կամ թե 778—750 թվականներին Գր. առաջ: Նրա ժամանակաշրջանի աստուրական թագավորները Սալմանասար IV (783—773), Աշուրդան III (773—764), Ադադնիրարի IV (764—755) և Աշուրնիրարի V (755—747) թույլ եյին, քան իրենց նախորդները և հաջորդը (Տիգլատպիլասար III): Ասուրեստանը չէր կարողանում ազատագրվել ներքին ապսամբութիւն-

¹ Այդանդ կարգում ենք. «Խալդուն, տիրոջը, Մենուան Իշպուինի վորդին, այս քարակոթողը (pulusi) գրել տվեց manini d Xaldini beedini 1 Menua Išpuulnlexinie 1 Inušpua 1 Menuaxinie ulguše pitsuše alsuīšee, վորը մենք թարգմանում ենք = Թող նվիրի (manini) Խալդյան բարորութիւնը (beedini), հմմտ վրաց bedi (բախա) Մենուային Իշպուինի վորդուն (և) Ինուշպուային Մենուայի վորդուն ասողութիւն, ուրախութիւն (և) մեծութիւն») Վերջին յերեք բառերի հիշա իմաստը վորոշ է շնորհիվ աստուրական՝ Կելիշինի թարգմանութեան և ըստրից այժմ ընդունված է:

ներից քրմական դասի ինարիզներից և այլն, և ուրարական թագավորները լավ ոգաագործեցին այս հանգամանքը, ուժեղացնելով իրենց տերրիտորիալ և քաղաքական հզորութունը: Այդ կողմից, յեթե Մենուան Ուրարաուի հզորության կերտողն եր, ապա Արգիշտին այգ հզորության անպարտելի գաղաթնակեան եր: Արգիշտիի և մասամբ նրա վորգի Սարգուրի ժամանակ Ուրարաուան ավելի հզոր ու մեծ եր քան Ասորեսաանը:

Արգիշտիի ռազմա-քաղաքական եքսպանսիայի մշատական վկան են նրա այսպես կոչված «Սորխորյան» ութ սյունակների արձանագրությունները, փորագրված Վանի ժայռի վրա: Դրանցից կարևորն են առաջին յոթը, քանի վոր վերջինը, ութերորդը, տալիս ե միայն անեծքի Ֆորմուլան: Ի՞նչ են ասում այգ յոթ արձանագրությունները:

Առաջին սյունակում (կոլոննա) նկարագրվում ե արշավանքը դեպի Դիաու ցեղ(եր)ի կամ պետության սահմանները: Յեվ դա հասկանալի յե քանի վոր 12—9-րդ գարերի ընթացքում, մինչև Մենուան և Արգիշտին, Դիաու իշխանությունը յեղել ե առաջինը գոնե Արածանիի հովաում (ըստ իս՝ այժմյան Ճապաղջուր, Գենչ և Բուլանրիսի շրջաններում): Արգիշտին ասում ե (աողեր 6—8)—արշավեցի Դիաույան (յերկիրը), թագավորին Դիաույան, «վասսալ թագավոր» (nu)¹ գարձրի (տառացի՝ արի) գրավեցի Seriazi յերկիրը, քաղաքները վառեցի, բերդերը քանդեցի, տիրացա մինչև Pute քաղաքը գաշնակից Biani և Xušani յերկիրները ի վերա Tariuni յերկրի ձեզի (=միացրի Տարիուանի յերկրին): Ուրեմն պիտի յենթագրիլ, վոր Տարունը յեղել ե հիմնական ուրարական տերրիտորիա ինչպիս վոր և ընդունվում ե (գոնե ըստ ասսուրական վկայությունների, անս 19 132), և Բիանի ու Սուսանի շրջանները անջատվել են Դիաու իշխանությունից, նրա Սերիաղի ռայոնից Այգ Biani և Xosa III (Հոսանի) «յերկիրները» մենք յինթագրում ենք, վոր յեղել են այժմյան Հոսանան գյուղի շրջաններում և դեպի արևմուտք

¹ Գրված ե LUGAL nu վորը սւրիշները միացնում են (ինչպես Ֆրիգրիիը) այսինքն՝ LUGAL-nu, հասկանալով ամբողջը վորպես թագավոր, կեսը գրած գաղափարագրով, իսկ կեսը հնչյունորեն (nu): Մենք առաջարկում ենք առաջի գաղափարագիր մասը ընդունել դետերմինատիվ, վորպես բացատրություն, նման այլ բազմաթիվ դեպքերի, իսկ nu ն ընդունել վորպես «արքա» կամ «վասսալ թագավոր» Մաննա լեզվում ևս կար ունեթագավոր»: Այս մաին անս մեզ մոտ եջ 93—94

(Հոսանան գյուղը ըստ քարտեզի դանվում է Նաղիկ լճից մոտ 20 վերստ դեպի արևմուտք):

Շարունակութեան մեջ իբրև նույն տարվա արշավանքների արդյունք, Արգիշտին ասում է, վոր գրավել է Zabaxa-ն, վորպես դարախայեցիների յերկիր, տիրել է մինչև Uzinabitarn քաղաքը և Sirimutar յերկիրը: Այդ Zabaxa-ն հետագա «Ջաւախ-ք»-ն է սակայն վոչ յուր հետագա անդում՝ այժմյան Ախալքալաքի շրջանում, այլ հավանորեն դանվել է Բասենում, քանի վոր նրան կից հիշաաակվող Uzinabitarn և Sirimutar անունները նշանակում են տառացի «Ոճնարերդ» և «Սերեմաձոր», վորոնք բարձր Հայքումն էյին, Բասենում և նրան կից (հմմա «Ոճնի» գյուղը Երզրումից քիչ հյուսիս): Սրանից հետո ավելացվում է՝ «ի վերա Մակալաունի քաղաքի [Կարս կամ Կարսից հյուսիս] Իգանի յերկիրը ձգեցի անցնելով Երիախի յերկիրը արշավեցի Ապունի յերկիրը [Ապահունիք], գրավեցի Ուրեյունի քաղաքը՝ Թագավորանիստ քաղաքը Ուրգուրուխինի (=Վիդերույան ցեղի) 19225 յերիասարգ (աղա), 10140 դինվոր կենդանի, 23280 կին—ընդամենը 52675 «տարվա»-մարդ», վոմանց սպանեցի, վոմանց կենդանի ասրա 1104 ձի, քշեցի 35016 արջառ(յեղ-կով), 101829 վոչխար Պալոյան ոգնութեամբ այս գործերը մի տարում կատարեցի (=ավարանցի)»:

Հաջորդ II տարին Արգիշտին դրավում է Abilianixi յերկիրը (=Արիլիանական Արիլիանի ցեղի), Anistirue յերկիրը, ¹ Kuturzani-յի յերկիրը և ¹ Ultuza-յի յերկիրը. կարող է հասկացվել, վոր Կուտուրզանի և Ուլտուզա անունով մարզիկ տեր են յեղել վերևի յերկու յերկրներին, բայց կարելի չէ ձևականորեն և չորս յերկիր հասկանալ: Այդ գրավման հայտարարութեանը, վորպես մեծարութեան և մի տեսակ վերնագիր, արվում է Պալոու կողմից, իսկ Արգիշտին, վոր սովորաբար այդ պիտի կրկներ յուր սնունդից, կարծես թե նվաճման վայրերի անունները փոխում է ասելով՝ «գրավեցի Etiuni յերկիրը, տիրեցի մինչև... և յերկիրը ¹ Uduri KUR Etiuxini յերկիրը (=Ուդուր-Եթիունի)¹,

¹ Ուդուր-Եթիունի յերկիրը, այսինքն udur անունով մարզու (=ցեղի) Եթիունյան յերկիրը դանվում էր Սեանա լճից հարավ-արևմուտք: Այդ անունը հիշվում է և այլ արձանագրութեաններում և Եթիունյան ցեղերից մեկի անունն է, թերևս համընկնելով uti (ote) «ուտիացի» անվան հետ: Իսկ այդ Uduri-Etiuni-յին սահմանակից Etiuni-ն այժմյան Կոսայքն է և հիշվում է Արգիշտու մի այլ արձանագրութեան մեջ՝ ելառում: Այժման Կարսի նահանգն ևս կոչվում է Etiuni:

կ/ն-մարդ անդափոխեցի»։ Նույն ասարում (ikukani šalie) Արդիշահին գրավում է Uluku... յերկիրը, Ur(m)iani յերկիրը, T er tsubi յերկիրը, վոմն ¹ Muruba.. յի (յերկիրը)—յուր շրջակա (garini?) հողը (karbi?), վոր ամրացված էր (agununi manu), կրուվով վերցրի, տղամարդ (ու) կին (ասրա), գրավեցի Ubarugilduni քաղաքը՝ թագավորանիսա քաղաքը (¹ Muruba-յի), տիրեցի մինչև Ku..rupira յերկիրը, մինչև Tarra . յերկիրը»։ Շարունակության մեջ տեղանունները լավ չեն ընթերցվում (Col 29—38), միայն հասկացվում է, վոր յերկու յերկրներ է գրավում (Id ku. auni և Artarmu), տղամարդ ու կին քշում տանում—ընդամենը 20279 հոգի, վորպես «աարվա մարդ» (UN^p MU), վոմանց սպանում, վոմանց կենդանի ասնում վերցնում է 1280 ձի, .. արջառ, 120600 վոչխար։ «Սալդու ոգնությամր այս գործերը մի տարում կաատրեցի»

Հաջորդ III տարին Արդիշահին նվաճում է Xate յերկիրը, այսինքն հիթիտների (խեթերի) այն հողամասերը, վորոնք պատկանել են վոմն Xilaruada անունով թագավորին (Col II 5-6)։ Արդիշահին յուր կողմից ավելի յի մանրամասնում այդ արշավանքը. «Սալդը ինձ առաջնորդեց (առջևից եր գնում)»¹ արշավեցի Xatina յերկիրը (KUR Xatinaidi «ի Սաթս»), գրավեցի Niri bai xubi (=Նիրիբայի դաշտ) յերկիրը, .urmani յերկիրը, վոր ամրացրած էր, կովով գրավեցի, ...adani քաղաքը՝ թագավորանիսա քաղաքը՝ գրավեցի։ Սալդյան մեծությամր արշավեցի Xatina յերկրի ներսը (KUR Xatin-atsie) ի վերա թուաթեյի վորդու յերկրի կցեցի (ձգեցի) դաշնակից Մելիսան քաղաքը, տիրեցի մինչև Պիլաի քաղաքը...»։ Արդիշահին անցնում է Meliani դետը, գրավում Marmuani յերկիրը, Ka...ani յերկիրը տղամարդ ու կին փոխազրում (šiuvi «փոխադրեցի»), բերդերը քանդում, քաղաքները վառում, 2529 տղա, 8828 կենդանի մարդ, 10847 կին—ընդամենը 22274 «աարվա-մարդ» գերեվարում, տանում է նակ՝ ձիեր 17942 արջառ 20000 վոչխար ավելաց-

¹ Համեմատել նման վոճը ակկադական տեքստերի մեջ։ Որինակ, մի տանացոց արքա Մատիուազայի և խեթերի արքա Մուպպիլուլիումայի միջև կնքված դաշնագրի մեջ կարդում ենք—«Սաասու յերկրի արքայի աստվածների մեր առջևից գնացին» (տող 41)։ Ուրարտական uluštaibi «Xaldini «Սալդր առջևից գնաց» (=առաջնորդեց) թարգմանությունը պատկանում է J Friedrich-իս

նեւրով վերջում—Պալլու ողնությամբ այս գործերը մի ասարում կատարեցի:

Հաջորդ IV ասարվա արշավանքները Արգիշտին կատարում է Եթիունի յերկրի դեմ և մի յերկրի, վորի անունը չի կարդացվում (Col II 25-26): Նույն թվին, ինչպես շեշաում է հեղինակը, թերևս աշնանը (šišuxani), նա արշավում է Uburda յերկիրը (KUR Uburdaue-edia), նվաճում է «ուբուրդացիական» (Uburdalxi) վոմն ¹ Išlubura-յին, յերևի նրանց թագավորին, նրա յերկիրը, ինչպես և թագավորանիստ Ir du-a-ni (Erduani) քաղաքը. Վիշուշի(նի) յերկիրը (KUR U-i šu ši-ni) նա ավերածության է յենթարկում (nuluštubi «ավերեցի»?), տղամարդ ու կին անդափոխում այդտեղից: Դրանից հետո Արգիշտին արշավում է Xaxia յերկրների վրա (KUR Xaxiaue-edia), բերգերը քանդում քաղաքները վառում, ինչ վոր Bi...xuxaunie քաղաքի մարդկանց (taršuanarani) վառում, 8637 յերիտասարդ (աղա), 2655 կենդանի մարդ, 8497 կին—ընդամենը՝ 19790 «ասարվա մարդ» գերեվարում, վոմանց սպանում է վոմանց կենդանի տանում տանում է նաև՝ 232 ձի, .. 803 արջառ, ...1626 վոչխար: «Պալլու ողնությամբ այս գործերը մի ասարում կատարեցի»:

Հաջորդ V ասարվա արշավանքները կատարվում են դեպի Ասորեսաան (Col II 51-57 և Col. III 1-19): «Պալլու արշավեց, յուր զինանշով գրավեց ¹ Arsitani-յի յերկիրը [ասսուրական Աշուրդան թագավորն է], նվաճեց Assur յերկրի գորքերին, մատուցեց նրանց Արգիշաու առաջ: Արգիշտին, Մենուլայի վորդին, ասում է—Ասսուր յերկրի միջի քաղաքները [= բնակիչները] իմ յերկրում բնակեցրի (= ašdu, փոխանակ aš dubi? !). Ղինվորներ գումարեցի, ադսթնցի Պալլուն տիրոջը, Տեյշերային, Արգինիին, ասավածներին Բիաինայի, աիրոջական (նրանց) մեծությամբ ապահովեցի (? aliyabadi). ոգնեցին ինձ աստվածները: Արգիշտին առում է—Պալլու kuruni-յե, Պալլու զինանիշը kuruni-յե Պալլոյան մեծությամբ arieni (= ?)¹ Դագիկայի Kulašini յերկիրը. դրացի յերկիրը (KUR babani) յես ավերեցի (? suṭukubi). 30439 տղա այստեղ(ից)... փոխադրեցի իմ յերկիրը. (նույն ասարում արշավեցի) Menabšuni քաղաքի գեմ Dukama քաղաքի դեմ, (գրավեցի...) թագավորական (քաղաքը), յերկիրը գրավեցի, Šatirara քաղաքը, Bustue յերկիրը (= յերկրի?). (արշավեցի)

¹ Թերևս՝ «արվեց» (ինձ) այսինքն՝ հանձնատուր յեղավ Համեմատել arubi «ավեցի»

Xubliuini (յերկիրը), Baruata յերկիրը, Baršua յերկիրը ..a¹ (= այսինչ մարդու). յերկիրը կերա, քաղաքները վառեցի, ...5040 մարդ սարվա ...վոմանց սպանեցի, վոմանց կենդանի տարա, ...գինվորներ, ...987 արջառ, ...ճ... վոչխար: Արգիշտին ասում է Պալդու ողնությամբ այս գործերը մի ասրում կատարեցի»:

Հաջորդ VI արշավանքը ելի կատարվում է դեպի Ասուրեան: Այդտեղ (Col III 20-23) կարդում ենք. «Պալդը արշավեց, յուր զինանիշով նվաճեց Ասուր յերկիրը... Buštu յերկիրը, Turiuni յերկիրը, մատուցեց Արգիշտուն. Պալդյան մեծությամբ Արգիշտին ասում է—բերդերը պարսպապատեցի (? šiduušil), Šurigilini յերկիրը կարգավորեցի (? išpuuubi), Assur յերկրի գորքը իմ յերկրում բնակեցրի (ašdu?), Ադոթեցի Պալդուն, տիրոջը, Տեյշերային, Արդինիին, աստվածներին Բիաինա յերկրի, տերունական մեծությամբ վստահացա (?), ոգնեցին ինձ աստվածները, Արգիշտին, Մենուայի վորդին, ասում է—Պալդը kuruni-յե [վողորմած է?], Պալդու ղենքը kuruni-յե, Պալդյան մեծությամբ (=Պ մեծության շնորհիվ) «ավերաշի» մարդկանց [L⁶ auerašili] գումարեցի, Ասուր յերկիրը վերցրի (suui dubi) գարձրի իմ յերկիրը, Դադանիի (¹ Dadani—Դադայան?) ավերաշի մարդկանց միացրի (? amuubi), Նույն ասրում արշավեցի ի յերկիր..., ի յերկիր .ie, ի յերկիր Arxa (KUR Arxaue edia)..., թագավորական 60 քաղաք (և) ժողովրդին ավերեցի (? ašgubi կամ za aš gu-bi «սպանեցի»): Արշավեցի Buštu յերկիրը, (գրավեցի) . (Li)xararauni քաղաքը, Aburzani(ni) քաղաքը, ...քաղաքը, Kaduḫaniuni քաղաքը, ...յերկիրը: Արգիշտին ասում է—... (յերկիրը) կերա, աիրեցի մինչև Մա(նա) յերկիրը կից 18827 նորդ ասրվա, վոմանց սպանեցի վոմանց կենդանի տարա 606 ձի, 184 ուղտ, 6257 արջառ, 33203 վոչխար: Արգիշտին, Մենուայի վորդին, ասում է այս գործերը մի ասրում կատարեցի»:

Հաջորդ VII ասրվա արշավանքները կատարվում են դեպի արևելք—Իյանի Մանա և Բուստու յերկրները (Col. III 46-71 և Col IV 1-13): Արգիշտին յուր սիրալի (šurxani)¹ գորքերը գումարում է, ադոթում է աստվածներին, վորոնք իրեն ողնում են, գոհանում է Պալդուց և նրա գրոշից (զինանշից-šuri), ավերացնելով (Col. III 55-71, Col IV 13)—«Պալդու մեծության շնորհիվ արշավեցի Iyani յերկիրը, յերկիրը գրավեցի, բերդերը քանդեցի, քաղաքները վառեցի, Eratēlini քաղաքը (և) Eratēlieu ni (յերկիրը) գրավեցի, տղամարդ (և) կին այսանգից տարա»:

Իհրև' վարձկան?

Նույն տարում արշավեցի Mana յերկիրը Bustu յերկիրը գետը (?) Tura..., շրջակա հողը՝ ամբացրած, կովով գրավեցի. տղամարդկանց այստեղից փոխադրեցի, կանանց... [66—71 տողերը չեն ընթերցվում] [Col IV₁₋₁₃]՝ 18243 մարդ տարվա, վոմանց սպանեցի, վոմանց կենդանի տարա, 79(0) ձի, 100 ուղտ, 22629 արջառ, 36830 վոչխար Արգիշտին ասում ե—Պալղու ոգնությամբ այս գործերը մի տարում կատարեցի»:

Հաջորդ VIII տարվա արշավանքները կատարվում են դեպի արևելք՝ Մանա և Իրքիունի յերկրները, վորոնք սահմանակից էին Ասորեստանին (Col IV₁₄₋₄₅): Սկսելով Պալղուց («Պալղը արշավեց յուր զինանշով նվաճեց Մանա յերկիրը նվաճեց Իրքիունի յերկիրը»), վորը իր նվաճած յերկրները շնորհում ե Արգիշտուն: Ադոթելով աստվածներին վորոնք ոգնության են գալիս և յերախտագիտության են արժանանում («Xaldi kuruni» / այլն), Արգիշտին վերջացնում ե արշավանքի բուն նկարագրությամբ (Col. IV₃₄₋₄₅)— «Պալղյան մեծությամբ արշավեցի դեպի Mana յերկիրը, նվաճեցի Irkiuni(ni) յերկիրը աիբեցի մինչև Assurn-յան [Ասորեստանյան] Algani յերկիրը. 6471 մարդ տարվա, վոմանց սպանեցի, վոմանց կենդանի տարա, 286 ձի 2251 արջառ, 8205 վոչխար Արգիշտին ասում ե—Պալղու ոգնությամբ այս գործերը մեկ տարում կատարեցի»:

Հաջորդ IX տարվա արշավանքները կատարվում են Մանա և Բուսուու յերկրները (Col IV₄₂₋₆₆) վորոշ մանրամասնություններով: Նույն ձևով սկսելով ինչպես նախորդ և նման ռազմական արձանագրություններում, Արգիշտին տալիս ե հեռակալ բուն նկարագրությունը (Col. IV₅₃₋₅₆): «Արշավեցի Bustu յերկիրը, դրավեցի Aškayaı xubi (=Ասկայայի դաշտ) յերկիրը, Šatiraraga(ni) յերկիրը ի վերա Ugisti(ni) յերկրի ձգեցի դաշնակից Uušini յերկիրը, աիբեցի մինչև Aladeie յերկիրը, դրացի յերկիրը. յերկիրը վառեցի, քաղաքները քանդեցի, այր-կին այստեղից քշեցի... 1873 մարդ տարվա, վոմանց սպանեցի, վոմանց կենդանի տարա, . 80 ձի . ուղտ, ...արջառ, ...վոչխար. Արգիշտին ասում ե—Պալղու ոգնությամբ այս գործերը մեկ տարում կատարեցի»:

Հաջորդ X տարվա արշավանքները կատարվում են ելի Mana յերկիրը, վորի մեծն եր Aza, վորպես «թշնամի» այստեղ շինվում ե Արգիշտիխինիլի (քաղաք): Վերջում նկարագրվում ե գեպի Urmie յերկիրը կատարված արշավանքը, վորտեղից տար-

Վում և 14813 (թե 24813?) «մարդ տարվա», 25 ձի, .. 1744 արջառ, 48825 վոչխար և այս բոլորը ելի մի տարում (Col IV 11-12), Col V₁₁₋₁₂): Չորրորդ և հինգերորդ սյունյակները այնպես են բաժանվում բովանդակությամբ և նկարագրության ձևով վոր կարծես ինչ այս բոլորը յերկու տարվա մեջ են կատարվել:

Հաջորդ XI տարվա արշավանքները վերաբերում են Bixurani յադաքին նրա հարևան Bamni քաղաքին վորը քանդուվում և և մի անհայտ յերկրի. թեպետ X արշավանքի նկարագրությունը վերջանում և V սյունյակի 11-րդ տողով, սակայն շարունակությունը գայթմ յեղած շարուն ձևով չի տարվում, այլ այդ տողից սկսած ինչ վոր նվիրարներությունների մասին և խոսվում (7066 արջառ և 50878 վոչխար), վորից հետո գալիս և այդ քաղաքների ավերման հաղորդումը: Այդ V սյունյակի 11-րդ տողից մինչև 20-րդը (վորով նա վերջանում և) VI սյունյակի 7 տողերը (իսկ այդ VI-ը, վորը մեծ մասամբ չի կարդացվում ունի ընդամենը հենց 7 տող), ինչպես և VII սյունյակը (1—10 տողերը) ըստ իս մի տարվա դործունեության են վերաբերում: VI սյունյակում (6 րդ տող) հիշվում 1 նաև մի յերկիր վորի անունը դժբախաաբար չի կարդացվում բայց նրա մասին VII-ում սրվում և ավարի նկարագրությունը «Արգիշտին ասում և. badini(ni) (—?) վերցրի. բերդեր դրավեցի տեղական յերկրները կերա, քաղաքները վառեցի, 3270 արդ, վոմանց սպանեցի, վոմանց կենդանի տարա, 170 ձի տարա, 62 ուղտ, 2441 արջառ, 614(0) վոչխար. Արգիշտին ասում 1 թալուռ ոգնությամբ այս դործերը մեկ տարում կատարեցի»:

Հաջորդ XII տարվա արշավանքները կատարվում են դեպի Guaratsinie xubi յերկիրը [= Տուարածատափ], մինչև Gurka յերկիրը, դեպի Mana յերկիրը (Col VII₁₁₋₁₄): Խոսվում է նախ այն մասին, վոր թալուռ և՛ արիություն և աալիս Արգիշտուն և՛ պատերազմ (Col VII₁₅₋₁₆), հետո՝ մի ջրանցքի մասին «Դայնալատինինի» («Դայնալա—անունով») գետից բերած (տող 17): Անհասկանալի յե 18-րդ տողի zādubi kulmie KUR Surauē: VII սյունյակի 19-րդ տողից սորից սկսվում և սովորական ուղղմական արձանագրությունների շարադրական ձևը. «Արգիշտին, Մենուայի վորդին, ասում և աղոթեցի թալուռն» և այլն (մինչև 23-րդ տող), հետո (մինչև 32-րդ տողը)՝ «գորքեր գումարեցի, արշավեցի Mana յերկիրը, յերկիրը կերա քաղաքները վառեցի, տիրեցի մինչև Uixika քաղաքը Buštue յերկրի այր-կին այստեղից վարեցի՝ 13979

մարդ տարվա, վոմանց սպանեցի, վոմանց կենդանի տարա, 308 ձի տարա 8100 (?) արջառ, 32538 վոչխար Արգիշտին տսում և Խալդու ոգնությամբ այս գործերը մեկ տարում կաաարեցի»:

Հաջորդ XIII տարվա արշավանքները վերաբերում են Mana յերկրին, վորի ամրացրած Simerlxadiri թագավորական քաղաքը գրավվում և և Etiuni յերկրին, վորի Ardini քաղաքից Արգիշտին հավաքում է՝ aštiu (=հաց?) և zirbilani (=?): Նույն աարին աշնանը (?) (šišuxani) նա գորքեր և գումարում, ադոթելով Խալդուն և այն, արշավում Etiuni յերկիրը, գրավելով Eriaxi յերկիրը՝ վոմն Katarza-յի յերկիրը, տիրելով մինչև Iškiḡulu յերկիրը: Արշավում և նաև վոմն Uideruxi-յի յերկիրը, ուր յերկիրը տուտում են քաղաքները վառում, վերցնում Amegu . քաղաքը, թողավորական քաղաքը Videru-յան ցեղի արձանագրություն և թողնում տեղում, գերիներ (քանակը լավ չի ընթերցվում) և ավար (1200 ձի, 29504 արջառ, 160000-ից ավելի վոչխար) աանում այդանդից և այս բոլորը կաաարում մի տարում (աես VII Col աոդեր 33—69):

Հաջորդ XIV տարվա արշավանքները կաաարվում են Taruni յերկրում, ուր վերցվում են 11 դղեակներ ամրացրած (tu luria agununi) շատ շինություններ և բերգեր են այրվում, քանդվում, այր և կին այդտեղից քշվում աարվում: Յեվ այս բոլորը միևնույն տարում (Col VII 70-81):

Յեթե մի հաշվեհարդարի բերենք այս 14 աարիների արշավանքների վայրերը (ուղղությունները) և գերիների թիվը (ամարդիկ աարվա»), կարելի յե աեել վոր՝

I ին սարին յենթարկվում կամ գրավվում են Diaw(xi) և Zabaxa յերկրներ (52675 գերի):

II սարին՝ Abiliani(xi) և Anistirve յերկրներ և մյուս կողմից՝ Ettuni (=Վասայ?) և Uluku Tertsubi յերկրներ, գերեվարվում և 22274 մարդ

III սարին՝ Xate յերկիրը Niribai xubi (Խարբերդի դաես?) քաղաքով, Մելիսե քաղաքով, Marmuani և այլ յերկրներով գերեվարվում և 22274 մարդ

IV սարին՝ Etiuni Uburda Višusi և Xaxia յերկրներ՝ 19790 գերիներով:

V սարին՝ Aššur (Ասուրդանի քաղաքով), Buštu Xubiluni Baršua յերկրներ՝ 5040 գերիներով

VI սարին՝ Aššur-Buštu, Tariuni [առհմանակից Mana յին] յերկրներ՝ 18827 գերիներով

- VII տարին՝ կրկնակի արժավանք *Iyani Mana Buštu* յերկրներ՝ 18243 գերիներով.
- VIII տարին՝ *Mana* և *Irkiuni* յերկրներ (սիրելով մինչև ասսուրական *Algani* յերկիր)՝ 6471 գերիներով.
- IX տարին՝ *Mana* և *Buštu* յերկրներ, ուր գրավում է *4škayai xubi, Šatragani, Ugišti(ni)* և *Ušini* (մինչև *Alatēye* յերկիր) — 1873 գերիներով
- X տարին *Mana* յերկիր (*Aza* քաղաքով) և *Urmie* յերկիր 14813 (կամ 24813) գերի
- XI տարին՝ *Bixurani* և *Bamni* քաղաքներ և մի յերկիր՝ 3270 գերի
- XII տարին՝ *Tuaratsiniei xubi* յերկիր և *Mana* յերկիր՝ 32538 գերիներով
- XIII տարին՝ *Mana* յերկիր (*Šimerixadiri* քաղաքով), *Etiuni* յերկիր (*Ardini* քաղաքով): Նորից *Etiuni, Eriaxi* (¹ *Katarza*-յի)՝ մինչև *Iškigulu* յերկիր, *Viteruxi* յերկիր (*Amegu* քաղաքով), գերիների թիվը չի բնօրգվում.
- XIV տարին՝ *Tariuni* [տրևելում՝ *Mana*-յի մեջ?]:

Արգիշտին յուր 14 տարվա այս արշավանքների մեծ մասը կատարել և *Mana* և *Aššur* (Ասորեստան) պետութունների դեմ, ուր հիշատակելի յեն մասնավորապես *Buštu* և *Baršua* (= *Parsua* «Պարս-ք») շրջանները Ուրմիա լճից հարավ-արևելք: Այդ *Mana* և *Aššur* տերութուններին նա նվիրում է յուր արշավանքների V, VI, VII (կրկնակի), VIII, IX, X և մասամբ XII և XIII ամիսները (և թերևս XIV ամիսն): Այսինքն 8 կամ 9 տարի անընդհատ նա կռիվ է մղել գոռոզ Ասորեստանի և նրանից կախյալ՝ Մաննա պետության դեմ: Յերկրորդ կարևոր և մտահոգող պետությունն էր (կամ ցեղերի միությունը) *Etiuni*-ն, վորի դեմ արշավանքներ են կատարվում II, IV և XIII ամիսներում: Յերրորդ ախոյանը խեթերի յերկիրն էր (III ամիս արշավանքը), իսկ չորրորդը՝ *Diaue(x)* հայանի իշխանությունը, վորն արդեն Մենուային հարկատու էր դարձել, այսինքն՝ վասսալ կախվածություն մեջ էր Ուրարտուից: Վերջին յերկուսը՝ *Xate* և *Diauexi* Ուրարտուի արևմտյան ախոյաններն էին, *Etiuni* դաշնակցությունը՝ հյուսիսային, *Mana*-ն՝ արևելյան, իսկ *Aššur*-ը հարավային (և հարավ-արևելյան): Վոր Արգիշտին հաղթել է Ասորեստանին և նրա Աշուրդան թագավորին, այդ յերևում է V և VI ամիսների արշավանքների նկարագրությունից:

Բայց սխալ կլինե՞ր, ինչպես В Тураев-ի մոտ ենք տեսնում (Исг др Востока, II, 44)¹ կամ նրա աշակերտ В Струев-ի մոտ (տես Հին աշխարհի պատմութուն, Հատոր I, Արևելք, Թարգմ 1938, էջ 576)², տասչոր, հաղթական արշավանք վերագրել Արգիշտուն վոր նա ասրել է (իրը բոլորն էլ) Ասորեստանի դեմ: Այդ գուցե պիտի բացատրել Արգիշտու արշավանքների 14 տարվա նկարագրության թվով, կամ թե ուրարտական լեզվի և արձանագրությունների յուրահատուկ վոճը չհասկանալով, յերբ միևնույն արշավանքը արվում է թե հալոլ ասածու կողմից և թե թադավորի, և այդպիսով յեղած թվերը կրկնապատկվել են

Յեթե վերցնենք՝ գերի տարվածների ընգհանուր դումարը անկախ այն շարուն և կարծես թե պարտադիր ու ձևական հավելումից, թե «վոճանց սպանեցի, վոճանց կենդանի ասրա», և յեթե անգամ հաշտվենք այն ղեֆեկտավոր թվերի հետ, վոր հիշվում են V (.5040 մարդ), IX (...1873 մարդ) և բնավ չընթերցվող XIII տարվա արդյունքների մեջ, ապա այնուամենայնիվ ստացվում է մի պատկանելի հանրագումար 216081 մարդով («մարդիկ տարվա»)³, լորոնց աշխատեցնում էյին վորպես սարուկներ կամ յերևի վաճառում էյին (այս մասին արձանագրությունները չեն խոսում):

Արգիշտու ութ արձանագրությունները, վորպես ժալադրություններ (կամ քարագրություններ), առաջինն են իրենց տողերի քանակով ուրարտական արձանագրությունների մեջ (հետս գալիս են Սարգուրի աննալները և հետո՝ Մենուա-յի «Մհերյան դոան»

¹ „Преемник Менуа Аргистти, совершил против Ассирии 14 победоносных походов, о котором повествует его огромная надпись—летопись на скале Хорхор у Вана. Эти анналы могут быть сопоставлены с аналогичными памятниками Египта и Персии и являются осязательным свидетельством значения Ванского царства как великой державы. Он сделал также своими вассалами малоазнатских хеттов“ (տես նրա II-րդ գիրքը, էջ 44):

² «Մի քանի տասնյակ ասրի տեղի իր իշխանության սկզբում նա [Արգիշտին] Ասորեստանի դեմ 14 հաղթական արշավանք կատարեց: Յերևի այս դրքի հեղինակը (կամ հեղինակները) լավ չեյին ծանոթացել ուրարտական արձանագրություններին, կրկնելով իրենց ուսուցչի բերածը:

³ Այդ է ստացվում 14 տարվա արշավանքների բերված թվերից (52676 + 20279 + 22274 + 19790 + ...5040 + 18827 + 18243 + 6471 + ...1873 + 14613 (թե 24813?) + 3270 + 32538 = 216081): Յեթե հաշտվի ավելի հիշա վերձանել այդ կիսամաշված տողերը, ապա անշուշտ հանրագումարը կբարձրանա մոտ 250000-ի Արգիճը, չե՞ն ուսցնում ուրարտական գծագրողները

արձանագրութիւնը), իսկ ոսար նման մեծ արձանագրութիւններ պահել են միայն հին պարսիկները և յեզիպտացիք: Խորխորյան այդ ութ արձանագրութիւնների տողերի թիվն է 380, վեցերորդ արձանագրութիւնը 7 տողից բաղկացած գրեթէ իսպառ մաշված և անսպասարժելի յե V և VIII արձանագրութիւնները քսանական տողերից են, իսկ մյուսները ավելի շատ (I-ը ունի 11 տող, II-ը՝ 57 տող III-ը՝ 71 տող IV-ը՝ 81 տող VII-ը՝ 81 տող):

Արգիշտու յերկրորդ կարևոր հուշարձանն է յեղել, բացի Խորխորյան 8 ժայռարձանագրութիւններից, այն ստելան քարակոթողը, վոր նա գրել էր Վանի ժայռի հյուսիսային կողմի «արևելյան նիշայում» Այդ նիշայից մի քիչ դեպի արևմուտք գտնվել է ինչպես հայտնի յե, Սարգուրի հայտնի տարեգիր ստելան յուր պատվանդանով գրված իր համար հատկապես փորած «արևմտյան նիշայում», ինչպես անվանում է Հ. Որբելին (տես Археологич. экспедиция 1916 г. в Ван, № 19) Բայց Արգիշտյան այդ ստելան դեռ 10-րդ դարում հանված է յեղել իր տեղից. նրա մի մասը յերկու կտոր յեղած, գտնվում է Վանի ս Սահակ յեկեղեցու սլտարի (բեմի) ստորեը, իսկ յերկրորդ մասը գրված է նույն յեկեղեցու պատի մեջ: Առաջին արձանագրութիւնն էջ նա նկարագրում է յուր արշավանքը դեպի D dinie յերկիրը և Zua քաղաքը նա գրավում է այդ Zua ն վոր պատկանել է Դիաու իշխանութիւնը (ցեղիս), թողնում է արձանագրութիւնն այդ Zua-յում և Aškala յերկրում¹, 105 բերդ է քանդում, 453 քաղաք այրում, 3 յերկրներ ավերում (? «edini suṭukubi»), ժողովրդին տանում յուր յերկիրը («մարդկանց հավերացրի իմ յերկրին»), (այն է)՝ Kali. յերկրի, Aškalašie յերկրի և Šašiluinie քաղաքի, տանելով 10181 տղա, 2734 այր, [10?]604 կին, 4426 [ձի], [10?]478 արջառ 73700 վոչխար: Յերկու թագավորների (յերևի Դիաույան ցեղից) նա ծառայեցնում է —Šaski -ին, Ardaraki-յի վորդուն, և Baltulxi-յին, Kabi. -յի վորդուն, կուսակալներ և այլտեղ դնում Դիաու ցեղի արքային

¹ Առաջին տողերում միայն հետք էր մնացել [ku]teiadı [pa]rie KUR Bu... [KUR Lu]šani, վոր նշանակում է՝ արեւելի մինչև Bia յերկիրը և Xušani յերկիրը: Այս յերկրների մասին մենք արդեն խոսել ենք Խորխորյան [արձանագրութիւն կապակցութիւնը, վորպես ելի Diau ցեղերին կամ իշխանութիւնը պատկանող շրջաններ, վորոնք յեղել են այժմյան Նազիկ լճից քիչ ս րևմուտք (Հոսանան գյուղի մոտ):

հպատակեցնում ե, հարկի տակ ձգում հետևյալ հարկն ե Դիաու-
լիզը տալիս—41 մանա հնչուն (?) վոսկի 37 մանա [արծաթ],
...ասա հազար բրոնզա 1000 վրան, 300 արջառ, ...տասը հազար
վոչխար: Յեվ հետևյալ հարկն ե սահմանում այդ Diau իշխանու-
թյան համար (հետագա տարիներին)—...մանա վոսկի հնչուն (?),
10000 մանա բրոնզա, արջառ, 100 երինջ (GUD LID), 300
վոչխար, 300 վրան: Հետո (28-րդ տողից) նկարագրվում ե ար-
շավանքը դեպի Etiuni յերկիրը, յուր վաստալ՝ Luša, Katarza
Eriaxi, Gulutaxixa- յերկրներով տիրելով մինչե Abunioie յեր-
կիրը (տես Սեյս № 45):

Մյուս արձանագրությունը ելի վերաբերում ե Diau իշխա-
նության նվաճմանը, ուր թագավորում ե Սփuburšl անունով մե-
կը (տես Սեյս № 46): Հիշվում ե այդտեղ (տող 5) ևս մի մար-
դու անուն [Te?]nuluա—, վորը սակայն ամբողջապես չի ըն-
թերցվում Հնդհանրապես այդ արձանագրությունը ռաս պակա-
սավոր ե:

Մյուս քաղաքական ուղևական դեպքերից հիշենք Eriaxi
յերկրի նվաճման մասին, վորն առանձին հաղորդվում ե Ղանլի-
ջայի (Մարմաշենի) արձանագրության մեջ, գրավվում ե այդ յեր-
կիրը (=այժմյան Լենինականի շրջանը) Irdaniuni (կամ Erdaniu-
ni || *Ardaniuni) քաղաքով, մինչև Iškigulu¹ յերկիրը (5 տո-
ղանի արձանագրություն ե) Ղուլիջան գյուղի (Արաղածից
հյուսիս-արևմուտք) արձանագրության մեջ խոսվում ե Kulla անու-
նով մարդու յերկրի Duruba(ni) քաղաքի մասին Սարիդամիշի
(«Aauriani» քաղաքի) արձանագրության (ստեղայի) մեջ Արդիշաին
ասում ե, վոր նվաճել ե Aštuaxini-յի (Aštua ցեղի, Aštua- վոր-
դու) այդ յերկիրը՝ վոր գալիս են (հպատակվելու) Etiuni ցեղե-
րը (KUR Etiuni KUR ibirani). հիշվում ե և ինչվոր հարևան
Kalexaxi քաղաք (կարս?), վորից նա (այդ յերկիրը?) անջատում ե
Այդտեղ վերջում ավելացվում ե ավարի քանակը (մաշված ե):
Ելառի յուր արձանագրության մեջ (10 տողանի) Արգիշաին
ասում ե, վոր նվաճեց Uluani յերկիրը Darani քաղաքի յեր-
կիրը. անշուշտ այդ Darani-ն (կամ Dara-ն) այժմյան Ելառն
ե: «Սարգարարատի» յուր արձանագրության մեջ (գս նվել ե

¹ Iškigulu-յի մասին հիշատակվում ե և մի տարեկառայի մեջ, վորն ուղարկում ե Ռուսա (I) թագավորը այդտեղի յուր կուսակալին հայտնելով Rusaxina քաղաքի շինության մասին

Մարդարարատի մի ձիթահանում)¹, Արգիշտին ասում է «Բերդը haduste (?) կատուցեցի դրի «Արգիշտիխինի» անուն, հողով պատվար... արտապով պատեցի դետից առունը (šanue^{pl} ?) անց կացրի, վորթատունկ (և) ծառ տնկեցի, շինարարություն աշատեղ կատարեցի» և այլն: Շահրիարում գտնված մի սյունի «1 ջր պրած արձանագրության մեջ ինչպես և Ղազանջի (Սուր-եսր) փոքրիկ արձանագրության մեջ (կլոր քար) Արգիշտին հայտնում է «տուն» (տաճար) շինելու մասին² իսկ Յեշևանից «1/2 կիլոմետր հյուսիս-արևելք գտնվող «Ղանլի-թափա» բլուրի վրա գտնված մի փոքրիկ (3 տող) արձանագրության մեջ կարդում ենք — «Արգիշտին, Մենուայի վորգին, այս 'ari (= բերդիկը, մարտ-կոչը) շինեց 10000 քարով»:

Յեթե Արգիշտին հասել է մինչև Նլառ և Կոսայք, իսկ այդ տարին (Etiumi և Udurl-Etiumi) մենք գիտենք նրա արձանագրություններից ապա նաև հեշտությամբ կարող եր բարձրանալ և Սևանի մոտ և Որդակլուի Argišti-յի արձանագրությունը (հայր-նունը չի դրված), վորով դրավում է Kexuni քաղաքի յերկի-լը, տիրելով մինչև Ištikuni(u) քաղաքը, մենք սխալ վերագրենք Արգիշտի I-ին և վոչ թե Արգիշտի II-ին, ինչպես կարծում են վոմանք Վերջապես Արևազի բլուրի վրա գտնված մի կարևոր արձանագրության մեջ (3 քարի վրա, վորոնց մեջտեղինը կորած է) Արգիշտին այս վայրը կոչում է «Լուլու» յերկիր, վոր նշա-տակում է «բարբարոսական» (հմտ ալլուր KUR Lušaina ինչ-պես Սարգուրի մոտ), վորը պատկանելիս է յեղել Ազա տնունով Լարդու: Այդտեղ նկարագրվում է կուլարը և ծիսակատարություն-ը քրմական տարբեր գասերով և այլն, սակայն լեզուն լավ չի հասկացվում (13 տողանի արձանագրություն է):

Այսպիսով, ինչ յեզրակացության ենք դալիս:

Նախ, վոր Արգիշտու եքսպանսիայի հիմնական վկայու-թյուններն են Վանա ժայռի հյուսիսային («արևելյան նիշա» = ս Սահակի 2 արձանագրությունները) և հարավային կողմերին («Սորխորյան» 8 արձ) թողած յուր արձանագրությունները, և մյուս կողմից այսպես կոչված «տեղական» (նվաճման վայրերի) արձանագրությունները վորոնք մնացել են միայն Ուրարտուի

¹ Ունի 14 տող և այժմ գտնվում է Վաղարշապատում

² Անշուշա Շահրիարի այդ սյունաքարը Արմավիրի («Արգիշտիխինի») ձառից է բերված յեղել

(resp պ ստժական Հայաստանի) հյուսիսում, այն է—Արարատյան դաշտում (Արմավիր կամ Արգիշտիխինա || Արգիշտիխինիլի) → Հրազդանի ուղղությամբ («Ղանլի թափա» Յերևանի մոտ, Ելառ) մինչև Սևանա լիճ (Որդակլուի արձ), և Սարիղամիշ—Ղանլիջա—Կուլիջան (Կարսի շրջան): Յեթե արշավանքների յեկակետը վերցնենք Վանա լիճը, ապա Արգիշտին մի կողմից ընթացել է ուղիղ հյուսիսային ուղղությամբ Արածանիի միջին և վերին հոսանքներով, վորտեղ գրավել է Aruui (= Ապահունիք) և Videruxi յերկիրը (= Բագրևանգ) իրեն կից Lusa և Katarza յերկրներով վորոնք գրավված են յեղել և Մենուայի կողմից Ալաշկերտի հովաից Չինդիլի լեռնանցքով նա իջել է Արարատյան դաշտ, ինչպես այդ արել եր և Մենուան, անցել է Արաքսը, գրավել «բարբարոսական» Lulu յ'րկիրը ('Aza թագավորի)¹, դարձնելով Արմավիր-Արգիշտիխինան յուր հիմնական հենակետը այդ դաշտում (այդտեղից ունենք մոտ 15 արձ.). այս մասին վկայում են թե յուր արձանագրությունները (Արմավիր, Ղազանջի, Սարգարատա, Շահրիար) և թե մյուս թագավորներինը (Սարգուր II): Արարատյան դաշտից նա բարձրացել է Հրազդան գետի ուսյունը մինչև Սևան («Ղանլի թափա», «Ելառ» «Որդակլու»), վորտեղ յեղել են Etiuni յերկիրը (սահմանակից է Uduri Etiuni-ին) և Kexuni ու İstikuni(u) վայրերը (Որդակլուի մոտ): Մյուս կողմից Վանա լճից Արգիշտին ընթացել է հյուսիս-արևելյան ուղղությամբ, գրավելով նախ Դիաուլի (Դիաուլյան) Utuburši թագավորի arnuyali («բարձր»², Սեյս № 45₃₄) իշխանությունը (Մենուան ևս հպատակեցրել էր այդ տերությունը) յուր այլևայլ վայրերով՝ Bia Huşani (— այժմյան Հոսանան¹), Zua Aşkaşaşi, Şaşıluini² Şe razı, Şeşetina, Utuxı, Didini³ և այլն Այստեղից (= հին Հաշտեանք, Վարաժնունիք, Հարք) Արգիշտին գնում է դեպի հյուսիս-արևմուտք, գրավելով Դարատսիուի xubi յերկիրը (= հին Տուարածատափ, Խնուսից հյուսիս՝ այժմյան Ղարաչաղի ս ափ) այս-

¹ Ի դեպ այսպիսի թագավորանուն կրում եյին Ի Մանայի (Minn) թագավորները (Ուրմիա լճի շուրջը մինչև Մակու):

² Հմմտ. ըստ կաղնության Xubiluni յերկրանունը լորն անշո շո կս գմված է x bi «գաշա» բառից:

³ Մեզ թվում է, վոր այդ «յերկրանունը» պահվել է այժմյան Դիաղին գյուղի անվան մեջ. Այդ անդը Աբեղյանի քարտեզի վրա նշված է Բինդյուլ-սու գետակի վերին հոսանքի վրա (Գունդեմիլք և Կյումկյում գյուղերի մոտ), Բյուրակնյան (Բինդյուլ) լեռների հարավային ստորոտներում, Կա և այլ Դիաղին (Ալաշկերտի մոտ):

տեղից՝ Բասենի հովիտը (Zabaxa ցեղերի յերկիրը?), իսկ այստեղից ել Սարիզամիշի մոտով նա բարձրացել և Կարսի նահանգը հասնելով մինչև այժմյան Դուլիջանը և Զըլղըրի մոտերքը (հիշվում են՝ Etiuni ցեղեր և դրանցից Aštuaxini «Աստուախան» դավառակը Axuriani = Սարիզամիշ քաղաքով, Kalraxi քաղաքին մոտ, Igani յերկիրը և Makaltuni քաղաքը Զըլղըր լճից հարավ) Այստեղ նա նվաճում և թե Կարսա-չայ գետի հովտով բնկած այդ շրջանները և թե Արփա-չայ գետի (և թերևս Արաբսի) շրջաններում, Շիրակում, այլևայլ փոքրիկ թայուններ—Eriani յերկիրը Erdaniuni քաղաքով (Լենինականի շրջ.), Abilianixi յերկիրը (Կաղզվանի գիմաց), Iskigulu (?) Gulutaxixa (=?) փոմն Kulia-յի յերկիրը (= Կուլիջան):

Արևմուտքում Արգիշտին զարգացրեց յւլ յուլ սըշա լաղլ-յլ ավելի դեպի արևմուտք (Արածանիի հովտով) գրավելով խեթերի յերկիրը, անցնելով Յեփրատ, գրավելով Melite, Marmuani, Pila(i) և այլ քաղաքները:

Արևելքում և հարավ-արևելքում ևս զարգացրեց Մենուայի սըշաժուղին, սլահելով յուր ճնշման տակ վոչ միայն Manna-ն այլև ավելի արևելյան և հարավ-արևելյան դրա շրջանները (Ուրարիայից հաշված), ինչպիսիք են Bušta և Parsna (Parsua «Պարս-ք») մեծ յերկրները Այստեղից ել Արգիշտին հարվածում Ասորեստանը. տեղեկութունն չունենք, վոր նա անցներ Տավրոսյան լեռնաշղթան նաև Տիգրիսից հարավ:

Այսպիսով Արգիշտին ընդարձակեց Ուրարտուն, շարունակելով հոր դորձը: Մենուան արևմուտքում Յեփրատի (= Արածանիի) հովտում գրավել էր մինչև Ծովք և Մելիտեյի Sulieha val թագավորին հարկատու դարձրել, իսկ Արգիշտին անցնում և Արևմտյան Յեփրատը գրավելով Մելիտենեն և դրա արևմտյան շրջանները, հարկատու դարձնելով նրա Xilaruada թագավորին (վորը Sahu առնմից կամ գինաստիայից էր հմմտ. հայոց Ծոփք Շահէի, Ծոփք Շահունի) վորն աղբուր էր և Արգիշտիի վորդի Սարգուրի ժամանակ, ընդհարվելով վերջինիս հետ: Մենուան Ուրարտուն հյուսիսում ընդարձակեց մինչև Բասեն—Բագրևանդ և մի տեղ միայն անցավ Արարաայան գաշտը (Բգդիրի-Տաշբուրունի մոտ), այսինքն ընդհանրապես նա հասել էր Հայկական Պարին, իսկ Արգիշտին յուր տերության հյուսիսային սահմանները հասցրեց մինչև Սևան-Զըլղըր լճերի գիծը գրավելով Կարսի նահանգը, Արարատյան գաշտը (Արմավիր կենտրոնով) և Յե-

քեանի—Կոտայքի շրջանը մինչև Սևանա լիճը (Որդակլու): Իսկ արևելքում Ուրարտուի ազդեցությունը հասավ Ուրմիա լճից դեպի հարավ-արևելք ընկած ընդարձակ տարածությունները (Bustu¹ Parsua Algani): Գոռոզ Ասորեստանն անդամ թույլ եր Ուրարտուից:

ՍԱՐԴՈՒՐ II (755—730)

Արգիշտին ապրում եր ասսուրական Աշուրդան (773—764) և Ադադ-Նիրարի (764—755) թագավորների ժամանակ, վորոնցից առաջինին հաղթելու մասին նա պատմում է յուր Խորխորյան մի արձանագրության մեջ (Col. II₅₂), յուր արշավանքների V աարում: Իսկ նրա վորդի Սարգուրը ապրելիս է յեղել ասսուրական Աշուրնիրարի (755—747) և Տիգլատպիլասար III-ի (747—728) ժամանակաշրջանում:

Մի շրջան է յեղել, յերբ յերևի հայր ու վորդի միասին են կառավարելիս յեղել վորովհեան 1908 թվին Արմավիրում գանված Սարգուրյան մի մեծ արձանագրության մեջ (այժմ Վազարշապատումն է)², վորը կկոչենք Սարգուրի «Արմավիրյան» արձանագրությունն այն է՝ նրա 7—12-րդ տողերում կարդում ենք alukie (=aluke) bidli¹ Argištini^{1d} SARdurini gubuštalī ali ištī nini adullie tsīšuli tananini¹ Argištīli^{1d} SARduriel tīni = յուրաքանչյուր նվիրաբերություն(?) Արգիշտին և Սարգուրը աղոթեցին(?) և այստեղ (ից) դինու ծես մատուցվեց Արգիշտու և Սարգուրի անվամբ: Իսկ արձանագրությունը դրված է Սարգուրի անունից (առաջին տող «Սարգուրը Արգիշտու վորդին ասում է» և այլն): Արձանագրության հիմնական բովանդակությունն է Արմավիրի բերդի վերակառուցումը: Ռուս գիտնական Մ. Никольский-ն այդ առթիվ գրում եր „Интересно отметить что Сардури дело восстановления дворца и укрепления города считает не исключительно своим собственным, но приписывает его в раз-

¹ Այդ Buštu-ի մեջ մտնում էյին Aškaya xubi Šatiraraga(u) Ug š tiri Ušini և Alašete յերկիրը (Col IV₅₄₋₅₇):

² Բողկացած է 28 տողից, գրված մի մեծ քարի վրա և լավ պահպան ված: Հետաքրքիր արձանագրություն է նաև զուտ լեզվաբանական տեսակի արից, քանի վոր այստեղ կան մի շարք բառեր ու վորդեր, վոր այլուր չեն գործածված (šaue-manulie, Ê GAL kuldiani, šepuya, ardiani, arniušinanī ևկը lakulani gabuštalī, adullie tsīšuli tananini ևկը, kulie, laku-dullie ևկը, šepu šali ևկը և այլն):

и степени и прежде всего своему отцу Аргишти, вполне ясно изображая это дело как их общую заслугу перед потомством и как общий дар их богам. Впрочем отсюда нельзя заключить с несомненностью что Сардури был соправителем своего отца при конце жизни последнего как это было с Менуа при конце жизни его отца Ишпуи ни так как надписи последних написаны от их общего имени, в настоящей же надписи Сардури говорит исключительно от своего собственного имени, как единственного правителя и соучастие его отца в его деяниях рассматривается лишь в прошедшем. Всего естественнее представлять себе дело так что постройка дворца и города была начата еще при жизни Аргишти и при ближайшем участии его сына Сардури и затем после смерти Аргишти была окончена Сардури, и поэтому в надписи приписана обоим как их общее дело. Но конечно мысль о соправительстве безусловно не исключается" (ընդգծումը մերն է, տես նրա „Новооткрытая в Эрив губ клинообразная надпись" տպված Изв Имп Арх комиссии вып 37 տես և առանձին ուտարտի, էջ VI)։

Սարգուրի թագավորութան սկզբնական շրջանում, առաջին տասնամյակում, Ասորեսաանը շարունակում էր պասսիվ և թույլ լինել, ինչպես և Արգիշտիի ժամանակ։ Ասսուր-Նիրարիի թագավորությունը ակտիվութան նշաններ չէր ցույց տալիս Ուրարտուի նկատմամբ և բնութագրվում էր յուր համառոտ ժամանակագրութան մեջ «տանը» բառով, այսինքն՝ արաաքին արշավանքներ աեղի չէն ունեցել։ Քրմական դասը այդ շրջանում ավելի մեծ դեր է խաղում քան ինքը թագավորը։ Բայց իրադրությունը արմատապես փոխվում է, յերբ գերակշռությունը անցնում է դինվորականության, և նախկին թագավորական տոհմին չպատկանող Տիգլատպիլասար III-ը (745—727) անցնում է Ասորեստանի դուռը։ Մենք կնկարագրենք Սարգուրի արտաքին (և ներքին) քաղաքականությունը մինչև Տիգլատպիլասարը և վերջինիցս Կուլմուխի մոտ կրած սլարտությունից հետո։

Սարգուրը մեզ թողել է յերկու հիմնական և ամփոփագիր ստեղաններ (քարակոթողներ), ուր արված է կարծես թե հանրագումարը յուր բոյոր արշավանքների։ Դրանցից մեկը—Վանի ս Պողոս-Պեարոս յեկեղեցու պատի մեջ խցկված puiusi ն է չորս

յերեսից բաղկացած, մյուսը Վանի ժայռի հյուսիսային կողմում փորված «արևմտյան» նիշայի ստեղան և չորս յերեսից և պատվանդանից, վոր հայտնաբերել է Որբելին (1916 թվին), և հրատարակվել (1922 թ) Մառի կողմից (իսկ ավելի լավը՝ Մ Ծերեթելու կողմից):

Առաջին ստեղայի մի լայն յերեսը (32 տող) հայտնի էր և առաջ, քանի վոր այդ մասը յերևում էր յեկեղեցու պատի մեջ: Նա ասում է, վոր այս pulusi-ն Մարդուրը դրել է տվել (kuguni) Քալդ ասածու համար. տրվում է տիտուլաաուրան, կանոնավոր զոհաբերության կարգը, անեծքի ֆորմուլան, Մարդուրի կողմից իշխանության (թագավորության) ստանձնումը Քալդ ասածուց, վորը տալիս է Մարդուրին թե իշխանություն և թե ուժ (gunuse): Այնուհետև սկսվում է ռազմական նկարագրության սկիզբը («այս նույն տարին... զորքեր...»): Յերկրորդ լայն կողմը (ելի 32 տող) խոսում է արշավանքների մասին ղեպի հարավ-արևմուտք ի միջի այլոց և ղեպի Մեկիտեննե (, Арх. Экс. ' 41—42): Մյուս յերկու յերեսները ավելի նեղ են (30-ական տողեր) վորոնցից մեկը խոսում է Xura քաղաքի ղեմ կատարած արշավանքի մասին, մյուսը՝ Ասորեստանի թագավոր Աշշուրնիրարիին և այլոց հաղթելու մասին (ibid.): Առանձնապես հետաքրքիր է այդ վերջին քարեջրը J Friedrich-ը այսպես և թարգմանում այդ մասը (տողեր 3—13) «Նա նվաճեց Մուրինուին, Վելիքուխի յերկրի թագավորին, նվաճեց Ծինալիբիին,¹ Լուեխուի [ճիշտը՝ Լուեբուուի?] վորդուն, թագավորին յերկրի Թուլիխու, նվաճեց Աշշուրնիրարիին Աղազնիրարիի վորդուն, թագավորին յերկրի Ասուր, նվաճեց Արմե յերկիրը, նվաճեց Նիխիրիա-ն, յերկրի թագավորական քաղաքը²: Ինչպես տեսնում ենք, Մարդուրի ռազմական այս նկարագրությունը մատնանշում է դիտավորյալ կերպով աշխարհագրական յերկու հակառակ կողմեր—մեկը՝ ծայրահեղ հյուսիսը, վորին հասել էր Ուրարտուն, այն է Սևանա լիճը (Tulixu «քաղաքը» համապատասխանում և այժմյան Աղամխան—Սարուխան

¹ Տես նրա „Die Inschrift des urartäischen Königs Rusa I aus Nor Bajazet („Arch. Orient“ 1931 Vol III, № 2, էջ 258): Խալդական տեքստն է—karuni 1 Murinani LUGAL KUR Uelikuhi KUR nie karuni 1 Sinalibini 1 Lucuhie LUGAL URUTulihui KUR nie karuni 1 Aššurnirarini 1 Adadnirariehi LUGAL KUR Aššurnii KUR-nie karuni KUR Arnee karuni URUNihiriani URU LUGAL-nusi KUR nie: Ֆրիդրիխը karuni բայը (անց. կատ 3 դեմք յեզակի) թարգմանում է ղերմաներեն «er bekämpfte» [«преодолел, одолел поборо, победил»], վոր հայերեն կնշանակի ավելի շուտ «հաղթահարեց»

լյուդին վորտեդի Սարգուրյան արձանագրությունը նույն քա-
 րաքը նվաճելու մասին և խոսում ու նույն Ծինալիբի թագա-
 լորի մասին), իսկ մյուս հակադիր կողմն և ծայրահեղ հարավը՝
 Դիարրեքիրի հյուսիսային (Armee յերկիր) և հյուսիս-արևմտյան
 (կամ արևմտյան) շրջանը, ուր յեղել և Nixiria (Nixiria)) յեր-
 կիրը: Ի միջի այլոց այդ յերկրանունը նույն հնչմամբ հիշատակ-
 լում և և խեթական քնադրերում Քաթթուշիլ III-ի սրով, վոր
 պատերազմել և այդ Nixiria-յից Ասորեստանի Ադադնիրարի I
 թագավորի դեմ (մի այլ արշավանք ել նա ձեռնարկել եր 13ua
 յերկրի Aladarma քաղաքից, վորը յեղել և հավանորեն հայոց
 Օոփքում կամ նրանից քիչ հարավ)

Սարգուրյան նիշայի պատերի վրա փորագրված յերկու
 արձանագրությունները և քարակոթողի հինգ արձանագրություն-
 ները (չորսը ստելայի վրա, մեկը՝ նրա պատվանդանի վրա) ու-
 րարտական արձանագրությունների մեջ առաջնակարգ տեղ են
 դրավում, յետ չմնալով Սրգիշտու Քորխորյան 8 արձանագրու-
 թյուններից¹: Այստեղ շարագրությունը ասրվում և ըստ տարի-
 ների ինչպես եր և Արգիշտիի «Քորխորյան արձանագրություն-
 ների մեջ (14 տարի), սակայն Սարգուրյան այս յոթ արձանա-
 գրությունների հաջորդականությունը պարզ չի տարիների
 այդ հաջորդականությունը կարող և լինել յետ կա՛մ առաջ: Ել
 չենք խոսում այն մասին, վոր տելայի յետևի (պատի վրա
 դրած) արձանագրությունը տարեգիր արշավանք չի տալիս այլ
 մի տեսակ վերջնամիտիում և (և առանց անեծքի Փորմուլայի)

Նիշայի առաջին արձանագրությունը, վոր փորագրված և
 սրս արևելյան պատի վրա հայանի եր դեռ վաղուցվանից
 (Շուլցն եր 1828 թվին ս աջին անգամ ալ տագրել). նա ունի
 29 յերկար տողեր և նկարագրում և մի տարում կատարած
 (գարնանը, ամառը և աշնանը?) յերեք արշավանքներ: Առաջին
 արշավանքն և լինում դեպի Բարելոնյան (resp. Ասորեստանի)
 յերկրները կամ սահմանները և դրավում և KUR Babilu ։ KUR
 ebani («Բաբելու յերկիրը») վորին Սարգուրը տիրում և (ku
 քadi «տիրեցի») մինչև Baruataini(a) յերկիրը, վերցնելով 3
 ամրացրած բերդ քաղաքները վառելով, յերկիրն «ուտելով», այդ

¹ Արգիշտու 8 արձանագրությունների տողերի քանակն և 380, իսկ
 Սրգուրյան նիշայում յեղածներինը՝ 290, վորոնցից 42 տող պատի վրա (29
 ։ 13) և 253 տող կոթողի (56+55+53+57) և նրա պատվանդանի (32) վրա,
 չհաշվա՛յ ճարգված տողերը կոթողի 4 արձանագրությունների վերի մասում:

և կանանց տարադրելով և այլն¹, և վորի թագավորը դալիա ներկայանում է (= յենթարկվում է) Սարդուրին: Նույն տարին ամառը (ikukanı MU tatsini²)² Սարդուրն արշավում է հակառակ ուղղությամբ, դեպի հյուսիս, այն է՝ դեպի Etiuni և նրան կից Likı յերկրները, վորոնք գրավում էյին այժմյան Կարսի նահանգը, առաջինը Կարսաչայ գետի ուղղությամբ (Սարիդամիշ-Կարս), իսկ յերկրորդը ընդգրկում էր մեր կարծիքով նրա արևելյան մասը, այն է՝ հայոց պատմական Շիրակի արևմտյան մասը (Արփաշայից արևմուտք): Այստեղ նա ուժով դրավում է վոմն Abiani-ի³ ամրացրած թագավորական Ediani քաղաքը (տեքստում սխալմամբ՝ «յերկիրը») վոմն Erkua-յի ամրացրած թագավորական Eruiani քաղաքը [հմմտ հայոց Aruean = Առուեն-ից նախարարությունը նույն շրջանում], վոմն Verda-յի ամրացրած և թագավորական Ermaani քաղաքը [= հայոց Արամանի, այժմյան Ալաման]⁴ և թագավորին Buini քաղաքացիների [հմմտ Բուիկ դյուղը Արաքսի վրա, Կաղզվանից հյուսիս-արևելք] ծառայեցնում, հպատակեցնում է հարկի տակ և դցում, վոր այսուհետ հարկ առ Սարդուրին այդ չորս բերդերը (Fdiani Eruiani, Ermani Buini) վերցնում է այդ և կանանց տարադրում է և այլն⁵: Նույն տարին աշնանը Սարդուրն արշավում է Urme յերկիրը, վորը դժվար թե Ուրմիա լճի շրջանները նշանակի, ինչպես ուրիշներն են կարծում, և դրավում է 11 բերդ քան-

¹ «8130 տղա տարտ, 25000 սարկուհի (սարուկ?), 6000 զինվոր 2500 ձի քշեցի, 12300 արջառ, 32100 վոչխար, Դրտ (այդ) թագավորը յեկավ, և ինչ վոր (իմ) զորքերը տարան (թալանեցին) ավելի (եք վոր) տարան...»:

² Ենթադրաբար է թարգմանվում tatsini (iaşini) բառը վորպես «ամառ», այդպես էլ յենթադրելի է Տիտնի «աշուն»:

³ Համեմատել հայոց Հաւեն-ունի նախարարության տնունը, վորը (Hawen-) կազմվել է ավելի հին Awian-ից, իբրև փոխածեք Abiani ից Այդ նախարարությունն ևս, ըստ իս, արևմտյան Շիրակումն է յեղիք:

⁴ Տառադարձության ժամանակ բոլորը գրում են (Ir-ü-i-a ni, Ir ku a-i-ni-i (էրբույանն), Ir-ma a ni և այլն, այսինքն՝ „ir“ նշանը միայն զորպես այդպիսին, այնինչ այդ նշանը հնչվել է և „er“ և մեզ թվում է, վոր այդ վերջինն ավելի ճիշտ է չմտ. Տաշբուրունի արձանագրության E-ri-ku-a-xi («Երբույանն») թագավորանվան այլ ձևի գրությունը, վորը ցույց է տալիս սկզբնական „er“ հնչումը և վոչ թե „ir“: Հայոց Արամանի, Առուեն-ից (e || a) ձևերն ևս վկայում են բարբառային er-ի մասին:

⁵ «Տանում է նակ՝ 3500 տղա 10500 սարուկ կին (ved an) 4000 զինվոր տարտ 8520 արջառ տարտ, 18000 վոչխար»:

դուս, այր և կանանց քշում, տանում և այլն¹: Վերջում թվարկելով յերեք յերկրների գերիների հանրագումարը (12730 տղա, 12000 կին տարուկ, 12000 դինվոր) Սարգուրն ասում և վոր այդ դործերը նա մի տարում կատարեց:

Նիշայի քարակոթողի (ստելայի) նեղ յերեսի մի արձանալուսթյունը (Арх. ЭКС I սյունակը) մեզ տալիս և Սարգուրի մի այլ տարվա արշավանքները Դրանք կատարվել են դեպի Mana յերկիրը, այսինքն՝ արևելք և հարավ-արևելք, ուր գրավվում և Darbanı քաղաքի բերդը, ուր սրաական կայազոր (գարնիդոն)² և դրվում այդտեղ, յերկիրը միացվում Բիայնային. այդ Մանա յերկիրը նվաճվում և, քաղաքները քանդվում են, և այր ու կին տարագրվում են: Նույն տարին աշնանը (ikukanı tsalı šiš tını) Սարգուրը դորքեր և ուղարկում մի այլ ուղղությամբ, այն և՛ դեպի Նրիախի (=Շիրակ, Լենինականի շրջանը), ուր այդ դորքերը «յերկիրը գրավեցին, քաղաքները վառեցին (և) քանդեցին, յերկիրը կերան, այր-կին Բիայնա քշեցին»³: Վերջում ավերացվում և, վոր այս բոլորը մի տալումն և յեղել և ինքը վերագարձել և:

Նիշայի քարակոթողի Ի լայն յերեսի վրա (Арх. ЭКС., սյունակ II, 1-55) նկարադրվում են յերեք սարվա արշավանքներ: Առաջին տարում՝ դեպի Kulxa յերկիրը արշավելիս Սարգուրը բռնում և Xuša յերկրի ժողովրդի թագավորին, տարագրում և (edını tašmuubi) տանում և բաց թողնում յուր յերկրում⁴: Նույն

¹ 1100 տղա տարա, 6500 կին, 2000 դինվոր, 2038 արջառ 8000 վոչխար Սարգուրն Արգիշտիի վորդին, ասում և—վոր մարդկանց դերի յերեք (այդ) յերկրներում (յերկրներից) մեկ տարում պարձրի, ընդամենը՝ 12735 տղա տարա, 26700 կին տարա, 22000 դինվոր տարա 2500 ձի տարա 23300 արջառ, 58100 վոչխար տարա: Սալդու ուղնությամբ այս դործերը մեկ տարում Սարգուրը, Արգիշտու վորդին, կատարեց:

² Այդպես ենք թարգմանում LúIR-Dipı ištini asuubi KUR ebani KUR ebaniukiedi abili dubı (տողեր 21-24) = կայազոր այստեղ բնակեցրի յերկիրը յերկրիս միացրի

³ Այս Eriaxi-ից Սարգուրը տանում և 3225 տղա, 4328 կին, 412 ձի 6665 արջառ, 25735 վոչխար, թեպետ մարդկանց հանրագումարը («8158 մորդ») չի համապատասխանում տղաների (յերեխաների) 3225+4328 կանանց թվի դումարին:

⁴ ... (nstaadi) KUR Kuulxardi. IXaxáni LULAL KUR Xušaaxı 1սUNpi-rani [=ibirani] edini tašmuubi parubi ertsl du[bi] KUR ebaniukie = արշավեցի Kulxa յերկիրը, Xaxa-ին, թագավորին Xuša յերկրի ժողովրդի տարագրեցի տարա, ազատեցի յերկրումս (տողեր 2—5)

տարին գորքեր են արշավում Abilianixi [= Սրեղենից հայ իշխանների նախորդները] տոհմի յերկիրը, վոր հավանորեն գտնվում էր այժմյան Կաղզվանի մոտերքը այդ յերկիրը գրավվում է մեկ որում («I UD^{MI} asgubi մեկ որում ավերեցի»), բերդերը քանդվում, քաղաքները այրվում, յերկիրը կլանվում («ուլավում») այր-կին գաղթեցվում և այլն¹, «Քաղղո ոգնությամբ այս գործերը 1 տարում կատարեցի»: Մյուս տարին նվաճվում են Eriaxi և էլի Abilianixi յերկրները: Eriaxi-ն մեկ որումն է գրավվում ավերվում, ինչպես և այդտեղ սլապերից ու հայրերից շինված «muri» աները (= թագստոցները?)—«Քաղղյան տիրոջական խոսքով յես 150 muri տներ վերցրի, արտահանեցի (իրերը?), այր կին, nirbi (ղոհակենդանի)?, didguši (= ?) այստեղից փոխադրեցի, քաղաքները վառեցի, յերկիրը կերա, այր-կին քշեցի Բիայնա: Սարգուրն ասում է—վերագարձին (?)² արշավեցի Abilianixi յերկիրը, քաղաքները այրեցի, յերկիրը կրանեցի յեկավ Muri-ni-ն, Abiliani-ն վորդին (Abilianixi=Աբիլյան, Abiliani տոհմից), բռնեց Սարգուրյան վոսրերը, ծնկի յեկավ... բաց թողի (ազատեցի) տեղում, զցեցի հարկի ստակ» և այլն³: Այս ևս կատարվում է մեկ տարում: Վերջին, յերրորդ տարում Սարգուրն արշավում է Ruišiani և Iğani յերկրները, վորոնք, ըստ իս, գտնվում է յին Կարսի և Ջլղր լճի միջև, և յենթարկում և իրեն (նվաճում է) առաջինի Rašu թագավորին ու վերջինի Diutsini թագավորին (ka runi 'Diutsinini Iğaniexi LUGAL KUP Etiuxi KUR ebanic նվաճեց (Քաղղը) Դիուծին'ին Իգանյան, թագավորին Եթիույան յերկրի): Այստեղից յերևում է, վոր Իգանի տոհմը (այստեղից թերևս մեր Գնունի իշխանները) նույնպես մտնում էր Եթիու գեղերի գաղնախցության մեջ: Այս II (ըստ Մառի՝ Арх. ЭКЕР., № 42) արձանագրության վերջը քիչ պակասավոր է (ջարդված է),

Սարգուրյան նիշայի քարակոթողի մյուս նեղ յերեսը (Арх. ЭКЕР., III սյունակ, 53 տողից) նկարագրում է արշավանք դեպի Kulxa յերկիրը և նույն տարին աշնանը դեպի Vixiruxi յերկրները: Այդ յերկուսն էլ գտնվում են Սև ծովի մոտերքը, ճորոխ/ստորին հոսանքի հովտում Սլ ձանապարտից Գ սկիզբը սկս (Լի

¹ Տարվում են—31831 (?) տղա (յերեխա), 3436 կենդանի մարդ (—զին վոր) 6408 կին-սարուկ (vediani)... 65 ձի, 6030 արջառ, 10837 մոշխար:

² Այս բառը (b'duyase) կարող է նշանակել և «կրկին»:

³ Տարվում են այստեղից—7150 «մարդ մեկ տարվա», «վոմանյ սպանեցի, վոմանյ կենդանի տարա, 500 ձի տարա, 7560 արջառ, 25110 վոշխար»:

Ն-6 տող) քանի վոր քարակոթողի վերին մասը կտորած է յեղել զեռ հնում: Այդ եջում կարդում ենք—«Սարդուրն ասում է— արշավեցի Kulxa յերկիրը, Ildamuša քաղաքը թողավորական (է) .. թագավոր[ական?]. Կոլխյան յերկրի, ամրացրած էր ուժով գրավեցի, ժողովրդին վառեցի, կայազորը Կոլխայի (վոր) այստեղ կար, կոտորեցի, տախտակ յերկաթե շինեցի, արձանագրությունն Ildamuša քաղաքում դրեցի, բերդերն (ու) քաղաքները վառեցի, քանդեցի յերկիրը կուլ տվի այր (ու) կին քշեցի: Սարդուրն ասում է—Նույն տարում աշնանը արշավեցի Uixiru Վե յերկիրը, յերեք փոխարքա ուղարկեցի (?), յերեք տեղում արշավանք [նրանց միջոցով] կաաարեցի Սալդյան դորությամբ յերկիրը ցրեցի, կոտորեցի, յերկիրը կուլ տվի, այր (ու) կին քշեցի Urayani քաղաքում բերդ կառուցեց| կայազոր այստեղ բնակեցրի վիխիրուխյան 6 առաջնորդների (?) ողնությամբ աղատ թողի»: Սրանից հետո բերվում է դերիների և ավարի գումարը (8100 տղա 3110 կին , 1500 ձի, 17300 արջառ և 31600 վոչխար), և վերջացվում է սովորական դարձվածքով «Սալդո ոգնությամբ այս գործերը մեկ տարում կաաարեցի»: Արձանագրության այս յերեսը վերջանում է հետևյալ տողերով (45—53)—Սալդը արշավեց, յուր զինանշով նվաճեց չորս թագավորների Ueduri-Etiuni յերկրի մեջ—Argukiuni թագավորին Kāmani(ui) թագավորին, Lueruni(ui) թագավորին¹ Խսկանի edin .. atu (=սրանից հետո...դարձա?)» Ուրեմն այս քարերեսի վրա հիշվում են յերկու տարվա գործողություններ—մեկ տարում դեպի Kolxa և Vixiru- ե մյուս տարում՝ դեպի Սեանա լճի հարավային շրջանները (Veduri-Etiuni): Կոլխա յերկրի մասին խոսվել է և նախորդ (II սյունակ) յերեսի վրա ուր հիշատակվում է Xaxa(n) անունով թագավոր Xuša յերկրի ժողովրդի (—խուշայեցիների թագավոր), իսկ Vixiru(xi) յերկրանունը յուր 6 ցեղապետներով հիշվում է առաջին անգամ: В Лагашев-ը յուր Известия древних писателей греческих

¹ Իրանով վերջանում է 51-րդ տողը և անդ չի մնում չորրորդ թագավորի անվան համար: Arguki թագավորը իշխել է այժմյան Զաղալվում (Սեանա լճի հարավ-արևելյան մաս), Lueru-տունը իշխել է Ադամխան (Սարուխան) դյուղի շրջանում: Սարդուրը այդ յերկու դյուղերում էլ թողել է փոքր արձանագրություններ, փորակ տալիս է յուր արշավանքը դեպի այդ յերկու անդերը: Kāmani թագավորը թերևս իշխել է այժմյան Քյուրանդուանի շրջաններում, վոր կոչվել է Adaxuni

и латинских о Скифии и Кавказе“ (СПБ 1890 г.) դրքում բերում է Ստեփան Բյուզանդացուց հետևյալ տեղեկությունը— «Χοί, ἔθνος Βεχείρων εγγύς (Հեկատեյի «Ասիա»-յից)»— «ἐς μεν τοῦτο ἢ Βεχειρικῆ, ἔχονται δ' αὐτῶν Χοί» իսկ Ապոլլոնիոս Ռոդոսացին ասում է «За островом на противоположном материки живут Филиры, выше Филиров—Макроны, а за ними многочисленные племена Вехиров, непосредственно за ними живут Сапиры с этими соседят Визиры (Βύζηρες), за которыми следуют уже сами воинственные Колхи“ (В Латышев, к 2 413): Χοί ցեղի մասին հիշում են և խեթական աղբյուրները: Այսպես, ուրեմն, Սարգուրը յուր արշավանքները հասցրել է մինչև Սև ծով, մինչև կոլխերի ու վիխիրների շրջանները, վորոնք հավանորեն ձորոխի ստորին հոսանքում պիտի գտնվեյին. իսկ Ildamusa քաղաքը, վորտեղ Սարգուրը թողել է յերկաթե տախտակի վրա դրած արձանագրություն, թերևս այժմյան Արտանուշը լիներ:

Սարգուրյան նիշայի քարակոթողի մյուս լայն յերեսը (Αρχ Εξοπ, IV սյունակ 57 տողից), վորպես այդ ստելայի վերջին արձանագրություն, խոսում է Pulua յերկրի դեմ կատարած արշավանքի մասին, վորի Lipiumi ամրացված և թագավորական քաղաքում Սարգուրը թողնում է մի արձանագրություն և շինում է մի բերդ և յերկիրը ամրացնում Դժբախաբար այդ Pulua (Bulua) յերկրի աեղը մեղ անհայտ եւ Մյուս արշավանքը կատարվում է նույն տարին աշնանը դեպի Eriaxi, վորը միացվում է Բիաինային¹, Դրանով վերջանում են մի տարվա ուղամական դործողությունները: Հետևյալ տարին Սարգուրը արշավում է Kumaxa յերկրի դեմ, յինթարկում է կումախացիների թագավոր Kuštašpili-ին, մի այլ թագավորի հետ նվաճելով, վորը դրան ոգնության եր յեկած դրավում է նաև այս կողմերում Vitani քաղաքը, վորը թագավորական եր և ամրացրած, Χαλρα քաղաքը, վոր թագավորական ու ամրացրած եր և tsuinišini-manu եր (= ծովի մոտ յեղած?), վորը թերևս համապատասխանում եր Bit-Xalupi -ին ասուրական արձանագրությունների մեջ և Parala թագավորական քաղաքը, վորը «յեկավ ինձ մոտ, ծնկի յեկավ, հարկադրեցի նրան [— Քւստասպիլուն] (վոր) աա ինձ—40 մա-

¹ Eriaxi-յից Սարգուրը տանում է 8436 ազա, 15553 կին ընդամենը 21323 խորդ., 1413 ձի, 115 ուղա, 16523 արջառ, 87825 վոչխար

նա հնչուն (?) վոսկի, 800 մանա արծաթ 3000 զգեստ 2000 վահան պղնձե, 1530 աման բրոնզե»: Մրանից հետո Սարգուրը յերևի վերադառնում է (inukani edini azibi edani xarari aṭu = ?), և այսպիսով վերջանում է յերկու տարվա արշավանքների նկարագրությունը: Կուվախը, ինչպես հայտնի յե, գանվում է Յեփրատի վրա, Ուռհայից հյուսիս, վորտեղ հետադաշում տեղի ունեցավ Սարգուրի համար (և Ուրարտուի համար) ճակառակա՛ն ճակատամարտ Տիգլատպիլասալի և Սարգուրի կողմիցիայի միջև:

Սարգուրյան նիշայի քարակոթողի պատվանդանի (մեկ քառակուսի մետր) արձանագրությունը ամբողջովին մաքուր պահվել է և վերաբերում է Սարգուրի այն արշավանքներին, վոր նա կատարել է Ուրարտուի հյուսիսում, վերջացնելով այս մեծ արձանագրությունը (Արք ՅԿԵ, V սյունակ, 32 յերկար սողից) շաբլոն արտահայտությամբ «Պալղու ոգնությամբ այս գործողությունները մեկ տարում կստարեցի»: Բերենք այդ արձանագրությունը ամբողջապես

«Պալղյան փառքով (= փառքի շնորհիվ) Սարգուրը Արգիշաիի վորդին ստում և kamaani ամսին (= մարտին?) քաջարի (tarnuni) զորքերը հավաքեցի աղոթեցի Պալղուն, տիրոջը, Տիյեբային Արդինիին (և) աստվածներին Բիայնայի, տերունական մեծությանը վստահացա Լուլուինա (= բարբարոսական յերկր(ներ)ի դեմ. ոգնեցին ինձ աստվածները: Սարգուրն ստում է— ուղևորվեցի Etiuni յերկիրը (և) ...եցի aliaštaadi = ?). Etiuni յերկրի ոգնությամբ Eriaxi յերկրի վրա դեցի զաշնակից (salmatxi) Kuriani յերկիրը: Արշավեցի Iğani յերկիրը: Պալղը արշավեց, յուր գինանշով նվաճեց Kapur-ին, Թագավորին Iğanie յերկրի. Պալղը kuruni (վողորմած?) է, Պալղյան զինանիշը kuruni է: Արշավեց Սարգուրը: Սարգուրն ստում է— 35 բերդ, 200 քաղաք 60 որում ավերեցի (ašgubi?), տները քանդեցի, քաղաքները վառեցի, յերկիրը կլանեցի, այր (ու) կին այստեղից փոխադրեցի Բիաինա: Սարգուրն ստում է — նույն ճանապարհին (KASKAL ընթացք, ուղի) արշավեցի դեպի Puzumaienie յերկիրը (= Բուզունիական յերկիրը), դեպի Alkania քաղաքը, դեպի Tsudala քաղաքը. բերդերը քանդեցի, քաղաքները վառեցի, յերկիրը կլանեցի: Վերադարձին արշավեցի Eriaxi յերկիրը (= Երիական յերկիրը) քաղաքները վառեցի, այր-մարդ այստեղից փոխադրեցի, Լետո վերադարձա (և) արշավեցի Iš-teluanigi յերկիրը, Kadaieni (Կադիայական) յերկիրը, Apuuni յերկիրը, Abilia-nixi [յերկիրը] Սարգուրն ստում է— յես զորքեր հավաքեցի (nikūli կազմեո՞ր?) մեկ փոխաբքայի հետ ուղարկեցի մեկ զունդ Velikunigi յերկիրը, զրա վեպի Velikuni յերկիր(ներ)ը, 22 բերդ ամբարձած ուժով վերցրի բերդերը քանդեցի, քաղաքները վառեցի, յերկիրը կլանեցի, այր-կին քշեցի Բիաինա: Սարգուրն ստում է— յեկավ իմ առաջ Nidi-ն, Թագավորը յերկրի Velikuxi խոնհարվեց (կամ ծնկի յեկավ), ծառայեցրի (հպատակեցրի), հարկի տակ ձգեցի (վոր) հարկ Սարգուրին սա Սարգուրն ստում է— նույն ատրին, աշ

յանը, արշավեցի ¹Arguki-յան յերկիրը գրավեցի ¹Arguki-յան յերկիրը ¹Adaxuni յերկիրը, ¹Lutpruni [սխալ է, փոխանակ ¹Lueruni] յերկիրը, ¹Ešumua-յի յերկիրը, ¹Kamniu-յի յերկիրը, Ku'albanu յերկիրը, Uxunini յերկիրը Teriani յերկիրը. 22 բերդ ամրացրած ուժով վերցրի, 120 քաղաք 60 որում ավերեցի (? ašgubi), բերդերը քանդեցի, քաղաքները վառեցի, յերկիրը կրանեցի (եկերա՞), այր-կին ախտեղից փոխադրեցի Սարգուրն ասում է, վոր մարդ կանց զինանշի առջևից kuluturšibi šatuni (= ? : Uškiani յերկիրը Bamni յերկիրը ցրեցի (badgulubi), կոտորեցի, վորոշ (? alipi) kuluturšibi Տեյեբա աստվածը վառեց: Սարգուրն ասում է—հավելյալ այր (և) կին զորքերին ավի Սարգուրն ասում է, վոր մարդկանց գերի (?) դարձրի, 10000 աղա (յերի ասասորդ) բերի, 4600 կենդանի մարդ քշեցի, 23200 կին, ընդամենը՝ 37800 մարդ, վոմանց կոտորեցի, վոմանց կենդանի տարա. 3500 ձի, 40353 արջառ 214700 վոչխար: Սարգուրն ասում է Խալդս ողնությամբ այս զործողությունները մեկ տարում կատարեցի»

Ինչպես տեսնում ենք, քարտկոթողի պատվանդանի այս մեծ արձանագրությունը նկարագրում է մեկ տարվա արշավանքը դեպի Ուրարտուի հյուսիսային ծայրամասերը—մի կողմից Etiuni, Eriaxi, Kuriani յերկրները և սրանցից հետո հարևան Iganu յերկիրը, վորի Kapur (հմտ. մեր իշխանների «փաղաքական» Գարուռ մականունը, որինակ թ Արծրունու մոտ) արքային Սալդուրը նվաճում յենթարկում է Նույն տարում արշավանք է լինում դեպի Buzunia յերկիրը¹ և Alkania ու Isudala քաղաքները: Վերադարձին գրավվում է (քանիերորդ անգամ) Eriaxi, հետո Išteliuani(gi), Kadiaini, Apuuni և Abilianixi յերկրները: Մյուս կողմից մի այլ դորարածնի միջոցով, փոխաբայի թերևս ղեկավարությամբ, արշավանք է կատարվում Սեանա լճի շուրջը, գրավվում է Velikuni [= Գեղաքունի], վորը համապատասխանում է այժմյան Նոր-Բայազետի շրջանին, ինչպես յերևաց Թուսա I-ի այդ տեղում թողած արձանագրությունից. հետո գրավվում են (տշնանը) այդ Velikuni-ին կից ույուններ—Արզուկի յերկիրը (= Ջաղալու), Lutpruni (= Lueruni?, այժմյան Աղամխան-Սարուխան) յերկիրը Ešumua-յի յերկիրը, Kamniu-յի յերկիրը Ku'albanu յերկիրը, Uxuni յերկիրը, Teriani յերկիրը: Սրանցից առաջին չորսը (Arguki, Lueruni Ešumua, Kamniu) ունեն այրանվան դետերմինատիվ, ուրեմն ցեղանուններ են Այս Սեանայան յերկրների հետ հիշվում են և յերկու յերկրներ Uškiani (հայերեն կլինե՞ր՝ Ոսկեան-ք) և Bamni: Վերջինը հիշվում է և Արգիշ-

¹Արդյոք այդ Buzunia (Puzunia) համապատասխանում է մեր «Բզնու նի» անվան (= Վանա լճի արևմտյան յեզրաշրջանը), թե մի այլ տեղի անուն է (գուցե = Բջնի?), այդ գժվար է դեռ վորոշել

սիի Սորխորյան (Col V₁₇₋₂₀) մի արձանագրության մեջ — «յերբ Bixurani քաղաքը սլաշարեցի (? kapkarulūbi), Bixurani քաղաքի հարևան (? asuni) Bamiu յերկիրը քանդուքար արեցի (տող 18)» կամ թե (տող 20) «յես Bamiu յերկիրը քանդեցի յես Bixura III քաղաքը վերցրի» Թ՛ւրես Bamiu անունը շատ տեղերում է յեղեր:

Սարգուբյան նիշայի այն արձանագրությունը վր դոնը վում և հետևի պատի վրա քարակոթողից հետև և այս հինգ արձանագրությունների (քարակոթողի շորս յերեսի և սլատվանդանի) հետ առաջին անգամ հայտնաբերված և 1916 թվին Որբելու կողմից, չի տալիս արշավանքի նկարագրություն: Ես անշուշտ վերջինն և թե այդ հնդի հանդես և թե սկզբում գոնված («Սաղինա-կապուսի» արձանագրության) 32 տողանոց արձանագրության հանդես: Այդտեղ Սարգուբն «Սաղու մեծության շնորհիվ» ասում է հետևյալը—«յերբ Սաղը ինձ թագավորություն տվեց, ստանձնեցի (naxadi) հայրական թագավորությունը, Հետևյալ ընծաները (ardaie?) (և) inisiuse Շուրայան յերկրի համար edini turubi¹ (=դուրս հանեցի?)—32 փայտի վարպետ, 3604 վրան, 352011 զինվոր՝ թե հեծյալ (?) թե հետևակ այս նվերը (?) զորքերի (և) համար դուրս բերի: (Իսկ) հետևյալ մթերքը (?) inisiuše) վոր հավաքեցի—121 (?), 10408 ձի, 132 հոտ (նախիր)՝ 12321 կովից, 3036 յեղից (արջատ),—ընդամենը 11357 արջատ, 35467 վոչխար, 2114 նետ, 1332 նիզակ, 47310 բիր (КОЛЬЯ ДЛЯ ПАЛАТОК), 202133 կապիճ ցորեն 111 կարաս գինի, 20 կուժ յուղ, 7013 մանա բրոնզա, 336 (մանա) արճիճ—[այս բոլորը] սրսդա-յան մարդկանց համար դուրս հանեցի (?): Սարգուբը Արգիշաի վորդին հզոր թագավոր (և) թագավոր մեծ թագավոր Շուրա յերկրի, թագավոր Բիախնա յերկրի, թագավոր թագավորների, տերը Տուշպա քաղաքի»: Անշուշտ այստեղ տրվում և այն թալանած կամ նվիրած մթերքների քանակը, ինչպես և մարդկանց (հետաքրքիր է 352011 զինվորացու մարդ, կամ զորքի համար սարուկներ), վոր Սարգուբը բերել և

¹ Այս edini turubi-ն այնպիսի հարադիր բայ է, ինչպես edini sutukubi dmi tasmubi (դուրս տարա ?), edini tamxubi (դուրս հալածեցի изгнал): Մի այլ տեղ (տես մեր Վնոր Բայազետի Ռուսա I արձան.) մենք այդ edini «այն տեղից, ուսաց из, вы-» (edia=այնտեղ, там, туда; edi=այն) ցանկացել ենք գոյականի հեղիք համարել «համար» իմաստով հետևելով I Friedrich-ին: Այս թերևս սխալ է:

արշավանքներից կամ հպատակ ու վասսալ յերկրներից սրանց մի մասը հանձնում և զորքին, իսկ մյուս մասը՝ ուրուրդա մարդկանց, այսինքն՝ իշխող բիայնացիներին: Բայց դիտելի չե, վեր սկզբում այդ բոլորը մտնում եր KUR Šuraani edini-turubi «Շուրայան յերկրի (համար) դուրս հանեցի (?)»: Այս արձանագրության լեզուն դեռ լավ չի հասկացվում, և մեր թարգմանությունը մոտավոր և: Համենայն դեպս KUR Šraani edini turubi դարձվածքի մեջ (ինչպես ^{Lú}A ŠI^{pl}-nani edini turubi և ^{Lú}Urūrdāni edini turubi) չկա թշնամական վերաբերմունք, այլ ընդհակառակը՝ խնամողական, հողատարական Շուրա յերկրանունը դա Բիայնային լրացնող հարազատ յերկրանուն և, վոր մտնում է ինչպես դիտենք տիտուլատուրայի մեջ:

Յեթե մի հանրագումարի բերենք Սարգուրի այն արշավանքների տարիների քանակը և նվաճված յերկրները վոր տալիս են նրա հայտնի նիշայի վեց արձանագրությունները թե կոթողի վրա (հինգ) և թե պատի (մեկ արձանագրություն, մյուսը վերջինը այլ բնույթ ունի), ապա կգանք հետևյալ արդյունքների I տարի—դեպի Mana յերկիրը, Babilu յերկիրը (Baruataini յերկրով), հետո՝ դեպի Etiuni—Liki յերկրները (կարս-Շիրակ) և վերջապես՝ դեպի Urme յերկիրը (արևելք?):

II տարի—դեպի Mana յերկիրը (Darbanu քաղաքով) այդ կցելով Biaina-յին և դեպի Eriaxi յերկիրը. տես Arx. ՅԿԵ I₁₋₅₆։

III տարին—դեպի Kulxa յերկիրը (Xuša քաղաքով) և դեպի Abilianixi յերկիրը լորը մեկ որումն և գրավվում (Arx ՅԿԵ II₁₋₁₈)։

IV տարին—դեպի Eriaxi յերկիրը Abilianixi յերկիրը (յուր Mitrini թագավորով) տես Arx. ՅԿԵ. II₁₈₋₄₈։

V տարին—դեպի Ruištaini յերկիրը (Rašu թագավորով) և դեպի Եթիունյան Igani յերկրամասը (յուր Diutsini թագավորով) տես Arx ՅԿԵ II 48-53։

VI տարին—դեպի Kulxa յերկիրը (Ildamuša մայրաքաղաքով) և դեպի Vixiru(xi) յերկիրը, այսինքն՝ դեպի Ճորոխի հովիտը և Սև ծովը տես Arx. ՅԿԵ II III₁₋₄₃։

VII տարին—դեպի Veduri-Etiuni յերկրները (Argukinu-յի, Kamuniu-յի, Lueruniu-յի...), այսինքն՝ Սևանա լճի հարավային շրջանները. տես Arx. ՅԿԵ II III₄₄₋₅₂։

VIII տարին—դեպի Pulua յերկիրը (յուր Lipliuni գլխավոր քաղաքով ուր արձանագրություն և թողնվում) և դեպի Eria

xի յերկիրը (Շիրակը՝ Լենինականի մոտ), տես Arx Յիւն IV₁₋₅₃

ԼՂ տարին—գեպի Kumaxa յերկիրը յուր Vitani, Xaipa և Parala քաղաքներով և Kushtašpili թագավորով տես Arx Յեւ IV₂₅₋₅₆՝

ԼՂ տարին—գեպի Etiani յերկիրը և նրան յենթակա Eriaxi ու Kuriani յերկրները, հետո՝ գեպի Եթիունյան՝ Igani յերկիրը (Կարսի ու Չլդրի միջև) յուր Kapuri թագավորով: Հետո՝ գեպի Puzunia յերկիրը (Alkautia և Tsudala քաղաքներով) և վերագարձին՝ գեպի Ištēluanig, Kadlaini, Apuuni և Abilianixi յերկրները: Յերկրորդ դորախուժքը նույն տարին դնում և գեպի Velikuni (Փեղաքունի) յուր Nidi թագավորով, գեպի Argukյան յերկրները—Adaxuni, Luipruui Ešumua Kamniu Ku'albani, Uxuni Teriani (տես Arx Յեւ V₁₋₃₂):

Անհնարին և ասել, թե այդ տաս տարվա արշավանքները ինչ հաջորդականութեամբ են յեղել: Արդիշտու 14 տարիների մեջ հաջորդականութեամբ են տեւում եր ըստ Թորխորյան 8 արձանագրութեանների դասավորութեան: Սարգուրյան նիշայի այս վեց արձանագրութեանները իրենց 10 տարվա արշավանկարագրութեամբ չունեն այդ հետևողական դասավորութեամբ:

Սարգուրյան ռադական արձանագրութեանները, վորոնք վորտիս ամփոփագիրը մնացել են Վանի ս Պողոս յեկեղեցու քարակոթողի չորս յերեսների վրա և Վանի հյուսիսային ժայռի մեջ փորված Սարգուրյան («արևմտյան») նիշայում թե գրապատի վրա (2 արձան) և թե քարակոթողի և յուր պատվանդանի վրա (5 արձան), մեղ տալիս են Սարգուրի նվաճումները իրենց ամբողջական ձևով: Այստեղ մենք տեսնում ենք, վոր Սարգուրը հասել և մինչև Կումախ (Komagene Յեփրատի վրա) և Դիարբեքիբի շրջանները (Arme յերկիրը), վոր նա հաղթել և Ասորեստանի Աշուրների արքային: Սարգուրը արևելքում նվաճում և Manna պետութեանը, Babilu յերկիրը (=արդյոք Babilu թե Babilon, resp Ասորեստան?): Հյուսիսում նա հասնում և մինչև Igani յերկիրը (Կարսից հյուսիս), մինչև Չլդր լիճը, վորի ափին, Դաշ-Քեփրի գյուղի մոտ նա թողել մի փոքրիկ արձանագրութեան հյուսիսում, մյուս կողմից հասնելով Սևանա լճի ափը, վորտեղ (Որդակլու) յեղել եր և յուր հայրը, նա շարունակում և գրավել Սևանի շրջակա յերկրները, վորն յերևում և թե նրա ամփոփագիրը (նիշայում) տարեգրերից և թե

Սևանա լճի ափին, Զաղալու գյուղում, թողած նրա մի արձանագրությունից (խնչպես և Աղամխանի արձանագրությունից): Հյուսիս-արևմուտքում Սարգուրը հասնում է մինչև Սև ծով, այն է՝ նվաճում է Kolxa (Կոլխիդա) և Vixiru(xi) յերկրները, թողնելով Kolxa-յի թագավորական քաղաք Ildamuša-յում (Արտանուշ?) մի արձանագրություն՝ դրված յերկաթե տախտակի վրա Արևմուտքում Սարգուրը չի անցնում հորից ավելի առաջ. սուրբ Պողոսի ստեղծյալից և Կոնստանդին-Իզոպուլի արձանագրությունից յերևում է վոր Սարգուրը նվաճել է բոլոր այն շրջանները, վորոնք ընկած ենին Յեփրատի ու Մուր Իզի ստորին հոսանքի միջև սյսինքն հին հայոց Ծոփքում:

Ուրարտուի վողջ տերրիտորիայի վրա և ավելի հեռուները թռլած «տեղական» արձանագրությունները միայն ճշտում կամ լրացնում են այդ յերկու քարակոթողների (ս. Պողոս յեկեղեցում և Սարգուրյան նիշայում) սմփոփագիր և մասամբ սարեգիր հաղորդումները: Վորոնք են այդ մեծ ու փոքր արձանագրությունները, վոր Սարգուրը լեող՛լ է յուր նվաճած այլևայլ վայրերում: Յերկուսի մասին նա հիշատակում է յուր նիշայի արձանագրություններում, վորոնցից մեկը նա գրել, թողել է Ildamuša քաղաքում (Kolxa-յի թագավորական քաղաքում), իսկ մյուսը՝ մեղ անհայտ Pulua յերկրի Lipiani քաղաքում: Իրականում գտնված են չորս ռազմական աեղսկան արձանագրություններ Ուրարտուի տերիֆերիայլ վրա դրանցից յերկուսը Սևանա լճի մոտ, մեկը Չըլդը լճի մոտ և մեկն էլ Յեփրատի վրա, Մալաթիայի դիմաց (Կոնստանդին և Իզոպուլ գյուղերի միջև, Յեփրատի ափին):

Սևանա լճի մոտ յեղած մի արձանագրությունը (քարափի վրա Զաղալու գյուղի մոտ) տսում է՝ — xaubi ¹Arkukini KUR-nie xa1ubi pari KUR Ur̄texiini «դրավեցի Արկուկյան յերկիրը անջատեցի (կտրեցի) մինչև Ուրաեխինի յերկիրը»¹: Այս Արկուկի(նի) յերկիրը յերկու անգամ հիշատակվում է Սարգուրյան նիշայի

¹ Ամբողջ արձանագրությո նը ունի 9 առղ հեակյալ շարունակությամբ — «Թալը արշավեց յուր գինանշով (SU-nie թե šurie?) նվաճեց (karuni) Արկուկինի յերկիրը Սարգուրն ասում է—արշավեցի վերցրի (xaubi) Արկուկինի յերկիրը, անջատեցի Ուրաեխինի յերկրից: Թալդյան մեծությամբ Սարգուրը Արգիշտիի վորդին թագավոր (ե) հորը, թագավոր մեծ թագավոր յերկրների թագավոր թագավորների, աերը Տուշպա քաղաքի»:

բարակութողի և պատվանդանի արձանագրություններում, և ուրեմն այստեղ ել յերբորդ անգամ. անշուշտ այս շրջանը, ինչպես և Velikuni (Velikuxi) շրջանը (— Նոր-Բայազետ) մեծ դիմաւորություն են ցույց տւել Սարգուրին և ազգել նրա վրա դրանք հաճախ են ապստամբել (հիշվում են Velikuni = Գեղաքունի յերկրի յերկու թագաւորներ կամ ավելի ճիշտ ցեղապետներ Nidi և Murinu): Սեվանի մոտ յեղած մյուս արձանագրությունը (հայտնարեւրվել և 1863 թ) դանվում և մի բլուրի ժայռի վրա այժմյան Ազամիան (Սարուխան) գյուղում և խոսում և այն լասին վոր Սարգուրը ուժով վերցրել և (gunuša xaubi «ուժով վերցրի») Tulixu թագավորական քաղաքը Ծինալիբիի Լուերիի վորու, նվաճել և Ծինալիբիին թագավորին ժողովրդի (ցեղերի), կնոջով հանդերձ (?) և տիրել և մինչև Uduri-Etini յերկիրը¹: Այս արշավանքն ևս Սարգուրը հիշատակում և յուր ամփոփալիր սննալներում, այն և՛ Վանի Պոլսո-Պետրոս յեկեկեցու քարակոթողի մի արձանագրության²:

Չարլիբ (Չըրլըբ) լճի մոտ, Խաշ-Իյովրի դյուրու թողած յուր արձանագրության մեջ Սարգուրն ասում և՛ «յերբ Uximi³ յերկիրը (մեկ որում?) գրավեցի, վերադարձին նույն արշավանքին⁴ (ճիշտը՝ բնթացքին, ճանապարհին) գրավեցի Makaltuni քաղաքը, այրեկին ջշեցի Բիալինա»⁵: Այս արշավանքը, ինչպես դիտենք

¹ Բնագիրն և. 1Xaldinini baušini 1Sardurise Argištexinišc ali URU Tulixun URU LUGAL nusi 1Şinalbii 1Luerixinii gunuša xaubi 1Sinalibini LUGAL UN^{pl}-rani SAL lutu bi kušubi pari KUR Uduri-Etini:

² Հաս Լեհմանն Հաուպաի Corpus-ի № 129 d 1 (եջ 1 և այլն)

³ J. Friedrich ք այդ տեղանունը գրում և KUR U-hi-me-a-me. Ի՞նչ թվում և, վոր վերջին a-me լալ չընթերցվող նշանները պիտի լինեն թերևս մեկ որում» (I UDM13):

⁴ Այդ «արշավանք» (KASKAL „Feldzug“) բառը, ինչպես թարգմանում և Friedrich-ը, արտահայտված և 𐎧 𐎶 𐎧 գաղափարանիշով, վորը յերկու անգամ անսնում ենք և Սարգուրի նիշայի արձանագրություններում (Apx Զքք IV₄₇: zatu-me KASKAL «պարտատեցին ինձ ճանապարհ», նույնպես և V¹⁰⁻¹¹: ikukani KASKAL «նույն արշավին»): Թարգերեն սրան փոխարինում և 𐎧𐎠𐎢𐎡 բառը, վոր ուրեմն պիտի նշանակե արշավ, ճանապարհ, ուղի»?:

⁵ Հաս Friedrich-ի յուր Einf. ins Urartäische գրքում (եջ 40) ամբողջ արձանագրության թարգմանությունը (8 տող) կլինի հետևյալը. «Durch die Grösse des Haldi spricht Sarduri, der Sohn des Argisti: Als ich das Land U^himeame(?) einnahm, habe ich auf der Ruckkehr auf demselber Feldzuge die Stadt Makaltu(ni) eingenommen (nd) Männer(u d) Frauen nach dem Lande Biaini geschleppt».

Սարգուրյան նիշայի պատվանդանի արձանագրությունից (Арх ЭКСП V₆₇) և նույնի քարակոթողի ինչպիսի արձանագրությունից (II₅₂) կատարվել է Igani յերկրի դեմ յեղած արշավանքի ժամանակ. իսկ Դաշ-Քյոփրիի արձանագրության Makaltuni քաղաքը մտա է յեղել Igani յերկրին (Չալդրից հարավ), ինչպես ցույց է տալիս Արգիշտու I տարում կատարած արշավանքը (տես Խորխորյան արձ., I Col տող 11), ուր ասված է andani URU Maḫaltuni KUR Iganini 'aal dubi («ի վերա Մ սկալտունի քաղաքի ձգեցի Իգանի յերկիրը»):

Սարգուրի տեղական մեծ արձանագրություն է Յեփրատի մոտ յեղածը Մալաթիայի դիմաց (գետի ձախ ափին՝ Իզոդու և և Կուսուրիան դուրդերի միջև): Այս մեծ և գեղեցիկ արձանագրությունը հայտնարևրված է յեղել գեո. 1840 թվին (կապիտան Mühlbach-ի կողմից), ունի 40 յերկար տողեր և վերաբերում է այդ Յեփրատյան (խեթական) կողմերի նվաճումներին. մի բան, վոր ասված է յեղել և ամփոփագիր արձանագրության մեջ, վոր տալիս է Պողոս-Պետրոս յեկեղեցու Սարգուրյան քարակոթողը: Սակայն բերենք այդ Իզոդուի Սարգուրյան արձանագրությունից կարևոր մասերը—«Խալդը արշավեց, յուր ղինանշով նվաճեց Խիլարուադային, Շահուի վորդուն (Xilaruadani ' Sahubi), թագավորին Մելիտայի քաղաքի յերկրի (=պետության) մատուցեց Սարգուրի առաջ .. Սարգուրն ասում է—ժողովրդին (alxi?) հպատակության (buranadi) բերի հանդերձ մի թագավորով՝ այդտեղ արշավանքի յեղած (?).. լավ (kadi?) դորքերովս Tumiški (ni) քաղաքի մոտից միևնույն որը արշավեցի դեպի յերկիրը (=Մելիտայի պետությունը), andani kala 'ani a'aaldubi (ի վերա kala'ani = ձգեցի, միացրի?), տիրեցի մինչև Teaniše (Karniše?) յերկիրը (նրան) սահմանակից, (մինչև) դաշնակից (salmatxi) Meliṭe քաղաքը, տիրեցի մինչև Mušanie յերկիրը, հարևան Zapša քաղաքը: 14 բերդ 100 քաղաք մեկ որում ավերեցի, բերդերը քանդեցի, քաղաքները այրեցի, 50 ղինանիշ ոսղմական բռնեցի, մարտիկներին վերադարձին (?) ցրիվ տվի (ba igulubi), Nisi թագավորական քաղաքը Xilaruada-յի, ամբացրած, ուժով վերցրի, կենդանիներ (nirbi ղոհակենդանի, մաքուր կենդանի) այր-կին այստեղից փոխադրեցի. Սարգուրն ասում է—այս ընթացքում (išṭidi ulxudi?) Մելիտա քաղաքը պաշարվեց (kapka rulini). յեկավ Խիլարուադան իմ առաջ, խոնհարվեց, բռնեց վոտքեր(ս) վոսկի, արծաթ bibu (— ?), didguši (= անոթ ?)

Բիաինա աարա, manı (=նրան?) ձգեցի հարկի աակ, 9 բերդեր
 ավերեցի (? edini sudukuḅi). միացրի («հավելացրի») իմ յերկ-
 րին—Xazani քաղաքը [Պողան?], Uraxi քաղաքը [Ուռեկ?], Gu-
 miški քաղաքը [—Պարբերգ կամ Չմշկածագ], Aratni քաղաքը,
 Mariniui քաղաքը, Aruši քաղաքը [Արոս], Kulbitarni քաղաքը
 [Կող-ս-բերգ Բղիի վրա], Umese քաղաքը [?], Ankulrai-tāše
 քաղաքը [=Անկուրան], Meluiani քաղաքը» և այլն: Վերջում
 արվում է տիառուլատուրան և անեծքի ֆորմուլան Փակագծում
 բերած մեր կորբեսպոնդենցիաները ասում են այն մասին վոր
 Սարգուրը միացրել է Շահուլեան Սիլարուադայի Melitene պե-
 տությունից այդ ինը «բերդերը», վորոնք մտնում են հայոց Ծոփք
 Շահուլեի մեջ, այսինքն այն Ծոփքի, վոր մի ժամանակ յեղել է
 այդ խեթական Šahuhı (կամ Šahuni) գինաստիայի տերրիտո-
 րիան և մտել է Melitene խեթական փոքրիկ պետութեան մեջ
 (վերջինս է յեղել Marasi հեա)

Յեթե չհաշվենք Սարգուրի կոթողադիր (Պողոս-Պետրոս յե-
 կեղեցու և նիշայի կոթողների) տասն արձանագրությունները,
 վոր Վանուճի և ապա մյուս բոլոր ռազմական արձանագրու-
 թյունները Ուրարտուի պերիֆերիայի վրա յեն ղետեղված: Իսկ
 յերկրի ներսում թողածները—բոլորն ել վկայում են շինարար
 գործունեյութեան մասին, ինչպես այդ ցույց են տալիս Արմա-
 վիրի և Արճեշի նրա արձանագրությունները: Արմավիրի մեծ
 արձանագրությունը խոսում է բերդի նորոգման մասին, Կա-
 րակալայի արձանագրությունը Արաքսի ափին խոսում է
 ջրանցք բերելու մասին, յերևի Արմավիրի համար իսկ Արմա-
 վիրի շրջակայքում գտնվածները (որ Մուլարայաղեաի յերկու
 արձանագրությունները) խոսում են խաղողի այգիներ և ծառաս-
 տաններ տնկելու մասին՝ հանուն Սարգուրի առողջութեան, Սալ-
 դու բարձր փառքի, յուր յերջանիկ որերի և այլն: Արճեշի յեր-
 կու արձանագրությունները («Կարատաշ» կամ «Իլանի տաշ» ժայ-
 ուի վրա)¹ նույնպես շինարարական բնույթ են կրում, խոսելով
 խաղողի այգի տնկելու մասին (ini GIŠ GEŠDIN teruni «այս
 տունկը գինու տնկեցին») Պաղնոցի յեկեղեցու և Վանի «Աստվա-
 ծաշենի» արձանագրությունները (յոթական տողերից) նույնպես
 վկայում են շինարարութեան մասին առաջինն ասում է՝ վոր

¹ Իր ք փորագրված են յերեք արձանագրություններ քայց մեկը
 միանգամայն մաշված է

Սարգուրը այս բուրդը շինեց (im arı şumı) 19340 քարոլ, իսկ յերկրորդը՝ ելի մի բրդի մասին 15300 քարով շինած

Ինչպես յերևում և այս բոլորից Ուրարտուն Սարգուրի ժամանակ յուր ներսում ունեցել և խաղաղ շինարարական կյանք ընդհանրապես Արարատյան դաշտը յուր Արմավիրով վոր այնքան Վանից հեռու եր, յեղել և նույն շինարարական հոգածության շրջան ինչպես Վանը: Այդպես և Վանից հյուսիս ընկած շրջանները (Արճեշ, Պաղնոց) Ամենուրեք կամ բերդ և նորոգվում և բուրդ շինվում (ռաղմական ապահովության հենակետեր) կա՛ր այգիներ են տնկվում և կամ ջրանցքներ անցկացվում: Սարգուրը յերևի հատուկ ուշագրություն և դարձրել Արմավիրի վրա Բացի նրա մեծ արձանագրությունից, վոր Խաչիկ Դադյանը գաել եր այգտեղ Մոլլաբայազետի 2 արձանագրություններից, վորոնք Արմավիրից են ընկել այգտեղ, և կարակալալի ջրանցքին վերաբերող արձանագրությունից, մենք ունենք ևս յերկու արձանագրություն, վորոնք շինարարական են: Մեկն ասում և (13 տող) «Խալդուն, յուր տիրոջը, այս տունը (resp. տաճարը) Սարգուրը, Արգիշտիի վորդին, կառուցեց և Խաղաղան դսները հոյակապ (? badusie) կանգնեցրեց, նվիրելով Խալդուն, յուր տիրոջը» (հետո արվում և ախտուլատուրան): Իսկ մյուսում կարդում ենք— «Խալդուն տիրոջը, այս տունը (resp. տաճարը) Սարգուրը Արգիշտիի վորդին կառուցեց [և բերդը] հոյակապ (?) կառուցեց, հողից սլատվար » (10 տող, վորոնցից հինգն և քիչ թե շատ ընթերցվում)¹:

Բայց Սարգուրի այդ խաղաղ շինարարական աշխատանքը յերկրի ներսում և դրսի ռազմական խոշոր հաջողությունները յերկար չտևեցին: Նա յուր նիշալի մեջ յեղած արձանագրություններում թվարկում և տասը տարվա հաջող արշավանքներ (Թագավոր և դարձել 755 թվից) այգտեղ չեն նշվում Armee յերկրի դեմ (Իհարբեքիբից հյուսիս) Մելիտեյի դեմ և Ասորեստանի՝ Աշուրնիրարիի դեմ մղած հաջող արշավանքները, վորոնք բերված են յուր մյուս կոթողի (Պոդոս-Պետրոս յիկ) արձանագրություններում Այսպիսով մտա 13 տարի Սարգուրը շարունակել և յուր ռաղմական սրտաքին եքսպանսիան: Սակայն 743

¹ Այդ յերկու արձանագրությունները, ինչպես և Արմավիրում գտնված Սարգուրի մյուս արձանագրությունները («Արմավիրյան» մեծ արձանագրությունը, Մոլլաբայազետի 2 արձանագրությունները) այժմ գանվում են Վաղարշապատում

ի վրին նա կրում է մեծ և ճակատագրական պարտութուն Ասորեստանի նոր թագավոր — Տիգլատպիլասար III-ի (747-728) կողմից: Հյուսիսային Ասորիքը (Սյուրիան), Դիարբեքիից (հմտ. Armee յերկիրը դրան կից հյուսիսից) մինչև Komagene Կուլախ Սարգուրը յերևի համարում եր իրեն վասսալ և հարկատու լել կրամտա: Մենք գիտենք վոր Kūmaxi յերկրի Kūstāspili թագավորը լատ Սարգուրյան տարեգրերի հարկատու և ուրեմն վասսալ մի իշխանութուն եր Ուրարտուի համար, ինչպես և Melitene-յի Xilaruada թագավորը (տես վերը) Յեվ յերբ Տիգլատպիլասարը 743 թվին գարնանը անցնում և Յեփրատը և պաշարում: Կոմագենեյի Արպադ բերգը վորը բաց արեց յուր դռները Ասորեստանի այդ թագավորի առջև, ապա Սարգուրը ողնության և դալիս յուր վասսալ այդ իշխանությանը մի դորքով, վոր ավելի եր քան թերևս ասուերականը: Սարգուրի հետ եյին ըստ ասուերական աղբյուրների Կոմագենեյի Կուշտաշպի թագավորը (= ուրարտական արձանագրության Kūstāspili անվան) Մելիտենեյի Սուլումալ թագավորը (բայց ուրարտական արձանագրություններում՝ Xilaruada Šahuhi վորի վորդին և յեղել հավանորեն այդ Սուլումալը) Գամգուսի թագավոր Թարխուլաբան և Ադունիի թագավոր Մատիլուն:

Ճակատամարտը տեղի ունեցավ Կուլախի մեջ, վոր հետո Յեփրատից, և տեևց մի ամբողջ որ Յերկու կողմերն և իրար հանդիպեցին կովի դաշտի վրա: Յերեկոյան դեմ ուրարտական կառավարները և այրուծին ցրվում են, և սկսվում և խառնաշփոթությունը: Հաղթող ասորեստանցիք խուժեցին ուրարտական բանակը փախչողների յետևից: Սարգուրը թողնում և յուր կառքը, հեծնում և մի մատակ ձի (վոր իբր անպատվաբեր եր)¹ իրեն փրկելու համար: Թեպետ ամբողջ գիշերը նրան հետապնդում եր ասուերական մի հեծյալ զորարածին, բայց նա կարողանում և հասնել Յեփրատի կամուրջին: Այստեղ սեպացած յեղբին, կանգ առան հարածողները, իսկ Ուրարտուի թագավորը վողջ-տողջ մտնում և յուր յերկիրը: Նա կորցրել եր մոտ 73000 մարդ, մեռած թե գերի, յուր կառքերը, յուր ամբողջ ծանրոցքը: Նրա վրանը, վորի մեջ գտնվում եյին թագավորական դարդերը, մահճակալը, շարժական դահը, բարձերը, պատգարակները, ամբողջովին ընկան թշնամու ձեռքը: Տիգլատպիլասարը այլ բոլորը այրեց տեղնուտեղը ի սրատիվ աստվածների, վորոնք նրան նպաստել

¹ Եգ ձին միգելիս չի կանգնում և խախտղի համար ավելի հարմալ և

եյին այսքան նշանավոր չափով նա պահեց միայն թափավորի մահճակալը և իրրև պատերազմի հաղթանակ ձոնեց Իշտար աստվածուհուն¹։

Յերկրորդ անգամ Տիգլատպիլասարը հարձակվում է Ուրարաուի վրա միայն յոթ տարուց յետո, այն է 736 թվին։ Պետք է յենթադրել, Վոր Սարգուրը, թեպեա կորցրել եր դաշնակիցներին, կարողացել եր այնուևամենայնիվ յերկիրը յուր ձեռքում պահել և կաղմակերպել նոր դիմադրական ուժեր Ասորեստանի դեմ։ Տիգլատպիլասարը մեծ դիմադրության չհանդիպելով մտնում է բուն Ուրարաու, հասնում է մինչև Վան քաղաքը, վորն և պաշարում ե։ Իսկ Սարգուրը նստած քաղաքի ժայռի վրա շինված անմաաչելի բերդում դիտում եր թշնամու հարստահարությունները, ավերմունքը և այլն։ Աստուրական թագավորը, չկարողանալով վերցնել բերդը, վերջինիս դռների դիմաց դնում է յուր քարե պատկերը և ասպատակ սփռում յերկրի չորս բոլորը հրի և սրի մատնելով ժողովրդին։ Այսպես է նկարագրում ինքը Տիգլատպիլասար III-ը այդ արշավանքները (ըստ Սանդալյանի թարգմանության) «Շարդուրի ուրարտ սցին ինձմե ապսամբյալ յետս յեկաց Մադիուիլուի հետ դաշնադրություն ըրավ։ Կիստան և Խալպի յերկրաց մեջ, վոր Կումմուխ քաղաքին մեկ վիճակն են, զանի դարկի մինչև ցեղծումն։ Անոր ամբողջ կարասին առի։ Չինուցս տարափեն զարհուրեցավ. իր կյանքը փրկելու համար՝ միակ միայնակ փախստական դնաց։ Յուր քաղաք Տուրուսպայի մեջ զանի փակեցի, անոր բաղմաթիվ պատերազմողները նույնին դրանց առջև սպանեցի։ Իմ արքայական պատկերս Տուրուսպա [= Վան] քաղաքին առջև կանգնեցրի։ Լայնատարած Ուրարաու յերկրին մեջ զ՛Օ կրկին ժամու ճանապարհ վերեն մինչև վար արշավեցի հավասարազոր վոսոխ մը չկար։ Ուլուրա յերկիրը բոլոր բովանդակ ընդ լծով արկլ կտրեցի անցա Կասսիրա, Պարիսու Տաշուխա Մանդուուր, Շարդուրիի քաղաքները մինչև Բարուտաա, Լուսիա, Կասսիա քաղաքները մինչև Սիկիբա ս քաղաքը, Ասուրդա քաղաքը, Ասորեստանի յերկրին միացուցի։ Անոնց վրա կողմնակալ մը դրի Ուլուրա յերկրին մեջանդի բերդաքաղաքը զոր Ուրարաու յերկրին ս շխարհակալեցի, քաղաք մը շինեցի անուան Ասուր-Իկիշա կոչեցի։

¹ Այսպես է նկարագրում Maspero ն (հատոր III էջ 146) Տեա Լեոյի «Հայոց պատմություն», էջ 283

Ռարբի լուլ կողմնակալության պաշտոնյաներս հոն դրի՝ իբր հո-
դարարձու Ուսուրնու, Ուսուրրա, Ինու, Սասու, Լուբ, Լուբի
քաղաքաց մինչև ի լերինս անդր: Քուտաա, Ուրրա, Արանա, Տա-
րա, Ուալլիա քաղաքներուն մինչև ի վեր ցՅեփրատ, Կումուխ,
Կիլիմիր, Արբիսա, Խարպիսինաա քաղաքներուն վիճակաց, Ինդի
յերկրին, Անգանու, Բինդու քաղաքներուն՝ Ուրարտու բերդաքա-
ղաքաց, Կալսմրա դեաույն տիրեցի Ասորեստանի յերկրին
միացուցի»¹

Ասորեստանի կողմից անջատված այս քաղաքներն ու յեր-
կրները մասձ են յեղել Ուրարտուի հարավային և մասամբ
նաև արևելյան սահմանների մեջ ինչպես ճիշտ դիտել ե Վինք-
լերը: Որինակ Կիլիմիր քաղաքը համապատասխանում ե հին հա-
յոց Ադանեսց Քդիմար (հուն. Χλωμάρων և Հովհաննես Յեփեսացու
Klimar) քաղաքի անվան, վոր գտնվում եր ըստ Ադոնցի Բաա-
ման-սու դեաի մոտերքը այժմյան Ներջիկ ու Տալուրի գյուղերի
շրջաններում (տես Н Адонц, Арм в эпоху Юст., 9—10),

Սարգուրի ուժերը վերջնականապես դեռ չեյին ջլատված:
Արպաղի պարսությունից հետո ել վորոշ մանր պետություններ
(Սյուրիայի և Փոքր Ասիայի միջև) ի հակակշիռ Ասորեստանին
շարունակում եյին հակվել Սարգուրի կողմը: Սարգուրը, «Ար-
գիշտիի այդ արժանավոր վորդին», ինչպես վոր նրան բնութա-
գրում ե Տուրաևը (II հ., եջ 56), ձգտում եր արամեական և խե-
թական (Melitene, Gurgum Kumux Mar'aš...) փոքր պետու-
թյուններից ստեղծել մի մեծ կոալիցիա յուր գերիշխանությամբ
և Ասորեստանը անջատել Միջերկրական ծովից: Այս նրան չհա-
ջողվեց և Տիգլաթապիլասար IV-ը ավելի ուժեղ և վարպետ գըտ-
նըվեց խփելով Սարգուրի դաշնակիցներին առանձին առանձին:
Ուրարտական թագավորներից միայն Սարգուրն եր, վոր աարա-
ծեց յուր արշավանքները Ուրարտուից դեպի հարավ և հարավ-
արևմուտք հասցնելով մինչև Կումուխ (Komagene) նա եր վոր
Ասորեստանին (Աշուրնիրարիին) նեղում եր նրա ամենաթույլ
կողմերում, Դիարբեքիլից մինչև Յեփրատ ընկած շրջաններում,
վոր հաց և ալլ մթերքներ եր մատակարարում ասորական պե-
տությունը: Սեմիտական (հրեա-արամեական) վորոշ յերկրներ,
ինչպես մանավանդ խեթական նման մանր տերություններ, Սար-
գուրի մեջ եյին տեսնում վորպես հակաասորական մի մեծ ա-

¹ Տես Աեոյի մոա եջ 284—285

խոյան¹, Իրոք Սարգուրը դեռ վաանդավոր եր, ինչպես այդ շեշտում ե Տուրանը, ասերով. «В 735 году ассирийский царь совершил поход вглубь Ванского царства, чтобы парализовать все еще опасного Сардура. Ему удалось разбить его и он разрушил нижнюю часть его столицы—Вана, но не мог взять цитадели, где тот заперся. Таким образом на севере враги Ассирии были отражены» (т II 62 57):

Սարգուրի մահը յեղել ե 733—730 թվերի ընթացքում Նրան հաջորդում է յուր վորդի Ռուսա I-ը

ՌՈՒՍԱ I (730—714)

Ռուսա I թագալորի սռաջին խնդիրներն եյին՝ վերականգնել յերկրի նորմալ կարգը և ամենից առաջ վերականգնել մայրաքաղաքը և վերստին միացնել անջաաված յերկրամասերը մանավանդ ծայրամասերում:

Ռուսան, վերականգնելով Տուս մայրաքաղաքը, յուր արքունիքը անդափոխում ե Վանա ժայռի վրայից դեպի քաղաքի հյուսիս-արևելյան կողմը, այժմյան «Այգեստան» ուր Զրմզրմ-դաղի մի ապառաժոտ բարձունքի վրա այժմյան Թոփրախ-կալեյում, շինում ե յուր պալատը Խալդու տաճարը և այլն: Ուրարտական պետության նյութական կուլտուրայի ամենաշատ և արժեքավոր հուշարձանները մեղ մնացել են այդ Թոփրախ-կալեյից, ուր առաջին պեղումները կատարեցին անգլիացի տեղական կոնսուլ Կլեյտոնը և ամերիկյան միսսիոներ Ռեյնոլդսը (1879 թվին)², իսկ հետո 1898—1899 թվերին, գերմանացի դիանանականներ—Վեհմանն Հաուպար և Վ. Բելքը: Ուրարտական պամության այս նոր շրջանում Ռուսա I-ից հետո մինչև անկուել՝ Թոփրակ-կալեն լեղել ե պետութիւն կենսրոնը

Անշուշտ այս պայքարի արձագանգներն են յոր Յերեմիա մարդարեն (ըստ Ասավածաշնչի) հրեաների փրկության համար ասորերների դեմ յեղած պայքարում, ապավեն ե ուզում տեսնել ուրարտացիների («Արարազ»), սկյութացիների և մաննայեցիների ուժի մեջ:

² Հետևյալ 1880 թվականին այդտեղ պեղել ե անգլիացի Հ. Ռասսամը, գտնված իրերի մի մասը բերվել ե Բրիտանական թանգարան, շատ իրեր հափշտակվել են տեղացի բախտախնդիր և նյութապաշտ մարդկանց կողմից, վորոնք այդ ծախել են հնավաճառ առևտրականներին կամ մասնավոր կուլեկցիոներներին:

Սարգուրի* պարտութիւններէց հետո ընական և վոր Ուրարտուի թույլ ողակները պետք և այլևս կապված չղգային այդ պետութեան հետ և անջատվելին, ինչպես այդ տեղի եր ունենում հնում նման մեծ դեպոստական միութիւններում, ուր ներքին կապը թույլ եր և զենքի ու ճնշման ներքո եր տեղի ունենում այդ միացումը: Ռուսան պետք և նորից մտահոգ-վեր պետութեան սահմանների ամրացման խնդրով, նորից պետք միացներ այն ցեղերին ու այլևայլ յերկրամասերը, վորոնք մըւ-նում եյին Ուրարտուի մեջ մանավանդ դիմադրութեան թույլ ուղղութիւններով: Ասորեստանից նա չեր կարող հեշտութեամբ յետ խլել կորցրած հարավային սահմանները, բայց մյուս կող-մերում այդ նրան հաջողվեց Յեվ հաջողութեան հետեանքով և վոր նա պարծենալով ասել և՛ «Իմ յերկու ձիերի և կառապանիս ոգնութեամբ յետ իմ ձեռքերով Գվաճեցի Ուրարտու յերկիրը» (այդ կարգացել և Սարգոնը Մուսասիրի ռաճարը դրավելիս՝ Ռուսայի արձանի վրտ գրած):

Ռուսայի վերանվաճողական ուրարտական արձանագրու-թիւններ քիչ են մնացել: Սրանցից մեկը, յերկլեզվյան (ուրար-տական և ասսուրական), գտնվել և Սիդեկանից քիչ հեռու, Թոփ-դաուա կոչված տեղում, այսինքն այնտեղ, վորտեղ մոտավոր հե-ռավորութեամբ գտնվել և Կելիշինի հայտնի ըիլինդուան (Իշ-պուինիի և Մենուայի): Այդ փոքրիկ արձանագրութիւնը շատ և փաստվել, կարգացվում և Ասորեստանի անունը, վորի սարերին և նա մոտեցել Ռուսան Մուսասիրում թագավոր և դնում Սը-/ana-անունով քրմին, դոհաբերութիւններ և անում Խալդու տա-ճարում 15 որ: Ռուսան աշխատում եր վոչ թե վերականգնել կորցրած հարավ-արևմտյան հողամասերը, վորոնք անմիջական կովի պատճառ յեղան Սարգուրի և Տիգլատպիլասարի միջև վորքան հարավ-արևելյան հողերը կամ դաշնակից յերկրները Գեթե Սարգուրը Ասորեստանի դեմ կոալիցիա եր կազմում և հեն-վում ասորա-խեթական փոքր պետութիւնների վրա յուր յերկ-րի հարավ-արևմտյան սահմաններում, ապա Ռուսան այդ նույնը իորձեց անել մյուս ուղղութեամբ, դեպի Վանից հարավ և հա-լավ-արևելք Բայց ինչպես կտեսնենք, այս ել չհաջողվեց ուրար-ացիներին

Հյուսիսում Ռուսան արշավանքներ և կազմակերպել դեպի Մեանա լճի շուրջը, վերստին գրավելով այն շրջանները, վո-րոնք դրավված եյին յուր հոր Սարգուրի կողմից Մենք ար-

դեն տեսանք, վոր Սարդուրը թե յուր աննալներում (Պողոս-Պեարոս, Վանի նիշա) և թե անդական արձանագրություններում (Աղամխան, Չաղալու) մի քանի անգամ հիշատակում ե այդտեղի յերկրների նվաճման մասին—այն ե՝ Թուլիխու քաղաքը (Մինալիբի Թաղավորի՝ Լուեխուլի վորդու), այժմյան Նոր-Բայաղեսի շրջանը—Velikuni (Նիդի և Մուրինու Թաղավորներով) և Չաղալուի շրջանը—հին Արգուկինի յերկիրը, ինչպես և մի շարք «յերկրներ» սրանց մոտ։ Ռուսա 1-ը թողել ե մեզ յերկու արձանագրություն, մեկը Նոր-Բայաղեսում, վորտեղ խոսում ե Velikuxi (=Velikuni, Գեղաքունի) յերկրի Թաղավորին նվաճելու և ծառայեցնելու մասին (վժրն եր այդ Թաղավորը՝ Nidi թե Murinu չի ասվում), յերկրից արտաքսելու մասին, փոխարքա անդում նշանակելու մասին, բերդ և Խալդյան դռներ շինելու մասին։ Վերջում հետաքրքիր նորություն ե ասում յուր մասին «Ով Բիաինա յերկրները բնդարձակեց» (aluxe KUR Biainili nuulduali), ինչպես ճիշտ Թարգմանեց J Friedrich-ը¹։ Այս դատողությունն ևս ցույց ե տալիս, վոր Ռուսան նորից զբաղված ե «Բիանյան յերկրները» վերականգնելու խնդրով Տեղական ապս-

¹ Արձանագրությունը գտնվել ե 1927 թվին. գրված ե մի քառակուսի մեծ քարի վրա վորը ծակոակեն ե և վատ ե կարդացվում։ Այդ քարը յեղել ե սկզբում բերդի (բլուրի) վրա, հետո վերցվել ե և վերջում ոգաագործվել ե վորպես գերեզմանաքար։ Արձանագրությունը մի քանի անգամ հրատարակվել ե Ամենահաջող և վերջին հրատարակությունն ե Յ Ֆրիդրիխինը, վորը Թարգմանում ե—Durch die Macht (?) des Xaldi spricht Rusa der Sohn des Sarduri. Den König des Landes Uelikuxi bekämpfte ich (und) mache (ihn) dienstbar. Ich entfernte (ihn) aus dem Lande (und) setzte einen Statthalter hi nein. Xaldi-Tore, die verfallene Burg baute ich (wieder) auf (und) gab ihr den Namen Haldi-Stadt dem Lande Biaina zum (Zeichen der) Macht(?), dem feindlichen Lande zur Demütigung (?) — Rusa, der Sohn des Sarduri, (ist) der mächtige König, der das Land Biaina erweitert(?) hat։ Մեզ թվում ե, վոր nuldu—«ընդարձակել» կամ թերևս «վերականգնել ու վերստին զբաղվել» ճիշտ Թարգմանությունն ե, միանգամայն համապատասխանող ուրարտական Թագավորին այդ հասարդուրյան շրջանում, յերբ շատ շրբ ջաններ անջատվել ելին։ Հետո, այս արձանագրությունը միակն ե, վոր խոսում ե Biainili «Բիանյաններ» կամ «Բիանյա յերկրներ», այսինքն հոգնակի թվով յերկրների մասին (KUR Biainili հայցական հոգնակի յե il՝ մասնիկով) —մի բան, վոր նորից վկայում ե ուրարտական յերկրների վերազբաղման մասին։ Անշուշտ միայն Սեանա յերկրները չեն յեղել, վոր անջատվել են։ Այլ արձանագրություններ դժբախտաբար պակասում են, յեթե չհաշվենք Թոփ-զավայինը

ոամբ թագավորը արաաքսվում է վորպես պատիժ, և անդը դըր-
վում է ուրարտական փոխարքա:

Սեանի լճի հարավային ափին, Քյոլանդուանի և Ալուչալուի մոտ, ուղիղ լճի ջրի վրա Ռուսա I-ը նույնպես թողել է մի մեծ արձանագրություն (20 տողերն են միայն կարդացվում, այն էլ վերջինները մաշված են): Այստեղ նա հայտնում է, վոր ճնշել հպատակեցրել (ծառայեցրել) է չորս մեծ շրջաններ—Adaxuni Velikuxi Lueruxie և Arḫukini, վորոնք համապատասխանում են Քյոլանդուանի (Adaxuni), Նոր Բայաղետի (Velikuxi), Չողի Չաղալուի (Arḫukini) և Աղամխտնի (Lueruxie) ռայոններին: Բացի այս tsuinia(ni) «ծովյան» (=մերձծովյան) շրջաններից, հիշվում են ևս 19 տեղանուններ սրանց կից կամ սրանց մեջ, վորոնց ճըշտումը առայժմ անհնար է: Հետաքրքիր է յենթարկելու լեզուն—ieše inili ebanili šusinie uštiptini maguuli (L^u) buraštuuli «յես այս (=հեռեյալ) յերկրները մեկ արշավանքում ճնշեցի (1), ծառայեցրի»: Այստեղ maguuli բայը ուրարտական արձանագրություններում չի պատահում, սովորաբար ունենք—karubi կամ xaubi (նվաճեցի, գրավեցի) և յերբեմն suui dubi «վերցրի» (կամ «անդահան արի»?), իսկ maguuli (<*ma gub-li), ինչպես և Նոր-Բայաղետի nulduali «ընդարձակեց» կամ «վերագրավեց» բայը առաջին անգամն է և յուրահատուկ կիրառում ունի, վոր մեղ թվում է պիտի նշանակի «ճնշել, պատժել» և նմանը: Քյոլանդուանի այս արձանագրության մեջ կա և մի այլ վոճ, վոր ելի միայն այստեղ է՝ «23 թագավորներ մեկ աարում¹ կործանեցի (ašgubi?), այր-կանանց Բիայնա քշեցի mešini šaali [nu]naadi šidištuli i[ni] E GAL^{pl}, վոր մենք թարգմանում ենք «հաղթողին քարում յեկա (և) կառուցեցի այս բերդերը» (տողեր 13—15) այսինքն՝ mešini šaali «հարկային աարում» վոճը կարող է նշանակել—հարկ վերցնելու (հավաքելու) աարին, վոր այլ է, քան առաջին աարին, յերբ Ռուսան վերստին նվաճել է այդ շրջանները: Յե՛վ այդ հարկի աարվա ժամանակ նա դբաղվել է բերդաշինությամբ, վորպեսզի հենակետեր ունենա Սեանի շրջաններում, թողնելով իրենից հետո կայաղորներ և փոխարքա (Statthalter) Նոր Բայաղետում: Արձանագրության վերջում տրվում է անեծ-

¹ Տարի բառին կցվում է MEŠ (=pl.) հոգնակի գողտփորագիրը վորը կրկնությունն է «23 LUGAL MEŠ (=23 թագավորներ) բառի, ինչպես «Ասա վաճենքին Բիայնայի» (DINGIR^{pl}-ašte KUR Biaina-ašte, ուր հասկացյալի ašte-ն կրկնվում է հասկացուցիչի հետ ևս

քի Ֆորմուլան¹։ Ռուսան տյդ բերդը («բերդերը») նվիրում է Տեյշերա ասածուն, կոչելով «Տեյշերայի քաղաք», վորովհետև այդ աստվածը ջրի տարերքի (և ծովի, լճի) սյաշտպանն էր և սիմվոլը, ինչպես և տնձրեի ու կայծակի։

Անշուշտ այս յերեք ռազմական արձանագրություններով չի սպառվել Ռուսա I-ի գրական ժառանգությունը։ Վորքան վոր նա յեղել է ճարտիկ դիվանագետ և ռազմավար, այնքան էլ և դուցե ավելի յեղել է և շինարար։ Նրա այդ գործունեյությունից մեղ հասել է (բացի Թոփրակ-կալեյի նյութական ռազմական վկայություններից) Գեշիշ-գյուլի արձանագրությունը Վասից մոտ 23 կիլոմետր դեպի արևելք Տոնի գյուղի մոտ։ Այդտեղ մենք կարդում ենք, վոր նա ջուր է բերում Rusaxina-յի համար, վորը Թերևս այն արհեստական լիճն է, վոր նա կառուցել է այդ Տոնի գյուղից 6 կիլոմետր հեռու։ Արձանագրության 28—30 տողերն ասում են՝ «Ջրեր դետից յես անց կացրի դեղի Ռուսախինա. վորոշ ջրեր դետից Տուշուան քաղաքի գաշանրի (laragi) համար վոռողելու (ulxulini?), վորոշ ջրեր Ռուսախինայի համար իմելու (ipšadulini)²։ 18—20-րդ տողերում խոսվում է՝ խազողի այդլիներ, ծառասաաններ ու մրգասուռ ծառեր անկելու մասին, շինարարություն կատարելու մասին (arnušini ištini dušni = շինարարություններ այստեղ արի)։

Ռուսա I-ի շինարարության մասին խոսում են և աստուրական արձանագրությունները, յերբ Սարգոնի զորքերը քանդուքար են անում ուրարտական Ուլխու քաղաքը։ Ռուսան շինել էր տյդ քաղաքը բոլոր հարմարություններով բերել էր խմելու ջուր, անջրդի տեղերը ստացել էյին կանախներ, վորոնցից ճյուղալորվում էյին առուներ. անդաստանները վեր էյին ածվել վոռողվող հողերի, ծառասաանների արոտատեղերի ուղտեր էյին սկսում

Տե՛ս մեր հրատարակությունը, վոր արված է ետամպատի հիման վրա—Халдская надпись Русы I из Келанкрана Армгосиздат, Эривань, 1931 г., 12 էջ։ Անեծքի Ֆորմուլայի միայն սկիզբն է կարդացվում («ով այս արձանագրությունը...»), ուր «արձանագրություն» իդեոգրամման (DUB·TE) ունի նույն ձևը, վոր աեսնում ենք և Մակուի Ռուսա II-ի արձանագրության մեջ կամ Սարգուր II (III-ի) Արմավիրյան մեծ արձանագրության մեջ (տող 20) Դիկուսկին սիալ է կարդացել KÁ-la փոխանակ DUB TE։

² Արձանագրությունը ունի շատ բառեր, վոր չեն հասկացվում։ Հեաաքքիբ են այն guni առարկաները, վոր Ռուսան գրել է լճի մոտ (guni kuldi ni šuli-manu), Հմմա նաև Թ—10 տողերը—iu ¹Rusaxinili ši dūli iu ini tsue taše terubi = յերբ Ռուսախինիլին շինեցի (?), յերբ այս լիճը-laše հասաստեցի

պահելու իսկ ջրանցքի վրա կառուցված եր մի չքնաղ ապարանք լերևապատված մշտադալար նոճիներով՝ կիպարիսներով: «Յեվ յերկրագործի ուրախ յերդն եր հասնում (քաղաքի) բնակիչներին մինչ այդ խոսրան յեղած դաշտերից»:

Ռուսայի շինարար ձեռքը տեսնում ենք և Մուսասիրի տաճարի նկատմամբ, ուր Ուրդանա քուրմը արքա յե դարձվում Ռուսայի կողմից, մեծաշվում և Խալդու տահարը և հորստացվում, դրվում և խմիջիայրոց Ռուսայի բրոնզե արձանը, կանգնած մարս ահառքի վրա և այն հայտնի արձանադրությամբ, Լ Լ Սարգոնն և կարգացել Մուսասիրը գրավելիս:

Արտաքին քաղաքականության տեսակետից Ռուսա Լ-ի չրությունը շատ բարդ և դժվարին եր. և հաստատ կարելի յե ասել, վոր և վոչ մի նախորդ թագավոր այգպիսի իրադրություն չեր ապրեր: Տիգլատպիլասարի հարվածները ջլատել էին ներքին միացնող ուժերը, կազմալուծել Բիայնայի կոնֆեդերացիան, վորից անջատվել էին ծայրամասերի և թերևս ներսի կենարոնախույս տարրերը (ցեղերը, ցեղերի միությունները). յերկիրը հըսկայական ֆլաս եր կրել նաև տնտեսապես, ինչպիս և ավերվել էին շատ քաղաքներ ու շրջաններ Տուշպա մայրաքաղաքով հանդերձ Ռուսա Լ-ը այս տեսք և դարմաներ և մասամբ վերականգներ: Այս ներքին սխառացիան, ինչպես և արտաքին յերկու խոշոր հանգամանքներ—կիմմերների և Ասորեստանի վտանգը—ստիպում էին Ռուսային դուռը և զուսպ քաղաքականություն վարեր իսկ արտաքին այս յերկու վտանգները ճակատադրական հանդիսացան վերջիվերջո Ուրարտուի համար:

Ասորեստանի նկատմամբ, թե Սալմանասար V ի ժամանակ (728—722 թ.) և թե Սարգոնի (722—705) Ռուսան առ յերես եր թողել թշնամական-նվաճողական վերաբերմունքը դբադված լինելով ներքին գործերով: Մինչև իսկ նա յերգվել եր Աշուրի և Մարդուկի պատկերների առաջ՝ հավատարիմ մնալ Ասորեստանին, վորպես բարեկամ թե դաշնակից. այդ յեզրակացվում և Սարգոնի խոսքերից, վոր նախատել եր Ռուսային յուր խոստումը դըրսելու մեջ: Բայց իրոք տեղի ուներ մրցության և թշնամության քաղաքականություն յերկուստեք, և Ասորեստանը, մանավանդ դուռը Սարգոնը, չեր կարող հանդուրժել Ուրարտուի վերականգնումը և հորացումը: Մինչև 714 թվականը, յերբ պարտվում և Ռուսան, յերկու պետություններն ել միմյանց դեմ ինարիզներ Լն լարում ներքին ապստամբություններ կազմակերպում, ար-

տաքին կոալիցիաներ կազմում, դադանի հսկողներ ու տեղեկատուներ ուղարկում և այլն:

Աստուրական լրտեսները ամեն տեղից հաղորդադրություններ եյին ուղարկում Նինեվիա վորոնց ամփոփումը (СВОДКА) կազմել և Սարգոնի վորդի Թագաժառանգ Սինախերիբը: Այստեղ նշենք դրանցից մի քանիսը, վորոնք վերաբերում են Ուրարտուին և տալիս են շատ արժեքավոլ անդեկոթյուններ: Վոմն Գաբրուանաշուր տեղեկացնում և «իմ սուրհանդակները կերթան Նաբուլիի, Աշուրբելլզանի և Աշուրբիսուեյի մոտ, վորոնք պեաք և ուղևորվեյին: Մենք չզլացանք դրել ընդ մարդկանց անունները Ամեն մեկը կատարում և յուր գործը չկա վոչ մի թերացում. Հաճախ ենք լսել հեակյալը—ուրարտացին (Թագավորը) Տուրուշպայից չի դուրս յեկել, և մենք կշարունակենք դիտել, ինչպես հրամայեց իմ տերը՝ Թագավորը»: Սենախերիբի մի ամփոփագրության մեջ կարդում ենք հետևյալը «Նարուլին, Սալու. քաղաքի փոխարքան, գրեց ինձ—յես գրել եյի սահմանամերձ բերդերի կայապորներին ուրարտացու մասին տեղեկություններ. յերլ նա ուղևորվեց Գամիր յերկիրը տմբողջ նրա գորքը կտտորվեց, նրա գլխավորներից յերեքը իրենց զորամասերով սպանվեցին, իսկ ինքը [=Ռուսան] փախավ և մտավ յուր սեփական հողը» Նամակներից մեկի մեջ տրվում և ինը ուրարտական զորավարների ցուցակը, վորոնք սպանվել են կիմմերների դեմ մղած կռիվներում Աշուրբիսուեյի հաղորդագրության մեջ նույնպես խոսվում և Ռուսայի անհաջող արշավանքի մասին Գամիր յերկրի [=Կապպադոկիա] դեմ, ինչպես և Վանի պետության ծայրամասերում յեղած խմորումների մասին, վորոնք անդի ունեցան ուրարտական զորքի այս պարտությունից հետո: Ուրարտուի ներսում յեղած ապստամբությունների մասին այդ նույն Աշուրբիսուեյի դրում և—«Տեղեկություն ուրարտացու մասին. նախկինը, վոր գրել եյի, հաստատվեց. նրանց մոտ տեղի ունեցավ մեծ կտտորած. այժմ նրա յերկիրը հանդստացել և: Նրա գլխավորները ամեն մեկը յուր շրջանը գնաց: Կակկադանուն, նրա աուրտանը [=սպարապետը], բռնված և: Ուրարտական Թագավորը դանվում և Ուասի յերկրում»: Բայց Ռուսայի այդ քացակայության ժամանակ Տուշպայում, Ուրարտուի այդ մայրաքաղաքում, նույնպես բռնկվում և ապստամբություն, վորը նույն պես ճնշվում և, ինչպես հաղորդում են Սարգոնի հեաախուղիչները:

Այսպիսի հետախուզական և հսկողական պարասկանություն Ասորեստանը կարծյոք դրել եր և Մուսասիրի Ուրդանա թագավորի վրա, վորից մնացել է մի կավե աղյուսակ, վորպես պատասխան Ռուսայի ուր լինելու մասին: Ուրդանան գրում է, վոր ուրարտական թագավորը գեռ չի յեկել Մուսասիր¹, բայց սպասվում է մոտալուտ ժամանակ, իսկ ասուերական խոշոր մի պաշտոնյայի այն նկատողության, վորին ուղղված է հենց այդ պատասխան-նամակը, թե վոչ վոք առանց ասուերական թագավորի թույլատրության չպիտի մտցնի Մուսասիր յուր զորամասերը Ուրդանան պատասխանում է. «Յերբ Աշուրի թագավորը յեկավ, խանգարժւմ եյի յես արդյոք նրան այն, ինչ վոր նա [ասուերական թագավորը] արեց, այս ել [— Ռուսան] և անում ապա ինչպես յես նրան խանգարեմ» Ի միջի այլոց այս Ուրդանան եր, վոր 718 թվին, վորպես Ասորեստանի դաշնակից, հաղորդեց Ասորեստանի պալատական մի բարձր պաշտոնեայի, թե ուրարտացիք պարտություն են կրել Գամիրում, կորցնելով ինը բարձրաստիճան մարդ սպանված (այս նամակը Սարգոնին հաղորդվում է Սենախերիբի միջոցով):

Թեպես ուրարտացիք դամիրների (կիմերների) դեմ մղած կռիվներում հաջողություն չունեցան, բայց նրանք ևս չկարողացան մանել Ուրարտու Այս յերևում է այն քանից, վոր Սարգոնը այդ պարտությունից վեց տարի հետո, այսինքն 712 թվին դանվելով Յեփրատից արևմուտք՝ կայադորներ և դնում յուր հինդ նորակառույց քաղաքներում ուրարտացիներից պաշտպանվելու համար: Իսկ այս հակաուրարտական հենարանները շինվել են Ռուսայի՝ 714 թվին պարտվելուց հետո, — մի բան վոր վկայում է գեռ ուրարտացիների ուժի մասին

Կիմերների դեմ կատարած հարձակողական կռիվները (718 թ) Գամիրք-Կապպադոկիայում ուրարտացիներին վոչ միայն հաջողություն չբերին այլև Ռուսայի պարտվելու հետևանքով

¹ Այդ յուրը, թե Ռուսան գալու յե Մուսասիր իբր թե ուխտ անելու համար յուր յերեք հազարավոր զորամասով, հաղորդել է Ամադիայի ասուերական փոխարքա Աշուրբիսուան: Այս մասին հարցում է արվում Ուրդանային նինե վիայի մի բարձր պալատականի կողմից, իսկ Ուրդանան պատասխանում է «Քու ասում ես վոր առանց թագավորի (Ասորեստանի) թույլատրության վոչ վոք զորք չի մացնում ասավածներին յերկրպագելու համար, բայց յերբ ինքք ասուերական թագավորը յեկավ, միթե յես խանգարեցի նրան: Ինչ վոր նա եր անում, անում է և սա, ինչպե՞ս խանգարեմ նրան»:

յերկրի ներսում ծագեցին մի շարք ապստամբություններ և խմորումներ, վորոնք շուտով ճնշվեցին Սխալ կլիներ կարծել, վոր Ռուսայի ուժերը թուլացել էին կամ յերկիրը կազմալուծվել եր: Գամիրները իրենց տեղումն էին, իսկ Ռուսան շարունակում եր վոչ միայն պահել յուր ձեռքում վողջ իշխանությունը և պետական ամբողջականությունը, այլև ուժեղացրեց յուր գաղանի հապաստարական արտաքին քաղաքականությունը Ճիշտ է Ռուսան չեք հարձակվում Ասորեստանի վրա, այլ ավելի շուտ իրեն հեռու եր պահում այդ ընդհարումներից ամբապնդելով յուր սահմանները Ասորեստանին կից: Սարգոնն ևս իրեն հեռու Լր պահում անմիջական հարձակողական դործողություններից:

Պայքարի վոչ անմիջական վայրերն էին հանդիսանում այն վաստակ կամ հարեան մեծ ււ մանր իշխանությունները, վորոնք ընկել էին Վանա լճից հարավ և հարավ արևելք (Ուրմիա լճից արևմուտք և հարավ արևմուտք) Սրանք մերթ թեքվում էին Ռուսայի կողմը, մերթ Սարգոնի, և յերբ մեկի գործն Լր այդտեղից հեռանում, մյուսինն եր մտնում, և ընդհակառակը իսկ տեղական այդ իշխանությունները կողմնորոշվում էին նսյած հանդամանքին:

Իեռ 719 թվին և առաջ Ռուսան և Zikartu-յի (Սուբուշիխա յում) շրջանի Միաստաի թագավորը փորձում էին իրենց կողմը քաշել Մաննայի Իրանդու թագավորին, վորպեսզի մի բլոկ կազմեն Ասորեստանի դեմ: Սուբուշիխան-Ջիկարաուն դառնվում եր մեր կարծիքով այժմյան Սղերդի շրջանում (հմմա. Zikartu = Skert) և արևելյան Տիգրիսի (Բոխտան-սուխ) յերկարությամբ դեպի արևելք¹: Վորովհետև Իրանդուն դեմ դուրս յեկավ այս մասդրության և հավատարիմ եր Ասորեստանին, ապա 719 թվին Մաննայից խլվում է յերկու քաղաք՝ Շկանդիխուլ և Դուրդուկկա(Չուրձուկկա), վորոնք ա դստամբում են Իրանդուի դեմ և

¹ Սուբուշիխան համառ կերպով կոչվում է «Նաիրյան յի բլիր» թե Սալ մանասար III-ի որով (IX դար) և թե Սարգոնի ժամանակ (8-րդ դարի վերջը) Իրա ցեղերի լեզուն հավանորեն մոա է յեզել ուրարտերենին: Սարգոնն ա սում է «Վերին Ջաք դեռը, վորին Նաիրիի և Կիլիսուի բնակիչները կոչում են Ելամունիա, յես անցա»: Արդյոք Elamunia չպիտի կարդացվի E-la-i-ni-a, ուր „la“ և „mu“ նշանները շատ նման են այն ժամանակ կասանանք ուրարտական HID alaini = «դեա» բառը: Թերևս այս խուբուշիյան ուրարտացիներից էին Սասունի խութեցիք, վոր մինչև միջին դարերը այլ լեզու ունեյին, իսկ Սասունը հյուսիսային սահմանն է այդ Xubuškia-յի:

իրենց գոները բաց անում Միաստաի առաջ Սակայն Սարգոնը մի մեծ բանակով անմիջապես ոգնության և հասնում, քանդում, ավերում այդ յերկու և շրջակա քաղաքները իսկ բնակիչներին տեղափոխում խեթերի յերկիրը

716 թվին Ռուսայի, Զիկարտուի թագավոր Միտասալի և Մաննայի մի յենթաշրջանի՝ Ումիլգիշ թագավոր Բադադասուաի միջոցով նորից ինտրիգներ և դավադրություններ են կազմակերպվում Մաննայի Ադա Ս թագավորի դեմ, վորը յուր հոր Իրանգուի նման կողմնակից էր Սսորեստանին: Այդ յերեք թագավորների ձեռքով և մանավանդ Բադադասուաի անմիջական ղեկավարությամբ ապստամբություն և կազմակերպվում Մաննայում, ուր ժողովուրդը սպանում և յուր Ադա թագավորին¹ և դիակը զցում Ուաուշ լեռան վրա Բադադասուաին, վորը կարծվու է վոր Ադայի վորդին էր, զրավում և հոր ժառանգությունը՝ ամբողջ Մաննան: Բայց Սարգոնը այս ևս ճնշեց և վոչնչացրեց այդ փոքր կուլիցիան յուր հիմքում: Ահա ինչ և գրում ինքը Սարգոնը. «Ի ժամանակի, յորում ճակատագիրն յեկավ հասավ Մաննայի Իրանգուի վրա [= մահացավ], վոր հնազանդ ծառա մըն էր և իմ լուծը կսիրեր, զյուր վորդին Ադա անոր դահին վրա նստուցած էյի: Ուրարտացի Ուրսա [- Ռուսա] յուր կողմանե Ումիլգիշ Զիկարտու և Միսիանդի յերկրաց ցեղերուն, առ կողմնակալս ավագս Մաննայի պատգամավորներ խավրեց և դանոնք անիրավության հոր դորեց: Իրենց այաուն՝ Ադայի դիակը դժվարին Ուաուշ (Ուաուս) լեռան վրա նետեցին. Առ Ասսուր, տեր իմ, առ ի փրկել զՄաննա և առ ի փրկել զՍսորեստան ձեռքերս վերցուցի [= ապավինեցի]: Ուաուշ լեռան վրա, ուր վոր Ադային դիակը նետած էյին Բադադասուաին մորթագերծ և Մաննային տեսիլ ըրի Զնորա յեղբայրն Ուլլուսունու արքայական գահուն վրա նստեցուցի» (ըստ Սանդալջյանի թարգմանության)² Բայց Ուլլուսունուն հավատարիմ չմնաց և Սարգոնի գնալուց յետո հակվեց դեպի Ռուսայի և Միտասաի կողմը: Մաննայի հետ սղստամբեցին և մի շարք

¹ Այդ Ադա անունը յերևի աարածված տեսն էր: Արգիշտի Արմավիր ան մի արձանագրության մեջ այդ Արմավիրի (Argištixinili) յերկիրը կոչվելիս և յեղել 'Aza-յի յերկիր վորտեղ Aza-ն ունի տղամարդու հատուկ անվան դիտերմինատիվ: Պեքը և յենթագրել, վոր Արարատյան դաշտի այդ կենարոնում իշխել և Ադայի ցեղը, վորը Արգիշտիի նշումով Lulu՝ յերկիր էր, այսինքն՝ բարբարոսական:

² Տես Լեոյի «Հս յոց պատմ» էջ 290

յերկրներ, վորոնք Տիգլաապիլասարի կողմից միացվել էյին Ասորեստանին ինչպես—Կարալու, Ալարբիա, Նիկսամա, Բիտսագրատի, Բիխիրմամի, Կիլամբատի, Արմանգու, Խարխար, Ելիպի Բայց Սարգոնը կարողացավ այդ նույն 716 թվին հնազանդեցնել և այդ ապստամբներին՝ Նա վերցրեց Մաննան, վորի թագավորը (Ուլուսուենու) փախավ լեռները. վոչնչացվեցին շաա քաղաքներ, ինչպես և ավերվեցին ու հնազանդվեցին այդ բոլոր յերկրները, վորոնց ժողովրդի մի մասը գերեվարվեց Պարտվեց և Զիկարաուն, վորի թագավորը (Միաաստի) փախավ լեռները: Ասուերական բանակը այդ ձմեռը (716 թվին) քաշվեց միջագետք:

Բայց 715 թվի գարնանը Ռուսան անձամբ և սկսում խառնվել այդ Մերձ-Ուրմյան յերկրների գործերի մեջ, մանելով Մաննայի սահմանները, և Ուլուսուենուի թույլտվությամբ գրավում և 22 բերգաքաղաք: Հարևան Միդիան ևս Ասորեստանի դեմ եր. ապստամբել եր Սիրիան մուշկերի թագավոր Միտան հարձակվել եր Կիլիկիայի վրա Սարգոնը անմիջապես ուղղվում և արևելք՝ Մաննա: Ահա ինչ 1 նա ասում. «Ուլուսուենու մաննացին, վոր յուր հոր գահն յերած եր, Ուրարտացի Ուրսային վրատահացավ և յուր բերգաքաղաքներեն 22 իրև պարզև անոր տվավ: Զայրացյալ սրտիվ Ասորեստանի զորաց գումարությունը մեկ տեղ ժողովեցի, առյուծի նման մոնչեցի և այն յերկրները ախրելու ձեռն ի դործ դրի: Մաննացի Ուլուսուենու իմ արշավանացս մոտենալը տեսավ, թողուց յուր քաղաքը և սարսափած՝ դժվարին լերանց ապաստաններուն մեջ ամրացավ: Իգիրտուի յուր արքայական քաղաքին, Իգիրիայի, Արմիդայի յուր ամուր բերգաքաղաքներուն տիրեցի, հրով այրեցի, ապականեցի... Մաննացի Ուլուսուենու ըրած գործերս դժվարամաստույց լերանց մեջ լսեց, թռչնո նման թռավ յեկավ, վոաքերուս փարվեցավ: Անոր անհամար հանցվածոց ներեցի. մոռցա անոր չարագործությունը, ներում շնորհեցի անոր, իրեն արքայական դահուն վրա նստեցուցի: 22 բերգաքաղաքները հանդերձ 2 ամուր քաղաքներով, զորոնք Ուրսային և Միտատտիին ձեռքեն առած էյի, անոր ավի անոր ավերյալ յերկիրը նորոպեցի...» (ibid. 291)¹

¹ Սարգոնը վոչ միայն ճորտգում և յերկիրը, այլև Մաննայի մայրաքաղաք Իգիրտուի մեջ յուր արձանն և դնում և վրան՝ արձանադրություն: Մաննայից Սարգոնը վերադառնում և Անդիա շրջանի միջով, դրավելով այգտեղ Տիլուշինա պրովինցիայի մի փոքր մաքրը՝ Տուսյադի անունով և գերեվարելով այգտեղից 4200 հողի Այստեղից նա իջնում և հարավ(?) Մուբուսկիա յեր

Հնագանդեցնելով և խաղաղացնելով Մաննան, իսկ հետո և Միդիան և հարևան յերկրները, Սարգոնը այդ 715 թվի մյուս մասը անց և կացնում արևմուտքում, ճնշելով և այդակդի տպստամբությունները:

Բայց Սարգոնին լուրեր են հասնում Ռիայնայի ծրագրերի մասին, այն, վոր Մաննայի մի շարք մանլ իշխաններ (ինչպես և Անդիա յերկրի) նորից են թեքվում դեպի Ռուսան, վոր Ուրգանա մուսասիրցին անցել և արդեն Ուրարտուի կողմը և մինչև իսկ արևմուտքում թուրալների թագավոր Ամբարին ու մուշկերի թագավոր Միտան (հույների Midas-ը) դաշն են կնքել Ռուսայի հետ: Այս արդեն լինում և մի տեսակ այլևս անհանդուրժելի մարտահրավեր, և Սարգոնը, վոր մինչև այդ խուսափում եր Ռուսայի հետ անմիջապես ընդհարվելուց (ինչպես և վերջինս Սարգոնի հետ), բազահայա կերպով գիժում և դապի Ուրարտու:

Սարգոնը 714 թվի գարնանը նախ մանում և Manna յերկիրը, վորպեսզի դրա և հարևան վաստալ յերկրների հարկերը հավաքի: Այդ Մաննայում Ուլլուսունը և աղնվականությունը «ինչպես շներ՝ չորեքթաթ ընկած աղերսում են նրան»: Այսանդից Սարգոնը մտնում և Ռուսայի դաշնակից Zikirtu յերկիրը, վորանդ ավերվում են 3 բերդ, 24 քսղաք և մայրաքաղաք Պարգան այրվում և, իսկ ինքը Միտասաին փախչում և յուր գործով «չթողնելով հետք անգամ յուր հետևից»: Սարգոնը դրանից հետո բարձրանում և ուրարաակտն սահմանները, յերևի Վանա լճից հարավ-արևելք ընկած վայրերը, այժմյան Բոխասան գետի վերին հոսանքի շրջանները (Բաշկալե—Շատախ—Ջուլամիրկ շրջաններում?): Ուսայուս լեռան (և յերկրի) մոտ տեղի յե ունենում մեծ ճակատամարտ Ռուսայի բազմաքանակ զորքերի և ասսուրական բանակի միջև. «Ուրարացի Ուրսային պսակապառնեցրը թվով անհամար սպանեցի անոր արքայական սերունդեն 260 հոգի՝ վորոնք ձիավոր հեծյալ եյին դերի բունեցի: Նա առ ի փրկել զանձն մասակ ձիո մը վրա նստավ յուր լերանց վրա փախավ: Ուսուս լեռնեն 5 կրկին ժամուց ճամբա մինչև Զիխարդուսուս յերկիրն ու Մաննայի լեռնային վիճակն Ումիրլիս անկե ա-

կիրը, վորի Թուրուսկիս նո յնանուն մայրաքաղաքում գիժավորվում և տեղիս Իանդու արքայի կողմից և ստանում և այդ «Նախի թագավորից» Նվերներ: Այս շորթորդ արշավանքի հեռանքով Ասորեստանի վաստալներն են դառնում Ուլլուսունու մաննացին, Ուրգանա մուսասիրցին, Իանդու խուրուսկիացին և այլ մանր իշխաններ Վան-Ուրմիտ լճերի հարավային դժի վրա:

ուի, մաննացի Ուլլուսունին ազի» և այլն¹: Սարգոնը այստեղից մտնում է Խուրուշկիա և Իանգուլից՝ այդ «նախրյան թագավորից» վորպես տուրք են վերցվում արջառներ և վոչխարներ: Այստեղից, այսինքն Բոխտան-սուի և Տիգրիսի միացման շրջանից Սարգոնը իջնում է դեպի Մուսասիր, անցնելով Վերին Զարգեսը («Ելամունիա»), կտրելով մի շարք անմասաչելի լեռներ (Շեյակ, Արդիկչի, Իլայաու, Ալլուրիու) յերբ թագավորի մարտակառքը ստիպված ուսերի վրա եյին ասնում, իսկ ինքը ձիու վրա եր նստում: Յուր այդ մի մարտակառքով և հազար հոգուց բաղկացած զորաբանակով Սարգոնը մտանում է վերջապես Մուսասիրին Ուրարտուի սրբատեղին: Ասուերները «մորեխի նման» բռնում են ամբողջ տարածությունը: Ուրգանա թագավորը, հավատարիմ նալով Ռուսային, չի յենթաբեկվում, փախչում է սուրբերը, թողնելով Մուսասիրում յուր կնոջը և յերեխաներին. «ՂՄուսասիր՝ Խալդիո աստվածույն կայանքը՝ պատնեշով պաշարեցի Ուրգանայլ կինը անոր ուստերքը անոր դստերքը, 6170 բնակիչ, 690 ջորի, 920 եշ, 100225 վոչխար առի տարի, 34 տաղանդ և 18 մնաս վոսկի (= 1040 կիլոգրամ), 167 տաղանդ և 27 մնաս արծաթ (5060 կիլոգր) անագապղինձ՝ պատվական

Ըստ Սանգալլյանի թարգմանության, Այս արձանագրության շարունակության թարգմանությունը և տեղանունների առաջարձումը շատ վառ է արված տես Լեոյի մոտ, էջ 292—293:

² Մի այլ տեղեկությամբ Խալդու տաճարից ասրիել է 109080 կիլոգրամ անագ ու պղինձ (162 տաղանդ 206/36 մինա):

Նորագույն ընթերցումը հետևյալն է ատում. «34 տաղանդ 18 մին վոսկի 167 տաղանդ 27 մին արծաթ, բրոնզ ու թանկագին քարեր, վզոսկրե և երենոսի փայտից պովաղաններ վոսկի շրջանակով, արքայական ռեզալիաներ թանկագին նյութերից զանազան անուն սենեցող անոթներ, 13 բրոնզե ավազաններ, տեղական արաագրության 120 բրոնզե առարկաներ, Ուրարտուից և Կիլիսուից 130 զանազանագույն հագուստներ և վշյա շապիկներ: Խալդ Աստծու տաճարում բացի վոսկուց, արծաթից, բրոնզից և պղնձից գտնվել են պատին ամրացրած և կուրացուցիչ փայլ ունեցող 6 վոսկե բոլորածե վահան: Նրանց մեջ կային շան դյուխների պատկերներով վահաններ՝ 5 տաղանդ 12 մին քաշով վոսկի, 12 արծաթե վահան վիշապի դուխներով, վոսկե կոպեքներ, բանալիներ, սրեր, նիղակներ (93), 33 արաբական մարտակառքեր, 394 ասորես տանյան, ուրարտական և կիլիսիյան արաագրության արծաթե անոթներ, Բագրադու աստծու կնիքը, 25412 բրոնզի սրեր, 607 բրոնզե ավազան՝ լվացվելու համար, հսկայական ըոր, 80 լիար ջուր բովանդակող, վոսկե կոպեքներ, 4 բրոնզե արձան, թիարում աստղելով, 60 տաղանդ քաշով Ռուսայի արձանը

քարեր, անհամար գույնզգույն կերպարներ և զգեստներ Անոնց թագավորն Ուրարտին կոծ ու վողբ... Աստուր դեց տյառն իմո շքեղությունն զՈւրաս ուրարտացին յերկիր կործանեց յուր իսկ յերկաթի դաշտնիվ շախուռի մը պես յուր սիրտը դարկավ, զինքն իր կենաց զրավեց» (Աեռ, 293) Ավարի և ավերի յեն մատնվում թե Ուրգանայի պալատը, վորտեղ Սարգոնը «նստեց վորպես կառավարիչ» (= տեր), և թե Խալդո տաճարը: Վերջինում գտնվում էյին քացի անհամար թանկագին իրերից (վոսկի, արծաթ բրոնզ վահաններ նիզակներ...), այլև յերեք մեծ արձաններ բրոնզից մեկը Սարգուր քրմինը (Բշպուլինի վորդու), յերկրորդը Արգիշտիի, վորի գլխին կար առավածական գլխազգեստ, և ձեռքերով որհնում էր ժողովրդին, և յերրորդը Ռուսա I-ի արձանը մարտակառքով վորի վրա Սարգոնը կարգացել և յերևում բերված այն հայտնի խոսքերը, թե՛ «իմ յերկու ձիերի և կառազանի որհնությամբ՝ իմ ձեռքերովս նվածեցի Ուրարտու յերկիրը» Մուսասիրի տաճարից ասրվում են քացի այդ 3 արձաններից նաև Խալդ ասածու և նրա կին Բազբարաուուի արձանը: Խալդու տաճարի այդ ավերն ու կոպուպուար, նրա արձանի հափշտակումը և այլն իմանում և Ռուսան սարհրում և իր կյանքին վերջ է տալիս: Մուսասիրի Խալդու այդ տաճարի գրավումը և ավարառումը քանդակված և յեղել Սարգոնի պալատի («Ռուր-Շարրուկին» = պալատ Սարգոնի) վրա: Բանդակը ընկղմվել և Տիգրիսում, յերբ տանելիս են լինում Ֆրանսիա, պատձենը մնացել է: Տաճարի մուտքի յերկու կողմերում տեսնում ենք ազա մարդու յերկու արձան, վորոնք սլահում են այդ դուռը: Դրանք անշուշտ այն յերկու արձաններն են (Սարգուրի և Արգիշտու), վորոնք գտնվել են 1 ասրվել Սարգոնի զինվորների կողմից: Մուտքից քիչ աջ տեսնում ենք կովի և ծծող հորթուկի արձան, վորը ըստ աստուրական տեղեկատվության, նվիրել և Սարգուր քուրժը և ձուլված և յեղել բրոնզից: Ուրարտական այդ տաճարի նկարի կոպքին, վերի ձախ անկյունում, մենք տեսնում ենք աստուրական մի պաշտոնյայի, վորը թվարկում և կողոպտած իրերը, իսկ իրեն սողև կանգնած յերկու գրչագիրներ այդ

(տյս) ալ ձառագրությամբ «Յերկու ձիով և կառապանով իմ ձեռքերը ընկճեցին Ուրարտուի թագավորությունը» և ուրիշ շատ բաներ, վոր հաճախ նշանակվում են անթարգմանելի տերմիններով: Տես «Հին Աշխարհի պատմություն» (Ղ հատոր), Հին Սրեկեք, Յերևան, 1938 թ էջ 403

բոլորը ձևակերպում, գրում են— մեկը բենուագրով աղյուսի վրա իսկ մյուսը արամեական ասուերով պապիրոսի վրա: Ուրարտուի այդ ավերը ասուերական տարեգրերը վերջացնում են հետևյալ խոսքերով. «Ամբողջ Ուրարտուն մինչև իրեն սահմանները գցեցի յես գծրախառեթյան մեջ և ժողովրդին պատճառեցի լաց ու կոծ»¹:

ԱՐԳԻՇՏԻ II (714—680?)

Ուսա 1-ից հետո Ուրարտուի թագավորն է յեղել Արգիշտի II, վորը թերևս նրա վորդին ևր և թագավորած պիտի լիներ մոտավորպես (714—680?) թվականներին Արգիշտի II-ից շուրենք գրավոր վոչ մի հիշատակ, իսկ այն ուրարական ուղղանվածողական արձանագրությունները, վորանդ հիշվում է Արգիշտի անունը առանց հայրանվան ինչպես Ղանլիջայի և Ղուլիջանի արձանագրությունների մեջ (Ղենինականի մոտ), կամ Որդակլուի արձանագրության մեջ (Սեանա լճի մոտ), դրանք անշուշտ Արգիշտի I-ին են պատկանում²: Ասուերական աղբյուրներում նա հիշատակվում է վորպես Սարգոնի ժամանակակից, վորին նվերներ է ուղարկում: Յերբ 710 թվին Սարգոնը Բաբելոնով եր գրաղված, Կոմագենայի թագավոր Մուտալլուն, լսելով Արգիշտուն, հրաժարվեց սովորական հարկը վճարել Սարգոնին: Բայց վերջինս 708 թվին մտնում է Մուտալլուի յերկիրը և այդ թագավորին ընդմիջա հեռացնում է յուր տեղից Թեպետ ասուերական թագավորը այս բոլորը վերագրում եր Արգիշտու սալուրանքներին, սակայն նրա գեմ չի գնում, սահմանափակվելով անվանարկիչ արտահայտությամբ նրա հասցեյին³: Արգիշտի II-ը չեր կարող մտածել անգամ նվաճումների խափն քանի վոր յուր հոր մահվանից հետո Ուրարտուն ապրած պետք է լիներ ծայրա-

¹ Տես Б Пиотровский Урарту, Ленинград 1939 г., էջ 28

² Արգիշտի I-ը նվաճելով այժմյան Կարսի նահանգը, ինչպես այդ տեսնում ենք նրա, Սարիղամիշում (Axuriani) թողած արձանագրությունից և նրա տարեգրերից, ուր նույնպես խոսվում է այդ Etiuni յերկիրը նվաճելու մասին (Ardini քաղաքով), ինչպես և Etiaxi յերկիրը նվաճելու մասին, այնուհետև շարունակել է յուր արշավողին մինչև Igan յերկիրը (Չրլոբբ լճից հարավ) և այժմյան Ղենինականից հյուսիս արևելք, հասնելով Ղանլիջա (Մարմաշեն) և Կուլիջան գյուղերի շրջանները: Իսկ Սեանա լճի մոտ (Որդակլու) նա հասել է Կոտայքից, ուր (Սլառ) նա թողել է լրիվ արձանագրությունը (հայրանունով):

³ Տես՝ Մ Мецциниов—Халдоведение Баку 1927 էջ 46—47

հեղ քայքայում և կաղմալուծում: Նրան յերևի հաղթի հաջողվել և հասաավել Վանի շրջաններում և թերևս հյուսիսային նահանգներում: Արգիշտի II-ը յեղել և Ասորեստանի Սանխերիբ (Սինախերիբ) թագավորի ժամանակ, վորը տիրել և Ասորեստանին 705—681 թվականներին և ուրարտական թագավորից նվերներ (ձիեր) և ընդունել Ուրարտուն այդ շրջանում կատարյալ կախվածության մեջ ևր Ասորեստանից, վորի կուսակալները նստած էյին Վանա լճից քիչ հարավ, ինչպես և Արածանից հարավ (Տուշխանում 707 թվին և Ամիդիում 705 թվին): Հիշենք նաև, վոր Սարգոնը 712 թվին, լինելով Յեփրատից արևմուտք, կայազորներ և դուռ յուր շինած հինգ քաղաքներում, վորպեսզի Ուրարտուից՝ Արգիշտի II-ից պաշապանվի իսկ այս ժամանակ Ռուսա I-ը մահացել ևր, յիթե հավատանք նրա ինքնասպանության աստուրական վերսիային (714 թվին) և ուրեմն Արգիշտի II-ն ևր թագավորում:

ՌՌԻՍԱ II (680?—645)

Արգիշտի II-ի վորդի Ռուսա II-ը նման յուր պապին, հանդիսացավ Ուրարտուի վերականգնման և ուժեղացման կաղմակերպողը: Այդ բանը յերևում և թե իրեն կողմից թողած խալդական արձանագրություններից վորոնցից դժբախտաբար յերեքն են միայն գտնված, և թե նրա կշռից (դերից) ասորեստանացիների մոտ Այնուամենայնիվ, թե ներքին և թե մանավանդ արտաքին մի շարք հանգամանքների թելադրանքով (կիմմերների և սկյութացիների վտանգը) Ռուսա II-ը շարունակեց մնալ յոյալ և թերևս դաշնակից հարևան Ասորեստանի նկատմամբ:

Նրանից մեզ հասած արձանագրությունները վկայում են յերկրի շինարարության մասին: Նրա առաջին մեծ արձանագրությունը Չվարթնոցում գտնվածն և (47 տողից), գրված մի մեծ քարակոթողի վրա (2,78 մետր բարձրությամբ) Այստեղ կարդում ենք «Սալդուն, յուր (SU) տիրոջը (EN), այս քարակոթողը Ռուսան, Արգիշտիի վորդին, գրեց (ընծայեց): Սալդյան (=Սալդու) փառքով (=փառքի շնորհիվ) Ռուսան Արգիշտիի վորդին ասում և — կուտուրլինի հովտում (դաշտում¹) հողից [պատ-

¹ Xubii բայ չի, ինչպես մինչև հիմա ևր կարծվում. նա գոյական և «հովիտ, խոպան, դաշտ» իմաստով. հմմտ. Niribai (սեռ. հու.) xubi, Tuaratsinie xabi (Տուարածատտի), Askayai xubi և այլն անդանունները, նաև՝ Xubiluini, Xubuškia, խեթական Xubišna և այլ անդանունները վորոնք ածանցված են սյդ xubi պարզից (Xubi-luini ինչպես Šašiluini):

վար] կազմեցի (? šulie-manu)¹, պարսպով նրան շրջապատելով (շրջապատեցի), ինձ (šuki) Խալդը հանձնարարեց (ubarduduni «հանձնարարությունն արեց»), յես (teše) այս խաղողի այգին տնկեցի («դրեցի» = terubi), մարգագեախնը մրգատու ծառերի, ծառերի [վոչ մրգատու] այգի[նեք] այստեղ տնկեցի («գրի»)․ ջրանցք (pili) Ildarunia գետից [Չանգու = Հրազդան] անց կացրի (agubi) նվիրվեց (umešini) անուն սրան՝ «Ռուսային» (Rusainie) դաշտերը․ ջրանցքով վռոռեցիու հաճար (nikiduli)՝ Հեառ գոհարերություններ են կատարվում այդ առթիվ, վորը վերջանում է (տող 26—30) Ռուսայի տիագոսի կցումով—Ռուսան, Արգիշաիի վորդին, հզոր թագավոր է, թագավոր մեծ, թագավոր Շուրայի, թագավոր Բիայնայի, թագավոր թագավորների, տերը Տուշպտ քաղաքի (alusie URU Tuspaē patari)։ Արձանագրությունը վերջանում է անեծքի ֆորմուլայով, վորը շարունական չի ինչպես ուրարտական մյուս արձանագրությունների մեջ ենք տեսնում²։

Յերկրորդ մեծ արձանագրությունն է յեղել 1936 թվին Չարրախում «Կարմիր բլուրի» վրա գտնվածը (Յերեանի մոտ), վորից դժբախտաբար միայն վեց տողի մնացորդներ են առ այժմ գտնվում³։ Անեծքի ֆորմուլայի ընդարձակ մնացորդները գուցե են տալիս, վոր Չարրախի այս արձանագրությունն ևս յեղել է մեծ, գրված մի քանի տաշած քարերի վրա, գրված հավանորեն աաճարի կամ քերդի պատերի մեջ (յերևի «Կարմիր բլուրը» վորպես «քերդ»—Ê.GAL նոր է շինվել Ոռուսա II-ի կողմից)։ Այս արձանագրության սկզբնական մասում անշուշտ յեղած կլինեք տեղի կամ իշխող զինաստիայի անունը, վոր կաար մեզ արժեքավոր անդեկությունն Յերեան քաղաքի շրջապատի հին անվանակոչու-

¹ Հմմտ. Քեշիշ գյուղի guni šuli-manu (եջ 8) և ra muu [m?] tsuimu esia guni kuldini šuli-manu (եջ 13—15) բահա այս ծովյան (=ծովի, այսինքն լճի) անդում guni (=?) պատվարով (kuldini?) կազմեցի (šuli manu?)».

² Չվարթնոցի քարակոթողի անեծքը այսպես է. եով այս արձանագրությունը Չարգի (? tulie), ով փչացնի (pitulie), ով տեղից (esitni) վերցնի (sulduli), ով հողով (KI) ծածկե (apulie?), ով ջրերը (A¹) գցե (hušulie = հոսեցնե) ով այլուք ասե՛ յես կատուցեցի (չինեցի), ով անունս Չարգի (= ջնջե), յուր անունը ցնե, լինի Բիայնացի, լինի Լուլուինացի (= բարբարոս), Խալդը, Տեյչեբան, Արգիինին (և այլ) աստվածները թե (նրա) անունը թե առնձը (armuzi) թե սերմը (zilbi) հողին (թող) հանձնեն»։

³ Առաջին (ի հարկե վոչ սկզբնական) տողի վրա կարդացվում են e և me-i (...e me-i...) նշանները. յերկրորդում՝ tur-ya-ar- (հավանորեն tur ya-ar-) յերրորդում՝ -sa-aše՝ ¹Ar-(այսինքն՝ [¹Ru]saaše ¹Ar-[gištixiniše]), չորրորդում՝ li-e a-lu-še (եով), հինգերորդում՝ [li]-e a-lu-(այսինքն՝ [alu [še] եով), վեցերորդում՝ -še (alusē եով) բառի մնացորդը։

Թյան մասին և մանավանդ այդ շրջանում բնակված ցեղի մասին: Այդանց գտնված են նաև բրոնզի յերկու վահան և մի կապարձ¹:

Յերբուրդ արձանագրութունը, վոր լավ պահպանվել է, գտնվել է Մակու քաղաքի շրջապատում: Քարը—70 սանտ. յերկարությամբ և 54 սանտ բարձրությամբ—բերվել է Մակու (այժմ անդադան մի խանի բակումն է) դրա շրջանում յեղած մի հին քաղաքի ավերակներից²: Արձանագրութունը բաղկացած է 16 տողից և ունի հետևյալ բովանդակութունը—«Խալդուն ախրոջը այս «կապելան» (տառացի՝ E BĀRA „Haus des Hochsitzes“)³ Ռուսան Արգիշտիի վորդին կառուցեց Խալդյան (= Խալդու) փառքով Ռուսան Արգիշտիի վորդին ասում է՝ karbi salzimanu (հողից շեղ կազմեցի?), պարսպով (ui giei) նրան պատեցի, ինձ Խալդը հանձնարարութունն արեց, յես կառուցեցի, գրեցի անունն «Ռուսայի քաղաք փոքր» (¹Rusai URU TUR = Ռուսայի քաղաքիկ): Ռուսան Արգիշտիի վորդին ասում է՝ ով այս արձանագրութունը շարդի, ով փշացնի, ով փշրի (ipxulie?), հանցավորին Խալդը, Տեյշերան, Արգիշտին (և այլ) աստվածները (mekuui(?))⁴ (և նրա) անունը (թող) յենթարկեն (manuni) դատաստանի առաջ (⁴UTU ni kai = արև ասածո առաջ): Ռուսան Արգիշտի վորդին թագավոր (ե) հզոր, թագավոր յերկրների, թագավոր Բիայնայի թագավոր թագավորների անբը Տուշպա քաղաքի»:

Չարբախի «Կարմիր բլուրի» արձանագրության 11 տողի TUR ya-ar » յերեք նշերը (առաջինը գաղափարագիր է՝ «փոքր») թերևս մնացորդը լինեն «[¹Rusai URU] TUR yaranı », այսին-

¹ Այդ «Կարմիր բլուրում» գտնվել են նաև ուրարտական ժամանակից (?) Տնացած ցորեն, դարի, կորեկ: Իսկ նորերս «պալատական» մի սենյակում հայտ նարերվեցին նաև յերեք կնիք, յերկուսը քարից, մեկը բրոնզից: Քարի մի կնիքի վրա փորագրված է պառկած առյուծ, մյուս փոքրի վրա՝ դրիֆոն, իսկ բրոնզի կնիքի վրա՝ նեա (տես „Коммунист“ լրագիրը, Յերևան, № 214, սեպտեմբերի 13-ին 1940 թ.):

² Իսկ ըստ Ս. Տեր-Ավետիսյանի բերվել է Բասաան գյուղից տես Мещанинов Халдоведение, Баку, 1927 г. էջ 207.

³ Տես J. Friedrich, Znm urartäischen Lexikon (Arch Orient., 1932 Vol IV, № 1 էջ 60: Սուսերական bāra = ակկադերեն parakku, վարը նշանակում է սրբատեղի („Kapelle“). ուրարտերենում սրան փոխարինել է անդադան yaranı բառը, վորը թերևս մնացել է և Չարբախի արձանագրության մեջ:

⁴ Այս mekuui (կամ meku-ui?) բառը պատահում է և Կելիշինի արձանագրության մեջ (տող 35-րդ) ելի անհեծքի ֆորմուլայի կապակցության մեջ: Ասուրական վարիանտում համապատասխան է «անուն» բառը:

քըն՝ [Ռուսայի քաղաք] փոքր (և) սրբաանեղին [շինեցի...]։ Հետեւապես կարելի յե յենթադրել, վոր Ռուսան Չարրախի այդ բլուրի վրա ևս կառուցել ե մի սրբաանեղի (կապելլա) հանուն Թալոյ ասածո և տեղը կոչել ե յուր անունով «Ռուսայի քաղաքիկ», ինչպես և Մակուի արձանագրության մեջ ենք կարգում, ավելացնելով այդ անվան կրկնությունը (yarani) ուրարաբերեն լեզվով ևս, բացի դրա գաղափարագիրը գրության,—մի բան, վոր հաճախ ենք անսնում ուրարաական արձանագրությունների մեջ։

Ռուսա II-ի յեռանդագին շինարարությունը յեղել ե վոչ միայն այս հյուսիսային ուրարաական շրջաններում, այլև անշուշտ պետության կենարոնում։ Այս մասին մասնավորապես կարող ե վկայել այն, վոր Թոփրակ-կալեյի պեղումներից յերևան ե հանված Թալոյ ասածարի ավերակների մեջ Ռուսայի վահանի գեկորաաթիվ մնացուկը յուր անունով և կենդանիների նկարով։ Թոփրակ-կալեյից հայտնաբերված ե նաև մի բեռնադիր՝ կավե աղյուսակ հասցեագրված այժմյան Լենինականի շրջանից հյուսիս գտնված Işkigulu-յերկրի իշխանին՝ Շագաշաարին։ Այսպեղ հաղորդվում ե Ռուսայի անվան քաղաքը կառուցելու մասին Բայց, արդյոք, այս Ռուսան Արդիշաիի վորդի Ռուսան ե և վոչ թե Սարգուրի (կամ Թերևս Երիմենայի), այս դժվար ե պնդել։

Ռուսա I-ի կատարած շինարարական աշխատանքները, մասնավանդ հյուսիսում, վկայում են այն բանի մասին, վոր նա հարավից (Ասորեստանից) հարված չեր սպասում և իրեն բարեկամ եր համարում։ Ռուսան ապրել ե Ասորեստանի յերկու թագավորների որով՝ Ասարհադոսի (681—669) և Աշուրբանիպալի (668—626), վորոնք Ասորեստանի ամենահզոր իշխանավորներն են յեղել, պետության սահմանները հասցնելով Վանա լճից մինչև Պարսից ծոց և Յեգիպոս և Մաննա-Ելամից մինչև Փոքր Ասիայի արևմուտք (Լիդիա)։ Ռուսան պետք ե վորոչ վախ և կախվածություն դղար դրանցից և աստուրական աղբյուրներից հավասարի մեղ հայտնի յե, վոր Ռուսա II-ը հատուկ դեսպանության միջոցով Ասուրբանիպալին ուղարկել ե նվերներ։

Ռուսա II-ի կատարած շինարարական և հավանորեն պաշտպանողական աշխատանքները հյուսիսում (Մակու-Յերևան) ցույց են աալիս անշուշտ, վոր Ուրարաուին մեծ վտանդ եր սպառնում այդ ժամանակ սկյութացիներից։ Հյուսիսից դեպի Ուրարաու տանող ճանապարհների վրա նա պետք ե բերդեր կառուցեր, կայա-

¹ Հստ Պիտարովսկու (Урарту, էջ 34)

գործներ գնելու: Գուցե Ռուսայի այս պաշտպանողական միջոցառումները վորոշ չափով արգելեցին սկյութացիների և կիմմերների ավերիչ արշավանքները գեպի յերկրի խորքերը: Պատմական վկայություններ չկան այդպիսի ասպատակությունների մասին: Յեվ ընդհակառակը, կարծես թե Ռուսան կարողանում էր լեզու գտնել և այդ թափառական անարկուց ցեղերի հետ, գոնե կիմմերների հետ, նրանց Տիուշպա թագավորի հետ Ռուսան հաշտ եր: Ռուսայի շրջահայաց, արտաքին քաղաքականությունը, ինչպես և ներքինը՝ անասա-շրնարարական և ռազմական ուժերի վերականգնման խնդրում այն աստիճանի ելին բարձրացրել Ուրարտուի ռազմա-քաղաքական ուժը Ասսարհադդոնի աչքում վոր վերջինս գիմում է յուր Շամաշ աստծուն հարցումով— «Կիրականան արդյո՞ք Ուրարտուի կառավարիչ Ուրսայի պլանները թե գիմիրա ժողովրդինը կգիմեն արդյո՞ք նրանք պատերազմի, կռվի, մարտի, վոր կոտորեն, կոդոպտեն և գրավեն, (արշավելով) գեպի Շուպրիա յերկիրը, գեպի Բումի և Կուլամերի քաղաքները¹, կամ գեպի Շուպրիա բերդը, վոր կոտորեն այն, ինչ կարելի յե կոտորել, կոդոպտեն այն ինչ կարելի յե կոդոպտել, գրավեն այն ինչ կարելի յե վերցնել»: Ասսարհադդոնի այդ մասնողությունը ցույց է տալիս, վոր ուրարտացիք և կիմմերները (ասսուրերեն դիմիրա) միասին կարող ելին հարձակվել յուր հողերի վրա վոր դրանք յերկունս ել համերաշխ են Ասորեստանի նկատմամբ, թերևս արդեն վորոշ «յելույթներ» (նշաններ) ցույց աված լինելով: Յեվ իրոք այդ արշավանքը անդի ունեցավ, բայց միայն կիմմերների կողմից 673 թվին դրանք մտնում են Շուպրիա, վորտեղ և ջարդվում են, ստիպված լինելով քաշվել Փոքր Ասիա

Ռուսա Վ-ի թագավորություն հենց սկզբում, կամ թերևս Արգիշտի Ա-ի վերջին տարում, Ուրարտուի գիրքը արդեն ամբողջովն էր համարվում: Այդ յերևում է հեռակալից Յերբ Աինախերիբի յերկու վորդիները՝ Նիրգիլ-շար-ասսուր և Ագարմալիք սպանում են իրենց հորը (ասճարում՝ աղոթելիս) վորպեսզի տիրեն նրա դահին, ապա պարտվելով իրենց մյուս յեղ բայր Ասսարհադդոնի կողմից, փախչում են Ուրարտու, ապավինում են վերջինիս: Աստվածաշունչը նույնպես հիշատակում է

¹ Այս «Կուլամերի» քաղաքը հավանորեն հայոց «Քղիմտրն» է, վոր գտնվում էր (ըստ Ն. Ադոնցի) Ներջիկից և Տավրիկից հարավ, Սասունի Բաթման-սու գետի վերին հոսանքում: Ուրեմն հայկական Տավրոսից հյուսիս Ուրարտուի ըստանմանն էր Ռուսայի ժամանակ

այս դեպքը ավելացնելով վոր Ագրամելիսը և Շարեզերը փախչում են «Արարատ», այսինքն՝ Ուրարատու Ինչպես Բ Տուրանն և ասում՝ «Թագավորին սպանողները փախչում են Վանի պետությունը, ուր գտնում են ոժանդակություն և զորքով գալիս են Մելիտենե: Այսանդ դրանց ջարդում և Սենախերիբի յերրորդ վորգին՝ Ասարհադդոնը»¹: Ըստ բևեռագիր ասուերական տվյալների Ասարհադդոնը սկզբում յեղել և Ասորեստանի հյուսիսարևելյան կողմերում՝ կիմմերների դեմ արշավանք զործելիս, Նահանգիպում և Նիրգիլ-շար-ասուերի և Ագարմալիքի զորքերին թանի Ռուրրատում (=Կոմագենեյում) և հաղթելով հալածում և Յեփրատով դեպի վեր մինչև Բիզան քաղաքը և քշում «Ուրարատու»-ի հողերը²: Թերևս հայոց Սանասարի (=Շարասար) և Բազգասարի ժողովրդական վեպը վոչ թե Աստվածաշնչիցն և դալիս, այլ ավանդարար և անցել. այդ վեպի բնագրերում կարդում ենք նաև «Սադնասար», վոր կարծես ավելի մոտ և ասուերական (Salsar) < Salmnasar < Salmanasar անունին, իսկ Բազգասարը Բարելոնի վերջին Թագավորներից մեկի (Valtasar) անունն և: Ավանդությունը դրանց բերում և Սասուն («Սիմ») և Սանասարից սերված այդ «Ջոջանց» տունը իրեն Մհերներով և Դավիթով, գերբնական կերպավորում ստանալով՝ դիմադրում և Ասորեստանի («Մըսըր = բևեռագրերի MISTU «Յեգիպտոս») վոանձողություններին: «Սասմա ծոերի» մեջ արտացոլվում են մի քանի մոմենտներ (պասմա-կրոնական) — նախ՝ արարական արշավանքները, վոր հիմնական և, հետո հին հեթանոսական հավատալիքը, յերրորդ՝ Սենեքերիմի սպանությունը յուր յերկու վորգիների միջոցով, չորրորդ՝ ուրարա-ասուերական կուլտուր-քաղաքական փոխհարաբերությունը և հինգերորդ՝ այդ ժամանակվա կամ թերևս Ասորեստանի կործանումից հետո տեղի ունեցած միգրացիաները (սկյութական, կիմմերական մեդական և ասուերական), յեթե չհաշվենք հայ-փոյուզիական ցեղերի տեղաշարժը դեպի

Տես նրա История древнего востока кн II Էջ 63

² Տես И Мещанинов, Халдоведение Էջ 49

³ Մհեր անունը՝ ծագած իրանական Mitra-ից, ցույց և տալի այդ յերկու հերոսների (մեծ կամ առյուծ Մհեր ու պատիկ Մհեր) դերբնականացումը՝ կապված «արև» (Mitra = Mihr) ասածու հետ: Դավիթը մեր կարծիքով ցեղի աստծո (Schutzgott) կերպավորումն և, իսկ Մովհնարը կամ Մովհալը, ինչպես անունն և ցույց տալիս (ծովի նար = ծովի նիմֆա, ծովի ալ = ծովի վոզի, գեվ) արտացոլում և չրի կուլտը

Հայաստան, վորը ձեռնարկում է հայ եթնութի մեջ Բիւսնայի և Ասորեստանի չքացման նպաստաւոր պայմաններում:

Մեր կարծիքով մեր դրամոր հին տվյալները (Չենոբ Գլակի մոտ) պահել են հիշատակ և Մուսասիրի քուրմ և թագաւոր Ուրզանայի մասին, դարձնելով նրան արեւելքից յեկած քրմապետ՝ Արձան անուանով³: Թերևս Ուրզանայի բախաակից Ռուսա Վ թագաւորի (և մյուս Ռուսաների) անունն էլ մնացած լինի «Նրուազ» քրմապետի անվան մեջ:

Ռւբառուի այս շրջանի պատմութիւնը, այսինքն Ռուսա I-ից հետո, կապված է յեղել վոչ միայն Ասորեստանի ուժից և քաղաքականութիւնից, այլև մի շարք նոր ժողովուրդների կամ դեղերի հետ, վորոնք նոր էյին յերեացել Ասիայի այս մասում: Մենք արդեն տեսանք վոր դեռ Սարգոնի ժամանակ հաղորդում է արվել գիմիրրանների մասին, վորոնց յերկրում Ռուսա Վ ուլարաական թագաւորը պարաություն է կրում: Ասարհադդոնի ժամանակ յերբ Ռւբառու Ռուսա I-ի որով վորոշ բարձրացման և վերականգնման է հասնում, ելի հանդես են գալիս այդ գիմիրրա-կիմիւրները թերևս վորպես դաշնակից Ռուսա I-ի հետ, բայց պարավում են Շուպրիայում Ասուրհադդոնի կողմից (673 թ), վորին շատ էյին մտահոգութիւն պատճառել «Ռւբայի պլանները կամ գիմիրրա ժողովրդինը»: Կովի վայրը (Շուպրիա) ցույց է տալիս, վոր կիմիւրները իրենց Տիււզպա դեկավարով արդեն մեծ խտամբ քաշվել էյին բուն Փոքր Ասիա, այն է՝ Կապպադոկիա այս յերևում է նաև հայոց «Գամիրք» բառից, վոր նշանակում է «կիմիւրներ» և «Կապպադոկիա»: Մի այլ հարցումով, ուղղված Շամաշ (Արև) ասածուն, Ասարհադդոնը նույնպիս մտահոգութիւն է արասհայտում այդ գիմիրրանների և դրանց հետ մեզացիների ու մաննացիների նկատմամբ («Կհաջողվեն արգյոք Կաշտարիտիի և յուր

³ Ուրզանայից մնացած կնիքի վրա ասուրերեն գրված է «Կնիք Ուլ զսնայի թագաւորի Մուսասիր քաղաքի և Ուտարտի քաղաքի Արձանը (պտակերը) LAMASSU-յի (Բարի հսկայի), նման ոձի, ի մեջ լեռների շարտար բեւանը յուր բացել է»: Այս տրձանագրութիւնը գրված է մի գլանի վրա, վորը ծառայելիս է յեղել վորպես կնիք և թալիսման յուր տիրոջ համար: Գլանի վրա նկարված է (քանդակված) մի հսկա (վոզի), շորս թևերով մի մարդու ձեով, վորի յերկու կողմերը կտնդնած են ջայլամներ, վորոնց վզից բռնած է այդ բարի վոզին ջայլամները հանդիստնում են շոր վոզիներ կամ լեռների գեմաներ:

դինվորների պլանները կամ գիմիրլա դինվորներինը կամ Մե-
 դիայի դինվորներինը, կամ Մանայի դինվորներինը . կվերցնեն
 արգյոք նրանք Կիշասուռ քաղաքը .»): Կաշտարիտի մարաց
 իշխանը պարավում և պարավում և և աշգուղա (սկյութացի) Իշ-
 պակա անունով թագավորը Բայց սկյութական մի այլ գլխավո-
 րի (Բարտատու = Հերոդոտի „Prototeus“) Ասարհագրոնը կարո-
 ղանում և չեղոքացնել և մինչև իսկ դաշնակից դարձնել, ամուս-
 նացնելով նրան, իր ցանկության համաձայն, յուր աղջկա հետ
 Կիաքսարի ժամանակ անգամ, յերբ արշավանք եր կազմակերպ-
 վում Նինեվիայի դեմ, սկյութական Մադիա իշխանը (Բարտա-
 տուի վորդին) դեմ և դուրս դալիս մարացիներին (այսինքն
 Կիաքսարին), կատարելով հաջող հարձակում Մալաստանի (Մե-
 դիայի) վրա: Ասորեստանը վորոշ ժամանակ վոչ միայն կարո-
 ղացավ կասեցնել սկյութացիների վտանգը, այլև թերևս դրանց
 միջոցով կիմմերներին դսպել սկյութական ցեղերը իրար դեմ
 դցելով և սկյութացիների վորոշ ցեղերին ոգտադործելով նաև
 մարերի դեմ: Կիմմերները, վորոնց թագավոր Տեուշոյայի մասին
 ասված և, վոր «հեռավոր յերկրից» և յեկել, Փոքր Ասիայի մեջ
 մեծ վտանգ են հանդիսանում լյուդիացիների համար: Յերբ Ասո-
 րեստանը վերջիններին ոգնում եր, նրանց Գիգես («Գուդու»
 ըստ ասուերական աղբյուրների) արքան հաղթում և այդ կիմ-
 մերներին և, վորպես տպացույց, յերկու շղթայակապ կիմմերնե-
 րի (զորավարների) այլևայլ նվերներով ուղարկում և Աշուրբա-
 նիպալին: Բայց յերբ Լիդիան հակվում և դեպի Յեգիպտոս և այլ-
 ևս նվերներ չի ուղարկում Ասորեստանին, գրկվելով հետևարար
 վերջինիս սգնությունից, ապա չարաչար պարտվում և այդ կիմ-
 մերների կողմից (Արդիա թագավորի ժամանակ, վորը Դիդեսի
 վորդին եր): Հետաքրքիր են Աշուրբանիպալի հետևյալ խոսքերը
 այդ ուղմատենչ և քաջ ժողովրդի մասին «Իմ նախնիներից
 նրանք [կիմմերները] չեյին վախենում և իմ, թագավորիս, վոտ-
 քերին չեն փարվել»: Յեմ իզուր չի, վոր վրացիք այդ քաջ ժո-
 ղովրդի անունը պահել են «հերոսի» առումով (վրաց gimiri «հե-
 րոս», վոր ձևով շաս մոտ և ասուերական gimirra ձևին և վոչ
 հայկական gamjir-ին կամ հույների γίμυρος ձևին) Սկյութա-
 ցիների մասին հիշվում և, թե ըստ Հերոդոտի և թե ըստ Աշուր-
 բանիպալի տարեգրերի, վոր դրանք հասած են լինում մինչև
 Յեգիպտոսի սահմանները, ընդհարվելով նրանց Պսամմետիս ար-
 քայի հեճ թե կիմմերները և թե սկյութացիները յեկվոր և

համարվում Սև ծովի մոտ յեղած տափաստաններից (Հյուսիսային Կովկաս): Դրանց և մեղացիների հանդես դալը Մերձավոր Արևելքում վերջին հաշվով խարխից և կործանեց շատ քաղաքական և ցեղային միություններ Ասորեստանը և Բիայնան այդ հաշվեհարգարի մեջն էին: Յևթե սակերը սկյութական ցեղ էին (իրանական ծագումով են համարվում), ապա մենք այդ saka անունը կապում ենք հայոց «սկա» բառի հետ, վոր սկզբում ցեղանուն էր, իսկ հիմա դրա հատկանիշն և տալիս («մեծ», «մեծահասակ» = հսկա) նման վրաց gmiri բառի նույն փոփոխման Այգպես և «Սկայորդի» Պարույրը, վորը ըստ Խորենացու առաջին պատկյալ թագավորն է («Իսկ մեր առաջին ի Վարբակայ Մարէ պսակեալ—Պարոյր, որդի Սկայորդույ» կամ թե «Որ ի Սկայորդույն Պարոյր՝ առաջին լ Հայս թողաւորէ, օգնական լինի Վարբակայ Մարի, բառնալով դիագաւորութիւնն Սարդանապալայ», տես Վերք, § 21, 22)¹: Այս սկայորդի բառը առաջի նշանակում և «սակի վորդի» («սակիդ, սակյան») նրա վորդի Հրաչեան ըստ Խորենացու «պայծառերես և բոցահնազոյն» էր և այդ պատճառով էլ կոչվեց «Հրաչեայ» արդյոք այս ևս ապացույց չե սկյութական-սակական ծագման քանի վոր այդ ժողովուրդները ավելի հյուսիսային էին և շեկ պետք է լինեային: Կա մի վարիանտ (Հովհ կաթողիկոսի պատմութեան մեջ) վոր Պարույր Սկայորդին այլ ցեղից էր, վոր բնիկ հայկական ծագումով: Պարույր (Paroyr) բառն անդամ մենք չենք համարում տեղական թերևս Protot- անվան ձևափոխությունն է (Protot > *Prot- > Pro(y)r² հմմտ. Վրոյր Vroyr): Հայկը վոր հայ ցեղի անունն և կրում և յուր մեջ անձնավորում և թե այդ ցեղի և ազգութեան կազմավորումը և թե յուր կոնֆլիկտով ուրարտացիների (resp. հայերի) պայքարը Ասորեստանի դեմ սպանում է Բելին յերեքթեյան սլաքով, վոր սկյութական են համարում և Խորենացին այսպես է այդ նկարագրում «Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկույ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն լի քարշէ զլայնալիճն զիպեցուցանէ զերեքթեւեանն կրծից

Սարգանտապալ անունը ձևափոխությունն է «Աշուրբանիպալ» ի Հայոց «Սկայորդի» կազմությունը «որդի» բաղադրիչով նույնպիսի հնագույն առումով և ցեղին կամ տոհմին պատկանելու համար, ինչպես և խաղաղական —xi(ni) մասը կամ վրաց švili մասը: Այնպես վոր skaj-ordi չի նշանակում տառացի սկայի (=սակի) վորդի, այլ՝ սկյան ցեղից սակ տոհմից (— ու բարտ. *Sakaxi, վրաց *Sakašvili)

տախտակին և շեշտ ընդ մեջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն» (Ղ դիրք, § 11): Սկյուլթական այդ սլաքները ասրածված են յեղել Արևելյան Յեզրոպայի տափասաաններում, բայց գանված են նաև Ուրարտուի բերդերում, Ասորեստանի քաղաքներում, Բաբելոնում, Սյուրիայում, Յեզրոպոսում: Սլաքները լինում էին յերկփեաուրյան կողքից փշիկով կամ յերեքկողյա (трехгранные): Խորենացին ska-ներին («տիտաններին») համարում է աստվածներից հետո յերկրորդ տեղ բռնողը (համա «Բարշամ յազգէ սկայիցն») ասելով, «Եւ ի սոցանէ ի դից] հատեալ գտան ազդ սկայիցն, անհեղեղք, յաղթանդամք մարմնով և վիթխարիք որք յղացեալ ամբարտաւանութեամբ՝ ծնան դամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեանն» (Ղ դ § 9): Մեզ թվում է, վոր Անանուն պատմիչը դործ է ածում այդ «սկայ» (> հսկայ) անունը յուր հին՝ եթնիկական առումով: Խոսելով այն մասին, վոր Բագարատ Փոռոպանը («յորդուցն Արամանեկայ») գիմավորում է հայոց Արշակ Փոքր արքային ստանալով յուր «տերությունը», իրավունքները և սապեա դառնալով «Հայաստան երկրին» պատմիչը ավելացնում է. «Եա կոտորեաց զհսկայսըն որ զաւրածողով եղեն ի վերայ նորա ի Միջագեաս Ասորուց» (աես «Պատմություն Սերևոսի») Ս. Պետ., 1879 թ, էջ 9): Ska բառը ավելի հին ձև ունի, քան «hska», ինչպես «սկեմ» գարձել է «հսկեմ» (sk արմաար կա և խեթերենում usk-ձևով և նույն իմաստով), իսկ նրա վերջի «a» ձայնավորը կամ արմասական է (šaka) և կամ հեաադայի հավելվածք է, նման Հարմա, Շարա Ամասիա Արա և նմաններին (սուբարիական-խուրրիական յերևելյթ հայերենում?):

Բայց հայոց ավանդությունը իրենց ծաղուժը կապում է նաև կիմմերների հետ, վորոնք յերևի մի սկյուլթական ցեղ են յեղել և հալածվելով (ըստ Հերոդոտի) այդ սկյուլթացիներից, կովկասի վրայով մտել են Առաջավոր Ասիա (հետո՝ Փոքր Ասիա): Հայերը Հայկին համարում են Թորգոմի վորդի («տուն Թորգոմայ»), իսկ այս վերջինը Աստվածաշնչի աղավաղումն է հին Թոգարմայի, վոր ժողովրդի և յերկրի անուն եր: Ըստ Աստվածաշնչի Գոմերը ուներ յերեք վորդի—Աշքենագ, Ռիֆատ և Թորգոմ-Թոգորմա, վորոնցից առաջինը սկյուլթացիների ցեղային անունն է (aska na Նի ուր, aska- = հայոց «սկա» = ասսուրական askuza), յերկրորդը տեանում ենք Պաֆլաղոնիայի անվան մեջ (Փոքր Ասիայումն է), և յերրորդը ուրեմն հայերն են: Ուրեմն դուրս է գալիս, վոր Թո-

գործա-թորգումը (resp հայերը—Հայասանը) գոմերների այսինքն՝ հայոց գամիրների (ասուուր gimirra) ծնունդն է, և հայերը կիմմերների հետ ևս ունեն ցեղակցություն:

Ինչ և իցե, հայերը իրենց ավանդությունների (բանավոր և գրավոր) մեջ պահել են տեղեկություններ, վորոնք վկայում են հայերի վորոշ աղերսակցություն գամիրների (կիմմերների) և սկյութացիների («սկա»-ների, Սկայորգու և այլն) հետ¹:

Սկյութացիների արշավանքները և ընդհանրապես նրանց վտանդը 7-րդ դարի կեսին և հետո ավելի յեն ակառուալ դառնում և զորեզանում. և գուցե հենց այդ է յեզել պատճառը, վոր Ուրարտուի Ռուսա Մ թագավորը Նլամը յուր Սուգա մայրաքաղաքով վերցնելուց հետո (646 թ) դեսպաններ է ուղարկում նվերներով հաղթող Աշուրբանիպալի մոտ: Յեթե Ասորեստանի համար Ուրարտուն մի անակ պատեւել էր հյուսիսային վայրագ և թափառաշրջիկ ցեղերի վոսնձգությունների դեմ, ապա ինքը Ուրարտուն ես կարիք էր զգում հարավային յուր զոռոզ հարեանի բարեկամական չեղոքությանը:

Մեզիայի դեմ նույնպես սկյութացիք են յեղել, վոր վորոշ չափով հակակշիռ ուժ են կաղմել և անուղղակի կերպով ոգնել Ասորեստանին Մեդական Ֆրատրտ (660—634) և Կիաքսար կամ Ուվախշաթրա (638—584) թագավորները ըսա Հերոդոտի փորձեր են արել հարձակվել Նինիվիայի վրա (վերջինս՝ Կիաքսարը 630 թվին), բայց սկյութացիք հարձակվելով Մարաստանի (Մեդիա) վրա և իբր հաղթելով կասեցրել են այդ շարժումը, թեպեւ վերջիվերջո 612 թվին Կիաքսարը և Բաբելոնի թագավոր Նաբուպատասարը վերցնում են Ասորեստանի մայրաքաղաքը և հիմն ի վեր կործանում: Սկյութացիք, քշելով իրենց տեղերից մոշկերին (մոսոխներին)² և թուբայներին, մոտ 626 թվին հասնում են

¹ Արդյոք, Պարույր Սկայորգու բարեկամությունը Վարբակես Մարի հետ չի արտացոլում այն ճիշտ պատմական փաստը, վոր սկյութացի Իշպակա (Սպակա) թագավորը դաշնակցել է մեդական (մարական) Կաշտարիտի և Մուսիտարշու իշխանների հետ ընդդեմ Ասորեստանի: Իսկ սկյութացիք հաստատվել էին մոսամբ Մաննայում և Սուբուշիայում: Այս տեսակետից մեր Բագարատ (Փոռտղյանը), վերպես Բագարատունիների նահապետ և եպոնեմ, տրդյոք չի արտացոլում յուր մաննայական ծագումը, ի նկատի ունենալով Ռուսա 1-ի ժամանակ յեղած մաննայական թագավոր Bagadatti-ին Հնչյունաբանորեն Bagarat ը ստացվել է Bagadat-ից:

² Դրանք գաղթում են Սև ծովի ափ (Տրապեդուն) և ձորբխի հովանով Վրաստան (հմմտ Մեսիեթիա Մսկիկյան լեռներ):

Միջերկրական ծովի արևելյան ափը Այդ սկյութացիք են, վոր Գոգի և Մագոգի անուններով հանդես են գալիս Ասավածաշնչում՝ Յերեմիա և Յեզեկիել մարգարեների սարսափահար տրտունջների մեջ:

Չի կարող պատահել, վոր Վանի պետութունը յենթարկված չլինի սկյութակախ այգ անեզ վոթորկին: Տեղեկութուններ դժբախտաբար չկան Յեզած հաղորդումներից այն և ստացվում, վոր գամերները գործում էին Յեփրատից արևմուտք Կապադոկիայում և ավելի արևմուտք՝ Լյուզիայում, իսկ սկյութացիք՝ Մաննայում Թուրուշիայում, Մեդիայում, այսինքն Ուրարտուից արևելք Յեվ ուրեմն վերջինս (Ուրարտուն) կարծես թե մնում եր անվտանգ այդ յերկու խաշնարած և ավազակարարոց ցեղերի (կիմերների և սկյութացիների) մեջ տեղում: Դժվար թե Ուրարտուն տուժած չլինի գեթ վորոշ ժամանակներ, թեպես կան և դրանց բարեկամության ակնարկներ (հմտ Աստուրադոնի հարցումը Շամաշին ուրարտացիների և գիմիրրայի մասին): Այս մասին կարող են վկայել և Ռուսա II-ի շինարար աշխատանքները թե հյուսիսում (Մակու, Զվարթնոց, Զարբախ-Յերևան) և թե բուն Վանում—Տուշպայում, ուր կառուցվում և թոփրակ կալելում Խալդու տաճարը՝ փոխարենը ավերված Մուսասիրի մայր տաճարի: Ռուսա II-ի վահանի կտորտանքը (այժմ բրիտանական թանկարանումն է), վոր գտնվել է թոփրակ-կալելի Խալդու տաճարում, նույն շինարարությունն է վկայում

Ռուսա II-ից հետո (646 թվից հետո?) Աշուրբանիպալի ժամանակ հիշվում է ուրարտական Սարգուր թաղավորը վորը նվեր է տալիս Ասորեստանի այգ թագավորին և խոնարհ վերաբերմունք է ցույց տալիս, դրանով թերևս շեշտելով յուր կիսավասալական կապը: Աշուրբանիպալի ատրեգրերն ասում են, վոր Սարգուրը հետևելով յուր հայրերին վորոնք բարեկամական հարաբերությունների մեջ էին Աշուրբանիպալի հոր հետ, լսեց աստվածների խորհուրդներին և՝ «Վորդու նման դիմեց ինձ, հորս, «տեր» բառով. նա ասեց «վողջույն թագավորին, իմ ախրոջը» և մեծ հարգանքով ու խոնարհությամբ դիմեց ինձ հարուստ նվերներով»: Ուրարտական այս Սարգուր III (IV)-ից վոչ մի արձանագրություն չի մնացել, և նրա թաղավորության ժամանակաշրջանն անգամ անհայտ, թեպետ մտաավոր յենթադրությամբ նշում են 646 620 թվականները¹:

¹ Ըստ Բելթի և Լեհմանն Հաուպտի

ՌՈՒՍԱ III (605? 585)

Ուրարտական վերջին թագավորն է Ռուսա III-ը վորը իրեն կոչում է Երիմենաչի վորդի („Erimenaxi“). սակայն գրա հորից վոչ մի անգեկություն չկա թե խալդական և թե ոտար աղբյուրներում: Կարծում են, վոր այդ Երիմենան թագավորած պիտի լինի Ստրղուր III-ի և Ռուսա III-ի միջև, այսինքն՝ 620—605 թվականներին: Բայց այս բոլորը շատ սարակուսելի չե: Մինչև իսկ հորց կարելի չե բարձրացնել նոր ատմից կամ ցեղից սերվելու մասին, ի նկատի ունենալով, վոր ուրարտական Erimenaxi կարող է նշանակել և «Երմինյան», այսինքն Ermina կամ Armina ցեղից սերված, այդ ցեղին պատկանող: Իսկ այդ ազգանունը հավանորեն հենց նշանակում է «արմենական» = հայկական», և ուրեմն Ռուսա III-ը յեղել է «արմեն» (հայ) ուրարտական անունով: Այս կարող է նշանակել, վոր 7—6 դարերի միջև ընկած ժամանակաշրջանում, կամ ավելի ճիշտ՝ 7-րդի վերջում հայ-արմենները հեազհեաե թափանցում եյին Ուրարտու—Վան, բարձրանալով մինչև իսկ թագավորական գահը: Ռուսա III-ը կառավարում եր այն ժամանակ, յերբ Ասորեստանը գոյություն չուներ: Այս թագավորից մնացել են բազմաթիվ նյութական վկայություններ, մանավանդ բրոնզե վահաններ վորոնք (6 հաս) պեղված են Խալդու աաճարից Թոփրակ-կալելյում: Յենթագրվում է, վոր մոա 585 թվին Մեդիան գրավում է Ուրարտուն և կործանում նրա մայրաքաղաքը՝ Տուշպան (Վանը):

Յոթերորդ դարի վերջերում սկյութացիք և կիմերները դադարում են սպառնական ուժ ներկայացնելուց: Առաջինների մասին չերոդոսը մինչև իսկ ասում է, վոր վերագարձել են իրենց նարկին անդերը (Ռուսաստան), ջարդվելով մեղացիների կողմից (ըստ Ստրաբոնի): Իսկ կիմերները, վոր յերկար ժամանակ իրենց տիրապետության տակ եյին պահում արևմտյան Փոքր Ասիան և նվաճել եյին մինչև անգամ Լյուդիան Արդիա թագավորի որով (650—625), վերջնականապես ջարդվում են Սագիյաաի վորդի Ալիաթի ժամանակ և ցրվում: Մնում են յերկու մեծ պետություններ Լյուդիա և Մեդիա, վորոնց թագավորների զորքերը 585 թվին պատահում են միմյանց Հալիս դետի վրա, բայց արևի խավարումի հետևանքով և Բաբելոնի նարուզողոնոսոր թագավորի և Կիլիկիայի Սենեստիա թագավորի միջնորդությամբ ճակատամարաը դադարում է մեղացի Կիաքսարի և Լյուդիացի Ալիաթի

միջև. և Առաջավոր Ասիան բաժանվում է դրանց մեջ: Յերկար շի տեում և դրանց կյանքը. 550 թվին Կյուրոսը վերցնում է Մեդիայի մայրաքաղաք Եկբատանան (= Համադանը). նույն վիճակին է արժանանում, թեպետ քիչ ուշ, և Լյուդիան:

Ուրարտական վերջին թագավոր Ռուսա III-ից մնացել են յերկու տեսակ (բնույթի) արձանագրություններ—վահանների վրա և մի բերդի աշտարակի: Վահանները պեղված են, ինչպես ասվել է, Թոփրակ-կալեյից (Վանում) և թվով վեց հաա են, վորոնցից մեկը Ռուսա II-ինն է այդ վահաններից յերկուսը Բեռլինումն են, իսկ չորսը՝ Լոնդոնում, Բրիտանական թանգարանում: Ինչպես յերևում է Մուսասիրի տաճարի նկարից, այդ վահանները կախվում էին տաճարի պատերին (Մուսասիրի դրսի պատին կախված են յնդել չորս այդպիսի կլոր վահան): Վահանները իրենց ընեռագրությամբ նվիրվում (ձոնվում) էին Խալդասաժուն: Գրեթե այդ բոլոր վահանները միևնույն բովանդակությունն ունեն—«այս վահանը (aše)¹ Ռուսան, Երիմենայի վորդին, նվիրաբերեց (uštuni), (յուր) առողջության համար (ulgušiani edini)»: Ավելացվում է յերբեմն և թագավորական տիտուլատուրան—«Խալդասաժուն մեծության շնորհիվ Ռուսան, Երիմենայի (կամ Արդիշտի) վորդին, հզոր թագավոր (ե), թագավոր (և) աեր Տուշպա քաղաքի»: Այս «հանուն առողջության» նվիրական արձանագրությունները շատ հիշեցնում են հայոց նման արձանագրությունները յեկեղեցիների պատերի վրա: Ռուսա III-ի մյուս արձանագրությունը վերաբերում է շինարարության և դանվել է Արմավիրի բլուրի ստորոտում: Սկզբում այդ արձանագիրը քարատախտակը (3 տողից) յեղել է բլուրի վրա շինված բերդի մի աշտարակի մուտքի վրա: Արձանագրությունն ասում է. «Ռուսան Երիմենայի վորդին, այս աշտարակը ('ari) շինեց 1432 քարով (kapištini)». այս ձևի արձանագրություններ ունեն և Արդիշտին և Սարգուրը

¹ Aše բառը «վահան»-ի իմաստով առաջին անգամ ճիշտ մեկնաբանեց J. Friedrich-ը (տես Archiv Orientalny, Vol IV, № 1, էջ 55—60), իսկ ulguše, վոր Մեյսը առաջ սխալմամբ թարգմանում էր «վահան», այժմ հաստատ վորոշվում է վորպես «առողջություն», վորովհետև Կելիշիի յերկիեզվյան արձանագրության մեջ, այնպեղ, վորտեղ ակկադական անքսորը ունի—ina pul balati-šu «առողջության համար», խալդականը տալիս է ulgušiani edini, ինչպես ճիշտ համեմատել է A. Götze-ն (տես Götze-ի ուսումնասիրությունը ZA NF 5, էջ 109): Ulg-(uše) արմար մենք տեսնում ենք հայոց Օլյ (սղջ) արմատի մեջ

Ինչպես մենք արդեն ասել ենք, Ռուսա վերջինը կարող էր և չլինել ուրարտական առաջին թագավորների ժառանգը, այլ լիներ նոր «հայկական» ցեղից: Erimena նրա հայրանունը թե հասուկ անուն կարող է լինել՝ նման մեր «Արմենակին» և թե ցեղանուն: Հնչյունաբանորեն «e» ձայնավորը արասցուլում է վորոշ բարբառների կամ լեզուների ազդեցութունը, ինչպես ունենք հայկական հողի վրա — Երասխ || Արաքս, եղբայր || աղբայր, երագ || արագ և այլն: Իսկ աարբեր լեզուների մեջ կարելի չէ համեմատել — Enzite || Anzitene (Անձիտ) eriza || ariza (հմմտ Երիդա = Առիճ), egii || *agii (= անզղ), Erimena || Aramani-ak, խալդական euri «աեր» || հայկական աւրի «աեր» (աւրի-որդ, *աւրի-եար > աւրեար «տերեր», *աւրի-անք > աւրեանք բառերի մեջ և այլն և այլն):

Ռուսա III-ի արձանագրութունը Արմավիրի բլուրի վրա ցույց է ապրիս վոր Վանից մինչև Արարատյան դաշտը, 7-րդ դարի վերջում կամ 6-րդ դարի սկզբում, դեռ կազմում էր Ուրարտուի պետութեան տերրիտորիան, ուր շարունակվում էր շինարարական աշխատանքը թեկուզ ուղղակի պաշտպանութեան գծով (հյուսիսում), իսկ այդ պետութեան վերջին թագավորը, անշուշտ մինչև մեղացիների կողմից նվաճվելը, շարունակում է իրեն հորջորջել «հզոր թագավոր, թագավոր մեծ, թագավոր և աեր Տուշպա քաղաքի»: 585 թվին Կիաքսարը դրավում է Ուրարտուն, բայց արդյո՞ք, տեղական դինաստիան անհետանում է կամ վոչնչացվում, այդ դժվար է ասել: Թերևս Ռշտունի տեղանունը և նախկին նախարարութունը յուր անվան մեջ պահած ունենա այդ Ուրարտու անունը. Իարեյոսի՝ Բիսուտունի ժայռի վրա թողած արձանագրութեան մեջ ակկադական (բաբելական) տեքստում կարդում ենք Uraštu (վոչ Urartu), այնինչ բուն պարսկական բնագիրը նույն տեղում տալիս է Armina: Կարելի չէ յենթադրել, վոր Ուրարտու ձևից առաջացած լինի Ռըշտունի (<*Urast-uni), վորով նշանակվում է հենց Վանի շրջակա մարդը¹: Հետաքրքիր է վոր պարսիկները չունենալով պետական-

¹ Մեղ թվում է վոր յեթե ճիշտ էլ լինի Ուրարտուի շարունակութունը Ռըշտունի անվան մեջ, այնուամենայնիվ քաղաքական տեսակետից նախկին Բիսյանյի (Ուրարտուի) Aršuniuni քաղաքի իշխանները, այն է՝ Արծրունի ներք, ավելի չեն շարունակել Ուրարտուի գեթ տեղական հայկական ժառանգորդը լինել վորպես Վասպուրականի ամենաուժեղ ֆեոդալները և հետագայում նաև թագավորները: Arzunia քաղաքի անունը հիշատակվում է և առուրական արձանագրութունների մեջ Սարգսնի որով

քաղաքական այն արադիցիան, վոր հատուկ էր Ասորեստանին՝ Ուրարտուի նկատմամբ, վերջինիս յերկրամասը կոչում են Armina թողնելով ասուերա-բաբելական լեզվին իրենց հին Uraštu հորջորջումը: Պարսիկները վորպես նոր ազդություն և պետություն, թեպես կառուցված ասուերական և մասամբ մեղական քաղաքական-պետական և սնտեսական նախորդող հողի վրա հայերին (արմեններին) ևս ճանաչում և ընդունում էին վորպես նոր ազդություն և քաղաքական ֆակտոր: Իսկ հայերը այդ ժամանակ (520 թվականի շուրջը, յերբ դրաված և Բիսուտունի այդ արձանագրությունը) այնքան ունայ և մեծ ուժ էին ներկայացնում վոր չորս անգամ ապստալրել էին Դարեյոսի դեմ նախկին Ուրարտուի հարավային շրջաններում (Դիարբեքիբի շրջաններում): Այսպիսով հայերը թե քաղաքականորեն, թե եթնիկորեն և թե կուլտուրապես հանդիսացան ուրարտացիների հաջորդը:

Ուրարտուն վորպես պետություն ունենում է յերկու շրջան — կադավորման և վերելքի շրջան Արամեյից մինչև Ռուսա I-ը, այսինքն՝ 860—714 թվականներին, վորից հետո բալիս և թուրացման և անկման շրջանը (714—585) Այս ետապները կապված են յեղել թե Ասորեստանի ուժի փոխհարարերությունից և թե մի շարք ներքին սոցիալ-անաեսական և եթնիկական նորանոր հանգամանքներից: Ուրարտուի վերելքը Մենուայից մինչև Սարգուրը (կամ Ռուսա I-ը) զուգադիպում է Ասորեստանի ներքին թուլության՝ Սալմանասար III-ից (860—825) մինչև Տիգլատպիլասար IV-ը՝ (747—728) կամ Սարգոնը (722—706), եթնիկական նոր կադավուածիչ գործոններ են հանդիսացել կիմմերները և սկյութացիք, ինչպես վերջում և մեղացիք, վորոնց ավերիչ և քայքայիչ ազդեցությունը Առաջավոր Ասիայում պատմական հաստատա յեղելություն է: Ուրարտուի քայքայման ներքին սոցիալ-անտեսական հանգամանքը պիտի համարել բաղմաքանակ ստրկությունը վոր ավելի էր քան իշխող խալդուրարտացիների թիվը (մոտ 300.000)¹, իսկ յերկրի ներքին նյութական ուսուրսները, մտնավանդ վոր սսորեստանյան արշավանքները քայքայել էին նորմալ արտադրականությունը՝ կասկած յերկրի թե սակավաբեր պայմանների հետ և թե աշխարհազրական կտրը-

¹ Ըստ Սարուվեյի յենթագրության, աես չին աշխարհի պատմություն չին արևելք (հատոր Ա, էջ 583 (հայ թարգմ)):

վաժության (լեռներ ձորեր, գետեր)¹, — այս բոլորը քայքայում էր սարկատիրական-առաջական պետության հիմքերը Ադաանների մեջ անդամ առաջանում էր շերասավորություն, յեթե չխոսենք անգամ սարուկների գոգոնության մասին: Հետևանքը յեղավ այն, վոր սարուկները դադարեցին այդպիսին լինելուց դառնալով հողատեր շինականներ կամ ձորաբեր տաճարների կամ ֆեոդալների ձեռքին արտաքին արշավանքները այլևս դադարել էին և ազբյւր չեյին կարող լինել սարկական ազատ ձեռքերի ու աշխատանքի, և յերկիրը ճ-րդ դարից սկսած հեազհեաե թեակոխում են որ տիպի հասարակա-անասական շրջան՝ ֆեոդալական, վորը արդեն մտնում է հայկական կոչված հասարակության պատմության մեջ: Այս վերածումը իհարկե ընդհանուր կողմերով է վորով չի բացավում թափառաշրջիկ կամ լեռնային ցեղերի ու տոհմերի ավելի հեաամնաց (խաշնարածական-տոհմաաիրական) տնտեսաձևի գոյությունը թե Ուրարտուի վերելքի ու ծաղկման ժամանակ և թե հետագա հայոց պետության մեջ:

Յեթե «խալդ» և «ուրարա» տերմինների տակ հասկանանք այն ժողովրդին կամ ցեղերին, վորոնք կաղմեցին Ուրարտու կամ Բիայնա պետությունը թե վորպես առաջին հիմնադրող ցեղ (ցեղեր) և թե վորպես հեաադայում յենթարկված և ուրարտացրած (տարեղրած սարուկներ և այլ նվաճված մասսաներ), յեթե չխոսենք նաև այնպիսիների մասին, վորոնք իրենց «ուրարա» կամ «խալդ» կարող էյին անվանել քաղաքական նկատառումով (Ուրարտուի քաղաքացի կամ հպատակ), ապա այդ յերկու անվան տակ մենք տեսնում ենք ժողովուրդներ նաև Ուրարտուի քաղաքական անկումից հետո: Որինակ, Հերոդոտը հիշում է ալարողներին, վորոնք դանվում էյին արեհիլքից մատլեններին (մաախանացիներին)² և

¹ Ասորեստանի աշխարհագրական դիրքը—Միջագետքի աափաստանը—նպաստում էր յերկրի քաղաքական միավորման, ի հակադրություն Ուրարտուի, այդ լեռնաստանի, կարվածության:

² Մաախենները, վորպես յերեկ թափառական ցեղեր, մեր երայից առաջ բոնում էյին այժմյան պարսկական Ատրպատականի տարածությունները, Վ դարում մասնավորապես նրանք յեղել են Ղարազաղի կողմերում: Ուրմիա լիճը, ինչպես և թյուրք-պարսկական միջասանմանային լեռները (և Չագրոշը) համարվում էյին մատիենների շրջան, վորը հասնում էր մինչև Շոշ (Սուզա) քաղաքը: Հերոդոտը հիշում է նաև մաախեններին Հալիս գետի վերին հոսանքում պաֆլագոնացիների դիմաց, իսկ այդ գետի սկիզբը նա հասնում է Ար մենիայից: Հավանորեն matian-, matien, իսկ հեառ և mada (=amada), վորոնք մեղացիք են, mard- և manda ցեղերի հեա լինելին իրանական ցեղեր և աղգակից այժմյան քրդերին: Mitanni-ն առանձին է

արևմուտքից սասաղիրների միջև, միասին կազմելով Դարեյոսի 18-րդ սատրապիան, վորը վճարում էր 200 տաղանդ հարկ: Յեթե սասաղիրների (կամ հետագա հեսպերների || խալիրների) տեղը դնենք այժմյան Ճորոխի հովտում, ուր նրանց սահմանակից եյին (հյուսիսից²) տայերը («տառխները»), իսկ մատիենները բռնում եյին այժմյան Պարսկական Ատրպաաականի հողամասերը, ապա ալարոդները կբնակվեյին դրանց մեջտեղում այդ ասրածությունն և անշուշտ այժմյան Արարատյան դաշտավայրերը վորի «Արարատ» (կամ «Այրարատ») անունն անգամ մնացել և այդ Urart- || *arart- նախնականից, իսկ վերջինիս—arart—ararat-ի նոր զիսսիմիլատիվ ձևն և Հերոդոտի alarod-ը, վորպես ցեղանուն: Դեռ 10-րդ դարում Քր. հետո Սասունում ապրում եյին խույթերը, վորոնց լեզուն նման չեր շրջապատի մյուս լեզուներին (հայերենին, ասորերենին). դրանց արաբացիք անվանում եյին al artan, վորը անշուշտ alart an ձևարանական կազմությունն ունի («al»-ը արարները ընդունել են իրենց վորոշյալ հողը)¹: Իսկ այդ alart-ը կարող եր լինել arart-ի ձևափոխությունը: Նմանապես 6-րդ դարում (Քր. հետո) Հանձիտում՝ Խարբերդի դաշտում ապրում եյին «որտա» անունով ցեղեր, վորոնց լեզուն նույնպես նման չեր հայերենին կամ ասորերենին: Կարելի չե այդ orta-ն հապլոլոգիայով հանել *ororta-յից, համարելով վերջինս arart-բառի ձևափոխությունը («o» ձայնավորով «a»-յի տեղ) դուրս հենց urart-(u) բառը հնչվել և orart-, քանի վոր ,o ձայնավորը բևեռագրերով արտահայտվում և «u» գրությամբ (անկախ թե վանկադիր)²: Մենք արդեն ասացինք, վոր urart (u) > urašt(u) նոր ձևը վոր տեսնում ենք ակկադական վարիանտում Դարեյոսի արձանագրության մեջ, կարող և վերապրած մնացած լինել հայկական Ռըշտունի անվան մեջ, ուր rəšt-ը ստացված լինի ur-ušt (< urašt-) հին ձևից: Անշուշտ ուրարտացիք բոլորը չեն գաղթել, այլ վորոշ մաս մնացել և այժմյան վանեցիներին մեջ, վորոնք հայացած ուլալ օացիք են սրահել վ ըստ ա լանդության իրենց

¹ Նման լինակ Ai-eksa der բառին, խորլ յ տնո, Ի և Eskander Ի այլն

² Համեմատել սակ ասուրական Urzana գրությունը և հետագա հայոց Ardzan նույն անունը (յերիսուն ել քրմապետներ), ինչպես Urart(u) Ի Arar(a)t: Հարավային o (կամ u) հնչյունը հյուսիսում լինում և ձ, ինչպես հարավային «e» սկզբակ ձայնավորը փոխվո մ և այլ բարբառներում «a» ձայնավորով

նախնիների վորոշ կուրտուրական-տեխնիկական հմտությունն ու տրադիցիան (որինակ՝ վոսկերչության մեջ):

Յեթե վերցնենք «խալդ» եթնիկական տերմինը, ապա նախ այդ խալդերին տեսնում ենք չորս դար մեր երայից առաջ արեւելեյան Տիգրիսի ստորին հոսանքի մոտերքը. յերբ Քսենոֆոնի հույները (10,000 հոգի) անցնում էին այդ հենարիտես (= այժմյան Բոխան-սու) գետը, նրանց վրա հարձակվում են արմենները, խալդերը և մարդերը (Anabasis, IV 3, 4. Ἀρμένιοι καὶ Μάρδοι καὶ χάλδαοι):⁴ Յերևի այս խալդական համավածի մնացորդներն են այն 21 դյուղի բնակիչները, վորոնք դեռ վերջերս ել անվանում էին իրենց խալդացի, իսկ շրջանը՝ Խալդան, վորը գտնվում է Սղերդի արևմտյան կողմերը¹, Կա և «Խալդի-դադ» սար՝ Անշուշա այս խալդացիք և սրանց կից հյուսիսի «խուլթ—արարտան» ցեղերը (Սասունում) մի ժամանակ մի գանգված են կադմել ուրարտական ծաղումով և մեր կարծիքով մնացորդն են վոչ թե անմիջապես Լանի շրջանի բիայնացի-խալդերի, այլ հին Xubuskia-յի, վորը միշտ կոչվել է «Նաիրյան յերկիր», յերբ մինչև իսկ բուն Ուրարտուն այդպես չեր կոչվում (բացառությամբ «Նաիրի ծով» հորջորջումից). իսկ այդ Xubuskia-ն գրավել է հենց այդ շրջանը՝ Սղերդի և Խիզանի և թերևս ավելի արևելք ընկած շրջանները Խալդերի մի մասը գաղթել է թերևս իրենց հարևան մարդերի հետ դեպի հյուսիս-արևմուտք, ուր մարդերը բնակություն են հաստատում հայոց Մարդադի կոչված (Բինդյուլից հյուսիս) շրջանում, իսկ խալդերը առաջանում են ավելի հյուսիս, մինչև Սև ծովի ափը, բռնելով Տրապիզոնից դեպի արևելք ընկած շրջանը՝ հետագա Ծանիկան, վոր կոչվեց և Խալդիա (այժմյան Լազիստանը թյուրքիայում): Դրանք վրացիացան և հետո և թյուրքացան (մասամբ) Տրապիզոնցի հայերը պահել են այդ «խալդ» անունը «կոպիտ» իմաստով (հմմտ դրարարի՝ իադտախուդա, խադտալուր, խադտալեզու «կոպիտ լեզու» բառերը): Հայերը խալդերի այդ նոր հայրենիքը կոչում էին «Խալտիք»): Մեզ թվում է վոր այդ «կոպտության» գղացումը, վոր խալդերը պատճառել են իրենց շրջապատի մտրդկանց (հմմտ. նաև Սասունի խուլթ - alartan խալդերին և խալդացի քրդերին

Այս շրջանում կան Կարդիք և Հոպե անունով գյուղեր Այս խալդացի ներլ (— քրդեր) մասին ակնկալություն են ավել Ա Պաշտաբյանին սասունցի և խալդացի հայ գաղթականները, վորոնք այժմ բնակվում են Արագածոտնի Ուջան (հին Վժան) գյուղում:

վորոնք լեռնցի կոպիտ ժողովուրդ են), ինչպես և Ստրաբոնի մատնանշումը, վոր պոնաական խալդերը ուժեղ ինքնուրույն եյին (eleuterol alkimo), վոր այս բոլորը վկայում է խալդերի (թերևս ուրարացիների մի հասվածի)¹ ուժի և առնականության մասին: Պոնտոսում կային և խալյուրներ, վորոնց շատ գիտնականներ նույնպես ցանկանում են նույնացնել խալդերի հետ, մանավանդ վոր այդ խալյուրները լավադույն մետաղագործներ եյին՝ նման խալդերին: Խալդերի մի մասը ըստ Լեհմանն Հաուպտի ասորացել է (նեստորական ասորիներից), իսկ սավար մասը անշուշտ հայացել է ի դեմս այժմյան վանեցիների:

Խալդ-ուրարացիք չքացան պատմական ասպարեզից, բայց իրենց քաղաքական-պետական, կուլտուրական և սոցիալ-տնտեսական ձեռքբերումներով հող պատրաստեցին հետագա հայերի և Հայաստանի համար, վորոնք այդ կողմից անշուշտ նախապատրաստված եյին և խեթական կուլտուրայի բարերար աղբյուրներ: Անշուշտ և հայոց լեզվի մեջ կան ուրարական (խալդական) լեզվի մնացորդներ, սակայն հայոց ցեղի և լեզվի հիմնական խմորումը անդի ունեցավ Փոքր Հայքում և Արածանիի հովտում, յերբ դեռ խալդերը շարունակում եյին դրավել իրենց տեղերը²:

¹ Տես այժմ նաև J Friedrich, Chaldeer oder Urartäer? աղված Zeitschrift der deutschen morgenländischen Gesellschaft (Band 90 Heft 1) Leipzig, 1936, եջեր 60—82

² Սխալվում է Սարուվեն, յերբ ասում է Վիժվարությունը նրանց [խալդերի] լեզվի մեջն և խալդական լեզուն հարեթական լեզուների սիսեմի մեջն է մտնում: Հետագայում, հասարակական զարգացման և ավելի բարձր ստադիայում նրանից աճում է հայկական ժամանակակից լեզուն, և այդ հաստատվում է Մառի և Մեշչանինովի աշխատություններով (տես Հին Արևելք, եջ 576): Այս մտայնումը չի համապատասխանում հայոց լեզվի գենետիկական բովանդակության, կրում է աեական-վերացական և կանխամիա ու հապաղատմական կոնցեպցիա: Հայերենը ուրարաերենի ավելի բարձր ստադիան ու զարգացումը չի, ինչպես ասում է Սարուվեն, կրկնելով անքննադատորեն ուրբիի խոսքերը:

ԶՈՐԲՈՐԳ ՄԱՍ

(Նյութական կուլտուրա)

Վերջում կարևոր ենք համարում համառոտ նկարագրությունը տալ այն գլխավոր նյութական մնացորդների, վորոնք մնացել են իբրև կենդանի վկաներ Ուրարտուի կուլտուրայի, կամ թե պեղումների շնորհիվ են ի հայա բերված: Ամենից շատ իրեր բնական և վոր պետք է տար Ուրարտուի մայրաքաղաք Վանը, վորտեղ այդ կողմից նշանավոր են քաղաքի ժայռը յուր բերդով ու այլևայլ շինություններով և յերկրորդ՝ նրա այգիների մոտ գտնվող Թոփրակ-կալեն:

Վանի ժայռի վրա մենք տեսնում ենք արձանագրություններ, աստիճաններ—սանդուղքներ¹, ժայռի մեջ փորած ընդարձակ սենյակներ, իսկ այդ ժայռի հյուսիսային կողմում գտնվում են յերկու ժայռափոր նիշաներ, մեկը արևելյան կողմում (Արգիշտի I թագավորինն և յեղել), իսկ մյուսը քիչ հեռու դեպի արևմուտք՝ Սարգուրինը յուր մեծ քարակոթողով և պատվանդանով: Նշանավոր է և Սարգուր I-ի բերդի մնացորդը տաշած հսկա քարերով և յուր աստուրալեղու արձանագրություններով:

Ամենից շատ իրեր հայտնաբերված են Թոփրակ-կալեյից, վորը յեղել և Ռուսա I-ից սկսած իբրև թագավորական ուղիղենցիա Գլխավոր պեղումները կառարել և այսանդ գերմանական երասպեղիցիան (Լեհմանն-Հաուպտ և Լ. Բելք): Իրերի մեծ մասը, վոր գտնվել են այլևայլ ժամանակներում, գտնվում են Լոնդոնի Բրիտանական թանգարան և Բեռլինի թանգարանում և Երմիաաժում (Լենինգրադ):

Խալդական կուլտուրան վորոշ չափով ազդվել է աստուրականից (համտ. հենց բեռազիրը). քայց կան և կուլտուրական, թեպետ և փոքր, աղերսակցություններ և փոքր-ասիական ու միջենյան կուլտուրաների հետ: Հյուսիսում խալդական կուլտուրայի ազդեցությունը նշմարվում է մինչև Արաքսից հյուսիս ընկած լեռները: Այդ դժից հյուսիս, այժմյան Անդրկովկասում նշում են վոր թե ուրարական այլ «կարակենտի» կուլտուրան դրա արաա-

¹ Սանդուղ ք բառն անգամ հենց այդ ե՝ նշանակում կազմված սանդ «փոս» և ո ղ (=ուղի) բառերից:

հայտություններն են՝ քարե դագաղները և գոտիների թիթեղյա վահանակների (бляха-ների) վրա հանված կենդանիների գարդանկարները, վորոնք միջին-ասիական ծագում ունեն։

Լեհմանն-Հառապտը խաղաղական կուլտուրայի մեջ շեշտում է չորս կողմեր—մայրաշինություններ, քարի մշակում, ջրային կառուցումներ և մեապաղարծություն

Բերդերի և շինությունների կառուցումը յեղել է առանց շաղախի։ Շատ բնորոշ են Խալդու դռները, ինչպես՝ Մհերյան դուռը, Սարգուրի «Աշրուտ-դարգա»-ն և այլն։ Մազկերտի մոտ շինված Ռուսա II-ի բերդը ունի կամարավոր («թագ» տված) մուտք, վորը ըստ Լեհմանի հանդիսացել է պոնտական թագավորների դամբարանների նախաախպը։ Բերդերի քարերը լինում էին չմշակված («կիկլոպյան») իսկ Թոփրակ-կալեյի տաճարի քարերը կտրված են յեղել։ Այդ տաճարի պատերի քարերը վոչ միայն տաշած են յեղել, այլև տարբեր գույնի յեն յեղել (հիմքի քարերը աաշված են յեղել միայն միացման յեղրներում)։ Արտաքին ձևով այդ տաճարը անշուշտ նման յեղած պիտի լինի Մուսասիրի տաճարին վորի ուլյեֆ նկարը յեղել է Սարգոնի պալատի վրա։ Յեղած մատերիալով հնարավոր չի վերականգնել Թոփրակ-կալեյի տաճարը, վորի յերկարությունը յեղել է 21 մետր, իսկ լայնությունը՝ 13,5 մետր։ Տաճարին կից յեղել է մի շինություն, յերևի ապարանք, վորից մնացել են միայն հատակի մնացորդներ, կադմած դույնզգույն (սև, մուգ-կարմիր, սպիտակ) քարե շրջանակներից, վորպես համակենարոն մի մոզաիկա։ Այդ շրջանակները մտցվում էին հատակի քարե տախտակների (պլիտաների) մեջ, վորոնք սպիտակ և մուգ դույնից էին։ Քարերի դույնների նման հերթափոխում նկատվում է հետադայում և հայոց յեկեղեցիների պատերի վրա ինչպես և բերդերի (որինակ Անիի մի աշտարակի վրա, Ախուրյանի վրա, Հոնենց Տիգրանի շինած յեկեղեցու մոտ) ժայռափորության մեջ անդամ հայերը շարունակել են ուրարտացիների տրադիցիան, յեթե ինկատի առնենք Գեղարդի վանքի կամ Անիի ձորում մնացած նման մի քանի շինությունների փորվածքը։ Հայերի խաչքարերը կարծես թե անմիջական ձևափոխություններն են ուրարտական քարակոթողների՝ իրենց փշիկով (XIII) և պաավանդանով։ Իսկ այդ բևեռադիր քարակոթողները առանձին ուշադրության առարկաներ են յեղել և հայոց սրբատեղերում ու յեկեղեցիներում պահվել են, ինչպես հետագա խաչքարերը յերբեմն այդ բևեռադիր կոթողների վրա խաչ են

քանդակել: Այն հսկայական քարակոթողները վորոնք «վիշապ» անվան տակ են հայտնի և առաջին անգամ հայտնաբերվել են Յակով Սմիրնովի կողմից Գեղամա լեռներում (թվով 18) չեն պատկանում, ըստ իս, ուրարտական կուլտուրային, այլ ավելի հին են և կապված են հավանորեն ջրի պաշտամունքի հետ և տեղական ստեղծադործութուն են (կան և Արագածի վրա)¹ Ուրարտական մայրաքաղաք Տուշպայում յեղև են մի բանի հարկանի տներ վորը տեսնում ենք վոչ միայն ասուրական ռելիեֆների վրա նկարած այլև Թոփրակ-կալեյում գտնված մի բրոնզե պլաստիկայի վրա ուր նկարված է յերեք հարկանի շենք (համեմատել Անիի բազմահարկ «Կամսարականների պալատը») Ընդհանրապես ասած ուրարտացիների քարաշինական (քարակոփական) տեխնիկան բարձր է յեղև: Հսկայական աշխատանք պետք է թափեյին քարակոփները, վոր փորեյին Լանի ժայռի միջի հայտնի գահլիճները կամ նիշաները (5—6 մետր բարձրությամբ 1 կուռ 2 մ. լայնությամբ ու խորությամբ)

Ջրաշինարարության փայլուն վիան մինչև հիմա ել մտում է Մենուայի ջրանցքը („Menuai pili“), վոր ժողովուրդը կոչում է «Շամիրամ-սու») և ունի 70 կիրովետր յերկարություն: Իրա պատերը բարձրացնելու համար գործ են դրված հսկայական քանակով կիկլոպյան մեծ-մեծ քարեր: Ասուրական արձանագրությունները ասում են, վոր Ռուսա Ա թագավորը Ուլխու քաղաքի համար (թերևս գտնվել է Ռարմիա լճի հյուսիս-արևմտյան մասում) բերել է մի ջրանցք (նմանը Պուրաստուռ (= Յեփրատ) բախ), վորից հյուսիսվորվել են բազմաթիվ առուներ դաշտերի և սյգիների համար: Ջրանցք է բերվել և Չանգուից Վաղարշապատի շրջանի (Չվարթնոցի) համար, իսկ վոմանց կարծիքով Յերևանի Դավթայի գետնափոր ջրանցքը նույն ուրարտացիներից է մնացել: Ջրանցքների մասին հիշատակվում են և Արմավիրի մոտ գտնված արձանագրություններում, վորոնցից զիտի յեղրակացունել, վոր այդ ջրանցքները բերվել են Արաքսից Արմավիրի և նրա շրջակայքի համար, վորը ուրարտացիների կենտրոնն էր Արարատյան դաշտում:

¹ Տես մեր հոդվածը «Հնության մի քանի լշատակարաններ» սուլված 1914 թվին «Արարատ» ամսագրում (Եջմիածին)

Մետաղագործական տեխնիկան մեզ հարուստ վկայություններ և թողել, հատկապես Թուփրակ-կալեյի պեղումների միջոցով: Այստեղ տեսնում ենք վոսկե, արծաթե, բրոնզե և յերկաթե իրեր: Շատ պատմաբանների կարծիքով Ուրարտուն և յեղել առաջինը, վոջ յուր բարձր զարգացած բրոնզի մետաղագործության հետ կարողացել և զարգացնել և յերկաթը: Թուփրակ-կալեյի պեղումներից մնացել են, որինակ յերկաթի խոփեր, յեղաններ և այլ յերկրագործական ու տնտեսական իրեր: Սարգուր թագավորը Կոլխիդա արշավելիս հիշատակում և «տախտակ յերկաթից» (DUB AN. BAR), վորի վրա նա գրել և տվել յուր ռազմական գործերը: Ընդհանրապես յեթե վերցնենք, Ուրարտուի ժամանակից ունենք մետաղե շատ իրեր—մեծ ու փոքր արձաններ, կուռքեր, ստատուետեաներ գահի մնացորդներ, անոթներ զենքեր սլաքներ, վահաններ, կանթեղներ («կանդելարր») և այլն և այլն: Ասուերական ազդեցություն և կրում այն բրոնզե գրիֆոնը, վորը հավանորեն գահի մաս (վստ) և յեղել, նաև այն թևավոր յեզը և «ներքինի» (СВНУХ) ստատուետեան (այժմ Լեռլինումն և) վորոնք գտնվել են Թուփրակ-կալեյում: Բայց խաղերը վոչ միայն ընդորինակում էյին, այլև ինքնուրույն գծեր ու տեխնիկական նորություններ էլ էյին մտցնում՝ քարի ու բրոնզի զուգակցումը: Որինակ, ներքինու այդ ստատուետեան շինված և բրոնզից և վոսկեգոծված և բայց գլուխը սպիտակ քարից և իսկ աչքերը հավանորեն թանկագին քարերից էյին: Նման տեխնիկա յենք տեսնում և Լենինգրադի Երմիտաժում պահվող ուրարտական մի ֆանտաստիկ եակի արձանիկի մեջ, վորի իրանը և գլուխը բրոնզից են (իրանը ներկայացնում և թևավոր առյուծ, իսկ գլուխը և վիզը՝ մարդու յեն): այդ արձանիկի յերեսը շինված և սպիտակ քարից, իսկ հոնքերը և աչքերը առանձին են ինկրուստացիայով: Այս արձանիկն ևս ծածկված և յեղել վոսկե պարուրվածքով, վոր տեղ-տեղ դեռ մնացել է, և պեղարվեստական մեծ կատարելության ել հասած Բարձր գեղարվեստականություն և վերագրվում և այն վոսկե մեղալյոնին, վորի վրա տեսնում ենք ուրարտական մի դիցուհու (կամ թագուհու), նրստած գահի վրա և սպասավոր մի կնոջ, կանգնած և բազկատարած: Այս վոսկե մեղալյոնի կանանց տիպին շատ նման և այն փոքր արձանի (կուռքի) կնոջ կերպարանքը և մանավանդ զգեստը, վոր դտնվել և 1907 թվին Վանից դեպի հյուսիս ընկած խաղական «Դարարեյ» բերդի ավերակներում Արձանիկի բար-

ձրությունն և 12 սանտիմետր ձուլված և բրոնզից, նստած վիճակում և և բազկատարած, արտաքուստ ծածկված և մուգ-կանաչ ներկով և խալդական արվեստի բարձր նմուշներից մեկն է¹ Թուրակ-կայսյում գտնված և յեզել և բրոնզե գահ, գուցե և յերկուսը, սակայն դանելու մոմենտին ջարդել են այժմ դրանից մնացել են 12 հատ առանձին-առանձին մասեր, վորոնք իրենց միատիպության տեսակետից համարվում են յերկու գահի մնացորդներ: Այդ գահերից մեկը դարգարված և յեզել յեզի ֆիգուրաներով, իսկ մյուսը՝ առյուծի², իրենց բրոնզե իրերը ուրարտացիք ձուլում-թափում էին յերկու կերպ կամ ամեն մի առարկայի համար սանդղված առանձին-առանձին կաղապարի միջոցով, վորը պահանջում էր բարդ և դժվար աշխատանք և առջիս էր գեղարվեստական բարձր արտադրություն, կամ կայուն կավե և քարե կաղապարների միջոցով, յերբ ստացվում էր ավելի կոպիտ բան: Վերջին ձևով ձուլված կան մի քանի բրոնզե ֆիգուրաներ (աստվածների, կենդանիների) և արձանիկներ, վորոնք հետո մշակվում էին: Այգպես են, որինակ և բրոնզե կաթսաների վերին մասերի զարդարանքները վորոնք պատկերացնում են կամ յեզի գլուխներ, կամ թևավոր կանանց Այդ վերջին ֆիգուրիկները, լինելով կաթսայի կանխեր, իրենց նկարով նման են յեգիպտական թևավոր սկավտակներին կամ ասուրական թռչող Ասուրին: Բ Տուրանը այդ թևավոր աստվածուհու մեջ ուզում էր տեսնել փոքրասիական «Մեծ Մարը»³: Փոքրասիական հույն գաղութների միջոցով այդ թևավոր կանանց ֆիգուրիկները տարածվել են հաս ղեպի Հունաստան և գտնվել են, որինակ, Ռոդոս կղզու վրա, Դելֆայում, Աթենքում և Ուլիմպիայում: Ընդհանրապես ասած ուրարտական մետաղե և այլ իրերի ֆանտաստիկ, մարդակերպ և կենդանական այլևայլ կերպարանքները արտացոլում են մի ընդհանուր—առաջավոր-ասիական վոճ, վորը տեսնում ենք և խեթական կուլտուրայում («Կենաց ծառ»), և՛ ասուրական (թևավոր յեղներ՝ շեղու), և խուրրի-միտաննիական (հմատ քանդակագործությունը Թել-Հալաֆում): Կուլտուրայի փոխանակությունը առևտրական և այլ ճանապարհներով այդ ընդհանուր գծերը և մոտիվները դարգացնելով տարավ հասցրեց և Հունաստան և ավելի հեռուները:

¹ Այժմ գտնվում է Յերեանի Հնագիտական թանգարան մ

² Տես Ե. ПИОТРОВСКИЙ, Урарту, էջ 40

³ Տես նրա Ист. ур. вост., II, էջ 47

Պաղղական մետաղի արվեստի մեջ առանձին տեղ են գրավում վահանները, վճռոնք նվիրվում էին «Պաղղուն տիրոջը թագավորին յերկարակեցութուն շնորհելու համար»¹։ Այդ վահանները կախվում էին առճարի պատերին ինչպես տեսնում ենք Մուսասիրի առճարի պատկերի վրա։ Մեզ հասած վեց վահաններից մեկը նվիրել է Ռուսա II-ը իսկ հինգը Ռուսա III-ը։ Դրանք բոլորն էլ պեղված են Թ փրակ-կալեյի Պաղղուն առճարի ավերակների միջից և իրենցից ներկայացնում են կլոր թիթեղներ՝ բրոնզից, վորոնց նմանը թե պատին կախված և թե զինվորների ձեռքին տեսնում ենք Մուսասիրի առճարում ևս վահանների վրա համակենտրոն գոտիների մեջ նկարված են կենդանիների— յտգների ու առյուծների— ֆիգուրաներ։ Ինչպես Ի. Պրոտրովսկին է ասում— «Изображения выполнены чекашной техникой возможно также что контуры животных выдавливались штампом Кроме этого, контуры фигур подправлялись резцом: резьбой выполнялась и все мелкая декоровка (տես նրա Урарту էջ 41)»

Յեղել են անշուշտ մետաղի սխալի իլեր վորոնք ինչ չեն հասել։ Մուսասիրի առճարից տարած ավարի մեջ բացի մեծաքանակ վոսկուց, արծաթից, բրոնզից և թանկագին քարերից հիշատակվում են փղոսկրից և երկնոսի փայտից զավազաններ վոսկի շրջանակով, արքայական ռեզալիաներ (նշաններ)՝ թանկագին նյութերից, այլևայլ անուաններով անոթներ, բրոնզե ավազաններ, տեղական արտադրության բրոնզե առարկաներ վոսկե բոլորածե շան գլխով վահաններ արծաթե վահաններ վիշապի

¹ Առողջութուն հայցելու համար է կանգնեցված Վանի Կուրշուն-ջամի մզկիթում պահված Մենուայի քարակոթողը, վորն ասում է «Պաղղուն, տիրոջը, Մենուան Իշպուհինի վորդին, այս քարակոթողը գրել տվեց. թող շնորհի (manini) Պաղղյան բողոտվորութունը (bedini?) Մենուային Իշպուհինու վորդին (և) Ինուշպուային Մենուայի վորդուն առողջութուն (ulguše) ուրախութուն (pitsuše), մեծութուն (alsuiše)»։ Մուլարայազետում և Թալինում գտնված՝ Սարգուր II-ի(III)-ի արձանագրութունների մեջ նույնպես տեսնում ենք նման առողջահայցական մոտիվներ։ Այդտեղ կարգում ենք— «Սարգուրի Արգիշտու վորդու առողջությանը (ulgušiyainie), Պաղղյան մեծությանը, Պաղղյան բարձր փառքին, pi salmāni uainiše (= ?), ամիսներ-որեր յերջանիկ...» (տողեր 2—7)։ Անշուշտ այս արձանագրութունների սկզբում խոսված է յեղել նվիրաբերության կամ մի վորեկ շինարարության մասին, նվիրված Պաղղուն, վորպեսզի հայցվի թագավորի համար առողջութուն, յերկար ամիսներ որեր»։ Դժբախտաբար արձանագրութունների այս մասը կորած է և մասամբ մաշված (առաջին յերկու տողերը)։

զլխով, վոսկե կողպեքներ) բանալիներ օրեր նիդակներ, մարտակառքեր, արծաթե անոթներ, Բազբարաու աստվածուհու կնիքը, բրոնզե ավազաններ լվացվելու համար, քոբեր զինի ձոնելու համար (80 լիտր տարողությամբ) 4 բրոնզե սրձան «Թիարում» աստղերով և 60 տաղանա քաշով «և ուրիշ շատ բաներ, վոր հաճախ նշանակվում են անթարգմանելի տերմիններով»¹ Մենք գիտենք, վոր Մուսասիրի այդ տաճարում յեղել են և իրեր, վոր բերված են յեղել Ուրարտուից, Կիլիսուից և Ասորեստանից. և թշնամիները «քաղաքում [Նինեվիտում], պալատում և աստված Աշշուրի և Մարգուկի շինություններում հափշտակել էյին»։ Բնորոշ և Սարգոնի նկարագրության մեջ այն շեշտումը, վոր շատ իրեր սեղական արտադրություն են, վորոնց անուններն անգամ ասորեստանցիք չեն նկարողանում վերարտադրել կամ թ սրգմանել թե անունների հնչական կողմի տեսակետից և թե արտահաները անձանոթ լինելու պատճառով²։

Չարդանկարներ մնացել են և քարի վրա թոփրակ-կալելյում որինակ, գտնված և կշռաքարի նման մի փոքր առարկա, թերևս կնիք, վորի վրա ք սնգակված և կրոնական բնույթի հետաքրքիր հետևյալ տեսարանը. քուրմը կանգնած աղոթում և սրբազան ծառի առաջ. ծառի առջևի մասում զրված և զեղելու (ձոնելու) անոթը իսկ հետևի մասում նկարազարդված են սլատվանդանի վրա կառուցված յերեք ֆետիշ-սյուներ։ Այս գործը կուպիտ գծելով և զբսևորված։ Թոփրակ-կալելյի պալատի (և աստվածի) ներսի սրահը յերեստպատված են յեղել ինկրուստացիայի ձևով թե մարմարյա քարանկարներով և թե մետաղե, վորոնք արտահայտել են թե ատանձին պատկեր և թե տեսարաններ։ Որինակ, մի ֆրիզ և հայտնաբերված 2 Որբելու պեղումների շնորհիվ, վորի վրա տեսնում ենք յեղի նկար (մնացել և իրանի մի մասը) և ծառերի զարդանկար, պարփակված զարդար զ շրջանակներ

¹ Ասորեբեն սոված և—epišti matu-sunu sa nibit sumi-sunu ana šatari la tabu „Erzeugnis ihres Landes, deren Namensnennung schwierig zu schreiben ist“ (ըստ J. Friedrich-ի Թարգմանության, տես Arch. Or., 1932 IV, էջ 69)։

² Ըստ J. Friedrich ի Սարգոնի այդ նկարագրության մեջ պատահող kiuri (erī) «անոթ (բրոնզից)» բառը փոխառություն և ուրարտական kiri (<*kiuri-ից) «անոթ» բառից (ibid)։ Ուրարտական մի այլ բառ šani «անոթ, կաթնաս» անունով պահվել և հայոց «ստին» նույնանիշ բառի մեջ, վորի հետ համեմատել թերևս «սինի» (=մետաղե տեփուր, ПОДНОС) բառը, վորը կա և այլ արևելյան լեզուներում։

մեջ: Մենք գիտենք նաև վոր Մուսասիրի քուրմ և թագավոր Ուրդանայից մնացել է մի քարե գլան, վորը հափշտակել էր Սարգոնը և հետագայում գտնվել է Նինեվիայի պեղումների ժամանակ (այժմ Հաագայումն է) այդ գլանը ծառայել է վորպես կնիք և թալիսման և ունի հետաքրքիր մի ֆանտաստիկ տեսարան քանդակ բաղկացած յերկու ջայլամներից վորոնց միջև կանգնած է մարդուկերոյ, բայց թեև վոր, բարի վոգին—Գենիուսը: Տրիլիսիի թանգարանումն է գտնվում մի քարե արձան, վորը գտնվել է Վանի բերդում (ժայռի վրա) բայց դժբախտաբար պակասավոր է—կոտրված են վոտքերը և գլուխը. թերևս Պալգասածու կամ մի ուրարտական իշխանի արձան յեզած լինի:

Կավագործական արհեսաը նույնպես թողել է մեզ վորոշ պրոզուկցիա: Բեկքի և Լեհմանն-Հաուպաի կողմից Թոփրակ-կալեյի պալատական մասանից հայտնաբերված են շաա իրեր: Այստեղ տեսնում ենք մեծ է փոքր կճուճներ, սափորներ, պուաուկներ, կժեր և գինու կարասներ: Այդ մեծ կավե տնոթներից (akarkı) յուրաքանչյուրը ունի 120—150 լիտր ջրատարողութուն իսկ փոքրերը (xirusı) 10—12 անգամ պակաս էին: Այդ տնոթների վրա գրված է լինում իրենց տարողութունը այն է՝ թե ինչքան փոքր չափ է պարունակում այս կամ այն մեծ կարասը: գիրը կամ բևեռագիր է կամ այլ նշաններով—թվերով է (յեռանկյուն, կիսաշրջան և շրջանաձև նշաններ) Մեծ տնոթներից—կարասներից հայտնաբերված են 20—25 հատ, վորոնցից յերկուսը գրեթե սնփուա Այդ akarkı—կարասները շաա նման են հայոց և վրաց նույն աիպի կարասներին և յերբեմն ունենում են վղի կամ փորի վրա դարդանկարներ: Որինակ, մի կարասի վրա տեսնում ենք հորիզոնական գիրքով ընկած մի կենդանի (արջաթե յեղջերու), վորին վերևից հոշտում է մի գաղան՝ անբաշ մի առյուծ. լինում են յերբեմն և այլ կենդանիների կամ դաղանների նկարներ: Վերջապես Թոփրակ-կալեյումն են գտնված մի քանի կավե թրծած տախաակներ գրության համար: Մեկի մասին արդեն ասվել է Դա Ռուսա I-ի հազորդումն և Իշկիզուլուի յուր կուսակալին «Ոուսախինա»-յի կառուցման մասին, վորը յերևի Քեշիշգյուլի արհեստական շինությունների կամ Թոփրակ-կալեյի պալատի մասին է կան և այդպիսի աղյուսակների բեկորներ ուր կարդում ենք թվեր յերևի հաշվային «վավերաթղ»


թերձ են¹, Բայց գանված և և մի աղյուս-տախտակ, վորը գըր-ված և կարծես թե հիերոգլիֆներով, վորոնց վորոշ նշանները— կենդանական գլուխներ և բույսեր—տեսնում ենք նաև կավե անօթների, քարե կնիքների և մետաղե իրերի վրա:

Իններորդ դարի վերջում² քսանական թվերին (830—820) Իշպուհինի թագավորը ասսուրական բևեռագրերը հարմարեցնում է իր մայրենի լեզվի հնչյունակազմին և գրում ուրարաական առաջին արձանագրությունները, մինչև այդ Սարգուրը (Հուտիբրիի վորդին) գրում էր միայն ասսուրերեն: Գրության այս կուլտուրայի յուրացումը հսկայական նշանակություն ունեցավ Բիայնայի պամության լուսաբանման համար, ինչպես և հին Առաջավոր Ասիայի և հետագա Հայաստանի պատմակուլտուրական խնդիրների համար: Ասսուրական բևեռագրերի յուրացումը ցույց է աւելիս թե այն, վոր ուրարտացիք սովորում էին իրենցից ավելի կուլտուրական հին ժողովուրդներից, և թե այն, վոր Բիայնան հասել էր բարձր պետականության, անցնելով նախնական մի շարք սոցիալ-տնտեսական և կուլտուրական ետապներով: Բայց ուրարտացիք այս նշանների յուրացման մեջ անգամ ցույց տվին իրենց ինքնուրույնությունը: Նախ սեպերի և և սեպիկների բնույթը վորոշ չափով փոխեցին, աւելով դրանց յերկարուն կերպարանք (և վոչ թե բևեռի) և հարմարեցնելով գլխավորապես քարագրության և վոչ աղյուսագրության, ինչպես էր ասսուրների մոտ: Յերկրորդ, ուրարտացիք վերցրին սահմանափակ թվով նշաններ (մոտ 210), թե վորպես հնչյունագիր (95 հաա) և թե վորպես գազափարագիր կամ բացատրիչ նշաններ, յերբեմն ավելի պարզեցնելով գրության ձևերը: Վերջապես խուսափեցին ասսուրական նշանակումայլեքսի բաղաձայնությունից (պոլիֆոնիայից), վոր այդքան վնասում է ասսուրական տեքստերին: Այս ուրարաական գրության մեջ յուրաքանչյուր նշանախումբ ունի միայն մի վանկահնչում, լինի դա մի ձայնավոր (ա, ե, ի, ու) թե ձայնավորից ու բաղաձայնից (բաղաձայններից) կազմած մի վանկ:


¹ Ուրարտական բևեռագիր թվանշանները, վորոնք փոխ են տանված ասորեստանցիներից, կրում են հիմնականորեն ասսուրական թվարկության սխտեմը, թեպետ նկատվում է և վաթսուների վրա հիմնված թվարկության սխտեմի մնացորդ ևս: Վաթսուների գրությունը ուրույն ձևով է իսկ 70, 80 և 90 արտահայտվում էին այդ 60-ի վրա տվելուց անտանձին ասսուրականներ

Մենք չենք կասկածում, Վոր հեաագա վորոնումները ու պեղումները մեզ կտան նոր բևեռագիր արձանագրություններ վորով Ուրարտուի պատմությունը ավելի լրիվ կդառնա: Չենք կասկածում նաև, Վոր պատմական Հայաստանի մեջ կատարվելիք նորանոր պեղումները մասնավորապես մեզ մոտ Արմավիրի պեղումը, կտան ուրարտական կուլտուրայի նոր փառավոր վկայություններ այլևայլ բնագավառների համար: Աստուրական կուսակալների ու ագենանների հաղորդագրությունների հեաագա հրատարակումը անշուշտ մեզ կաա այնպիսի նորանոր տեղեկություններ Ուրարտուի ներքին պեաական-քաղաքական կյանքի մասին, Վորը չենք տեսնում պաշտոնական ուրացիաներում: Բնական է, Վոր Ուրարտուի պատմության շատ կողմերը այս և նման պայմաններում շարունակում են մնալ մութը և պակասավոր

Մեղ այս աշխատությունը, ոգտագործելով ցայժմ կատարած լավագույն հետազոտությունները և ստուգված աղբյուրները, անշուշտ մի փորձ կարող է հանգիստանալ Ուրարտուի լրիվ պատմության նկարագրության ետապում, խթանելով պատշաճ բարձրության վրա դնել հին Առաջավոր Ասիայի այս կ'ւլտուրական որրսնի ճիշտ ճանաչումը և պատմական գերը



Մ ո ալ լ ի ալ ահա՞ն՝ տունը




Երանգի կաթնոսյի 1 հԹ



Խաչի մեդալյոն



*Արարատահան կուսք արձանիկի
«Քերեղեյո բերդից (Վանի մաս)»-ը...
աչժժ նրեխանունն է*



Ուրարտական դալի մեջբե

ԲՈՎԱՆԳՆԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱԹԱԶԱՐՈՆ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.

)
1	Ուրարտու յեվ ուրարտացիներ	12
2	Ուրարտեերի պատմական գեներալ	22
	a) Ուրարտեերի համեմատական քերականությունը	23
	b) Ուրարտեերի ազգակցական ընտանիքը	28
	Ուրարտա-խուրրիական ընդհանուր բառեր	33
	Ակկադեերի ազգակցությունը	35
	Ուրարտեերի տարրերը հայերենում	3
	Ուրարտա-վրացական լեզվական տարրեր	40
3	Ուրարտուի պանթեոնը—պատմություն ավյուր	41

Յ Ե Ր Կ Ր Ո Ր Գ Մ Ա Ս

Ուրարտուի ներքին կյանքը 2

A Ուրարտուի եկոնոմիկան չեվ սեխմիկան

1	Գյուղատնտեսություն	53
	a) Պաշտպանություն	53
	b) Հողագործություն և մշակություն	54
2.	Արհեստներ (մետաղի կավի և այլն...)	60
3	Կառույցներ	65

B Ուրարտուի հասարակական, պետական, վարչական յեվ բազա բանական ներքին վիճակը

1.	Տահմ, ցեղ, ընտանիք, ժողովուրդ	77
2.	Պատվարգ, դաս, պատճենություն	83
3.	Ուրարտուի պետական, բաղաբանական յեվ խառնակամ հաստատությունները յեվ ժողովրդական	92
4	Տիրակալական յեվ վարձատնտեսական սերմնություն	101
	Հ պատկություն-հարկաբանություն	109

C Ուրարտական արձանագրությունների յեզուի յաղափարախոսա- կան յեվ վոճային կողմը

	a) Կրոնական տերմինոլոգիան և մտայնությունը	119
	b) Ռազմական տերմինոլոգիան և իդեոլոգիան	11

Յ Ե Ր Ր Ո Ր Դ Մ Ա Ս

ՌԻՄԱՏՈՒԻ ԲԱՂԱՖՈՒԿԱՆ ԱԳԱՏՄՈՒՔՅՈՒՆԵՐ

1 Նախը]	123
2 ՌԻՄԱՏՈՒ.	130
Իշպուհին(ի)—Մենուա	139
Մենուա (800—780) .	148
Արգիշտի I (780—755)	156
Սարգուր II (755—730)	172
Ռուսա I (730—714)	194
Արգիշտի II (714—680?)	208
Ռուսա II (680?—645)	209
Ռուսա III (605?—582)	221
Զ Ո Ր Ր Ո Ր Դ Մ Ա Ս	229

Տեխ խմբագիրը 9 Մ ա լ լ ի յ ա ն
Արքագրիչ՝ Զ Շ ա ն ն ա զ ա ը յ ա ն
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս Բ ա ը ա յ ա ն

Հանձնված է արտագրության 1940 թ. 22/VIII-ին Ստորագրված է տպագրու-
թյան 1940 թ. 28/VIII-ին. Փորձաաւը—6×10. Տպագր —16 մամ., հեղին. 11,5
մամուլ, մեկ տպ. մամուլում—38.400 տպ. նիշ. ՎՖ 475. Պատվ № 568. Տիր. 1000
Գերեանի Պետհամալսարանի Հրատարակչության տպարան, Արտվյան 104

Проф Гр КАПАНЦЯН

И С Т О Р И Я У Р А Р Т У

Перепечатано из XIV тома Научных трудов
Ереванского Государственного Университета

